ՊԱ
ԳԻՏԱ-
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
ՍԵՐԻԱ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. Б. БАРХУДАРЯН, В. К. ВОСКАНЯН

АРМЯНО-РУССКИЕ ИСТОРИЧЕСКИЕ СВЯЗИ И ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Ա 61305
6422ը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

ՀՍՀԿ ՍՍՌ գիտությունների
ՀՈՒՆԴԱՄԵՆՏԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

9 (С)
Վ 35

Սույն աշխատությունը ընթերցող լայն հասարակությանն է ներկայացնում հայերի և ռուսների հազարամյա կապերի համառոտ պատմությունը՝ հայերի արտագաղթերն ու ռուսահայ գաղթավայրերի ստեղծումը, տնտեսական և մշակութային առնչությունները, քաղաքական հարաբերություններն ու ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը։

Առավել հանգամանորեն է շարադրված XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակի բախտորոշ իրադարձությունների ընթացքը՝ ժողովուրդների քաղաքական ու ռազմական համագործակցությունը, ինչպես նաև Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու բախտորոշ նշանակությունը հայ ժողովրդի առաջընթացի և հետագա սոցիալական ու ազգային ազատագրության, սոցիալիստական վերածննդի համար։ Աշխատության I—V գլուխները շարադրել է Վ. Կ. Ոսկանյանը, իսկ VI—XI-ը՝ Վ. Բ. Բարխուդարյանը։

Պատասխանատու խմբագիր
պատմական գիտությունների թեկնածու
Վ. Ս. ԵՐԿԱՆՅԱՆ

Գիրքը երաշխավորել է տպագրության
պատմական գիտությունների դոկտոր
Ն. Ա. ԹԱՎԱՔԱԼՅԱՆԸ և
պատմական գիտությունների թեկնածու
Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Վ. 10601 13—77
703 (02)—78

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ժողովուրդը իր գոյության հազարամյակների ընթացքում անցել է մեծ ու դժվարին ճանապարհ: Դեռևս ստրկատիրության և ֆեոդալիզմի ժամանակաշրջաններում Հայաստանը դարձել էր աշխարհի հզորների մրցադաշտ, կործանարար բախումների և անընդմեջ ասպատակությունների ասպարեզ, որտեղ ֆիզիկական ոչնչացման ու բռնագաղթի էին ենթարկվում բնակչության մեծ զանգվածներ, հրկիզվում ու ավերվում էին բարեշեն հաղաքներն ու գյուղերը, կործանվում շինարար ժողովրդի հոգևոր ու նյութական մշակույթի հուշարձանները: Աշխարհավեր արշավանքներն ու պատերազմները ավարտվում էին օտար բռնակալության հաստատումով, որը սակայն սկիզբ էր դառնում այլ վայրագ կռիվների, ապա և նոր, բայց նույնքան դաժան տիրապետության:

Ինչպես ընդգծվեց ՀԿԿ Կենտկոմի «Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի տոնակատարության մասին» որոշման մեջ, «Բազում դարերի ընթացքում Հայաստանը մշտապես ենթարկվում էր օտարերկրյա նվաճողների արշավանքներին, կորցնում իր պետականությունը, իր վրա կրում սոցիալական և ազգային դաժան ճնշումը»[1]:

Այսպես, Հայաստանի ու Անդրկովկասի վրա իրենց իշխանությունը հաստատեցին արաբները, սելջուկները, մոնղոլ-թաթարական խաները, պարսիկ շահերն ու թուրք սուլթանները: Անդրկովկասի նվաճման համար 1512 թ. սկսված թուրք-պարսկական հակամարտություններն ու պատերազմ-

1 «Սովետական Հայաստան», 1978, 31 մարտի, № 76:

ներն ավարտվեցին միայն 1639 թ. կնքված պայմանագրով, որի համաձայն Արևելյան Հայաստանն ընկավ Պարսկաստանի, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիայի տիրապետության տակ:

Սակայն ժողովուրդը չէր կարող կորցնել իր ազատության կենսահաստատ երազանքը, հույսն ու հավատը, լուսավոր ապագայի համար կռվելու վճռականությունն ու կամքը:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը կենաց ու մահու պայքար է մղել իր ազատության ու անկախության համար՝ դաշնակիցներ և օգնականներ փնտրելով մոտ ու հեռու երկրներում:

Հայաստանի, ինչպես և Անդրկովկասի առաջավոր գործիչները դիմումներ էին անում աշխարհի հզոր պետություններին՝ օգնություն ստանալու ապարդյուն ակնկալություններով: Արևմտյան Եվրոպայի հարուստ ու զորեղ պետությունները, որևէ օգնության լուրջ խոստում չտալով հանդերձ, ուզում էին օգտագործել Անդրկովկասի ազատագրման պատրվակը՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, Արևելքում իրենց դիրքերն ամրապնդելու և գաղութային առևտրի արտոնություններ ստանալու համար:

Միայն Ռուսաստանն էր օբյեկտիվորեն շահագրգռված Անդրկովկասի ժողովուրդներին օգնելու գործում, քանի որ ի դեմս նրանց Ռուսաստանը տեսնում էր իր դաշնակիցներին, որոնց դեմ էին ուղղվում Թուրքիայի, Պարսկաստանի և նրանց կովկասյան ու ղրիմյան վասալների պարբերաբար կրկնվող ավազակաբարո արշավանքները՝ նույնքան վտանգավոր ու աղետաբեր նաև Ռուսաստանի համար: Պատմությունը ցույց տվեց, որ միայն Ռուսաստանն էր ուզում և ի վիճակի էր օգնել Անդրկովկասի ժողովուրդներին, դաշնակցել նրանց հետ՝ երկրի սահմանները պաշտպանելու և Արևելքի հետ առևտրատնտեսական կապեր հաստատելու համար: Այսպես, Ռուսաստանի ու Անդրկովկասի շահերի ընդհանրության հիմքի վրա ձևավորվեց ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը, որ XVII—XIX դարերի ընթացքում դարձավ պատմա-

կանորեն հաղթանակած և համընդհանուր ճանաչում գտած վիրտուրյան մայրուղի:

Մարքսիզմի դասականները բազմիցս նշել են, որ ժողովուրդները ի դեմս Ռուսաստանի տեսնում էին իրենց «բնական պաշտպանին և ազատարարին»: Ռուսական արքունիքն իր հերթին չէր թաքցնում սեփական հավակնությունները Բալկաններեի և Անդրկովկասի նկատմամբ, հաչալերում էր ժողովուրդների ազատագրական պայքարը և օգնում նրանց: Ֆ. Էնգելսը խորապես ու բազմակողմանիորեն բացահայտել է այդ փոխհարաբերությունների հիմքերն ու իմաստը և Ռուսական պետության հեռահար նպատակները: Հասկանալի է այն, որ դեպի Ռուսաստան էին կողմնորոշվում Բալկաններեի ու Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում և նույն երկրներում բնակվող հայերը, որոնք այդ ժողովուրդների հետ համատեղ պայքար էին մղում օտար տիրապետության դեմ, իրենց հայացքն ուղղելով դեպի Ռուսաստան, դեպի «Պետերբուրգ, ըստ պատելով Մեսխային, որը նրանց կազատի բոլոր չարիքներից»[2]:

«Կովկասյան լեռնաշղթայից դեպի հարավ,— գրել է Ֆ. Էնգելսը,— բուրվական տիրապետության տակ էին գտնվում ոչ մեծ հրեստոնեական պետություններ և հրեստոնեություն դավանող հայերը, որոնց նկատմամբ ցարիզմը կարող էր իրեն «ազատարար» հայտարարել»[3]: Ցարիզմը այդ ժողովուրդներին, իհարկե, չէր կարող և չէր բերում իսկական ազգային, առավել ևս սոցիալական ազատագրություն: Սակայն Էնգելսը չէր ժխտում և նույնիսկ ընդգծում էր Ռուսաստանի, նրա պետականության և ռուս ժողովրդի առաջադիմական դերը՝ Անդրկովկասի և Բալկաններեի ժողովուրդների կյանքում, ինչպես և նրանց ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման փաստն ու օրինաչափությունը, որ հաստատվեցին XVIII—XIX դարերում ծավալված քաղաքական անցքերով և ազատագրական պայքարի հաջող ավարտի իրողությամբ:

---

[2] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, изд. II, т. IX, стр. 9.

[3] Там же, т. XXII, стр. 17.

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հսկայական առաջադիմական նշանակություն ունեցավ: Հայ ժողովրդի մի խոշոր հատված վերջնականապես ազատվեց ծանր վիճակից ու ֆիզիկական ոչնչացման վտանգից, իր բախտը կապեց հզոր Ռուսաստանի և ռուս մեծ ժողովրդի հետ, կանգնեց ազգային համախմբման, տնտեսական ու կուլտուրական առաջընթացի ճանապարհին: 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով հաստատված սահմանը դարձավ բարիդրացիական հարաբերությունների նախադուռ, Ռուսաստանի, Անդրկովկասի և Պարսկաստանի ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական գործակցության և խաղաղ համակեցության բնագիծ: Անդրկովկասն ազատվեց ժողովուրդների գլխին կախված վտանգից, վերջնականապես իր բախտը կապեց ռուս ժողովրդի հետ:

Եթե Ռուսաստանը փրկեց Հայաստանի մի մասը, ապա ավելի մեծ հատվածը՝ Արևմտյան Հայաստանը մնաց թուրքական սուլթանի տիրապետության տակ: Այնտեղ տարեցտարի դրությունը վատթարանում էր: Դեռևս 1913 թ. Հ. Թումանյանը իր «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում գրում էր. «Թուրքիան դիմել է, դիմում է ու կդիմի ամենահրեշավոր միջոցների՝ վերջ դնելու էդ ժողովրդին իր հարցի հետ միասին՝ հայի հայրենիքի ու ազգային իրավունքների խնդիրը մի անգամ ընդմիշտ փակելու համար»[4]: Եվ, իսկապես, երկու տարի հետո սկսվեց ցեղասպանության նոր զարհուրելի ժամանակաշրջան, երբ բնաջնջվեց կամ արտահայվեց ամբողջ արևմտահայությունը: Ինչպես գրել է Լեոն, «Այժմ Թուրքահայաստան չկա: Նա դարձել է մի վիրխարի գերեզման, որի վրա հավիտենապես արձանագրված է՝ «եվրոպայի զոհը»[5]:

Միանգամայն այլ պատկեր ենք տեսնում Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում, որտեղ բարելավվում է ժողովրդի վիճակը, սկսվում է հայերի ներգաղթը՝ ինչպես Թուր-

---

4 Հ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. IV, Երևան, 1951, էջ 228:

5 Լեո, *Անցյալից*, Թիֆլիս, 1925, էջ 473:

ֆիայից ու Պարսկաստանից, այնպես էլ աշխարհով մեկ ցրված հայկական գաղթավայրերից: XIX դարի կեսերից սկսած Անդրկովկասը մտավ Ռուսաստանի զարգացման ոլորտի մեջ, աստիճանաբար սկսեցին աշխուժանալ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը: Ռուսական մշակույթի և հեղափոխական-դեմոկրատական շարժման հզոր ազդեցության տակ առաջադիմեցին հայ գրականությունը, արվեստը, դեմոկրատական միտքը:

Սովետական Հայաստանի 50-ամյակին արտասանած իր հայտնի ճառում Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ դեռևս XIX դարից «Հայաստանի աշխատավորները ավելի ու ավելի էին ձգտում դեպի Ռուսաստանի դեմոկրատական ու հեղափոխական ուժերը: Ցարական ինքնակալության դեմ ռուսաստանյան պրոլետարիատի պայքարի պատմական փորձը Հայաստանի աշխատավորությանը ցույց տվեց ազատության և սոցիալական պրոգրեսի միակ ելքը ուղին, հեղափոխական պայքարի ճանապարհը, սոցիալիստական վերափոխությունների ուղին»[6]:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում ճանապարհ հարթեց նաև Անդրկովկասի ազատագրության համար: Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում ամրապնդեց հայ, ռուս և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու սոցիալիստական համագործակցությունը: Հայ ժողովրդի վերածնունդը հնարավոր դարձավ շնորհիվ Ռուսաստանի, ռուսաստանյան պրոլետարիատի, կոմունիստական կուսակցության դեկավարության ու եղբայրական ժողովուրդների անշահախնդիր օգնության: Կործանման եզրին կանգնած Հայաստանը պատմական կարճ ժամանակամիջոցում դարձավ ժամանակակից ինդուստրիայի, զարգացած գյուղատնտեսության, առաջավոր գիտության և կուլտուրայի երկիր:

Եվ այսօր հայ ժողովուրդը կերտում է իր լուսավոր ապագան, համոզված, որ ոչ մի ուժ չի կարող մթագնել իր մեծ Հայրենիքի խաղաղ ու պայծառ երկինքը:

---

6 Լ. Ի. Բրեժնև, *Սովետական Հայաստանի 50 տարին*, Երևան, 1970, էջ 6:

ԳԼՈՒԽ Ա. ՌՈՒՋԻՆ

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԻՆ ՌՈՒՍԻԱՆ

Հայերը հյուսիսի ժողովուրդների մասին տեղեկություններ են ունեցել դեռևս հնագույն ժամանակներում, երբ ձևավորվում էին ռուսների նախորդների՝ սլավոնների ցեղախմբերը, ապա և Հին Ռուսիայի Կիևյան պետությունը։

Հայկական պատմական աղբյուրները ուշագրավ տեղեկություններ են պահպանել ոչ միայն ռուսների, այլև սլավոնների ու նրանց նախորդների մասին։ Պատմահայր Մովսես Խորենացին (V դ.) իր «Հայոց պատմություն» գրքում խոսում է հյուսիսային երկրների բնակիչների ու նրանց հետ հայերի շփումների մասին։ VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին արժեքավոր վկայություններ է թողել Դոն գետի շրջանում բնակվող սլավոնական ցեղերի մասին։

Հայերի ու սլավոնների հանդիպումները տեղի էին ունենում Հյուսիսային Կովկասի, Կասպից ու Սև ծովերի, Վոլգա և Դոն գետերի վրայով, ինչպես նաև Բալկաններում ու Բյուզանդիայում։ VII դարի հայ հեղինակ Սեբեոսը հաղորդում է, որ բյուզանդական կայսր Մավրիկիոսը (582—602) հայկական զորք է հավաքում և Մուշեղ Մամիկոնյանի ղեկավարությամբ ուղարկում Բյուզանդիայի դանուբյան սահմանները պաշտպանելու։

Այսպես, տարբեր ուղղություններով կապեր են ստեղծվում հայերի և սլավոնների միջև։ Դրան նպաստում են նաև հայերի արտագաղթերը։ Փոկաս կայսեր (602—610) հրամանով մշտական բնակության համար Թրակիա է ուղարկվել 30.000 հայ։ Նման անսովոր ու մեծ վերաբնակեցումը չէր կարող

չդառնալ բուլղարների ու մյուս սլավոնական ցեղերի և հայերի միջև նոր ու բազմերանգ կապերի սկիզբ։ Բալկաններում ստեղծվում են հայկական գաղթավայրեր, որոնք կապված էին Հայաստանի հետ և նպաստում էին հայ-բյուզանդական, ապա և հայ-սլավոնական մերձեցմանը։

756 թ. Կոստանդին V կայսրը (741—775) հայ աղանդավորներ է գաղթեցրել Թիլիպպուպոլիս։ Նման գաղթեցումներ եղել են նաև հետագայում։

Հովհաննես Ձմշկիկը (969—976) «հայկական վայրերից» ու Պոնտոսից հայ աղանդավորներին բռնագաղթեցրեց նույն Թիլիպպուպոլսում։ Այստեղ հերձվածող պավլիկյանների հետ եղել են նաև մեծ թվով հայադավաններ։ Պավլիկյան շարժումը շատ շուտով տարածվում է Թրակիայում և այնտեղից թափանցում Բուլղարիա և այլ բալկանյան երկրներ։

Պավլիկյան շարժումը, ներթափանցելով Բալկաններ, չէր կարող չստեղծել հայերի և սլավոնական ժողովուրդների շփման նոր առիթներ։ Պատահական չէ, որ Թոմաս Սլավոնացու ղեկավարած ապստամբությանը (821—823 թթ.) մասնակցում էին ոչ միայն հույն և մակեդոնացի գյուղացիական զանգվածները, այլև հայերը, սլավոնական համայնքներն ու կիսահպատակ ցեղերը։

Այսպես, հայերի համար Բյուզանդիայից դեպի բալկանյան և արևելաեվրոպական սլավոնական երկրները բանուկ ճանապարհներ են ստեղծվում VIII—IX դարերում։

Եթե հաշվի առնենք հայ վաճառականության տեղն ու դերը այդ ժամանակաշրջանի առևտրում (ինչպես արաբական իշխանության տակ գտնվող Անդրկովկասում, այնպես էլ նրա սահմաններից դուրս), ապա ավելի հասկանալի ու ակնբախ կդառնան «հյուսիսայիննների» ու հայերի միջև առնչությունների ստեղծումը։ Կիևում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված են արաբական արծաթյա դրամներ և ականջօղեր, որոնց նմանները գտնվել են Հայաստանի հին մայրաքաղաք Դվինում կատարված պեղումների ժամանակ։ Պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանի կարծիքով դրանք Կիև են տարվել Բագրատունյաց հայկական թագավորության ժամանակներում։

Սլավոնական ցեղերի միավորման և արևելասլավոնական պետության՝ Ռյուրիկովիչների ռուսական մեծ իշխանության ստեղծման, ինչպես և հայկական Բագրատունյաց պետության զարգացման ժամանակաշրջանում ձևավորվում և աշխուժանում էին հայ-ռուսական կապերը, ընդգրկելով հոգևոր ու նյութական կուլտուրայի բնագավառները։ Այդ կապերի մասին քիչ բան է հասել մեզ, սակայն այդ քիչն էլ բավական է դրանց առկայության և աստիճանական զարգացման մասին խոսելու համար։ «Արաբական աղբյուրների մի շարք վկայություններից պարզ երևում է,— գրում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը,— որ VIII դարից սկսած Անդրկովկասի հյուսիսային առևտուրը առավել զարգացման հասավ IX—X դարերում»[1]։ Հայանի է հայերի մեծ դերն այդ առևտրում, որին, անկասկած, խանգարում էին միջֆեոդալական կռիվները և արաբական տիրապետությունը։ Արաբների դեմ հայերը գործակցում էին Բյուզանդիայի հետ։

Այդ ժամանակաշրջանում Բյուզանդիայի հետ լավ հարաբերությունների մեջ էր նաև Կիևյան պետությունը։ X դարի հեղինակ Մովսես Դասխուրանցին առաջինն էր հայ ժամանակագիրներից, որ հաղորդում է ռուսների («ռուզիկների») կասպյան արշավանքի մասին, երբ նրանք հյուսիսից փոթորիկի նման սլացան արաբների վրա և անսպասելիորեն հասան Աղվանքի մայրաքաղաք Պարտավ (Բարդա) և գրավեցին այն։ Ռուսների դեմ ելավ Սալարը, բայց «...ոչինչ կարեր վնասել, զի անյաղթելի էին զօրութեամբ»[2]։

Հետաքրքիր է նաև այն, որ Կիևյան Ռուսիայի իշխան Իգորի (912—945) կասպյան արշավանքի ժամանակ ռուսական նավատորմիղը 943—944 թվականներին մտնում է Անդրկովկասի սահմանները, և ռուսները ճամբար են դնում Կուր գետի վրա։

---

1 *Я. А. Манандян*, О торговле и городах Армении в связи с мировой торговлей, Ереван, 1954, стр. 199—200.

2 «*Մովսես Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից*», Թիֆլիս, *1913*, էջ *385—386*։

Լ. Մելիքսեթ-Բեկը արդարացիորեն ենթադրում է, որ ռուսների և՛ 913, և՛ 943—944 թվականների կասպյան արշավանքները կապված էին Անդրկովկասի իշխանավորների հետ օգնություն խնդրելու հետ[3]: Դրա հիմքերը հասկանալի են հայ-հունա-ռուսական համագործակցության հենքի վրա: X—XI դդ. ապրած հայ հեղինակ Ստեփանոս Տարոնեցու վկայությամբ Բյուզանդիայի հայազգի Վասիլ II կայսեր խնդրանքով Կիևի մեծ իշխան Սվյատոսլավի որդին՝ Վլադիմիրը (978—1015) Բյուզանդիային օգնության է ուղարկում վեց հազարանոց զորք, բայց պայմանով, որ կայսրը իր քրոջը՝ Աննային կնության տա իրեն, իսկ Վլադիմիրը պարտավորվում է ընդունել քրիստոնեություն և այն տարածել Ռուսիայում: Ինչպես գրում է Ս. Տարոնեցի պատմիչը, հենց այդ ժամանակ էլ (այսինքն 988 թ.) ռուսներն ընդունեցին քրիստոնեությունը[4]:

Հայտնի է, որ միջին դարերում (ինչպես և հետո) թագավորական ու իշխանական տների միջև ստեղծվում էին ընտանեկան կապեր, որոնք հաճախ ամրապնդում էին նրանց քաղաքական ու ռազմական դաշինքը: Այդ առումով չի կարելի անտեսել հայազգի Վասիլ II կայսեր քրոջ՝ Աննայի և ռուսաց մեծ իշխան Վլադիմիրի ամուսնության նշանակությունը ռուս-բյուզանդական և հայ-ռուսական կապերի հետագա ընդլայնման համար:

Կիևի մեծ իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչի (Իմաստունի) ժամանակ (1019—1054) հզորանում է Ռուսիան, զարգանում են կուլտուրան, գիրն ու գրականությունը: Հետաքրքիր է, որ այդ ժամանակաշրջանի ռուսական տարեգրություններում մեջ արդեն պահպանվել են հիշատակություններ Հայաստանի (Մեծ ու Փոքր Հայքի), հայերի, հայկական դավանանքի և Արարատ սարի մասին: Այս հանգամանքը չի կարելի բացատրել միայն ունեցած տեղեկությունները շարադրելու տարեգիրների ցանկությամբ: Այդ պետք է լիներ կուլտուրական, քաղաքական

---

3 Տե՛ս Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения, Հայկ. ՍՍՀ ԳԱ լրվի ինստիտուտի «Աշխատություններ», հ. I, Երևան, 1946:

4 Տե՛ս «Ստեփանոս Տարոնեցւոյ Պատմութիւն տիեզերական», ՍԳՔ, 1885, էջ 276—277:

ու տնտեսական առնչությունների հաստատման հետևանք։ Կիևյան պետությունը կապեր էր հաստատում Եվրոպայի ու Ասիայի երկրների հետ՝ վարելով ակտիվ քաղաքականություն։

XI դարի հայ հեղինակ Արիստակես Լաստիվերտցու մի վկայության համաձայն 1054—1055 թվականին Հայաստանում արշավող սելջուկների դեմ, Բաբերդի մոտ, կռվել են «վառանգները», այսինքն վարյագները՝ ինչպես ժամանակակիցներն անվանում էին առաջին ռուս իշխաններին՝ Յուրիկովիչներին ու նրանց զորքերին։ Վառանգ-ռուսների մի զորամաս դեռևս 1021—1022 թվականներին ձմեռելիս է եղել Տրապիզոնի մոտ։ Հայտնի է նաև, որ 1046—1047 թվականներին 3000 ռուսներ մասնակցել են վրաց Բագրատ թագավորի զորքերի հետ սելջուկների դեմ մղված մարտերին։ Մահմեդական էմիրների կոալիցիայի դեմ վրաց թագավոր Դավիթ II Շինարարի (1073—1125) մղած պատերազմներին մասնակցում էին վարյագները—ռուսները։ Հիշենք նաև, որ Դավիթ II-ը հայերին թույլատրեց կառուցել Գոռա (Գորի) քաղաքը, որն այդ ժամանակներից սկսած դառնում էր հայ-վրացական կապերի կենտրոն։

XI—XII դարերում հայերի կապերը Ռուսիայի հետ ավելի ընդլայնվեցին, իսկ դրանց մեծապես օժանդակեցին Հին Ռուսիայում և մասնավորապես Կիևում ստեղծվող հայկական գաղթավայրերը։ Կիևյան Ռուսիայում հայկական գաղթավայրերն սկզբնավորվել են հավանաբար դեռևս XI դարում, այդ պետության տնտեսական ու ռազմական հզորության ժամանակներում։ Հիշենք, որ Յարոսլավ Իմաստունից հետո սկսված միջֆեոդալական կռիվներում հաղթելով, Վսեվոլոդ Յարոսլավիչը (1078—1093) և Վլադիմիր Վսեվոլոդովիչ Մոնոմախը (1113—1125) երկիրն ազատեցին պոլովցիներից՝ 1103, 1107 և 1111 թթ. արշավանքներից հետո, դաշն կնքեցին Լեհաստանի հետ, մեծապես նպաստեցին երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վերելքին։ Այդ, անկասկած, խթանեց հայ գաղթականների հոսքին դեպի Ռուսիա և նպաստեց Կիևի դաղութի ձևավորմանը։ Ինչպես գրել է ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովը, դրա համար բավական հիմք է տալիս Ռեկուլն

Կիևո-Պեչերսկի վանքի պատերիկը (սրբոց վարքը), որ «գեղեցիկ կերպով պատմում է հայերի, սիրիացիների, հրեաների և լատինականների հետ Պեչերսկի վանքի վանականների ունեցած վեճերի մասին: Ագապիտի մասին Ասքում,— շարունակում է Տիխոմիրովը,— խոսվում է հայ բժշկի («Հայ ծագումով և հավատով, որ ճարպիկ ու հնարագետ էր բժշկության մեջ») և նրա հավատակիցների, ուրեմն մի ամբողջ հայկական գաղութի մասին: Հայ բժիշկը շփվում էր ամենաբարձր ֆեոդալական շրջանների հետ և բժշկում Վլադիմիր Մոնոմախին ու բոյարներին»[5]: Նույն պատերիկը հիմք է տալիս խոսելու Կիևում հայկական թաղամասի մասին, ուր գնում էր միաբան Ֆեոդոսին՝ հայերի հետ դավանանքի հարցերի շուրջը վիճաբանելու:

Կասկած չի հարուցում հայ վաճառականների, արհեստավորների, զինվորների ու հոգևորականների այցելությունները և բնակություն հաստատելը Կիևում, որը և հավանաբար դարձել էր տեղի հայերի կրոնական կենտրոնը: Հայ հոգևորականներից մի քանիսը մասնակցել են 1157 թ. հրավիրված եկեղեցական ժողովի՝ սոբորի նիստերին: Պահպանվել են փաստեր հայ և ռուս հոգևորականների միջև եղած փոխադարձ ծանոթության, վեճերի, անգամ թշնամանքի, բայց և համագործակցության մասին: Այսպես, արքեպիսկոպոս Գրիգոր Տուգեորդին, որ գլխավորում էր Հաղպատ-Սանահինի վանական մի խումբ գործիչների, 1175 թ. Գրիգոր IV (1113—1193) կաթողիկոսին խորհուրդ էր տալիս՝ բողոքել բյուզանդական կայսեր դեմ, միավորել ուժերը ռուսների հետ՝ հայերին ազատելու բյուզանդական կայսրության հալածանքներից:

Հայերի հանդիպումները ռուսների հետ XI—XII դարերում տեղի էին ունենում նաև Վրաստանի միջոցով ու Վրաստանում: Վոլինի իշխան Իզյասլավ Մստիսլավովիչը 1154 թ. ամուսնացել էր Աբխազիայի իշխանի դստեր հետ: Վրաց թագուհի Թամարի (1184—1212) ամուսնությունը Վլադիմիր-Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրի Բոգոլյուբսկու հետ նոր առիթ եղավ հայերի ու ռուսների շփում-

[5] М. Н. Тихомиров, Древнерусские города, М., 1956, стр. 293.

ներին։ Ուշագրավ է այն, որ հայ և վրաց զորքերը Յուրի Բոգոլյուբսկու հետ 1185 թ. սելջուկներից ազատեցին Դվինը[6]։

Այս բոլորը խոսում է այն մասին, որ X—XII դարերում ռուսները բավական ծանոթ ու մոտ ժողովուրդ էին ոչ միայն Ռուսիայի հայկական գաղթավայրերի, այլև Անդրկովկասի հայերի համար։ Ռուսների համար էլ անծանոթ ու օտար չէին հայերը։

Այդ ժամանակներում զարգանում են նաև մշակութային կապերը։ Դրանց ուշագրավ արտահայտություններից մեկն է Բորիսի և Գլեբի «Վարքի» հայերեն թարգմանությունը։ Գրիգոր Տզան Երուսաղեմի գրավման պատմությանը նվիրված պոեմում ռուսներին անվանում է «հռչակավոր ազգություն»։ Ռուսիայում ստեղծվել են տաճարներ, գմբեթներ, որմնանկարներ՝ նվիրված Գրիգոր Լուսավորչին ու Հռիփսիմե կույսին։ Ինչպես գրում է Լ. Մելիքսեթ-Բեկը, հռչակավոր Ներնդիցա եկեղեցին (կառուցվել էր Մեծ Նովգորոդի մոտակայքում 1198 թ.՝ որպես Կիևի մեծ իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչի «պահապան» եկեղեցի՝ պալլադիում) պահպանվել էր Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմեի որմնանկարները և մի շարք առանձնահատկություններով տարբերվում էր ռուսական սովորական եկեղեցիներից (այն ավերվել է ֆաշիստ բարբարոսների կողմից)։ Նշելով Հին Ռուսիայի և Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրաների փոխազդեցությունները, ակադեմիկոս Բ. Դ. Գրեկովը ընդգծում է նրանց նշանակալի լինելը[7]։ Այդ հաստատվում է նաև մյուս ուսումնասիրողների, նրանց թվում ակադ. Հ. Ա. Օրբելու կողմից։ Հ. Օրբելին նշում է, որ Անիի եկեղեցիներից մեկը ձևավորել է ռուս նկարիչը (1215 թ.), իսկ Ռուսիայում աշխատել են հայ վարպետները[8]։

Ռուսական ու հայկական պետականության անկումը և թաթար-մոնղոլական տիրապետության հաստատումը XIII դ.

---

6 *Տե՛ս* С. Т. Еремян, Юрий Боголюбский в армянских и грузинских источниках, *Երևանի պետ. համալսարանի «Աշխատություններ», հ. XXIX, 1946, էջ 389—429։*

7 *Տե՛ս* Б. Д. Греков, Киевская Русь, М., 1949, стр. 390, 429.

8 *Տե՛ս* газ. «Коммунист», 1944 г., № 94.

կեսերին փոխեցին հայ-ռուսական կապերի բնույթը, բայց չխզեցին աբխազաւորվող պատմական կապերն ու բարեկամությունը։ Ինչպես գրում է Սերգեյ Գլինկան, «Ռուսաստանին ու Հայաստանին հասած նույնօրյա տարաբախտությունները նախակարապետը եղան նրանց հետագա մերձեցման համար»[9]։

Հայրենիքից քշված կամ փախած հայերի մեծ զանգվածներ ապաստան էին որոնում ու շարժվում դեպի Հին Ռուսիայի տարածքները, որոնք կամ չէին նվաճված թաթարների կողմից, կամ նվաճվեցին ավելի ուշ՝ մերձվոլգյան, ազովսևծովյան, անդրդնեպրյան շրջանները, որտեղ հնուց ի վեր բնակվելիս էին եղել իրենց հայրենակիցները և ստեղծել հայկական գաղթավայրեր։ Դրանք դարձան հայ-ռուսական հնամենի բարեկամության մշտավառ օջախներ, որտեղ պահպանվում ու զարգացվում էր հայրենի մշակույթը։

X—XIII դդ. հայերը բնակություն են հաստատում նաև Ղրիմում, ստեղծում իրենց գաղթավայրերը, որոնք բազմանում են, մեծանում՝ նշանակալի դեր կատարելով Սև ծովի երկրների ու Ռուսիայի առևտրական և տնտեսական կյանքում։ Պատահական չէ, որ միջին դարերում Ղրիմն անվանում են «Ծովային Հայաստան»։

Հայերին դեպի Ռուսիա տանող ուղիներից մեկն էր Վոլգան իր վտակներով, որոնց ափերին ստեղծվել են հայկական գաղթավայրեր դեռևս X—XIII դարերում։

Ռուս գիտնականների կատարած պեղումները պարզեցին հին ու նշանակալի հայկական գաղութի գոյությունը Կազանից 90 կմ հեռավորության վրա՝ Մեծ Բոլգար քաղաքում։ Բոլգարը եղել է բավական խոշոր, զարգացած արհեստներով ու առևտրով հայտնի կենտրոն, որի հայկական գաղութը մեծ հետաքրքրություն է ներկայացնում[10]։ Արժե հիշատակել այն փաստը, որ Պետրոս Մեծը առաջինն է եղել նրանցից, ովքեր

---

9 *С. Глинка*, Обозрение истории армянского народа, т. II, М., 1832, стр. 194.

10 *Տե՛ս А. Смирнов*, Волжские булгары, М., 1951, стр. 185—195. *Տե՛ս նաև Հ. Մ. Ջանփոլադյան*, *Բոլղար քաղաքի հայկական հնություններ*, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2։

ՀՀ ԳԱԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ըստ էության հետաքրքրվել են Մեծ Բուլգարի ավերակներով։ Նա 1712 թ. Մոսկվայից Կազան է ուղարկել հայազգի Իվան Վասիլևին՝ վերծանելու տապանաքարերի վրա եղած արձանագրությունները։ Պարսկական արշավանքի մեկնելիս Պետրոս I-ը գնում է Մեծ Բուլգար, հետաքրքրվում քաղաքի պարիսպներից դուրս պահպանված քառանկյունի սրահով, հրամայում ուսումնասիրել սրահը և նրա շուրջը գտնվող գերեզմաններն ու տապանաքարերի արձանագրությունները։ Հետագայում այնտեղ հայտնաբերվել են X—XIV դարերի հարյուրավոր գերեզմաններ ու տապանաքարեր, որոնցից մի մասը հայկական է։ Պարզվել է, որ քաղաքի պարիսպներից դուրս եղել է հայկական բնակատեղի։ Հայկական տապանաքարերից հնագույնը (1121 թ.) գտնված է «Հունական պալատի» մոտ։ Գերեզմանների պեղումները, տապանագրերի և այսպես կոչված՝ «Հունական պալատի» ուսումնասիրությունները պրոֆ. Սմիռնովին բերել են այն եզրակացությանը, որ Մեծ Բուլգարում եղել է հայկական գաղութ, այն ունեցել է իր եկեղեցին և որ «Հունական պալատը» հանդիսացել է հայկական սրբատեղի[11]։

XIII դարի կեսերից Մեծ Բուլգարն աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը։ Առևտրականների հանդիպումների և ապրանքափոխանակության կենտրոն է դառնում Ոսկե Հորդայի մայրաքաղաքը՝ Սարայը (Սարայ-Բատու), ապա Նոր Սարայը (Սարայ-Բերկե), որը աշխարհագրական հաջող դիրք էր գրավում Վոլգա գետի ափին, Աստրախանի մոտերքում և Հարավի ու Հյուսիսի միջև հանդիսանում էր տնտեսական ու քաղաքական կենտրոն, տարանցիկ առևտրի կարևոր հանգույց։

Ժամանակակից աղբյուրների ծայրահեղ սղությունը հնարավորություն չի տալիս լրիվ ու պարզ պատկերացում կազմել Ոսկե Հորդայի ու Ռուսիայի հետ հայերի ունեցած առնչությունների վերաբերյալ, սակայն դրանց մասին խոսելու հիմք են տալիս մեզ հասած առանձին վկայությունները,

11 Նույն տեղում։

որոնց նշանակությունը շատ ավելի մեծ է, քան հաղորդած կոնկրետ նյութը։

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Վոլգայի մայրուղիով դեպի հյուսիս են շարժվել ոչ միայն հայ վաճառականներ, քաղաքական գործիչներ ու հոգևորականներ, այլև հայրենիքից փախչող հոծ զանգվածներ։ Հայտնի է, որ այդ մայրուղիով են անցել Սմբատ Սպարապետն ու Խաչենի իշխան Հասան-Ջալալը. Կարսի և Դերբենտի վրայով 1254—1255 թթ. Սարայ է գնացել Հեթում թագավորը[12]։ Սարայում 1319 թ. գրված մի հիշատակարանի անհայտ հայ հեղինակը գանգատվում է գրչի համար աննպատակ ցրտաշունչ եղանակից[13]։

Աստրախանում և հարևան վայրերում հայերի բնակության մասին է վկայում նաև ռուսական տարեգրությունը։ Այսպես, 1346 թ. ուժեղ համաճարակ է եղել Սարայում (Աստրախանի մոտերքում), որտեղ մեռել են «մուսուլմաններ, թաթարներ և հայեր»[14]։

Ոմն Գրիգոր 1341 թ. իր գրած հիշատակարանում նշում է. «Գրեցաւ գիրքս... ի քաղաքս յԱզախս, առ դրան սուրբ Լուսաւորչին...»[15]։

Մի չափածո հիշատակարանի հեղինակ՝ ոմն Վարդան, Ազովն անվանում է «աննման քաղաք», ուր նա գնացել է Կաֆայից և Ազովում գրել է իր գիրքը[16]։ Այն փաստը, որ

---

12 *Г. Г. Микаелян*, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 368. См. также *К. П. Патканов*, История монголов по армянским источникам, ч. II, 1874, стр. 74 и др.

13 *Տե՛ս* Լ. Ս. Խաչիկյան, *ԺԴ դարի հայերեն հիշատակարանները, հ. I, Երևան, 1950, էջ 230։*

14 «Полное собрание русских летописей» (в дальнейшем ПСРЛ), т. XXV, стр. 175.

15 Լ. Ս. Խաչիկյան, *նշվ. աշխ., էջ 329։*

16 *Հիշատակարան գրողը (Վարդանը) հավանաբար եկեղեցական է եղել։ Այդ է ասում նրա ոտանավորը.*

«Ի ծովս անցա այս անսահման,
Ի քաղաքն ելա ի ֆռանկ Կաֆան,

Ազովում եղել է հայկական եկեղեցի և որ Աֆենտի դուստր «նաս խանումն այնտեղ գնել է ավետարան...»[17], հիմք է տալիս խոսելու Ազովում ու Վոլգայի ավազանում մշտական հայ բնակչության, ինչպես և Ազովի, Կաֆայի և վոլգյան քաղաքների հայերի միջև բազմերանգ կապերի առկայության մասին:

Վոլգա-Դոնյան առևտրում մասնակցում էին հայերն ու ռուսները, որոնք աշխույժ գործարքներ էին կատարում Նիժնի Նովգորոդում ու Կազանում, հավանաբար նաև Մոսկվայում: Կովկասից հայերի տեղաշարժեր են եղել դեպի Աստրախան, որտեղից հետագա տարիների ընթացքում նրանք գնացել են դեպի Վոլգայի ավազանի այլ բնակելի վայրեր, ինչպես նաև Ղրիմ, Մերձդոնյան շրջաններ ու Սարայ-Բերկե (այնտեղ բնակչության թիվը XIV դարի վերջերին հասնում էր 200000-ի)[18]: Հայերն Աստրախանից անցնում էին նաև Ղրիմ, որտեղ նրանք XIV դարում կազմեցին բնակչության մի զգալի մասը՝ թաթարներից հետո գրավելով 2-րդ տեղը[19]:

Ինչպես Աստրախանից, այնպես և հիշյալ կենտրոններից հայերը կապեր էին հաստատում Ռուսիայի հետ: Հանդիպումներին նպաստում էին Ղրիմի առևտրաարհեստավորական կենտրոնները, ինչպես և Ազովի իտալական գաղութի առևտրական պայմանագիրը Ոսկե Հորդայի Ուզբեկ խանի հետ: Հիշյալ կենտրոններին լավատեղյակ հայ վաճառականները կապեր էին հաստատում դրանց և Արևելքի միջև, մասնակցելով Վոլգա-Դոնյան առևտրին և XIV դարում աշխույժ գործարքներ կատարում ոչ միայն Աստրախանում, այլև Կա-

---

Ազախ եկի այս աննման,
Գիրքս գրեցի գայս գՎարդան»:

Նույն տեղում, էջ 330:

17 Նույն տեղում:

18 Տե՛ս М. М. Ковалевский, К ранней истории Азова, Харьков, 1902, стр. 115—126.

19 Նույն տեղում: Մանրամասնությունները տե՛ս Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, հ. 1, Երևան, 1964:

զանում և Նիժնի Նովգորոդում[20]: Ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովը գտնում է, որ XIV դարից սկսած հայերը, ինչպես և Մոսկվայի վաճառականները, մասնակցում էին արևելյան առևտրին: Տարեգրությունը մեզ հասցրել է մի փոքր, բայց կարևոր տեղեկություն այն մասին, որ 1390 թ. Մոսկվայում բռնկվել է մեծ հրդեհ և այն սկսվել է հայազգի Աբրահամի տնից[21]: Աբրահամի տունը եղել է Պոսադում (Կրեմլի շուրջը ստեղծված առևտրաարհեստավորական թաղամաս):

XV դ. հայ գաղութի գոյության մասին ակադ. Տիխոմիրովը խոսում է արդեն որոշակիորեն, դրա ապացույցներից մեկն էլ համարելով մի այլ վկայություն՝ վերցված ռուսական եկեղեցու պատմությունից: Կիպրիան միտրոպոլիտը, լինելով «հայկական աղանդի» կատաղի հակառակորդ, դժգոհ է եղել հայերի ու ռուսների միջև բարեկամական և ամուսնական կապեր հաստատելու փաստերից և կարգադրել է թեմերին հայերին չթողնել ռուսական եկեղեցիներում աղոթելու, չթույլատրել ռուսների հետ ամուսնությունն ու անգամ շփումները պասի և տոնական օրերին», քանի որ հայերը դեռևս անցյալում ուղղափառությունից հրաժարվել են: Սակայն ռուսները, ինչպես նկատում է Մ. Ն. Տիխոմիրովը, հաշվի չէին առնում միտրոպոլիտի խիստ հրահանգներն ու նշանները. «Շարքային ռուս մարդիկ մեծ տարբերություն չէին տեսնում ռուսական և հայկական դավանանքների միջև, հաճույքով շփվում էին, խնջույքներ սարքում ու բարեկամություն անում և ամուսնանում հայերի հետ, նրանց թույլատրելով հաճախել իրենց եկեղեցիները»[22]: Ռուսների նման վերաբերմունքը միանգամայն հասկանալի է (ինչպես և հայերի): «Մերձավոր Արևելքի քաղաքներում և Ներքին Պոլոժյեում ռուս վաճառականների համար հայերը դավանանքով ավելի մոտ էին և այդ բերում էր և՛ խնամիություն, և՛ եղբայրություն»[23]:

---

20 Տե՛ս *М. Н. Тихомиров*, Новый памятник московской политической литературы XVI в., М., 1930, стр. 111—112.

21 Տե՛ս *И. Забелин*, История города Москвы, т. I, М., 1902, стр. 98.

22 *М. Н. Тихомиров*, Древняя Москва, М., 1947, стр. 143.

23 Նույն տեղում:

Չնայած դավանաբանական տարբերություններին ու վեճերին, քրիստոնեությունը ինչ-որ չափով մերձեցնում էր ուղղափառ ռուսներին ու լուսավորչական հայերին: Սակայն շատ ավելի կարևոր դեր էին խաղում տնտեսական-առևտրական կապերը, որոնք իրենց անհրաժեշտությունն զգացնել էին տալիս անգամ ճանապարհների ու առևտրական գործունեության անապահով պայմաններում: 1378 թ. Ոսկե Հորդայի խանի որդի Արապշայի թաթար հրոսակները Նիժնի Նովգորոդի մոտերքում ջարդում են ռուս խոշոր վաճառականներին՝ հոստերին ու թալանում նրանց ողջ ունեցվածքը: Սակայն առևտուրը շարունակվում էր, անգամ Մամայ խանի 1380 թ. արշավանքի ժամանակ, երբ նա ռուսական իշխանության դեմ էր ելել մեծ ու բազմազգ բանակով, որի մեջ կային և «բուսուրմաններ, և հայեր»[24]:

Ոսկե Հորդայի խաները իրենց արշավանքները ձեռնարկելիս Մոսկվայի և մյուս ռուս իշխանությունների դեմ բռնությամբ կռվի էին տանում նաև հպատակներին: Հայեր են եղել ոչ միայն Մամայի զորքի մեջ, այլև նրա դեմ կռվող ռուսական բանակում: Ուշագրավ է այն փաստը, որ ռուս նշանավոր զորավար, Մոսկվայի մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի հաղթական Կուլիկովյան ճակատամարտում զոհվածների թվում, ռուսական տարեգրությունը հիշատակել է «Անդրեյ Սերկիզովի»[25] և «Սիմեոն Մելիքովի (նշվում է նաև «Սեմեն Մելիք» ձևով) անունները, ընդ որում Մելիքովը առաջինն էր, որ հաղորդել էր թաթարական Հորդայի Մոսկվայի վրա արշավելու լուրը[26]: Հավանական է, որ նրանք հայեր էին:

Այսպես, XIII դարի 20-ական թվականներից մինչև XV դ. կեսերը Ռուսաստանի և Անդրկովկասի համար եղել են ծանր

---

24 *Տե՛ս* ПСРЛ, т. X, стр. 155.

25 *Տե՛ս* ПСРЛ, т. XXV, стр. 204.

26 «Сказание о Мамае по рукописи XVI в.» *ձեռագիր հուշարձանում Սեմեն Մելիքի մասին ասված է, որ նա «համուր պահակ» էր* («твердый страж») *և տափաստաններում հետևում էր Մամայ խանի զորքերի շարժմանը: Տե՛ս* «Хрестоматия по истории СССР», т. I, М., 1949, стр. 219.

փորձությունների ժամանակաշրջան։ Կիևյան պետության անկումը, ուղեվային իշխանությունների պարբերական մասնատումները, միջֆեոդալական կռիվները և ապա թաթարա-մոնղոլական նվաճումներն ու ավելի քան երկուհարյուրամյա տիրապետությունը (1240—1480 թթ.) Ռուսաստանում ոչ միայն արգելակեցին երկրի բնականոն ֆեոդալական հարաբերությունների օրինաչափ զարգացման ընթացքը, այլև հսկայական վնաս հասցրին երկրին։ Նմանօրինակ, թերևս առավել ծանր վիճակ էր ստեղծվել Հայաստանում, որտեղ ավելի հեշտությամբ ու սանձարձակությամբ էր մոլեգնում օտար նվաճողը՝ օգտվելով իր ուժերի գերազանցությունից և հայկական պետականության բացակայությունից։ Նման պայմաններում չէին կարող նորմալ զարգանալ ազգամիջյան հարաբերությունները, առավել ևս Հայաստանի ու հայերի կապերը հեռավոր Ռուսիայի հետ։

Մինչև XV դ. կեսերը Ռուսաստանի ու Անդրկովկասի համար շատ աննպաստ էին դասավորվել նաև միջազգային հարաբերությունները։ Թաթարա-մոնղոլական դարավոր տիրապետության, Մամայի, Թոխտամիշի, ապա և Լանկ-Թեմուրի կործանարար արշավանքներից հետո պատմության բեմ բարձրացավ նրանց աշխարհավեր դերն ստանձնած Օսմանյան Թուրքիան, որի հաղթարշավին անկարող էր դիմակայել իր հոգևարքն ապրող Բյուզանդական կայսրությունը։ 1453 թ. Կոստանդնուպոլիսն ընկավ, Թուրքիան մտավ Եվրոպա, ուժեղացնելով ագրեսիան Բալկանյան երկրների, Կովկասի ու Ղրիմի դեմ։ Ահավոր վտանգ կախվեց ինչպես այդ երկրների ողջ բնակչության, այնպես և այնտեղ ստեղծված հայկական գաղթավայրերի վրա։

XV դարի երկրորդ կեսից սկսվեց ռուսական ազգային պետության ստեղծման, վերընթաց զարգացման և ուժեղացման ժամանակաշրջան, երբ հայ-ռուսական հարաբերությունները բևեռախեցին նշանակալի հեռանկարներ ստեղծող փուլը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ԿԱՊԵՐԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հայ ժողովրդի դրությունը XV դարի սկզբներին շարունակում էր մնալ ծանր ու մղձավանջային։ Թոխտամիշի և Լանկ-Թեմուրի կործանարար արշավանքներից հետո երկիրն ընկավ նախ կարա-կոյունլու (1410—1468 թթ.), ապա աղ-կոյունլու թուրքմենների տիրապետության տակ (1468—1502 թթ.)։

XVI դարի սկիզբը նշանավորվեց աղետալի իրադարձություններով։ Կըզլբաշների շահ Իսմայիլը (1502—1524) տապալեց աղ-կոյունլուների իշխանությունը և Հայաստանի մեծ մասում հաստատեց Սեֆյան դինաստիայի տիրապետությունը։ Բայց Թուրքիան չէր ուզում հանդուրժել շահի տիրակալության ընդլայնումը և ամրապնդումը։ 1512 թ. սուլթան Հռչակված Սելիմ Ահեղը (1470—1520) 1513 թ. հանդես եկավ մահմեդական կրոնի շիա դավանանքի կրողների, ուրեմն և Պարսկաստանի դեմ անհաշտ կռվի դուրս գալու կոչով և 1514 թ. շահ Իսմայիլի դեմ պատերազմ սկսեց։ Այն շարունակվեց մինչև 1555 թ., երբ Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև։ Բայց դրանով թուրք-պարսկական պատերազմները միայն սկսվեցին և փոխհաջողություններով ու կարճատև ընդմիջումներով շարունակվեցին շուրջ մեկ դար՝ մինչև 1639 թ. կնքված հաշտությունը, երբ Հայաստանը երկրորդ անգամ և վերջնականապես բաժանվեց շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի միջև։ Արևելյան Հայաստանն ընկավ պարսից, իսկ Արևմտյան Հայաստանը՝ թուրքաց տիրապետության տակ։

Բոլորովին այլ ձևով ընթացավ Ռուսաստանի պատմությունը, որն սկսվեց Ռուսիայի բազմաթիվ իշխանություններից մեկի՝ Մոսկովյան մեծ իշխանության աստիճանական վերելքով և XV—XVI դդ. ազգային պետության կազմավորումով։

Այդ ժամանակաշրջանում Ռուսաստանը կանգնած էր ֆեոդալիզմի զարգացման ու վերելքի ճանապարհին։ Դեռևս XIV դարում, Ոսկե Հորդայի իշխանության տակ գտնվող ֆեոդալական մասնատված իշխանություններից մեկը՝ Մոսկվայի իշխանությունը, ուժեղանում էր և փորձում թաթար-մոնղոլական լուծը թոթափել։ 1380 թ. Կուլիկովյան ճակատամարտում մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի տարած հաղթանակը Մամայի Հորդաների դեմ վերջնական ազատություն չբերեց, սակայն ազդարարեց օտար տիրապետության մոտալուտ մայրամուտը։ Մոսկվայի շուրջն սկսեցին համախմբվել ռուս ժողովրդի մասնատված զանգվածները։ Մոսկովյան իշխանությունը աստիճանաբար դառնում էր համառուսական քաղաքական ու տնտեսական կենտրոն։

Գյուղատնտեսության, արհեստների, ապրանքափոխանակության ու առևտրի աստիճանական զարգացումը անհրաժեշտ էին դարձնում միասնական օրենքների ու հարկերի, չափ ու կշռի և դրամական սիստեմի ստեղծումը, ուրեմն և կենտրոնացված, մեծ ու հզոր պետականության կազմավորումը։ Այդ անհրաժեշտ էր նաև պարբերաբար կրկնվող թաթարական հարձակումներից երկիրը պաշտպանելու, դարավոր լուծը տապալելու և անկախության հասնելու համար։

Մոսկվայի մեծ իշխան Իվան III-ը (1462—1505), ելնելով ֆեոդալական մասնատվածությունը վերացնելու անհրաժեշտությունից և շարունակելով իր նախորդների քաղաքականությունը, հաջողությամբ միավորեց Կենտրոնական Ռուսիայի երբեմնի անկախ իշխանների տիրույթները, խելամտորեն օգտագործելով երկրի տնտեսական զարգացումն ու քաղաքական անկախության հասնելու համար անհրաժեշտ կենտրոնացված պետություն ստեղծելու ձգտումները նաև մյուս ռուսական իշխանություններում։

Թագավորական իշխանության հեղինակության բարձրաց-

ման նպատակով Իվան III-ը վարում էր հեռատես ու խելամիտ քաղաքականություն, իր կողմը ներգրավելով դեռևս անկախություն պահպանած ռուս իշխաններին, միաժամանակ միմյանց հակադրելով թաթար խաներին և դիվանագիտական կապեր հաստատելով Եվրոպայի արքունիքների հետ։

Ուշագրավ է այն քայլը, որին դիմեց Իվան III-ը, ամուսնանալով Բյուզանդիայի կայսերական տան վերջին ներկայացուցիչ Զոյա-Սոֆյա Պալեոլոգի հետ, կարծես դրանով դառնալով Արևելյան Հռոմեական կայսրության գահի օրինական ժառանգ։ Դինաստիական այդ ամուսնությանը մեծապես նպաստեց Հռոմի պապը՝ հուսալով հզորացող Ռուսաստանը հանել թուրքական ագրեսիայի դեմ։ Բայց պետք էր նախ և առաջ Ռուսաստանն ազատել թաթարական լծից, միավորել երկիրը՝ պաշտպանելով այն պարբերաբար կրկնվող թաթարական արշավանքներից։ Ինչպես նկատում է Ֆ. Էնգելսը, այդպես էլ ընթացավ Ռուսաստանի միավորման ու ազատագրման համատեղ պրոցեսը, երբ «ուղղափային իշխանների հպատակեցումը զուգորդվում էր թաթարական լծից ազատվելու հետ և վերջնականապես ամրապնդվեց Իվան III-ի կողմից»[1]։ Մոսկվայի առաջին իսկ հաջողությունները XV դարի կեսերին նկատելի դարձան ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում, մասնավորապես Անդրկովկասում։ 1486 թ. Մոսկվա է գնում Շիրվանի խանի դեսպան Հասան Բեկը, իսկ Մոսկվայից էլ դեսպան է ուղարկվում Վասիլի Պանինը՝ նշանավոր Աֆանասի Նիկիտինի հետ[2]։

Բարձրացող ռուսական պետության կարևորագույն հարցն էր միավորել ռուսական հողերը կամ գեթ բարիդրացիական հարաբերություններ հաստատել դեռևս դրանց տիրող թաթարական խանությունների հետ։ Իվան III-ը կարողացավ հաջող արշավանքով 1469 թ. իրեն ենթարկել Կազանի թաթարական խանին, բարելավեց հարաբերությունները եվրո-

---

[1] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. XVI, ч. I, стр. 450.

[2] *Տե՛ս* «Хождение за три моря Афанасия Никитина в 1466—1472 гг.», М.—Л., 1958.

պական պետություններին ու Վատիկանի հետ, կապեր հաստատեց Ռուսիայի, Մերձավոր Արևելքի ու Անդրկովկասի իշխանությունների միջև[3]։

1480 թ. Մեծ Հորդայի Ահմադ խանը իր զորքերով մոտեցավ Մոսկվայի մատույցներին, կանգնեց ռուս զորքերի հանդիման՝ Ուգրա գետի ափին։ Բայց Մոսկվայի իշխանը կարողացել էր դաշնակիցներ գտնել և կանխել Ղրիմի և այլ խանությունների օգնությունը Ահմադին, որը չհամարձակվեց կռիվ սկսել և նահանջեց՝ փաստորեն ճանաչելով Մոսկովյան իշխանության անկախությունը։ Այս բախտորոշ իրադարձությունը մեծապես նպաստեց Ռուսաստանի հզորացմանը։ Ինչպես նկատել է Կ. Մարքսը, դրանից հետո «մենք Իվան III-ին տեսնում ենք միանգամայն անկախ գահի վրա նստած։ Նրա կողքին՝ բյուզանդական վերջին կայսեր դուստրը։ Ոսկե Հորդայի բեկորները ժողովվել են նրա արքունիքի շուրջը... Լիվոնյան ասպետները ջախջախված են... Ջարմացած Եվրոպան, որ Իվան III-ի թագավորության սկզբում նույնիսկ հազիվ էր նկատում Մոսկվայի գոյությունը, շշմել էր իր արևելյան սահմանների վրա հսկայական պետության հանկարծակի հանդես գալուց. և ինքը՝ սուլթան Բայազեթը, որի առաջ դողդողում էր Եվրոպան, առաջին անգամ լսեց Մոսկովիտի գոռոզամիտ ճառերը»[4]։

Մոսկվայի հզորացումը ուժեղ տպավորություն էր գործել Եվրոպայի վրա։ Հասկանալի է, թե որքան մեծ էր դրա նշանակությունը իրենց անկախությունը կորցրած և թուրքական նվաճումների նախագուանը գտնվող փոքր ժողովուրդների համար։

Թաթարական լծի տապալումից անմիջապես հետո՝ 1483 թ., Իվան III-ի մոտ են գնում վրաց թագավոր Ալեքսանդրի դեսպանները՝ Նարիմանը, Դեմիյանը և Խոզի-Մարումը (վերջինը, հավանաբար, հայազգի խոջա Միրաքն էր, որ լավ փոխհարաբերությունների մեջ էր վրացական իշխող շրջան-

---

3 Տե՛ս К. В. Базилевич, Внешняя политика русского централизованного государства, М., 1952, стр. 409—413.

4 К. Маркс, Секретная дипломатия XVIII века, стр. 81.

ների հետ և կատարել էր դիվանագիտական բանագնացություններ Եվրոպայում)։ Դեսպանները բերել էին Ալեքսանդրի նամակը, որում իշխանն ընդգծում էր երկրի ծանր վիճակը և խնդրում օգնություն ու հովանավորություն[5]։ Սա մեզ հասած առաջին քաղաքական փաստաթուղթն է, որ խոսում է վրաց իշխանության կողմից ռուսական օգնություն հայցելու մասին։

Մոսկվան XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին արդեն դարձել էր աշխարհի հետ կապված խոշոր քաղաքական և առևտրաարդյունագործական կենտրոն։

Հայերի շփումները Մոսկվայի հետ եղակի ու պատահական չէին։

Երբ Բյուզանդական կայսրության անկման ու թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավման ժամանակակիցն ու ականատես Աբրահամ Անկյուրացին նրաղում էր, որ «Հռոմայացոց» միջոցով անհավատ «Հագարացոց» ձեռքից ազատվի «Սուրբ Սոփի» տաճարը, ապա նրա անհայտ ժամանակակիցը իր «Թագուհի մը տեսա» սկզբնատողով պոեմում թուրքական տիրապետությունից Կ. Պոլսի ազատագրության մեջ արդեն նշմարում է Մոսկվայի դերը[6]։ Ինչպես ճիշտ կռահել է Ա. Մնացականյանը, Մոսկվայի իշխանի և նրա թագուհու մասին գրված այդ պոեմի հեղինակը նկատի ունի Իվան III-ի և Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդինի եղբոր դուստր Սոֆիայի ամուսնության քաղաքական նկատառումները, երբ Պալեոլոգները և Հռոմի պապը հույս ունեին Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Կոստանդնուպոլիսը։ Ուշագրավ է, որ պահպանվել են պոեմի տասներկու տարբերակներ՝ ինչը վկա-

---

5 Ալեքսանդրը Իվան III-ին գրում էր. «Մթագնվածների համար լույս եղիր, կապույտ երկնքում՝ աստղ, բոլոր իշխաններին՝ վերին իշխան, երկրում—խաղաղություն»։ Տե՛ս A. Цагарели, Сношения России с Кавказом в XVI—XVII вв., СПб., 1891, стр. 8.

6 Այս մասին տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Ռուս ժողովուրդը և Մոսկվան հայ մատենագրության մեջ, Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. XXV, էջ 209—235։ Տե՛ս նաև Ա. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում, ԴՍ «Տեղեկագիր», 1948, № 3։

յում է XV—XVI դդ. նաև հայերի կողմից Մոսկվային տրվող նշանակության և մեծ դերի մասին։ Մոսկվայի հետ կապերի ստեղծմանը նպաստում էին ռուսահայ և այլ գաղթավայրերում բնակվող հայ վաճառականների, նրանց գործատերերի և ծառաների առևտրական ուղևորություններն ու հանդիպումները, ինչպես և զանազան երկրներից Մոսկվա գնացող հայազգի դիվանագետների բանագնացությունները։ Այսպես, 1482 թ. Մոսկվայում էր լեհական դեսպան հայազգի Բոգդանը, որին Իվան III-ը հանձնարարել էր իր հրովարտակը տանել Թամանի իշխանին։ Բոգդանը եղել էր նաև Ղրիմի խանի մոտ, որը Մոսկվայի հետ դաշինքի մեջ էր և խոստացել էր Իվան III-ի «թշնամիներին թշնամի լինել, բարեկամներին բարեկամ»[7]։ Այս դաշինքը կարևոր դեր խաղաց թաթար խաներին միմյանց հակադրելու և 1480 թ. թաթարական լուծը թոթափելու համար մղված պայքարում։ Այդ ժամանակներում Մոսկվայում լինում են տասնյակ հայ դիվանագետներ և դիվանագիտական հանձնարարություն կատարողներ[8]։ Այսպես, օրինակ, 1501 թ. Լիտվայի իշխան (ապա նաև Լեհաստանի թագավոր) Ալեքսանդրը (1492—1506) իր հայազգի սուրհանդակ Սալթանի միջոցով հաշտության առաջարկ է ուղարկում Իվան III-ին։

XVI դարում հայերի առևտրական այցերը Մոսկվա ավելի հաճախակի են դառնում։ 1516 թ. ռուս դեսպանի հետ Թուրքիայից Մոսկվա են գնում հայեր։

XVI—XVII դարերում Հայաստանի ու Անդրկովկասի ազատագրության հարցը հաճախ էր արծարծվում ռուսական արքունիքում։ 1518 թ. Հռոմի պապի ու Ավստրիայի Մաքսիմիլիան կայսեր (1493—1519) կողմից Մոսկվա եկած Ֆրանցիսկ և Անտոնիո դեսպանները Ռուսաստանին առաջարկում էին պատերազմ հայտարարել Թուրքիային, որ նվաճել է «Իբերիան, Ալբանիան ու Մեծ Հայքը»։ Պապը կոչ էր անում Ռուսաստանի ցարին՝ Վասիլի III-ին (1505—1533), «պաշտ-

7 Տե՛ս «Сборникъ русского исторического общества» (այսուհետև՝ РИО), т. 41, стр. 230.

8 Տե՛ս РИО, т. 95, стр. 236, т. 41, стр. 359—361.

պան կանգնել իր հայրենիք Կոստանդնուպոլսին»՝ «ընհանուր քրիստոնեական բարօրության համար»։ Ինչպես տեսնում ենք, Հռոմը ճանաչում է Ռուսաստանի «իրավունքը» Հունաստանի վրա և կոչ է անում ցարին՝ պաշտպանության տակ վերցնել նաև Անդրկովկասը։

Հայ ազատագրական շարժման համար XVI դ. ինչ-որ չափով բարենպաստ պայմաններ են ստեղծվում։ Եվրոպական պետություններն ու Հռոմի պապը փորձեր էին անում օգտագործել նաև Ռուսաստանի ու Անդրկովկասի ժողովուրդների ուժերն ու հնարարավորությունները՝ Թուրքիայի դեմ պայքարելու համար։ Սակայն նրանց միջև չստեղծվեց իսկական դաշինք, որի հետ իրական հույսեր կապվեին։ Համենայն դեպս այդ նշմարվող համագործակցությունը աննկատ չէր մնում։ 1547 թ. հրավիրվեց էջմիածնի գաղտնի ժողովը, որի նախաձեռնող Ստեփանոս կաթողիկոսը Հայաստանի ազատագրության հարցը Եվրոպայում բարձրացնելու նպատակով մեկնեց Լեհաստան, Հռոմ և եղավ Մոսկվայում։ 1551 թ. նա Լվով հայաշատ քաղաքում իր մահկանացուն կնքեց, չհասած որևէ նպատակի։ Սակայն կարևորն այն է, որ հայ ազատագրական շարժումը արդեն արձագանքներ էր գտնում ինչպես հայրենիքում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայում, Լեհաստանում և Ռուսաստանում։

Մոսկվայի դերը հայերի կյանքում ավելի ակնբախ դարձավ, երբ Իվան IV-ի օրոք (1547—1584) Ռուսաստանը նվաճեց Կազանի ու Աստրախանի խանությունները և դարձավ Անդրկովկասի հզոր ու անմիջական հարևանը։

Պահպանվել են հիշատակություններ այն մասին, որ 1552 թ. Կազանում կային հայ վաճառականներ և բնդանրաձիգներ, որ Կազանից հաղթանակով վերադարձած ռուս զորքին ու ցարին Մոսկվայում ռուսների հետ դիմավորել են բազմաթիվ հայեր։ Ի նշանավորումն թաթարների դեմ տարած հաղթանակի և Կազանի խանությունը Ռուսաստանին միացնելու, Մոսկվայում 1552—1556 թթ. կառուցվեց «Պոկրովսկի» տաճարը (հետագայում անվանվեց նաև «Վասիլի

Երանելու տաճար»), որի 9 գմբեթներից մեկը կոչվեց Գրիգոր Լուսավորչի անունով։

Կազանի, ապա Աստրախանի միացումը Ռուսաստանին ամրապնդեց Մոսկովյան պետության դիրքերը Կասպից ծովի հյուսիսային ափերին և հնարավորություն ստեղծեց անմիջական կապեր հաստատել Անդրկովկասի հետ։ Բայց Մոսկվայի հետ ունեցած կապերի ամրապնդմանն ու հայկական գաղութի աճին խանգարեցին գրեթե անընդմեջ թաթարական հարձակումները և 25-ամյա Լիվոնյան պատերազմը (1558—1583 թթ.)։ Սակայն անգամ այդ պայմաններում փորձեր են արվում Իվան IV-ին դիմելու՝ Ռուսաստանից օգնություն հայցելու և առևտրական կապեր հաստատելու համար։

Դեռևս 1553 թ. Իվան IV-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկություն է անում պարսից շահ Թահմազ I-ը (1524—1576)։ 1563 թ. Շամախիից Աբդուլլա խանի դեսպանը գալիս է Մոսկվա ու խնդրում հովանավորություն, Աստրախանի հետ հայերի վաղեմի կապերի վերականգնում և առևտրական հարաբերությունների հաստատում։ Այս ուշագրավ փաստը խոսում է ինչպես հայ-ադրբեջանական, այնպես էլ ռուս-ադրբեջանական կապերի մասին դեռևս XVI դարի կեսերին։ Չնայած Ղրիմի խանի հետ բշնամական փոխհարաբերություններին, ռուսները շարունակում էին իրենց առևտուրը Կաֆայում և Ազովում։

1563 թ. վրաց թագավորի հայ ներկայացուցիչը անգլիացի Ջենկինսոնին խնդրում է Մոսկվայի ցարին հայտնել օգնություն հայցելու իրենց ցանկության մասին։ Ջենկինսոնը Իվան IV-ից ստանում է դրական պատասխան՝ օգնության պատրաստակամության վերաբերյալ։ Բայց Լիվոնյան պատերազմը և թաթարական արշավանքները Ռուսաստանի վրա խանգարում էին ռուս-վրացական և հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանը։

Դրությունը մասամբ փոխվեց XVI դարի վերջին։ Ֆեոդոր Իվանովիչ ցարի օրոք (1584—1596) Մոսկվան պաշտոնապես հայտարարվեց Վրաստանի հովանավորն ու տիրակալը։ Քանի որ Թուրքիան նվաճել էր Անդրկովկասի մի մասը,

պարսից շահը, հուսալով ստանալ ռուսական օգնություն, պատրաստակամություն էր հայտնում Ռուսաստանին հանձնել Դերբենտը, Շամախին, Բաքուն։ Այդպիսի առաջարկ նա արել էր իր դեսպանի միջոցով՝ Մոսկվայում, ապա և հաստատել, երբ 1586 թ. Պարսկաստանում էր ռուս դեսպան Վասիլչիկովը։ Վրաց Ալեքսանդր թագավորը նույնպես խնդրում էր Ռուսաստանի պաշտպանությունը և շահի հետ միասին պահանջում Թերեքի վրա ամրոց կառուցել և զորք ուղարկել՝ նվաճելու Դաղստանի իշխանի՝ շամխալի երկիրը։ Անգլիայի դեսպան Դ. Ֆլետչերը հիշատակում է, որ 1588 թ. Մոսկվա է եկել Սիոնի (Երուսաղեմի) պատրիարք Խերոնիմը (Երեմիան), նպատակ ունենալով համոզել ցարին, որ Ռուսաստանը դաշինքի մեջ մտնի Իսպանիայի հետ՝ Թուրքիայի դեմ համատեղ պայքարի համար։ Նույն նպատակով Վրաստանից դեսպաններ էին մեկնել Մոսկվա։ Ֆլետչերն ընդգծում է, որ այդ բանակցություններն ընթանում էին բարեհաջող, անգամ կազմված էր Իսպանիա ուղարկվելիք դեսպանությունը, բայց գործը ձախողվեց՝ Իսպանիայի դեմ մղված պատերազմում Անգլիայի տարած հաղթանակի հետևանքով, ուստի այլևս չէին կարող հույսեր կապվել օրըստօրե թուլացող Իսպանիայի հետ։

Թուրքիան ու Ղրիմը՝ այդ ժամանակաշրջանի Ռուսաստանի մշտական թշնամիները, շարունակ ասպատակում էին երկիրը, հաճախ հասնելով մինչև Մոսկվա, իսկ 1595 թ. գահ բարձրացած Մահմադ III սուլթանը հարմար առիթի էր սպասում՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու համար։ Անդրկովկասի ժողովուրդների շահերը օբյեկտիվորեն կապված էին Ռուսաստանի հետ, նրանց սպառնացող վտանգն ընդհանուր էր, և Մոսկվան պիտք է դառնար ազատագրական պայքարի զորավիգ, քաղաքական կապերի հանգուցման կենտրոն։ 1588 թ. մինչև XVII դարի սկիզբը գրեթե անընդմեջ բանակցություններ են վարվում Վրաստանի և Ռուսաստանի միջև, իսկ դիվանագետ-միջնորդների դերում հաճախ հանդես էին գալիս հայեր։

1590 թ. Մոսկվայից ռազմական օգնություն է խնդրում Քարթլիի Ալեքսանդր II թագավորը (1574—1605)։ Ֆեոդոր

Իվանովիչ ցարին գրում է. «Իմ հույսն ու ապավենը աստված է և դու։ Հրամայիր պատերազմել շամխալության դեմ և կաղիկումիկների երկրում բերդ կառուցել... այն ժամանակ իմ զորքը կմիանա թագավորական զորքերին»[9]։ 1594 թ. Բորիս Գոդունովը կարգադրել էր Դաղստանի շամխալի Տարկի բերդը գրավել ու ճանապարհ հարթել դեպի Վրաստան՝ դիտենալով հանդերձ, որ այդ քայլը կրքեր կբորբոքի Թուրքիայում։

Վրացիները և հայերը հույսեր էին կապում հակաթուրքական ուժերի հետ, դիմումներ անում ինչպես արևմտյան երկրներին, այնպես էլ Ռուսաստանին։ 1594—96 թթ. վրաց թագավորի դեսպաններ Խուրշուդը և Արամը ռուս արքունիքից խնդրում են զորք ուղարկել և հպատակեցնել շամխալին։ Նույն այդ ժամանակ և վրաց թագավորը, և Շահ-Աբաս I-ը հակաթուրքական պայքարի կոչով հայերեն նամակ են ուղարկում Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ին[10]։

Եթե Իսպանիան ոչինչ չարեց և չէր կարող անել, ապա Ռուսաստանը Թուրքիային է դիմում, միջնորդում, որ «իր հպատակներին» չճնշեն... և Վրաստան է ուղարկում թնդանոթներ ու 7000-անոց զորք՝ Բուտուրլինի և Պլեշչեևի զեկավարությամբ։ Սակայն 1604 թ. թուրքական փաշան ուխտադրուժ հարձակում է գործում ռուս զորքի վրա և շամխալի, կումուխ մուրզաների ու թաթարների օգնությամբ ջարդում Անդրկովկասին օգնության եկած ռուսներին։

Այս ռուս-վրացական համագործակցության մարտական մկրտությունը վերջնականապես հաստատեց այն փաստը, որ Մոսկովյան պետությունը շահագրգռված է և պատրաստ է օգնելու Անդրկովկասի ժողովուրդներին՝ նրանց ազատագրական պայքարում։ Սակայն 1600—1603 թթ. մոլեգնող սովը, ապա լհհ-շվեդական ինտերվենցիան և Ռուսաստանի ծանր

---

9 *С. Белокуров,* Сношения России с Кавказом, т. I, М., 1889, стр. 264.

10 *Տե՛ս Հ. Քյուրտյան, Հայ ազատագրական փորձ մը ԺԶ դարուն, «Անահիտ», 1936, № 5—6։*

քաղաքական վիճակը խանգարեցին ռազմաքաղաքական կապերի (ինչպես և առևտրական հարաբերությունների) հետագա զարգացմանը։

Մոսկվայի ազատագրումը լհհական ինտերվենտներից, պետականության վերականգնումը և ապա լհհերի հետ կնքված զինադադարը վերստին աշխուժացրին Ռուսաստանի տնտեսական կյանքը և առևտուրը հարևան երկրների հետ։ Հայերի առևտուրը Մոսկվայի հետ նույնպես սկսեց զարգանալ։

Դեռևս XVI դարից Մոսկվայում՝ Կրեմլի մոտ կար «Հայկական առևտրական տուն»[11] (քարվանսարա)։ Իվան IV-ի 1582 թ. կազմած տնային ունեցվածքի ցուցակի մեջ հիշատակվում են մի շարք հայերի անուններ (Ռոմոդանով, Մարտինով, Մուրատով, Սիմոնով և Ամիրև), որոնք արքունիքին վաճառել են ձիեր, թամբեր ու այլ ձիասարքեր։

Դ. Ֆլետչերը, որ 1588 թ. եղել է Մոսկվայում, գրում է. «Թուրքական, պարսկական, բուխարական, վրացական, հայկական և քրիստոնեական աշխարհի զանազան արդյունաբեր ողներ Ռուսաստանից արտահանում են 400—500 հազար ռուբլու մորթեղեն»[12]։ Նույն երկրների վաճառականները Մոսկվա էին տանում մետաքսյա գործվածքներ, արճիճ, թանկագին քարեր։

Այս մասին է գրում նաև Հոլանդացի հեղինակ Իսահակ Մասսան, որ Մոսկվայում է եղել 1601—1610 թթ.։ Նա մանրամասնորեն նշում է ծավալվող առևտրի դերը Աստրախանում, որ մեծ ու մարդաշատ քաղաք էր և ուր գնում էին բազմաթիվ վաճառականներ Պարսկաստանից, Արաբիայից, Հայաստանից, Շամախիից և Թուրքիայից, տանելով Հայաստանից թանկարժեք գորգեր, մետաքս և այլ ապրանքներ[13]։

---

11 Տե՛ս «Акты исторические», т. II, СПб., 1841, стр. 19.

12 Д. Флетчер, О государстве Русском, СПб., 1905, стр. 111.

13 Տե՛ս Исаак Масса, Краткое извещение о Московии XVII в., М., 1938, стр. 23.

Հայերը XVI—XVII դարերում առևտուր էին անում ոչ միայն Մոսկվայում, այլև ավելի հյուսիս ընկած Մեծ Նովգորոդում, ապա և Արխանգելսկում։

Բայց հայերը միայն առևտրի համար չէին գնում Ռուսաստան ու Մոսկվա։ Հիմքեր կան ենթադրելու, որ ինչպես XVI, այնպես առավել ևս XVII դդ. նրանք հետապնդում էին նաև քաղաքական նպատակներ։ 1607—1609 թթ. Մոսկվայում էր հայազգի Ավգուստինոս Բաջեցի կաթոլիկ կրոնավորը, որը հակաթուրքական պայքարին նպաստելու նպատակով վրաց արքայորդի Բագրատի և Հռոմի պապի նվիրակի հետ լինում է նաև Աստրախանում, ապա անցնում է Մոսկվա, այնտեղից էլ՝ Լեհաստան ու Արևմտյան Եվրոպա[14]։

XVII դարի երկրորդ քառորդից սկսած հայերի այցելությունները ու հայ գաղութի աճը Մոսկվայում ավելի նկատելի են դառնում։ 1626 թ. չորս հայ ու երկու ադրբեջանցի վաճառականներ հսկայական արժեքի արևելյան ապրանքներ են տանում Մոսկվա[15]։ 1641 թ. Դեսպանական ատյանի հյուրատանը իջևանած հայ, ադրբեջանցի և հնդիկ վաճառականներ Խոջա Մուրադը, Սաֆարը, Ազիզբեկը և Լուկունասը հայտնում են, որ իրենք շամախեցի, բաքվեցի, արդեբիլցի ու սպահանցի եկվորներ են և ուզում են առևտուր անել Մոսկվայում։

Բազմաթիվ հայեր ու ադրբեջանցիներ ապրում ու առևտուր էին անում Աստրախանում, Կազանում ու այլ վայրերում։ 1647 թ. մի խնդրագրից պարզվում է, որ տասնյակ տարիներ Աստրախանում ապրել է խոշոր վաճառական Թավաքալովը, որն այդ ժամանակ Մոսկվա է բերել շատ մեծ գումարի ապրանքներ և դրանց համար հարկ ավելի են վերցրել, քան պետք էր, հաշվի չառնելով, որ նա վաղուց ռուսահպատակ է, մասնակցել է Ռուսաստանի պաշտպանու-

---

14 Մանրամասնությունները տե՛ս Ք. Պ., Նշխարք մատենագրութեան Հայոց, ՍՊԲ, 1884։

15 Տե՛ս Հին ակտերի կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀԱԿՊԱ), ֆ. 100 (Հայերի կապերը Ռուսաստանի հետ), 1626 թ., գործ առանց համարի, թ. 1—5. տե՛ս նաև «Армяно-русские отношения в XVII в.», Ереван, 1953, стр. 8—10.

թյանը, և որ նրա որդիները դիվանագիտական ծառայության մեջ են Մոսկվայում։ Դիմումը հարգվում է, հրաման է տրվում նրանից հարկ գանձել միայն այնքան և այնպես, ինչպես ռուսներից (քանի որ ցարն է «հրամայել ավելորդ հարկ չվերցնել»)։

Այսպես, ռուսական կառավարությունը քաջալերում էր հայերի և ընդհանրապես Անդրկովկասի վաճառականների առևտուրը, նրանց այցելությունները ոչ միայն Ասպրախան ու սահմանամերձ քաղաքները, այլև Մոսկվա, թույլատրելով նրանց բնակություն հաստատել Ռուսաստանում։ 1613 թ. սկսած հայ վաճառականների այցերը Ասպրախան հաճախակի են դառնում։

Հայերը Մոսկվա են գնում նաև այլ նպատակներով։ Օրինակ, 1612 թ. մի հայ՝ Սարգիս Օվանեսովը, իր ռուս կնոջ հետ Ղրիմից գալիս է Մոսկվա, խնդրում մշտական բնակության իրավունք, հայտնելով, որ Ղրիմից փախել է ազգային ու կրոնական ճնշումների ուժեղացման պատճառով և լսելով, որ Ռուսաստանում հայերին լավ են վերաբերվում։ Օվանեսովը թարգմանչի պաշտոնով աշխատանքի է նշանակվում Դեսպանական առյանում[16] (արտաքին գործոց առյան)։ Ուշագրավ է այն փաստը, որ Սարգսի մահից հետո նրա կնոջը նշանակվում է թոշակ[17]։

Հայերը Ռուսաստան են գնում նաև Ադրբեջանից ու Վրաստանից, մնում Մոսկվայում, Ասպրախանում և այլուր (1627 թ.՝ Ռոման Բնդրին, 1634 թ.՝ Շահնազարը և այլն)։ Մոսկվայում են լինում արդեն Նախիջևանի արքեպիսկոպոս դարձած Ավգուստինոս Բաջեցին, Անտոնիոսը, Նազարիոսը և ուրիշներ։

Այս ժամանակներում է, որ նոր աշխուժություն է սկսվում հայ ազատագրական շարժման մեջ։ «Վրաց պատմության» հեղինակ Փ. Գորգիջանիձեն հաղորդում է, որ Գանձասարի Պետրոս կաթողիկոսը 1634 թ. Քարթլ-Կախեթի Թեյմու-

16 ՀԱԿՊԱ, ֆ. 100, 1632 թ., գործ առանց համարի, թ. 1—2, 7—15։

17 Նույն տեղում, ֆ. 1505 (Приказные дела старых лет), 1634 թ., գ. № 2։

րազ I (1606—1648) թագավորին առաջարկում է համատեղ ուժերով գնալ Աստրախանի վրա և ազատել երկիրը, անդամ Թավրիզը, ընդ որում խոստանում է նրան տալ հայկական 40.000-անոց զորքի օգնություն։ Հայերի պատրաստակամության մասին այս արժեքավոր վկայությունը հաստատվում է նաև այլ փաստով։ Հոլշտինիայի դուքսի դեսպան Օտտո Բրյուգեմանը, որը նույն տարիներին վերադարձել էր Պարսկաստանից և 1639 թ. բանակցություններ էր վարում ռուսական արքունիքի հետ, նմանօրինակ առաջարկություն է անում Ռուսաստանին և դարձյալ շեշտում 40.000 հոգով կռվի ելնելու հայերի պատրաստակամությունը։ Կրեմլի այդ զազտնի խորհրդակցությանը մասնակցել են նաև հայեր (Հովհաննեսի որդի Գևորգը և Փիլիպոսի որդի Մարկոսը)[18]։

Հավանաբար այդ տրամադրությունները և Ռուսաստանին դիմելու հանգամանքները բարելավում են հայ-ռուսական հարաբերությունները (էջմիածնի նվիրակ Ոսկան վարդապետին հաջողվում է թույլտվություն ստանալ Աստրախանում հայկական եկեղեցի կառուցելու համար, ուժեղանում է հայերի բնակեցումը, աշխուժանում են առևտրական կապերը)։

1637 թ. Մոսկվայից Վրաստան է ուղարկվում Վոլկոնսկու դեսպանությունը, 1638 թ. Մենգրելիայի իշխանը օգնություն է խնդրում Մոսկվայից, իսկ Միխայիլ Ռոմանովը (1613—1645) շահին գրում է, թե Վրաստանը վաղուց ի վեր եղել է Ռուսաստանի հովանավորության տակ և պարսից շահը իրեն չպիտի իրավունք վերապահի նեղել վրացիներին։

1639 թ. Մոսկվայի պաշտպանությունն ու հովանավորությունն է խնդրում Թեյմուրազ I-ը։ Տարիներ շարունակ պայքարելով պարսից տիրապետության դեմ, նա մեծապես նպաստում է ազատագրական շարժման ռուսական կողմնորոշմանը։ Բավական է նշել, որ նա 1615, 1624, 1635 և 1649 թթ. դեսպանություններ է ուղարկել, ապա և 1658 թ. ինքն է գնացել Մոսկվա՝ օգնություն խնդրելու համար։

---

[18] *Адам Олеарий*, Путешествие в Московию, СПб., 1906, стр. 82—83.

1650 թ. ռուսական հպատակություն է ընդունում Իբե-
րիայի իշխան Ալեքսանդրը։ Այդ նույն ժամանակ Մոսկվայից Իմերեթիա է մեկնում Տոլչանովի դեսպանությունը (1650—1652 թթ.), որի նպատակն էր ուսումնասիրել երկրամասի տնտեսական ու քաղաքական դրությունը և բանակցել՝ Իմերեթիայի իշխանի հպատակությունն ընդունելու հարցի շուրջը։ Դեսպանության հետ բանակցությունները վարում էր Ալեքսանդրի գլխավոր դպիր հայազգի Պեշենգեյը՝ Անդրեյի որդի Խաթարովը։ Պեշենգեյը ռուս դեսպաններին հայտնում է, որ Իմերեթիայի իշխանն ունի 100 բոյար, 1100 ազնվական և 2000 հոգուց բաղկացած զորամաս և որ ռուսների օգնության գալու դեպքում նրանք կկարողանան թորթափել թուրքական լուծը։ Բանակցությունների ժամանակ հիշատակվել են նաև այլ հայերի անուններ, որոնք տեղի հայ բնակչությունից էին և ծառայում էին արքունիքում։ Կարևորն այն է, որ 1652 թ. Ալեքսանդր իշխանը և նրա ատենադպիր Պեշենգեյը ստորագրում են Ռուսաստանին հպատակվելու և հավատարմության երդմնագիրը, որը դեսպանները տանում են Մոսկվա։

Ադրբեջանի հյուսիսային խանություններում ևս XVII դ. ստեղծվում է որոշակի ձգտում դեպի Մոսկվա։ Դա բացատրվում է շահի ու խանների կողմից բնակչության ոչ իրանական մասի տնտեսական, իրավական և կրոնական կեղեքումների ուժեղացմամբ։ Մոսկովյան կառավարությունն իր հերթին հանգամանորեն ուսումնասիրում էր Անդրկովկասի վիճակը, այնտեղ ուղարկելով դեսպաններ, տեղեկություններ հավաքելով վաճառականների ու կրոնավորների միջոցով։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ֆեոդոր Կոտովի տեղեկությունը իր ճանապարհորդության մասին՝ դեպի Պարսկաստան ու Թուրքիա, որտեղ նրբանկատ ռուս հեղինակը տեսել է ժողովրդի ծանր վիճակը, հասկացել նրա տրամադրությունները, հանգամանորեն նկարագրել է քաղաքները, առևտրի ու արհեստների վիճակը։ Ուշագրավ է նրա ռուս ժամանակակից՝ Վասիլի Գագարայի 1634—1637 թթ. ճանապարհորդությունը։ Գագարան Երուսաղեմ է գնում, անցնելով Թբիլիսիի, Երևանի, Կարսի, Արդահանի, Էրզրումի

վրայով։ Նա հանդամանորեն գրել է էջմիածնի եկեղեցիների, Երևանի ու Արարատի, առևտրի ու արհեստագործության, բնակչության նյութական ու իրավական վիճակի և ռազմական ու քաղաքական անցքերի մասին։ Շարադրության տոնը, հայերի նկատմամբ բարյացակամ ու բարեկամական շունչը ոչ մի կասկած չեն թողնում, որ Դագարայի ճանապարհորդությունը հետապնդում էր քաղաքական նպատակներ։ Այդ են վկայում նաև վերևում բերված փաստերը՝ 30-ական թվականներին Անդրկովկասի հետ Ռուսաստանի քաղաքական հարաբերությունների զարգացման մասին, Պետրոս կաթողիկոսի առաջարկը Թեյմուրազին և Բրյուգհմանի բանակցությունները։

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժման համար մեծ նշանակություն ունեցավ Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ (1654 թ.) և այն համառ ու հաջող պայքարը լեհական պանների հավակնությունների ու թուրք-թաթարական ագրեսիայի դեմ, որ մղվում էր սկսած 1648 թ. մինչև 1667 թվականը։

1658 թ. Մոսկվա է մեկնում Քարթլ-Կախեթի գահազուրկ թագավոր Թեյմուրազը՝ ռազմական օգնություն խնդրելու համար։ Բայց Ալեքսեյ Միխայլովիչ ցարը (1645—1676) խոստանում է միայն նյութական ու դիվանագիտական օգնություն, քանի որ Ռուսաստանը պատերազմում էր Ուկրաինայի համար և նոր բարդություն ստեղծել նաև Պարսկաստանի հետ չէր կարող։ Չնայած դրան, Թեյմուրազի բանակցությունները ռուսական կառավարության ու Ալեքսեյ Միխայլովիչի հետ, ինչպես մյուս վրաց իշխանների նման դիմումները, չէին կարող անհետևանք մնալ։ Կարևոր էր նաև հայերի ակտիվությունը, նրանց առևտրի աշխուժացումը մերձվոլգյան քաղաքներում, ինչպես և Մոսկվայում, ուր գնում էին ոչ միայն վաճառականներն ու նրանց գործակատարները, այլև արհեստավորներ, մտավորականներ, թարգմանիչներ, դիվանագետներ։ Դրանց մի մասը Մոսկվա է փոխադրվում Կազանից ու Աստրախանից, Ղրիմից և այլ գաղթավայրերից, մյուսը՝ Պարսկաստանից, Հայաստանից, Անդրկովկասից, Թուրքիայից՝ դեսպանների հետ։

Մոսկվայում որպես տոլմաչներ (բանավոր թարգմանություն կատարող պաշտոնյաներ) ծառայում էին աստրախանցի Թավաքալովի որդիները՝ Բորիսը և Իվանը, ընդ որում Իվանը հանձնարարություն է ստանում հանդիպել 1654 թ. Պարսկաստան ուղարկված դեսպան Լոբանով-Ռոստովսկու հետ։ Նույն թվականին այդ դեսպանության հետ Աստրախանից Ռուսաստան է գալիս հայազգի Վասիլի Դաուդովը, որն ընդունվում է Դեսպանական ատյան և 50 տարի ծառայում, թարգմանչից հասնելով մինչև դեսպանի, վոեվոդայի պաշտոնների, կատարելով խոշոր ու պատասխանատու դիվանագիտական հանձնարարություններ Թուրքիայում, Ղրիմում, Ուկրաինայում։ Թարգմանիչների պաշտոնով Մոսկվայում ծառայել են նաև հայազգի Վասիլ Իվանովը, Աթանաս Իվանովը։ Դեսպան Շերեմետևի հետ Լեհաստանում է եղել թարգմանիչ Ա.Ֆ. Աֆանասևը։ «Մեծ դեսպան» Լոբանով-Ռոստովսկու մոտ ծառայում էր և նրան Պարսկաստան (1653—1654 թթ.) ուղեկցում Մարկ Արմյանինը։

Ռուսաստանի, Անդրկովկասի և Պարսկաստանի միջև կապերի զարգացմանը զգալիորեն նպաստեց հայերի կատարած մեծ առևտուրը, որում շահագրգռված էին ոչ միայն հայ վաճառականները, այլև ռուսական և պարսից արքունիքները։

1660 թ. Մոսկվա են գնում Նոր Ջուղայի նշանավոր վաճառականներ՝ Խոջա Զաքար Սահրադյանն ու իր ընկերները, ցարին տանելով բազմաթիվ պերճանքի առարկաներ, այդ թվում XVII դ. հայ կիրառական արվեստի դեղեցիկ գործերից մեկը՝ նշանավոր «Ադամանդյա գահը», որն այսօր էլ զարդարում է Կրեմլի Զինապալատը և ՍՍՀՄ ալմաստի ֆոնդի մեծարժեք նմուշներից է։ Գահը շինված է սանդալի պինդ ու դիմացկուն փայտից ու զարդանկարված ոսկով, արծաթով և հազարավոր թանկագին քարերով (897 ադամանդ, 1298 հակինթ, 18300 փիրուզ, մոտ 12 կգ ոսկի և 3,2 կգ արծաթ)։

Ինչպես հաղորդում է Զաքարը, հայ վարպետները գահը գաղտնի պատրաստել են իր արհեստանոցում և գաղտնի տարել Մոսկվա։ Գահի վրա լատիներեն գրված է. «Հզորագույն

ու անպարտելի Մոսկովյան կայսր Ալեքսեյին, երկրի վրա բախտավորությամբ թագավորողին՝ մեծագույն արվեստով ու հոանդով պատրաստված այս գահը թող լինի նախանշանակ բախտավոր գալիքի»։ Գահի «նվեր» տալը և հիշյալ մակագրությունը խոսում են այն մասին, որ սա մի սովորական առևտրական գործարք չէր, և որ հայ վաճառականներն ուղում էին արտահայտել իրենց վերաբերմունքը ցարին, հավատը Ռուսաստանի նկատմամբ, միաժամանակ ցույց տալով իրենց հարստությունն ու արևելյան առևտրի մեծ հնարավորությունները[19]։

Խոջա Զաքարը Մոսկվայի Դեսպանական ատյանում ասում է, որ նրա հորը շահն էլ արտոնություններ և պարգևներ է տալիս, բայց «շահական մեծությունը մահմեդական է, իսկ իրենք քրիստոնեական դավանանքի մարդիկ են, ուստի ուրախ են աշխատել ու ծառայել մեծ թագավորի համար»։

Խորհրդանշական էր ինչպես Զաքարի այս արտահայտությունը, այնպես և նրա բերած մյուս նվերը՝ պղնձյա թերթի վրա պատկերված «խորհրդավոր ընթրիք» կոմպոզիցիան, որը հավանաբար նպատակ ուներ հավաստել հայերի անդավաճան հավատարմությունը Ռուսաստանին։ Նվերը դուր է գալիս ցարին, ուստի նա հրամայում է Զաքարին՝ դրա նկարչին ուղարկել Մոսկվա։ Ալեքսեյ Միխայլովիչը պահանջում է նաև արքունիքում ծառայելու համար ուղարկել այլ վարպետներ, ինչպես և պերճանքի առարկաներ, «բանկագին քարեր, գազաններ, թռչուններ... որ խոսում են հնդկերեն» (խոսքը Հնդկաստանից բերվող թութակների մասին է)։

Խոջա Զաքարին ռուսական արքունիքն ընդունում է հանդիսավորությամբ՝ ինչպես դեսպանի. կազմակերպվում է պաշտոնական ընդունելություն Ալեքսեյ Միխայլովիչ ցարի մոտ, Զաքարին տրամադրված տան առաջ կանգնեցվում են

---

19 Պատմական գրականության մեջ սխալմամբ «Ադամանդյա գահը» համարվել է «նվեր», մինչդեռ այն պարզապես վաճառվել է և դրա դիմաց ռուսական արքունիքը վճարել է մի հսկայական գումար (մանրամասնությունները տե՛ս В. К. Восканян, Новый торговый устав и договор с Армянской компанией, Известия АН Арм. ССР, 1947, № 6)։

ժամապահներ, որոնց հանձնարարվում է նրա մարդկանց հետ վարվել «փաղաքշաբար»։ Ջաքարը և նրա ընկերները ստանում են ոչ միայն «Ադամանդյա դահի» լրիվ արժեքը, այլև լրացուցիչ պատկառելի գումարներ՝ նախ գահը պատրաստող վարպետների «բարձր վարպետության», ապա և դժվարին, «երկար ու վտանգավոր» ճանապարհորդության համար։ Նրանց տրվում են մեծ քանակությամբ թանկագին սամույրի մորթիներ, որոնք պետական մենաշնորհի ապրանքներ էին։ Դրանից հետո ավանդույթ է դառնում մեծահարուստ վաճառականների, հոգևորականների և դիվանագետների հանձնարարությունները Մոսկվա ժամանած հայերի հանդիսավոր ընդունելությունը, նրանց ցարական «սեղանից» խմիչք և ուտելիք տալը և այլն։

Քաջալերված բարյացակամ վերաբերմունքից և հասկանալով կողմերի փոխադարձ շահագրգռվածությունը, հայ վաճառականները շարունակում են խոշոր առևտրական գործարքները Ռուսաստանի հետ։

Նոր Ջուղայի, ինչպես և Անդրկովկասի հայ վաճառականները լավ գիտեին, թե ինչ ապրանքներ են վաճառվում Ռուսաստանում, ինչ է պատվիրում ու գնում ցարական արքունիքը։ Հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչներ Ստեփան Ոսմոդամսկին և Գրիգոր Լուսիկովը, որ Մոսկվայում էին դեռևս 1656—1660 թթ., խոշոր առևտրական գործարքներ էին կազմակերպում՝ Հնդկաստանից մինչև Մոսկվա։ 1662—1663 թթ. հայ վաճառականներ Միքիտա (Մկրտիչ) Պետրովը, Գրիգոր Սավելևը և Ստեփան Չեխատունովը Հնդկաստանից մինչև Մոսկվա են տարել ադամանդակուռ ոսկյա թագ (որին ամրացվեց ռուսական պետական գերբի երկգլխանի արծիվը), ակնակուռ ու ոսկյա գավազան և բազմաթիվ այլ ապրանքներ՝ գործվածքներ, մատանիներ, շոր մրգեր։

Հետաքրքիր է, որ երբ ռուսական արքունիքի կողմից հրաման էր տրվել Մոսկվայից արտաքսել արևելյան վաճառականներին, որոնք իրենց առևտուրը վերջացրել էին, բայց չէին շտապում վերադառնալ, թույլատրվել էր շարտաքսել

հայազգի Գրիգոր Մատվեևին (նույն ինքը՝ Գրիգոր Լուսիկովը), Աֆանասի Իվանովին, Մատվեյ Գրիգորևին (հավանորեն Գրիգոր Լուսիկովի որդին) և Աբրահամ Կասպարովին։ Այս և նման փաստերը ցույց են տալիս, որ ռուսական կառավարությունը քաջալերում էր հայերի առևտուրը՝ Մերձավոր Արևելքի, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ տնտեսական և քաղաքական կապեր հաստատելու նպատակով։ Պարսկական արքունիքը նույնպես շահագրգռված էր հայերի միջոցով Ռուսաստանի հետ և Վոլգայի վրայով Եվրոպայի հետ առևտրական կապերն ամրապնդելու գործում։ Իսկ Նոր Ջուղայի առևտրական ընկերությունը, որն ուներ մետաքսի գնման ու արտահանման առանձնաշնորհված (մոնոպոլ) իրավունք, ձգտում էր պահպանել իր մենաշնորհը, Ռուսաստանի և Եվրոպայի հետ հաստատել մշտական ու ապահովված առևտրական կապեր։

Արևելյան ապրանքների և մասնավորապես մետաքսի արտադրության, մշակման և արտահանության գործում շահագրգռված էին Անդրկովկասի բնակչության ու առևտրական դասի շատ ներկայացուցիչներ։ Նրանք կատարում էին համատեղ քայլեր՝ Ռուսաստանի հետ կայուն և կողմերի անվերապահ համաձայնությամբ ու օգնությամբ երաշխավորված առևտրական պայմանագիր կնքելու ուղղությամբ։

1666 թ. փետրվարին Գ. Լուսիկովի և Ս. Ռոմոդամսկու հետ Մոսկվա են գնում Ջուղայի, Թբիլիսիի, Երևանի, Շամախիի, Ագուլիսի 40 հայ վաճառականներ։ Նրանք, որպես Հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչներ, Դեսպանական ատյանում Յուրի Դոլգորուկիի և ապա Օրդին-Նաշչոկինի հետ սկսում են բանակցություններ։ Դրանք ավարտվում են միայն 15 ամիս հետո՝ արքունիքի և Հայկական ընկերության միջև առևտրական պայմանագրի կնքումով։ 1667 թ. մայիսի 31-ին հայերին տրվում է ցարական շնորհագիրը և հաստատվում է պայմանագիրը։ Այսպես կոչված «Ջուղայական կոմպանիան»՝ փաստորեն բոլոր հայ վաճառականները, իրավունք են ստանում վոլգյան մայրուղիով տարանցիկ առևտուր անելու Ասիայի ու Եվրոպայի միջև (Աստրախանից մինչև Արխանգելսկ),

պարտավորվելով վճարել ոչ մեծ մաքս՝ ապրանքի արժեքի 5 տոկոսի չափով։ Արտասահմանից եկող օտարերկրյա վաճառականներից գանձվում էր 10 տոկոս, այն էլ առանց տարանցիկ առևտրի իրավունքի։ Դա միայն հայ վաճառականությանը և առևտրականներին տրված շատ մեծ արտոնություն էր, քանի որ տարանցիկ առևտրի իրավունք XVII դարում չէր տարածվում աշխարհի ոչ մի երկրի ու պետության վաճառականության՝ չնայած Եվրոպայի գործադրած դարավոր ջանքերին ու կարծես ձեռնտու առաջարկներին։ Պետք է ասել նաև, որ այդ արտոնյալ առևտրի իրավունքը տրված էր ոչ թե միայն ջուղայեցիներին, այլ ընդհանրապես բոլոր հայ վաճառականներին, «որոնք ապրում են Սպահանում և այլ տեղերում»։

Կարևոր է հիշատակել նաև, որ այդ արտոնությունները ուժի մեջ մնացին մոտ մեկ հարյուրամյակ և որ մենաշնորհված առևտրից զգալիորեն օգտվում էր և Ռուսաստանը։ Ուշադրավ է նաև այն փաստը, որ Մոսկվա եկած հայերը միայն առևտրական գործերով չէին զբաղվում. նրանք հոդում էին հայկական գաղթավայրերի ամրապնդման ու բարգավաճման, հայերի և Ռուսաստանի միջև քաղաքական կապերի ստեղծման և որ գլխավորն է՝ Հայաստանի ազատագրման գործին օգնության կազմակերպելու մասին։

Այդ քաոսում հայերի ստորագրությամբ մի մեծածավալ նամակ է ուղարկվում Կ. Պոլսի հայերին, որով հաղորդում են ցարի շնորհած արտոնությունների մասին, կոչ անելով ամենուրեք «եկեղեցիներում պատարագներ անել» և աղոթել Ռուսաստանի հաջողությունների համար։ Նրանք գովում են ժամանակի խոշորագույն քաղաքական գործիչ, Դևսպանական տայանի դևկավար Ա. Լ. Օրդին-Նաշչոկինին, որպես հայերի բարեկամի և հակաֆեոդալական լիդայի կողմնակից գործչի։ Նամակի հեղինակները շեշտում են Օրդին-Նաշչոկինի դերը հայերին տրված արտոնությունների ձևակերպման և շնորհման գործում, գովում են նրա բարի կամքն ու մեծ խելքը, նրան նմանեցնելով «հայերին ծանոթ և ծովերում ապրող դելֆինի»։ Նրանք գրում են, որ ռուսական

կառավարության՝ ցարի և Օրդին-Նաշչոկինի ցուցաբերած բարյացակամության մյուս արտահայտությունների մասին բանավոր կհայտնի Բուրքիա ուղարկվող դեսպանության կազմի մեջ գտնվող հայազգի Վասիլի Դաուդովը: Նամակապիրները խնդրում են Կ. Պոլսի հայերին՝ ամեն բանում և ամեն կերպ օգնել ռուսական դեսպանությանը, վարձահատույց չթևնելով հայերին ցույց տված բարեկամության համար:

Այս ներկայացուցչական նամակը, ինչպես և 1667 թ. պայմանագիրը հայ-ռուսական քաղաքական կապերի զարգացման արժեքավոր վկայություններ են, որոնց նշանակությունը կասկած չի հարուցում:

Հայտնի է, որ հենց այդ ժամանակ նախապատրաստվում էր Արևմտյան Հայաստանի և Հունաստանի ապստամբումը, որի հաջողությունը կապվում էր Ռուսաստանի և եվրոպական մի քանի երկրների օգնության հետ: Այստեղ նշմարվում էր հայ, վրաց, հույն և մյուս թուրքահպատակ ժողովուրդների համագործակցության փորձ:

1667 թ. հունվարի 30-ին Օրդին-Նաշչոկինը ստորագրել էր Լեհաստանի հետ կնքված հաշտության Անդրուսովյան պայմանագիրը, որով ոչ միայն հաստատվում էր Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման պատմական ակտը և Լեհաստանի հետ խաղաղությունը, այլև դաշինք էր ստեղծվում Ռուսաստանի ու Լեհաստանի միջև՝ թուրք-թաթարական ագրեսիայի դեմ համատեղ պայքարի համար: Ուստի և հայերը կարող էին արդեն որոշակի հույսեր կապել հակաթուրքական ճակատ ստեղծող ուժերի հետ, մի հանգամանք, որն ուժեղացնում էր հայ ազատագրական շարժումն ու նպաստում ռուսական կողմնորոշման ձևավորմանը: Դրան մեծապես նպաստում էր նաև հայերին տրված արտոնագրի ու առևտրական պայմանագրի տնտեսական և քաղաքական դերն ու որոշակի հակաթուրքական ուղղվածությունը, քանի որ Ռուսաստանի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը թուրքական արգելիքը ղրկելու էր մեծ մաքսային դանձումներից, որ մինչ այդ ստանում էր Բարձր Դուռը (թուրքական արգելիքը) Պարսկաստանի մետաքսը Եվրոպա փոխադրելու հա-

մար: Դա նպաստելու էր հայ-ռուսական կապերի ամրապնդմանը և հետագայում մեծ նշանակություն ունեցավ:

Պայմանագիրը կնքելուց հետո Մոսկվա եկած հայերը դիմումներ են անում արքունիքին, խնդրում բարելավել ճանապարհներն ու դրանց անվտանգությունը, կառուցել քարավանատներ, շենքեր ու եկեղեցիներ, որտեղ հայերը կարողանային աղոթք անել, մկրտել նորածիններին, թաղել մահացածներին և կամ թույլատրել օգտվել ռուսական եկեղեցիներից: Մոտ երկու տարի Մոսկվայում ապրած հայ վաճառականները և հատկապես նրանց ղեկավարներ Գրիգոր Լուսիկովը և Ստեփան Ռոմոդամսկին զգալի դեր կատարեցին հայ գաղութի կյանքում: Քիչ անց Մոսկվայում արդեն գործում էր ս. Աստվածածնի հայկական եկեղեցին: Մոսկվայի հայերի մեջ կային ոչ միայն տարանցիկ և տեղական առևտրով զբաղվող խոշոր վաճառականներ ու առևտրականներ, այլև դրանց հայազգի գործակատարներ, արհեստավորներ, բնակիչներ և բանվորներ:

Դեռևս 1666 թ. ապրիլից Մոսկվայում ստեղծվեց սեկի (սաֆյանի) գործարան, որի վարպետ նշանակվեց սեկագործ Հայրապետ Մարտինովը: Ինչպես երևում է սեկի գործարանի ստուգումների ժամանակ կազմված մատյաններից, դա պարզունակ ու համեստ արհեստանոց էր, որի արտադրությունը կազմակերպված էր նույն սկզբունքներով, ինչ Հայաստանում ու Մերձավոր Արևելքում: Այն արքունիքի սեփականությունն էր և իր արտադրանքը հիմնականում մատակարարում էր արքունիքին: Սակայն XVII դ. դեռևս չկային արդյունաբերության զարգացման բարենպաստ պայմաններ, ուստի այդ տնայնագործական տիպի արհեստանոցը կարողացավ իր գոյությունը շարունակել միայն 6 տարի և փակվեց: Այնուհանդերձ, սեկի արտադրություն ստեղծելու փաստը հայ-ռուսական կապերի մի նոր արտահայտություն էր:

Պետք է նշել, որ Մոսկվայում սեկի արտադրության կազմակերպումը ռուսական արքունիքը նախատեսել էր դեռևս 6—7 տարի առաջ, երբ 1660 թ. ցարը խոջա Զաքա-

րին հանձնարարեց վարպետներ ուղարկել։ 1666 թ. Մոսկվա եկած հայեր Հայրապետ Մարտինովը՝ առաջին սեկագործ վարպետը, ինչպես և նրան փոխարինող Մարտին Մարդյասովը, նշանավոր նկարիչ Բոգդան (Իվան) Սալթանովը և մի շարք վաճառականներ (Նազար Իվանիսովը, Եղիա Շիրմազանովը) ու վարպետներ դարձան Մոսկվայի մշտական բնակիչներ՝ նպաստելով հայ գաղութի աճմանը և ուժեղացմանը։

Մոսկվայի Կրեմլի Զինապալատում (որ հետագայում դարձավ թանգարան՝ «Оружейная палата») մեծ դեր էր կատարում մեծատաղանդ ջուղայեցի հայ նկարիչ Բոգդան Սալթանովը, որը շատ շուտով դարձավ Զինապալատի գլխավոր գեղանկարիչը, այնտեղ աշխատելով 37 տարի (մահացել է 1703 թ.)։ Նա դարձավ Մոսկվայի հայ գաղութի նշանավոր ներկայացուցիչներից մեկը և զգալի դեր կատարեց հայ-ռուսական քաղաքական ու մշակութային կապերի զարգացման գործում։ Սալթանովի բազմաոիկ աշխատասիրությունը և արտասովոր ընդունակությունները համընդհանուր ճանաչում գտան և նա դարձավ ժամանակի ռուսական ռեալիստական գեղանկարչության ամենանշանավոր դեմքերից մեկը։ Սալթանովը Ռուսաստան տարավ ինչպես արևելյան և մասնավորապես հայ գեղանկարչության, այնպես և կիրառական արվեստի ավանդույթները, բազմակողմանի իր հմտություններն ու փորձը։ Դեռևս Զինապալատում նկարչի պաշտոնի նշանակվելուց առաջ նա ցուցադրեց լավագույն ներկեր պատրաստելու իր վարպետությունը և երբ Կրեմլի վարպետների մոտ պատրաստեց իր «օլիֆը», ռուս ականավոր նկարիչ Ս. Ուշակովը գովեց այն, նշելով, որ այդ ներկը իր որակով շատ ավելի լավն է, քան լեհ նշանավոր նկարիչ Ստանիսլավ Լապուշկու պատրաստածը։

1667 թ. Սալթանովն ընդունվեց Զինապալատ և սկսեց իր բազմաբեղուն գործունեությունը, դառնալով Զինապալատի գլխավոր նկարիչ, ապա և ռուսական գեղանկարչական դպրոցի ղեկավար[20]։ Բայց պետք է ընդգծել նաև այն

20 Մանրամասնությունները տե՛ս Н. М. Молева, Иван Салтанов и его школа. «Վրաբեր հասարակական գիտություններին», 1977, № 10

վաստը, որ Բ. Սալթանովը նշանավոր ու մեծ նկարիչ դարձավ ոչ միայն շնորհիվ իր բնատուր ընդունակությունների և Ջուղայում ձեռք բերած վարպետության ու ստեղծագործական աշխատանքի, այլև բարենպաստ պայմանների, որոնք կային և ստեղծվում էին XVII դ. երկրորդ կեսում Մոսկովյան պետության նշանավոր մայրաքաղաքում: Այնտեղ ապրում ու գործում էին այնպիսի խոշոր նկարիչներ, ինչպիսիք էին ռուս նկարիչ Սիմեոն Ֆեոդորովիչ Ուշակովը (1626—1686), Ֆ. Զուբովը և ռուսական ու եվրոպական այլ վարպետներ:

Ուշակովի հետ Սալթանովը 1668—70 թթ. մասնակցել է Կոլոմենսկի հոյակերտ պալատի կառուցմանն ու հարդարմանը, ապա և Զինապալատի բոլոր հետագա աշխատանքներին: Նա գործակցել է Լեհաստանից և Եվրոպայի այլ երկրներից եկած նկարիչների հետ, տվել ու վերցրել, հարըստացրել ու հարստացել գործնկով մոսկովյան մշակութային կյանքի նոր պայմաններում: Նա պատրաստեց 20-ից ավելի ռուս աշակերտներ, որոնցից շատերը դարձան նշանավոր նկարիչներ: Նա զարգացրեց վիրտուական արվեստը, ղեկավարեց քաղաքի և մասնավորապես Կրեմլի շենքերի ու պալատների գեղարվեստական հարդարման գործը, ստեղծեց բազմաթիվ գեղանկարչական կտավներ: 1696 թ., երբ Ազովի բերդի գրավումից հետո Պետրոս I-ի հաղթական զորքերը հանդիսավորությամբ պետք է վերադառնային մայրաքաղաք, որոշված էր Մոսկվան զարդարել արտասովոր գեղեցիկ ու աշխարհիկ ոճով՝ կառուցել հաղթական կամարներ, Կրեմլը զարդարել լոզունգներով ու նկարներով: Այդ գործի ղեկավարությունը դրված էր Բոդդան Սալթանովի վրա: Պետրոս I-ը հարցում է կատարում, թե ո՞րը կարելի կլինի վերադառնալ Մոսկվա, նրան պատասխանում են, թե Սալթանովի խոստմամբ քաղաքի ձևավորման գործը կավարտվի միայն սեպտեմբերի 18-ին, ուստի Պետրոսն ու ռուսական զորքը չշտապեցին և միայն մեկ ամիս հետո վերա-

---

և Մ. Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում, Երևան, 1970:

դարձան Մոսկվա, որտեղ արդեն կազմակերպված էր հաղթողների փառահեղ ընդունելությունը։

Բոգդան Սալթանովի կյանքն ու գործը ուսումնասիրողները բարձր են գնահատում հայ նկարիչ-արվեստագետի հզոր տաղանդը։ Ակադեմիկոս Ա. Ուսպենսկին գրել է. «Մենք գովելի անվամբ, խորին շնորհակալությամբ ու հարգանքով ենք հիշում նկարչին, որը թողեց հայրենական տունը՝ Ռուսաստանում ռուսական նկարչության վերածննդի ու արմատավորման համար։ Նա առաջինը ռուսական արվեստը դուրս բերեց սրբանկարչության կանոններով կաղապարված նեղ շրջանակից՝ դեպի աշխարհիկ արվեստի ասպարեզ, նրա մեջ ներարկելով թարմ ու կենսաբեր շիթ, հսկայական օգուտ բերելով ռուսական արվեստին»[21]։

---

21 *А. И. Успенский*, Царские иконописцы и живописцы XVII в., Словарь, М., 1910.

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿՈՒՄ: ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Մոսկովյան պետությունը XV—XVII դարերում միավորեց ռուսական հողերի մեծ մասը, ամրապնդեց իր ներքին ու միջազգային դրությունը և կատարեց Եվրոպայի ու Արևելքի քաղաքականության մեջ հզոր ու ակտիվ դեր։ Հաջողությամբ վերամիավորելով ուկրաինական հողերը Ռուսաստանի հետ, ետ շպրտելով թուրքական ու թաթարական զավթիչներին և Լեհաստանի հետ կնքելով Անդրուսովյան դաշնագիրը, Մոսկովյան պետությունն սկսեց վարել համարձակ արտաքին քաղաքականություն, իր վրա բևեռելով Բալկանների ու Անդրկովկասի ժողովուրդների ուշադրությունը։

1667 թ. հայ-ռուսական պայմանագրի կնքումը և Մոսկվայի ու Աստրախանի գաղութների հետագա զարգացումը XVII դ. երկրորդ կեսից մեծ շրջադարձ ստեղծեցին հայ-ռուսական կապերի զարգացման մեջ։ Մոսկվայի հետ հայերին կապում էին առևտրական-տնտեսական և քաղաքական իրական շահերն ու հեռանկարները։ Այդ տեսակետից հատկանշական է հայ դիվանագետների՝ Վասիլի Դաուդովի և հատկապես շահի դեսպան Գրիգոր Լուսիկովի գործունեությունը 1660—1675 թթ.։ Հայկական առևտրական ընկերության և պարսից շահի անունից Մոսկվայի 1672—1673 թթ. բանակցությունների ժամանակ Գ. Լուսիկովը համոզում էր ռուսական արքունիքի ներկայացուցիչներին, որ հայերը կարող են մեծապես օգտակար լինել Ռուսաստանին և խնդրում էր նպաս-

տել նրանց առևտրին։ Նա առաջարկում էր ճանապարհների ապահովության համար Վոլգայի մայրուղու վրա տեղծել ամրոցներ և իջևաններ, կառուցել ավաններ ու պահեստներ, հրովարտակ ուղարկել Կովկասի լեռնցի իշխաններին՝ նրանց պարտավորեցնելով բարյացակամորեն վարվել հայ ճանապարհորդների հետ և հայերին թույլատրել, որ նրանք կարողանան գալ ու մշտական բնակություն հաստատել ռուսական քաղաքներում և սահմանամերձ շրջաններում։

Լուսիկովը միջամտում էր նույնպես և արտաքին հարաբերությունների հետ կապված գործերին։ Այսպես, խնդրում էր, որ լհ դեսպանների հետ Լհհաստան մեկնելու հրամանագիր տրվի հայազգի դումինիկյան կրոնավորներին, որոնք Պարսկաստանի շահի հետ բանակցություններ էին վարում՝ նրան հակաթուրքական կոալիցիայի մեջ ներգրավելու համար։ Նա առաջարկում էր ռուսական արքունիքին թույլ տալ, որ Վրաստանի Թեյմուրազ թագավորի թոռ Նիկոլայ Դավիդովիչը Վրաստան գնա և ժառանգի Թեյմուրազի ու նրա զոհված որդի Դավթի թափուր գահը։ Ենթադրվում էր այդպիսով վերականգնել վրացական պետությունը՝ դրա սահմանների մեջ ներառնելով նաև Արևելյան Հայաստանը։

Ստեփան Ռազինի պարսկական արշավանքի (1668—1669 թթ.) կապակցությամբ ռուս-պարսկական հարաբերությունների մեջ որոշակի սառնություն էր ստեղծվել։ Լուսիկովը ջանքեր էր թափում շահին համոզելու, որ Ռազինի կապստյան արշավանքը ռուսական արքունիքի դրդմամբ կամ ցանկությամբ չի եղել։ Նա ձգտում էր ռուս-պարսկական բանակցությունների միջոցով հասնել այն բանին, որ վրացական հողերը (մինչև Արաքս) տրվեին Նիկոլայ Դավիդովիչին, խաղաղ ճանապարհով Վրաստանը (նաև Հայաստանի մի մասը՝ Երևանի խանությունը) դառնար Պարսկաստանից անկախ կամ կիսանկախ պետություն, որի գլուխ կանգնած կլիներ ռուսական դաստիարակություն ստացած և ռուսական կողմնորոշում ունեցող իշխան Նիկոլայ Դավիդովիչը։ Սա հայ-վրացական միասնական իշխանություն ստեղծելու նախագաղափարն էր՝ կապված ռուսական օգնության հետ։

Այսպես, Գրիգոր Լուսիկովը, որ պաշտոնապես հանդես էր գալիս որպես շահի դեսպան, նմանօրինակ հանձնարարություններ էր կատարում Մոսկվայում և Սպահանում։ Նա աշխատում էր նպաստել ռուս-պարսկական հարաբերությունների կարգավորմանը, փորձում ամրապնդել Ռուսաստանի դիրքերը Կովկասում, օգնել հայազգի լհհական դեսպան Բոդդան Դուրդեյին՝ բարելավելու նաև լհհ-պարսկական փոխհարաբերությունները, նպաստելով այդ երեք պետությունների ուժերի միավորմանը՝ թուրք-թաթարական ագրեսիային դիմադրավելու համար։ Շահի մոտ Լուսիկովն ասում էր, որ Թուրքիայում եղած ժամանակ ինքը լսել է, թե ինչպես «թուրքերը մզկիթներից գոռում էին «աստված մի արասցե, որ քրիստոնյաները միավորվեն»։ Եթե լհհերն ու ռուսները միավորվեն ու բարձրանան, Թուրքիան լիովին կտապալվի»։ Պատահական չէ, որ պարսկական արքունիքում նրան «չեն հավատացել և ասել են. «Դու ցարական մեծության դավանանքի մարդ ես, քեզ համարում ես նրա հպատակը և ամեն բանում նրան լավն ես ցանկանում»։

Երբ 1660—1670-ական թթ. Գ. Լուսիկովը և Վ. Դաուդովը Մոսկվայում ջանքեր էին գործադրում հայ-ռուս-վրաց բարեկամության ամրապնդման համար, այդ ժամանակ Անդրկովկասում նոր ուժով խմորվում էր ազատագրական շարժումը։ Դեռևս 1665 թ. վրաց արքայորդու՝ Նիկոլայ Դավիդովիչի դեսպանը միտրոպոլիտ Եպիփանին Մոսկվայում հայտնում է, որ թուշ ու փշավ վրացական ցեղերը համատարած կռվում են իրենց անկախության համար, կողմնորոշված են դեպի Ռուսաստան և ցարին հավատարմության երդում են տվել։ Հայերը մեծ ուշադրությամբ էին հետևում վրացական ազատագրական շարժումներին, գոհունակությամբ նշում դրանց հաջողությունները, կարեկցությամբ՝ պարտությունները։ Այդ են վկայում XVII դարի ժամանակագիրներն ու պատմագիրները՝ Զաքարիա Քանաքեռցին, Գրիգոր Դալանաղցին, Զաքարիա Ագուլեցին և ուրիշներ։ Հայ պատմագիր Առաքել Դավրիժեցին բուռն ատելությամբ է խոսում Շահ-Աբաս I-ի բռնակալության մասին, դատապարտում

հայերին, վրացիներին ու ազրբեջանցիներին տեղահան անելու, հարյուր հազարավոր մարդկանց Պարսկաստանի խորքերը քշելու, սովի, ցրտի ու մահվան դատապարտելու համար։ Նա համերաշխության ու խորին գոհունակության զգացումով է խոսում վրաց ժողովրդի հերոսական պայքարի մասին, լավ գիտենալով, որ վրացիներն իրենց ազատագրության հույսը վաղուց ի վեր կապել էին Ռուսաստանի օգնության հետ։

Հայաստանում, հայկական գաղթավայրերում ու Անդրկովկասում XVII դարի կեսերին ծավալված ազատագրական շարժմանը մեծապես նպաստում էր Եվրոպայում սկըսված պայքարը Թուրքական ազդեցության դեմ։ Մասնավորապես Կրետեի կղզու՝ Կանդիայի համար Վենետիկի դեմ մղվող 25-ամյա պատերազմի (1645—1669 ԹԹ.) տարիներին Եվրոպայի կողմից սպասվող օգնության հետ լուրջ հույսեր էին կապվում։ Հռոմին և Լյուդովիկոս XIV Թագավորին էին դիմում ինչպես ռուսական կողմնորոշում ունեցող Ալեքսանդրիայի, Երուսաղեմի և Անտիոքի պատրիարքները, այնպես և հայ ու վրացի գործիչները, խնդրելով, որ նրանք եռանդուն ջանքեր գործադրեն Թուրքահպատակ ժողովուրդներին ազատելու համար[1]։ Սակ Խաչատուր Գաղատացի կաթողիկոսը, Կ. Պոլսի հայ պատրիարք Հովհաննես Թութունջին, խոշոր վաճառական Խոջա Մուրադը դիմումներ էին անում «Արևի Թագավոր» Լյուդովիկոս XIV-ին, խնդրելով օգնություն և հայտնելով հայերի ու հույների պատրաստակամությունը՝ ապստամբել ու դնալ ընդառաջ «խաչակրաց արշավանքի» ևլած «ֆրանկ» զորքերին։

Սակայն Հռոմի պապն ու Լյուդովիկոս XIV-ը ոչնչով չօգնեցին անգամ Վենետիկին, և Թուրքերը նվաճեցին Կրետեն։ Նրանք ունեին իրենց նկատառումները։ Չխոստանալով որևէ ռեալ օգնություն, նրանք պահանջում էին հայերից ու հույներից՝ ընդունել կաթոլիկություն և ինքնուրույն, սևփա-

---

1 Տե՛ս Հ. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում*, Երևան, 1962։

կան ուժերով կռվել Թուրքիայի դեմ՝ ի շահ պապի ու Լյուդովիկոսի, որը հակաթուրքական ցույցեր անելով և Կոստանդնուպոլսի ափերին նավատորմիղ հանելով, վախեցնում էր Բարձր Դռանը՝ նրանից կորզելով Թուրքիայում արտոնյալ առևտուր անելու իրավունք (կապիտուլյացիաներ), միաժամանակ փաստորեն ամրապնդելով Թուրքիայի տիրապետությունը հպատակ ժողովուրդների վրա։ Այսպես, 1660-ական թվականներին Եվրոպայի հետ կապվող հույսերը չարդարացան, Հռոմի պապերը, Լյուդովիկոսը և նրա առաջին մինիստր Կոլբերը մնացին անտարբեր, Կանդիայի պատերազմը վերջացավ Վենետիկի հանրապետության պարտությամբ և Թուրքիան տիրացավ նաև Կրետե կղզուն, շարունակելով իր հաղթարշավը դեպի Ուկրաինա, Լեհաստան, Ավստրիա...։ Նմանօրինակ էր նաև Եվրոպայի մյուս հզորագույն պետությունների՝ Հոլանդիայի ու Անգլիայի դիրքը։ Թեպետ նրանց առևտրատնտեսական պոտենցիալն ու ռազմա-ծովային հզորությունը լուրջ տվյալներ էին Թուրքիայի վրա ճնշում գործ դնելու համար, սակայն նրանց կենսական շահերը Անգլիայի ու Հոլանդիայի դիվանագիտությանը ստիպում էին «բարեկամ» մնալ Թուրքիային և ոչ մի քայլ չանել հօգուտ Ռուսաստանի, Լեհաստանի ու Անդրկովկասի։

Հայերը կարող էին հույս դնել միայն Ռուսաստանի և նրա դաշնակիցների՝ Լեհաստանի ու Ավստրիական կայսրության վրա, թեպետ նրանց միջև դեռևս չկար լիակատար համաձայնություն ու միասնական գործողությունների ծրագիր։ Այնուհանդերձ 1667 թ. կնքված Անդրուսովյան դաշնագրից հետո հայ-ռուս-լեհական հարաբերությունների մեջ նկատվում է որոշակի բարելավում և աշխուժություն։ Ժամանակի գրավոր աղբյուրների մեջ քիչ են դրա ուղղակի վկայությունները, բայց անգամ հատուկենտ ակնարկները խոսում են այդ մասին և հիմք տալիս նման ենթադրությունների։ Համենայն դեպս, շատ որոշակի էր Ռուսաստանի դիրքորոշումը թուրքական ագրեսիայի դեմ պայքարի հարցում։ Այդ մասին են խոսում փաստերը։ 1668 թ. սեպտեմբերին Կ. Պոլիս են ուղարկվում հայազգի դիվանագետ Վասիլի Դաուդովը և հույն Միխայիլ

Իվանովը՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարի սեպտեմբերի 7-ի հրովարտակով, որպեսզի պահանջեն Բարձր Դռնից՝ արգելել Ղրիմի խանի հարձակումները ռուսական հողերի վրա։ Դաուդովը պահանջում էր նաև վերականգնել Ալեքսանդրիայի պատրիարք Պայիսիոսի և Անտիոքի պատրիարք Մակարիոսի իրավունքները։ Այս ամենը հայտնի պիտի լինեին հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնք լավ գիտեին նաև Կանդիայի պատերազմում Թուրքիայի հաղթանակի՝ Կրետե կղզին նվաճելու և Լեհաստանի դեմ հարձակողական գործողություններ սկսելու մասին։ Կանդիայի պատերազմից հետո ֆրանսիական կառավարությունը վերջնականապես հրաժարվեց Թուրքիայի դեմ խաչակրաց արշավանքի մտքից, անգամ մերժեց Ռուսաստանի հակաթուրքական համատեղ պայքարի կազմակերպման առաջարկը։ Պարզ է, որ նա չէր էլ մտածում Հայաստանի ու Վրաստանի «փրկության» մասին։ Սակայն հայ և վրացի առանձին գործիչներ շարունակում էին «Արևի թագավորին» ապարդյուն դիմումներ անել, չստանալով գեթ որևէ հուսադրական խոստում, բացի կաթոլիկ պրոպագանդիստների կողմից կրկնվող կեղծ քաջալերանքից ու կաթոլիկ դավանանքն ընդունելու պահանջից։

Այս և նման փաստերը հայտնի էին ոչ միայն Զաքարիա Ագուլեցուն, այլև Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսներին, Գրիգոր Լուսիկովին, Վասիլի Դաուդովին և մյուսներին, որոնք հիասթափվում են Արևմուտքից։

Առավել հեռատես վրաց և հայ գործիչները, ճիշտ գնահատելով Ռուսաստանի միջազգային դրությունը՝ թուրք-թաթարական ագրեսիայի դեմ պայքարի, երկրի հարավային ու արևմտյան սահմանների պաշտպանության անհրաժեշտությունը, հասկանում էին, որ Ռուսաստանի շահերը պահանջում են տնտեսական-առևտրական ու քաղաքական-ռազմական համագործակցության Անդրկովկասի հետ։ Եթե հայ գործիչների կապերը Արևմտյան Եվրոպայի առանձին պետությունների ու Հռոմի հետ միմիայն ձախողված փորձեր էին, ապա Ռուսաստանի օգնությունն ակնկալող գործիչների ծրագրերը արտահայտում էին կողմերի օբյեկտիվ շահերն ու տա-

րեցտարի ամրապնդվող ազատագրական շարժման ճիշտ կողմնորոշումը։

Պարզ էր դառնում, որ 1670-ական թվականներից թուրքական արշավանքն ուղղվում էր առավելապես Հարավարևմտյան Ռուսիայի, Լեհաստանի ու Ավստրիայի՝ այսպես կոչված «Սրբազան կայսրության» երկրների դեմ, որոնց հետ համագործակցելու հետևողական ջանքեր էր գործադրում ռուսական կառավարությունը։ Ինչպես հայտնի է, դեռևս 1664 թ. օգոստոսի 1-ին Ավստրիայի ու Հունգարիայի զորքերը Սեն-Գոթարդի մոտ թուրքերի դեմ փայլուն հաղթանակ տարան՝ ազդարարելով Օսմանյան կայսրության հարձակողական ուժերի նվազումը։ Ինչպես նկատել էր Կ. Մարքսը, Թուրքական կայսրության անկումն սկսվել էր 1683 թ. Վիեննայի տակ կրած պարտությունից շատ ավելի առաջ[2]։

Բայց Բարձր Դուռը չէր հրաժարվում իր նվաճողական քաղաքականությունից նաև XVII դ. վերջին երեսնամյակում։ Հետագա նվաճումները հնարավոր դարձնելու նպատակով սուլթանն ու վեզիրները ուժեղացնում էին պետական ապարատն ու բանակը և բարելավում փոխհարաբերությունները Եվրոպայի հզոր տերությունների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի հետ, խանգարելով հակաթուրքական կոալիցիայի ստեղծման փորձերին, հարվածներ նախապատրաստելով Լեհաստանի, Ռուսաստանի և Ավստրիայի դեմ։ Այդ ստիպեց Ռուսաստանին ու Լեհաստանին նորից ու նորից հաստատել 1667 թ. Անդրուսովյան պայմանագիրը (1670 թ. Լեհաստանում, 1672 թ. ապրիլին Մոսկվայում)։ Թուրք-լեհական պատերազմն սկսվելուց առաջ, թուրքական հարձակումը կանխելու նպատակով 1672 թ. մայիսի 12-ին Կոստանդնուպոլիս են ուղարկվում Վասիլի Դաուդովը և Նիկիֆոր Վենյուկովը՝ Բարձր Դռանը հայտնելու Ռուսաստանի և Լեհաստանի միջև բարեկամության պայմանագիր կնքելու մասին։ Ռուսական կառավարության գրամոտան սուլթանին նախազգուշացնում էր, որ թուրքերի Լեհաստանի վրա հարձակվելու դեպքում Ռուսաստանը,

---

2 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения., т. X, стр. 61.

որպես Լեհաստանի դաշնակից, պատերազմի մեջ կմտնի Թուրքիայի դեմ։ Յարական կրամոտան գրված էր ուղղակի սպառնալիքի ոլտիմատիվ ոճով[3]։

Ալեքսեյ Միխայլովիչի սույն գրամոտան միայն դիվանագիտական ճնշում գործադրելու միջոց չէր, այն լուրջ ռազմաքաղաքական փաստաթուղթ էր, որ արտահայտում էր ռուսական արքունիքի պատրաստակամությունը՝ կանգնեցնելու Թուրքական հարձակումները, համախմբելու բոլոր ուժերը և հակահարված տալու սանձազերծված նվաճողին։ Դրա ապացույցն է այն հրովարտակը, որ ցարը հայազգի դիվանագետ Վասիլի Դաուդովի միջոցով ուղարկեց Դոնի շրջանների կազակների ատաման Կոռնիլ Յակովլևին, հաղորդելով նրան Ղրիմի խանի կողմից Ուկրաինայի վրա սկսվող արշավանքի մասին, նախազգուշացնելով, որ թաթարների ու Թուրքերի հարձակումը կարող է ուղղվել նաև Դոնի կազակների դեմ։ Վտանգը կանխելու համար Ալեքսեյ Միխայլովիչը հրամայում էր կազակներին անմիջապես նավերով ծով դուրս գալ և ամենուրեք, որտեղ հնարավոր է, հարվածներ հասցնել Ղրիմի թաթարներին։ Հրովարտակում նշվում էր նաև, որ «Թուրքերը Դանուբ գետն անցել են և շարժվում են Լեհաստանի թագավորության վրա։ Թուրքական զորքերին կանգնեցնելու նպատակով մենք Վասիլի Դաուդովի միջոցով սուլթանին հրովարտակ ենք ուղարկել, առաջարկելով նրան Լեհաստանի դեմ պատերազմ չսկսել, նախազգուշացնել նաև, որ հակառակ դեպքում Ռուսաստանը կձեռնարկի Թուրքիայի դեմ պատասխան-պատերազմ»։

---

3 Բարձր Դռանը զգուշացվում էր, որ եթե «Թուրքական զորքերը հարձակվեն Լեհաստանի վրա, ապա մենք, որպես քրիստոնյա թագավոր, նրան պաշտպան կկանգնենք, ձեր դեմ կսկսենք հակամիջոցներ ձեռնարկել, հրաման կուղարկենք Դոնի ատամաններին ու կազակներին, որպեսզի նրանք Դոնի վրա և Սև ծովում ձեռնարկեն ամեն տեսակի ռազմական միջոցներ... Եվ մենք կգրենք հարևան քրիստոնյա մեծ թագավորներին՝ մեր եղբայրներին, որոնք ձեզ հետ՝ մեր եղբոր հետ հարևան են, որպեսզի նրանք ևս քրիստոնեական հողով... Ձեր, մեր եղբոր դեմ զորքով դուրս գան և հակահարված տան»։ *Н. А. Смирнов*, Россия и Турция в XVI—XVII вв., М., 1946, стр. 120—121.

Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացումը մեծ տպավորություն էր թողնում ինչպես Լեհաստանի և Ուկրաինայի հայ գաղութների, այնպես և Անդրկովկասի ու Բալկանների ժողովուրդների վրա, ուժեղացնելով նրանց քաղաքական կապերը Ռուսաստանի հետ, նոր թափ հաղորդելով ազատագրական շարժումներին ու դրանց ռուսական կողմնորոշմանը։

Թուրքական ու պարսկական բռնակալության պայմաններում հայ ազատագրական շարժումը խմորվում էր կարծես ընդհատակում, այն դեռևս չէր կարող բացեիբաց արտահայտվել։ Դեպի Եվրոպա և Ռուսաստան ուղղվող դիմումներն ու նամակները գրվում էին անորոշ ու փոխաբերական արտահայտություններով, որոնցում բացակայում էին Հայաստանին օգնության խնդրելու ուղղակի ակնարկներն անգամ։

Հայերի քաղաքական ակտիվությունն ուժեղացել էր նաև բուն Հայաստանում, որտեղ նկատվում էր ազատագրական պայքարի զարթոնք և որին նպաստում էր Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու գործունեությունը։ Նա համառ փորձեր էր անում հաշտության և համագործակցության եղրեր ստեղծել Կիլիկիայի և Աղվանքի կաթողիկոսությունների հետ, վերջ տալ պառակտվածությանն ու անընդմիջ կռիվներին, որոնք մեծ վրկանքներ էին պատճառում, առիթ տալով թուրք ու պարսիկ տիրողներին նորանոր չարաշահություններով կեղեքել ժողովրդին։

Ջաքարիա Ագուլեցու «Օրագրությունից» երևում է, որ XVII դարի 70-ական թվականների հայ գործիչները արտասովոր աշխուժությամբ հանդիպումներ էին ունենում, մի վանքից շտապում մյուսը, խորհրդակցում...[4]։ «Դարձյալ մայիսի ԺԲ-ումն (12) աթոռակալ Միքայել վարդապետն Եյիցի Ստեփանոս վարդապետն, այլքանի վարդապետօք եկին Ագուլիս, ե (5) օր կացին, գնացին երևան վասն միոյ պատճառի»,— գրել է նա։ Որ Ագուլեցին այս դեպքերի սոսկ ականատեսը

4 Տե՛ս «Ջաքարիայ Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 84—85, 108—109։

չէր, այլ ակտիվ մասնակիցը, երևում է նրա (իբրև թե «աղոթելու» համար) բոլոր վանքերում լինելու փաստից։

Թեպետ ժամանակի գրականության մեջ այդ տարիների հայ ազատագրական շարժման վերաբերյալ տեղեկությունները քիչ են, այնուամենայնիվ այդ քիչն էլ հաստատում է հայ-վրաց-ռուսական քաղաքական կապերի ու ծրագրերի առկայությունը։ Հասկանալի է այն զսպվածությունը, որ նկատվում է XVII դարի հայ հեղինակ-պատմաբանների երկերում։ Ուշագրավ է այն փաստը, որ Ջաքարիա Քանաքեռցու (1627—1699) «Պատմութիւնը» մեզ հասցրել է շատ կարևոր տեղեկություն Գրիգոր Լուսիկովի և վրաց արքայորդի Նիկոլայ Դավիդովիչի մասին։ Քանաքեռցին նշում է, որ Թեյմուրազ I-ի թոռ Իրակլին (նույն ինքը՝ Նիկոլայ Դավիդովիչը) տարվում է Մոսկվա (1653 թ.) և 25 տարի ապրում այնտեղ։ Շահ-Աբաս II-ը քանիցս սուրհանդակ է ուղարկում և նրան հրավիրում իր մոտ, բայց ապարդյուն։ Դրանից հետո շահ Սուլեյմանը (1666—1694) ցարին հղած նամակով ու երդմնագրով Մոսկվա է ուղարկում ջուղայեցի Գրիգորին (Լուսիկովին)։ Վերջինս 1675 թ. ապրիլի 23-ին Իրակլիին բերում է Ղազվին, որտեղ էին նաև Սուլեյման շահը, Հակոբ կաթողիկոսը, ինչպես և վերջինիս սպասարկող, դեպքերը նկարագրող ու ականատես պատմիչը՝ Ջաքարիա Քանաքեռցին[5]։ Շահը Նիկոլայ Դավիդովիչին հրավիրում է վրաց թագավորի գահին բարձրացնելու համար, սակայն շատ շուտով պարզվում է, որ պարսկական կառավարության միակ նպատակն էր եղել նրան կարել Ռուսաստանից, մեկուսացնել և թույլ չտալ, որ վրաց գահի հավակնորդը մնա Մոսկվայում և այնտեղից ներազդի Վրաստանի քաղաքական շրջանների վրա։ Այս անգամ ևս հաջողվեց պարսից արքունիքի ուխտադրուժ քայլը։ Շահը կարողացավ իր մոտ բերել, բռնությամբ մահմեդականացնել Իրակլիին և պահել Սպահանում՝ կալանավորի վիճակում (այդ մասին զաղտնաբար Մոսկվա է հաղորդել նրա մայրը)։

---

5 Տե՛ս «Ջաքարեայ Սարկաւագի Պատմութիւն», հ. II, Վաղարշապատ, 1870, գլուխ 47։

Շահը դրանով չբավարարվեց։ Նա 1676 թ. իր մոտ կանչեց վրաց մյուս թագավորին՝ Վախթանգ V-ին (1658—1676), նրանից ևս «ազատվելու» նպատակով։ Վախթանգը 1000 զինվորով, շահի համար 60 ուղտերի վրա բարձած թանկարժեք նվերներով և հարճերով ճանապարհ ընկավ դեպի Սպահան։ Արաքսն անցնելուց հետո հայտնի դարձավ, որ նույն օրը, երբ Վախթանգը հասնի Սպահան, նրան պետք են սպանելու՝ հոշոտմամբ։ Լսելով այդ, նա թունավորվեց և մահացավ։ Մարդիկ ու բեռները տարվեցին շահին։ Այնուհետև շահը բռնությամբ հավատափոխ արեց նաև Վախթանգի ժառանգորդ Գեորգիին և նշանակեց «շահնավազ խան» (1676—1698), սպա 1706 թ. ուխտադրժորեն սպանեց նաև նրան։

Եթե շահը այդպես քմահաճ ու դաժան ձևով էր վարվում վրաց թագավորների հետ, ապա պարզ է, թե ինչպիսի կամայականություն էր տիրում պետականությունից զրկված Հայաստանում։ Բավական է հիշել այն, որ էջմիածնի կաթողիկոսներն անգամ ենթակա էին ոչ միայն շահի, այլև Երևանի խանի քմահաճույքներին։ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը, որ ժամանակի կրթված, գործունյա, ազդեցիկ հայ գործիչներից մեկն էր, շարունակ հալածվում էր խանի կողմից։ Նրա և էջմիածնի դեմ նյութվում էին մեղադրանքներ, դավեր, որոնցից ազատվելու համար պետք էր լինում շահին ու նրա արքունիքին վճարել հսկայական գումարների կաշառքներ։ Իսկ այդ կաշառքների ու «նվերների» ամբողջ ծանրությունն ընկնում էր ժողովրդի ուսերին։ Ուժեղանում էին ազգային ճնշումները, մեծանում ու բազմանում հարկերը, շարունակվում էր բռնի կրոնափոխության հայահալած քաղաքականությունը։

Ժողովրդի ծանր վիճակն օգտագործում էին կաթոլիկ պրոպագանդիստները։ Հայերին դավանափոխ անելու և իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար նրանք խոստանում էին Հռոմի պապի և ֆրանսիական թագավորի օգնությունը՝ քրիստոնյաներին ամոքելու գործում։

Հայ գործիչներն իրենց հերթին չէին ուզում սրել հայ լուսավորչականների ու կաթոլիկների փոխհարաբերությունները, հույսեր կապելով Հռոմի և արևմտաեվրոպական պետութ-

Եվրոպայի օգնության հետ, գիտենալով, որ վաղուց ի վեր Ռուսաստանի հետ կապված վրացական իշխանությունները և անգամ Ռուսաստանը մշտական դիմումներ էին անում Արևմտյան Եվրոպայի թագավորություններին, առաջարկելով ընդհանուր ճակատ կազմել Թուրքական վտանգի դեմ: Սակայն Ֆրանսիական կառավարությունն անգամ չուզեց ընդունել Վերսալ հասած ռուսական դեսպաններին, հասկացնելով, որ Թուրքիայի դեմ ոչ մի քայլ չի ձեռնարկվելու և որ Ֆրանսիան Շվեդիայի է Ավստրիային: Իսկ Ռուսաստանը ոչ միայն լավ հարաբերությունների մեջ էր Ավստրիական կայսրության ու Լեհաստանի հետ, այլև արդեն 5 տարի շարունակ պատերազմում էր Թուրքիայի ու նրա վասալ Ղրիմի դեմ (1676—1681): Ռուս-ուկրաինական բանակը Ռոմոդանովսկու և հետման Սամոյլովիչի գլխավորությամբ կործանիչ հարվածներ էր հասցնում թուրք-թաթարական ղորքերին: 1677 թ. օգոստոսի 28-ին նրանք Չիգիրինի տակ ջախջախեցին թուրքերի հարյուր հազարանոց բանակը: Ռուսների, ուկրաինացիների ու լեհերի միացյալ ուժերի տարած հաղթանակների արձագանքները շատ շուտով հասան Հայաստան[6]:

Անդրկովկասում այդ ժամանակ ավելի էր վատթարանում ժողովուրդների վիճակը և քաղաքական գործիչները հասկանում էին ծանր վիճակից ելք որոնելու անհրաժեշտությունը: Տարեցտարի հզորացող Ռուսաստանի ու Լեհաստանի հաջողությունները ուժեղացնում էին ազատագրական շարժումը, որի հաջողության հեռանկարը այժմ կապվում էր առավելապես Ռուսաստանի, ինչպես և նրա դաշնակից Լեհաստանի ու «Գերմանական ազգի սրբազան կայսրության» ռազմաքաղա-

---

6 *Ջաքարիա Ագուլեցին իր «Օրագրության» մեջ խորին գոհունակությամբ նշում է այն փաստը, որ 1678 թվականի ապրիլին սուլթան Մահմադը իր վեզիր Մուստաֆա փաշայի հետ «անթիվ զորօք գնաց Անդրանիայ, մնծ սաֆար կանչից (այսինքն՝ մեծ պատերազմի կոչից—Վ. Ո.) Մոսկովին վերայ... լեհ թե տրիջան այստեղ կռիվ տվին, օսմանցուցանէ մին ՃՀՆՌ (185.000) մարդ սպանվեցաւ: Մին դատարկ բերթ առին, գարձան եկին Ադրանայ՝ թե բազաւոր, թե զօրք: Օսմանցիք այսպես մնացին խայտաառիթ:*

քական հաջողություններին և դիվանագիտական միջնորդությունների հետ։

Ահա այսպիսի միջազգային ու ներքին դրության պայմաններում 1678 թ. Էջմիածնում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը հրավիրում է հայ ավագանու գաղտնի ժողով՝ քննելու հայ ժողովրդի աղատագրության հարցը։ Այդ մասին մեզ հասած միակ տեղեկությունը պահպանվել է 1699 թ. Պետրոս I-ին ուղարկված մի գրության մեջ, որով հայ ավագանին հայտնում է. «1678 թ. մենք հավաքվեցինք միատեղ գաղտնի խորհրդի... Իմացանք Ձերդ մեծության և մյուս քրիստոնյա թագավորների կարողությունն ու հզորությունը, որոնք կօգնեն մեզ ազատվելու մեր դժբախտությունից։

Այդ գործի համար ընտրեցինք երեք հոգի, որպեսզի նրանք գան ընկնեն Ձերդ մեծության ոտքերը և հայտնեն մեր ցանկությունն ու մտադրությունը»[7]։

Համաձայն տվյալ աղբյուրի, մի պատվիրակություն էլ ուղարկվել էր Եվրոպա՝ Հռոմի պապի, Լեհաստանի թագավորի և Ավստրիայի կայսր Լեոպոլդի մոտ։ «Եվ նրանք գնացին Կոստանդնուպոլիս, բայց մինչ այդ մեր երկիրն եկան պարսկական զորքերը և պատերազմ սկսեցին վրացիների դեմ։ Եվ մենք տեսնելով, որ այդ ժամանակ հնարավոր չէր իրականացնել այն գործը, սուրհանդակ ուղարկեցինք մեր վերոհիշյալ պատվիրակներին, որպեսզի նրանք վերադառնան։ Եվ այդպես մեր մտադրությունը խափանվեց»[8]։

Ինչպես հայտնի է, Հակոբ Ջուղայեցին 1678 թ. դեռևս Շուլավերում էր, հետո Վրաստանում մնաց մինչև 1679 թ., այնտեղ բանակցություններ վարեց վրաց Գեորգի թագավորի և այնժամ Վրաստան գնացած Աղվանից կաթողիկոսի հետ։ Ամենայն հավանականությամբ 1678 թ. գաղտնի ժողովը տեղի է ունեցել Շուլավերում՝ կամ մի այլ վայրում, բայց կոչվել է Էջմիածնի գաղտնի ժողով, քանի որ Ռուսաստան ու

---

[7] Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. 17.

[8] Նույն տեղում։

Կոստանդնուպոլիս ուղարկվող պատվիրակությունները լիազորված էին ինչ որ չափով հայ պետականությունը ներկայացնող էջմիածնի կաթողիկոսական աթոռի կողմից։ Ի. Օրին և Անգեղակոթի գաղտնի ժողովի մասնակիցները իրավամբ 1678 թ. ժողովը անվանել են «էջմիածնի», շեշտելու նրա իրավականությունն ու հեղինակությունը։

Հակոբ կաթողիկոսի, էջմիածնի գաղտնի ժողովի և հայ պատվիրակությունների ջանքերը հաջողության չհասան։ Հիվանդ ու զառամյալ կաթողիկոսը Կ. Պոլսում 1680 թ. օգոստոսի 2-ին մահացավ։ Պատվիրակության մյուս անդամները, զրկվելով իրենց ճանաչված ու հեղինակավոր ղեկավարից, հուսահատ վերադարձան հայրենիք, դիտենալով Անդրկովկասում ստեղծված անբարենպաստ քաղաքական վիճակի և թուրքերի ու պարսիկների հարձակումների մասին։ Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու ներկայացուցչի հետ հանդիպումը նույնպես խոստումնալի լինել չէր կարող, քանի որ Լեհաստանն ու Ռուսաստանը դեռևս շարունակում էին իրենց ջանքերը՝ Պարսկաստանը հակաթուրքական պայքարի մեջ ներգրավելու նպատակով և Անդրկովկասին ռազմական օգնություն հասցնել չէին կարող։

Հայ պատվիրակության պատանի անդամ Իսրայել իշխանի որդի՝ Իսրայել Օրին, չուզեց վերադառնալ Հայաստան և անցավ Եվրոպա, սկսելով մի ինքնատիպ կյանք ու գործունեություն, շուրջ քսան տարի դեգերելով Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում՝ ուղիներ որոնելով իր ժողովրդի փրկության համար[9]։

Ինչպես տեսանք, էջմիածնի 1678 թ. գաղտնի ժողովը որոշեց դիմել արտաքին ուժերի՝ Ռուսաստանին, Ավստրիական կայսրությանն ու Հռոմի պապին։ Այդ ժողովի կողմից ուղարկված պատվիրակության նպատակն էր Հայաստանի ազատագրության հարցը բարձրացնելը և ոչ թե Հռոմի պապին հպատակվելն ու կաթոլիկություն ընդունելը, ինչպես

9 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959, էջ 227—346։

փորձում էին հավատացնել Հռոմի «Պրոպագանդայի խորհրդին» կողմից Անդրկովկաս ուղարկված միսիոներները։ Նրանք միշտ ստահոդ տեղեկություններ էին հաղորդում իրենց «հաջողությունների» մասին, որոնք, սակայն, շատ շուտով հերքվում էին պատմությամբ։ Այսպես, կաթոլիկ հայ Պետիկը և Փիսքոպո կրոնավորը տարածել էին, թե իրենք 1676 թ. կարողացել էին հավատափոխ անել Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին, որն իբր թե ապրիլի 2-ին «իր պատրիարքական եկեղեցու մեջ անթիվ ժողովուրդների առջև, հայ Փիսքոպոյի առջև ծնրադրելով» հրաժարվել է հայ լուսավորչական դավանանքից՝ ինչպես «մոլորյալ ոչխարը, խոստանալով ապագայում խոնարհ և հաստատուն հնազանդություն հռոմեական ծայրագույն քահանայապետին»[10]։ Այս կեղծիքը հերքվում է մի այլ կեղծիքով, որ իբր նույն Հ. Ջուղայեցին 4 տարի հետո, Կ. Պոլսում, մահվան մահճին ընկած՝ հրաման է ընդունել կաթոլիկություն (եթե հավատալու լիներ հեղինակներին, ապա պիտի ընդունենք, որ մահմեդական Շահ-Աբասը և հունադավան Պետրոս I-ը նույնպես «ընդունել» էին կաթոլիկություն)։ Հակոբ Ջուղայեցու միակ նպատակն էր հայրենիքի ազատագրությունը, որին նպաստելու համար նա բարեկամություն էր հաստատում և՛ կաթոլիկների, և՛ էջմիածնի հակառակորդ կաթողիկոսների հետ։ Նա հաշտվեց Գանձասարի Պետրոս կաթողիկոսի հետ, ապա նամակ ուղարկեց Երուսաղեմի եղիազար կաթողիկոսին՝ առաջարկելով մի հնար գտնել «յօգուտ ազգին»։ Նույն նպատակով նա լավ էր վերաբերվում Հռոմի ներկայացուցիչների հետ, որը սակայն երբեք չէր նշանակում հրաժարումն իր ազգային դավանանքից։ Այդ փաստն ընդունել են նաև մի քանի կաթոլիկ գործիչներ։ Այսպես, կավալեր Ռիկոն, որը 1678 թ. Հռոմում էր, գրել է. «Եկեղեցական պետության մեջ շշուկ էր տարածվել, որ իբր հայերի առաջին պատրիարքը (կաթողիկոսը) իր մի քանի արքեպիսկոպոսների ուղեկցությամբ շուտով գալու է Հռոմ՝ պապին հնազանդություն հայտնելու։ Դրանից հետո նա մի

10 Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 345։

քանի ամիս մնացի Իտալիայում, բայց այնտեղ այդ պատգամավորության գալու մասին ոչ մի լուր չստացվեց։ Ուստի այն ժամանակ, ինչպես և հիմա, ես եկել եմ այն եզրակացությյան, որ հայոց կաթողիկոսը մի օտար եկեղեցու հպատակվելու մտքից հետու է նույնքան, որքան Հայաստանը՝ Հռոմեական կրոնի գահից»[11]։ Ռիկոն, ինչպես և շատերը հասկացել էին, որ Հռոմի հետ գործակցելու փորձերը և կամ օգնություն խնդրելը բոլորովին չի նշանակում հույսեր կապել նրա վճռական միջամտության հետ, Վատիկանը դարձնել հուսո հանգրվան։ Չի կարելի ամեն մի քաղաքական գործակցության փորձ (այն էլ ձախողված փորձ) համարել քաղաքական օրիենտացիա։

Աղատագրական շարժման գործիչները դիմում էին և չէին կարող չդիմել Թուրքիայի ագրեսիայի դեմ կռվող պետություններին, ինչպես դիմում էին միմյանց անգամ շատ հզոր պետությունները՝ անկախ նրանց կրոնական ու քաղաքական դիրքավորումից։ Հայերը և վրացիները առավել ևս այդ իրավունքն ունեին և Հռոմին կամ Ավստրիային դիմելը չպետք է դիտել որպես նրանց ազատագրական շարժման «եվրոպական» կողմնորոշում։ Ինչպես տեսանք, էջմիածնի գաղտնի ժողովը որոշել էր դիմել և՛ Ռուսաստանին, և՛ Վատիկանին ու Ավստրիային։ Նվրոպային նույնօրինակ դիմումներ էին անում նաև վրաց իշխանները, թեպետև նույն 1680 թ. վրաց բագավոր Արչիլ I-ի (1647—1713) դեսպան վարդապետ Մակարին Ֆեոդոր Ալեքսեևիչ ցարին խնդրում էր ընդունել վրացիների հպատակությունը և օգնել նրանց՝ պարսից լուծը թոթափելու։ Արչիլը ռուսական ցարին հայտնում էր, որ բոլոր վրացական իշխանությունները ուզում են լինել Մոսկվայի հովանու տակ[12]։ Արչիլը 1682 թ. դնաց Աստրախան, սպասելով հնարավոր ու հարմար ժամանակի՝ Ռուսաստանից ռազմական օգնություն խնդրելու։ Ինչպես հայտնի է, 1682 թ. Ռուսաստանում տեղծվել էր քաղաքական լարված վիճակ.

---

11 *Էյսե, էջ XX։*

12 «Материалы по истории русско-грузинских отношений (80—90-е годы XVII в.)», ч. 1, Тбилиси, 1974, стр. 36.

Ֆեոդոր Ալեքսեևիչի մահից հետո ցար էր հայտարարվել տասնամյա Պետրոս I-ը, իսկ նրա 16-ամյա եղբայր Իվանը և քույրը՝ Սոֆյան ձգտում էին իշխանությունը խլել իրենց խորթ եղբորից: Սոֆյան կարողանում է դավադրությամբ թագավոր հայտարարել նաև Իվանին (Իվան V) և ինքը դառնում է փաստական թագուհի, մեկուսացնելով Պետրոսի մորը և նրա աղգականներին, որոնք մինչ այդ իրենց ձեռքում էին պահում իշխանությունը: Սակայն անգամ նման պայմաններում չէին դադարում դիմումները ռուսական արքունիքին: 1683 թ. հունվարին Արշիլը դիմում է «Իվան և Պետրոս թագավորներին» և հպատակություն ու օգնություն խնդրում, շեշտելով, որ «բացի աստծուց և ձեզանից՝ մեծ թագավորներից, ոչ ոքի վրա որևէ հույս չունեմ»[13]:

Ռուսաստանին էին դիմում ոչ միայն փոքր և պաշտպանության կարոտ երկրները, այլև Լեհաստանը, Վենետիկը, Ավստրիական կայսրությունը, որոնք առանց հզորացող հյուսիսային հարևանի օգնության չէին կարողանա հաղթել դեռևս ուժեղ ու ագրեսիվ Թուրքիային: Այդ լավ գիտեին և՛ վրացիները, և՛ հայերը, որոնք կողմնորոշված լինելով դեպի Ռուսաստան, միաժամանակ դիմում էին նաև Ռուսաստանի դաշնակից Լեհաստանին, Ավստրիային և այլ պետություններին, եթե նրանք ինչ-որ չափով շահագրգռված էին Թուրքիայի դեմ մղվող պայքարում: Պատահական չէ, որ արևելահայերը համագործակցում էին արևմտահայ գործիչների հետ՝ ինչպես 1660-ական, այնպես և 1670-ական թվականներին: Սսի կաթողիկոս Եղիազարը, որ շուրջ քսան տարի մասնակցել է ազատագրական շարժմանը, նույնպես լավ հարաբերություններ էր հաստատում էջմիածնի և Հռոմի հետ, քանի որ Հռոմն իսկապես ոչ միայն կողմնակից էր Թուրքական ագրեսիայի դեմ պայքարին, այլև ինչ-որ չափով գլխավորում էր այդ պայքարը: Եվրոպական պետություններից մասնավորապես Ավստրիան, Լեհաստանը և Վենետիկը տասնյակ տարիներ կռվում էին ընդդեմ թուրքական վտանգի:

13 Նույն տեղում, էջ 256—257:

Եղիազար կաթողիկոսը 1678 թ. Հովհաննես Բութունջիին որպես պատվիրակ ուղարկում է Եվրոպիա՝ Բուրքիայի դեմ միասնական ճակատի մեջ նրան ներգրավելու նպատակով։ Նշենք նաև, որ Հ. Բութունջին այդ ժամանակ արդեն հիասթափվել էր Լյուդովիկոս XIV-ից և նրանից որևէ օգնության հույս չուներ։ Դրան հակառակ, 1680-ական թվականներին Բուրքիայի դեմ պայքար էին սկսել Ռուսաստանը, Լեհաստանը և Ավստրիան, որոնց հաջողություններին էին ապավինելու ինչպես Բալկանյան ներակղզու, այնպես էլ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժման կազմակերպիչները։ Բալկանյան երկրների, Լեհաստանի, Հունգարիայի և այլ հայկական գաղթավայրերի բնակիչները ոչ միայն լավ գիտեին հակաթուրքական ազատագրական շարժման մասին, այլև մասնակցում էին կռիվներին։

Ջաքարիա Ագուլեցին, լինելով XVIII դ. հեղինակ և քաջ գիտենալով, թե ինչ է կատարվում աշխարհում, արձանագրել է սուլթան Մահմուդ IV-ի (1648—1687) ինչպես նվաճումները, այնպես և պարտությունները, ուշադրություն դարձնելով նաև այն փաստի վրա, որ 1679 թ. թուրքերի կողմից Լեհաստանում և Ուկրաինայում 80.000 դերվածների մեջ եղել են բազմաթիվ հայ ընտանիքներ[14]։ Նույն ժամանակի մյուս հեղինակը՝ Ջաքարիա Քանաքեռցին, հաղորդում է 1682 թ. Բուդա և Պեշտ հունգարական քաղաքների տակ տեղի ունեցած կռիվների մասին (որոնք շարունակվել են և հետո), որոնցում հաղթանակ են տարել «ֆրանկները»[15]։

Ռուսաստանը չէր ուզում սրել հարաբերությունները Բուրքիայի հետ մինչև XVII դ. 70-ական թվականները, բայց երբ թուրքերը հարձակվեցին Լեհաստանի վրա և նվաճեցին Կամենեցը, ռուսական կառավարությունը հանդես եկավ որպես և՛ պայքարի մասնակից, և՛ կազմակերպիչ։ Ցարը պատրաստակամություն հայտնեց անձամբ ղեկավարել պատերազմը։ Այդ ժամանակներից սկսվում է պայքարի նոր ժա-

14 «Ջաքարիայ Ագուլեցու օրագրությունը», էջ 105։

15 «Ջաքարիայ Սարկաւագի Պատմութիւն», հ. II, գլուխ 55։

մանակաշրջան։ Թուրքական վտանգի դեմ ուժեղ պայքար ծավալեց նաև Լհհաստանը։ Դեռևս 1673 թ. նոյեմբերի 11-ին լհհական զորքերը և ուկրաինական կազակները զորավար Յան Սոբեսկու զեկավարությամբ Խոտինի տակ ջախջախեցին Հյուսեին փաշայի 65.000-անոց բանակը։ Այդ օգնեց Սոբեսկու Լհհաստանի թագավոր դառնալուն (1674—1696)։ Սակայն կազակների հետաման Պ. Դոռոշենկոն անցավ Թուրքերի և Ղրիմի թաթարների կողմը, դարձավ Աջափնյա Ուկրաինայի «տերը» և փորձեց նրանց օգնությամբ նվաճել նաև Ձախափնյա Ուկրաինան։ Բայց ռուսական զորքերը համառ պայքար սկսեցին թուրք-թաթարական ուժերի դեմ, 1676 թ. ցազատեցին Չիգիրինը, 1677 թ. դլխովին ջախջախեցին Իբրահիմ փաշայի 100.000-անոց բանակը, ի վերջո թուրքերին ստիպելով ստորագրել 1681 թ. հունվարի 13-ի Բախչիսարայի պայմանագիրը, նորից հաստատելով Ձախափնյա Ուկրաինայի և Կիևի վերամիավորումը Ռուսաստանի հետ։ Այս հաջողությունը մեծապես նպաստեց Լհհաստանի ուժեղացմանը։

1683 թ., երբ Ավստրիական կայսրության մայրաքաղաք Վիեննան ամուր շրջապատված էր Եվրոպայի խորքերը թափանցած թուրքական բանակների կողմից, Յան Սոբեսկու լհհ-ուկրաինական զորքերը համարձակ, անսպասելի հարձակումով ու կործանարար հարվածներով պարտության և ամոթալի փախուստի մատնեցին թուրքերին[16]։ Նա, թերագնահատելով Թուրքիայի դիմադրության և հակահարձակ լինելու վտանգը, ըստ արժանվույն չօգտագործեց լհհ-ուկրաինական

16 Պետք է նշել, որ Յան Սոբեսկու զորքերի կազմում կռվում էին 5000 հայեր։ Յան Սոբեսկու դրական վերաբերմունքը հետապնդում էր քաղաքական հեռավոր նպատակ՝ ամրապնդել կապերը հայերի և Հայաստանի (ինչպես և Վրաստանի) հետ՝ Անդրկովկասում ռազմաքաղաքական հենարան ստեղծելու համար։ 1685 թ. հայերին տված մի շնորհագրում Յան Սոբեսկին նշել է «հայ ազգին պատկանող մարդկանց կորիճությունն ու բաջագործությունը, որ նրանք ցույց են տվել այնքան դարեր շարունակվող մեր համակեցության ընթացքում Կամենեցի, Յազլովիցի, ինչպես և մյուս սահմանային բերդերի պաշտպանության գործում»։ Վ. Ի. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963, էջ 36։

զորքերի Վիեննայի տակ տարած հաղթանակի ռազմաքաղաքական ու հոգեբանական նշանակությունը՝ թուրքական զորքերին հետապնդելու և վերջնական հարված հասցնելու համար։ Սոբեսկին հասկացավ, որ 1683 թ. հաղթանակից շատ ավելի օգտվեց Ավստրիան, քան Լեհաստանը, ուստի նա որոշեց ամրապնդել Լեհաստանի դիրքերը՝ դաշինք կնքելով Ավստրիական կայսրության և Վենետիկի հանրապետության հետ։ 1684 թ. ստեղծվեց այդ երեք երկրների եռյակ միությունը, որը հայտնի է «Սրբազան լիգա» անունով։ Սոբեսկին միաժամանակ ձգտում էր օգտվել Ռուսաստանի ծանր վիճակից, եւ պահանջել Զախափնյա Ուկրաինան, օգտագործել իր նվաճումները մեծ Լեհաստան ստեղծելու համար՝ սկսած Կարպատներից մինչև Սև ծով։ Այդ նպատակով Սոբեսկին գործակցում էր շատ երկրների հետ, ձգտում ընդլայնել «Սրբազան լիգան», ներգրավելով... Եգիպտոսն ու Հաբեշստանը, Պարսկաստանը, Վրաստանն ու Հայաստանը։ Ինչպես ճշտորեն նկատել է պրոֆ. Ի. Բ. Գրեկովը, Յան Սոբեսկին ուզում էր «Թուրքական կայսրությունը բաժանել հետևյալ ձևով. Միջագետքը և Արաբիան տալ Պարսկաստանի շահին, Եգիպտոսը՝ Ֆրանսիային, իսկ Կոստանդնուպոլսի և «Սրբազան վայրերի» հարցը Սոբեսկին հանձնում էր Վիեննայի ու Վերսալի համատեղ որոշմանը», դրանով իսկ ընդգծելով իր միջնական դիրքը այդ երկու խոշորագույն տերությունների պայքարում[17]։

Տարված այդ «աշխարհակալական» պլաններով ու դիվանագիտական միջոցներով իր նպատակին հասնելու մարմաջներով, Սոբեսկին չզարգացրեց հաջողությունը 1683 թ. հետո թուրքական բանակներին վճռական հարվածներ հասցնելու համար։ Ընդհակառակը, Ռուսաստանի գործողությունների և ապագա ագրեցության շրջանների սահմանափակման նպատակով Սոբեսկին փորձեց մերձեցման եղրեր գտնել Ղրիմի հետ։ Բայց Ռուսաստանի դիվանագիտության ջանքերով Լեհաստանը ի վերջո կանգնեց խաղաղության ճանապարհին և

---

17 *И. Б. Греков*, Вечный мир, Канд. дисс., М., 1950, стр. 322—323.

հրաժարվեց 1667 թ. Անդրուսովյան պայմանագիրը վերանայելու փորձերից։ Եթե լեհերը պնդում էին, որ Թուրքիայի դեմ պայքարում իրենց գործը շատ ավելի դժվար է, քան ռուսների պայքարը թաթարների դեմ, ապա ռուսական դիվանագիտությունը պնդում ու ապացուցում էր հակառակը, նշելով նաև, որ եվրոպական ճակատում թուրքերի դեմ կռվում են և՛ Վենետիկը, և՛ Ավստրիան։ Ի վերջո, լեհ-ռուսական դիվանագետների 9 կոնֆերանսներից հետո՝ միայն 1683 թ., կնքվեց «Հավերժական խաղաղության» պայմանագիրը։ Նույն թվականին Ռուսաստանը միացավ «Սրբազան լիգային» և սկսվեցին համատեղ, պլանավորված գործողություններ Թուրքիայի ու Ղրիմի դեմ։

Այն ժամանակ, երբ Սոբեսկին զբաղված էր ավելի դիվանագիտական բանակցություններով, ավստրիական զորքերը 1685—1688 թթ., օգտվելով Հունգարիայի բնակչության դժգոհությունից ու օսմանյան միրապետության դեմ մղվող ազատագրական պայքարից, թուրքերին վանում էին Հունգարիայից։ 1686 թ. սեպտեմբերի 2-ին ազատագրվեց Բուդան, իսկ 1688 թ. ամբողջ Արևելյան Հունգարիան ու Տրանսիլվանիան, որտեղ կային հայկական գաղթավայրեր և որտեղ հունգարացիների հետ միասին հայերը ևս կռվում էին իրենց երկրորդ հայրենիքի փրկության համար։ Այս կապակցությամբ արժե հիշատակել Թեկուզ միայն Գաբրիել Թոխաթեցուն, որը մեծ դեր է կատարել մասնավորապես ռազմական հետախուզության ասպարեզում[18], լավ կողմնորոշվելով քաղաքական-ռազմական բարդ իրադրություններում՝ ինչպես Արևմուտքում, այնպես և Արևելքում։ Այդ են վկայում Թոխաթեցու ժամանակագրությունից հրատարակված Թեկուզ առանձին ու կցկտուր հատվածները, որոնցում արտահայտվում է հեղինակի եռանդուն գործունեությունը։ Նա 1685 թ. գրել է, որ սեպտեմբերի 20-ին «Թուրքաց երկրեն»՝ Բելգրադից գնացել է Բուդա, այնտեղից՝ Գոմորա (Հումոր, քաղաք Հունգարիա-

18 Մանրամասնությունները տե՛ս Э. Шютц, Новые данные о Габриеле Токатеци, ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 1, էջ 103—106։

յում)։ Իսկ 1686 թ. սեպտեմբերին «Նեմցայու (գերմանացիների—Վ. Ո.) ազգն առաւ Պուտիմ ի Թուրքէն»։ Նա 1688 թ. գնում է Բելգրադ և այլ քաղաքներ[19]։

Համաձայն «Հավերժական խաղաղության» պայմանագրի և «Սրբազան լիգայի» անդամ երկրների պայմանավորվածության, Ռուսաստանը պետք է Թուրքիայի ու Ղրիմի դեմ կռվեր՝ ընդհանուր հաղթանակն ապահովելու համար։ Այդ նպատակով Սոֆյա Ալեքսեևնայի կառավարությունը 1687 թ. ձեռնարկում է Ղրիմի դեմ արշավանք, որը ղեկավարելու էր կանցլեր Վ. Գոլիցինը։ Արշավանքին մասնակցում էին 100.000 ռուս զինվոր, Դոնի և Զապորոժիեի կազակները։ Նրանք հասան մինչև Պերեկոպ և մեծ խուճապ առաջացնելով Ղրիմում ու Թուրքիայում, նրանց զինվորական ուժերի մեծ մասը ներքաշեցին դեպի Ղրիմի ճակատը, ինչը զգալիորեն օգնեց դաշնակիցների հաջողություններին Արևմուտքում։ Բայց 1688 թ. Ռնչ-Պոսպոլիտան (Լեհաստանը) հաշտության բանակցություններ սկսեց Թուրքիայի հետ և 1689 թ. սկսված Ղրիմյան երկրորդ արշավանքի ժամանակ պատերազմի ծանրությունն ընկավ միայն Ռուսաստանի վրա։ Այնուհանդերձ գարնանը 150.000-անոց ռուսական զորքերը հարձակման անցան և Ջելենայա Դոլինայի շրջանում համառ մարտերից հետո հասան Պերեկոպի մատույցներին, սակայն ամրոցը գրավելու համար ուժերի պակասություն և Ռուսաստանի ներքին լարված վիճակը ստիպեցին ռուսական զորքերը վերադարձնել։ Բայց պարզ դարձավ ռուսական պետության արտաքին քաղաքականության նոր՝ արևելյան ուղղվածությունը, որը մեծ ուժով ու հետևողականությամբ շարունակեց Պետրոս I-ը (1689—1725)։

---

19 Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.)*, Հ. Բ, Երևան, 1956, էջ 404—407։ Թոխաթեցու «Ճանապարհորդությունը» շարունակվում է նաև 90-ական թթ., ընդ որում բավական ուշագրավ դիզագրերով՝ Լվովից Մարսել, Վենետիկ, Ֆլորենցիա, Մալաթիա, Վարշավա, Վիեննա, Տուրն, Աուգսբուրգ, Նյուրնբերգ, Լայպցիգ, Վրոցլավ և 1695 թ. էլի Լվով։ «...Այսուհետև գիտելին... Քև ուր պիտի գնամ՝ կամք տեառն օրհնեալ եղիցի»,— գրում է Թոխաթեցին։

1695 թ. Պետրոս I-ը կազմակերպեց արշավանք՝ Ազովը նվաճելու և դեպի Սև ծով ելք բացելու նպատակով: 120.000-անոց զորքը 1695 թ. գարնանը շարժվեց դեպի Ազով, շրջապատեց բերդը: Բայց օգոստոս-սեպտեմբեր ամիսների ձեռնարկած գրոհները հաջողության չհասցրին՝ մի կողմից ընդհանուր հրամանատարություն չլինելու, մյուս կողմից ծովային նավատորմիղ չունենալու և բերդը լիովին (ծովի կողմից) պաշարել չկարողանալու հետևանքով: Վրա հասած ձմեռը, ռազմամթերքի ու պարենի պակասը ստիպեցին Ազովի գրավման խնդիրը թողնել 1696 թ. գարնանը: 1696 թ. ապրիլին ռուսական զորքը (90 հազար) և ձմեռվա ընթացքում ստեղծված բավական մեծ նավատորմը Պետրոս I-ի, գեներալիսիմուս Ա. Ս. Շեյնինի և Բ. Պ. Շերեմետևի ղեկավարությամբ նորից անսպասելի հասան Ազով, հունիսին բոլոր կողմերից պաշարեցին բերդը, սկսելով գրոհները: Թուրքական նավատորմն ուշացումով շտապեց բերդին օգնել, բայց այն ամուր շրջափակված ռմբակոծվում էր և՛ ծովից, և՛ ցամաքից: Ուկրաինական և ռուսական կազակները թափանցեցին պարիսպներից ներս և հուլիսի 19-ին Ազովը հանձնվեց: Դա նորաստեղծ պետրոսյան նավատորմիղի ու բանակի առաջին խոշորագույն հաղթանակն էր, որի նշանակությունը դուրս է գալիս ռուս-թուրքական հարաբերությունների շրջանակներից, ստանալով համաշխարհային հնչեղություն: Ռուսաստանը կանգնեց ծովային տերություն դառնալու ճանապարհին և, ի տես իր դաշնակիցների ու ողջ աշխարհի, ցուցադրեց իր ռազմական ուժը:

Բայց Պետրոս I-ը միաժամանակ հասկացավ, որ դեռ պետք էր շատ բան անել պատերազմի վերջնական հաղթանակի ու հզոր պետություն ստեղծելու համար: Ավստրիական բանակը՝ Եվգենի Սավոյացու հրամանատարությամբ 1697 թ. Տիսա գետի ափին, Զենտի մոտ թուրքական բանակին ջախջախիչ հարված հասցրեց, սակայն նույն թվականի գարնանը Ղրիմի թաթարների 27.000-անոց զորամասը հարձակվեց Ազովի վրա, թեպետ ջախջախվեց ու ետ շպրտվեց: Բայց պարզ դարձավ, որ Ղրիմն ու Թուրքիան չեն հաշտվում անգամ Ազովը կորցնելու մտքի հետ, իսկ Սև ծով դուրս գալու համար

Ռուսաստանին պետք էր ավելի խոշոր ու վճռական հաղթանակ, ավելի ընդարձակ հենակետ։

Հակաթուրքական լիգայի գործողությունները ուժեղացնելու, լիգան ամրացնելու և ընդլայնելու, պատերազմը շարունակելու նյութական ու ռազմական միջոցներ ձեռք բերելու նպատակով Պետրոս I-ը կազմակերպեց 250 հոգուց բաղկացած «Մեծ դեսպանություն» և 1697 թ. ուղևորվեց Եվրոպա։ Բայց ժամանակի զարգացած ու հարուստ կապիտալիստական երկրները՝ Անգլիան ու Հոլանդիան, բացարձակապես չուզեցին օգնել «Քրիստոսի խաչի թշնամիների» դեմ այդքան հետևողականորեն կռվող Ռուսաստանին։ Անգամ Ավստրիան ու Վենետիկը այլևս այնպիսի եռանդ չէին ցուցաբերում հակաթուրքական պայքարում, քանի որ նրանց թուրքական վտանգը չէր սպառնում այնպես, ինչպես առաջ։

Պետրոս I-ը և նրա դիվանագետները հասկացան, որ դաշնակիցները կշտապեն հաշտություն կնքել Թուրքիայի հետ, ուստի որոշեցին վերադառնալ հայրենիք, մանավանդ որ հայտնի դարձավ Մոսկվայում Սոֆյայի կազմակերպած դավադրությունը։ Պետրոս I-ը՝ հուսախաբ ու դժգոհ իր եվրոպական դաշնակիցներից, վերադարձավ և Մոսկվա հասավ 1698 թ. օգոստոսի 25-ին։ «Մեծ դեսպանությունը», սակայն, մեծապես օգտակար եղավ ոչ միայն Եվրոպայի տնտեսության, տեխնիկայի, կուլտուրայի հաջողություններին, նավաշինարարությանը, հրետանային գործին ծանոթանալու, այլև միջազգային դրությունը հստակորեն պատկերացնելու և Լեհաստանի հետ դաշինք կնքելու համար։ Եթե Ֆրանսիայի, Հոլանդիայի ու Անգլիայի դիրքը վաղուց արդեն պարզ էր, ապա Ավստրիայի և Ռուսաստանի մտադրությունները Թուրքիայի նկատմամբ այդժամ դեռևս մնում էին պետական գաղտնիքի շղարշի տակ։

Պետրոս I-ին Վիեննայում ընդունեցին որպես հակաթուրքական պայքարի հերոսի, թեպետ որևէ իրական ծրագիր չառաջադրվեց։ Բրանդենբուրգում առանձին ջերմությամբ Պետրոսին ընդունեց կուրֆյուրստ Վիլհելմ III-ը և հրաժեշտի երեկոյին հանդիսավոր նրաժշտության հնչյունների

տակ ընթերցվեց և ռուսական դեսպանությանը հանձնվեց Պետրոս I-ին ձոնված ներբողը՝ ռազմական հաջողության մաղթանքներով.

Ձեր ճանապարհը օրհնված լինի,
Թուրքն ու թաթարն էլ պատժի արժանի,
Սուլթանի գահը խորտակվի, ընկնի,
. . . . . .
Հանուն աստծո՝ ճանապարհվեցեք,
Ձեզ զինակից ու ընկեր փնտրեցեք[20]:

Հոլանդիայում Պետրոս I-ը նկարել տվեց իր պորտրեն, որի շուրջը գրված էր՝ «Պետրոս, ռուս-հունական թագավորության միապետ»: Նա անձամբ քանդակեց մի գրավյուրա՝ «Քրիստոնյանների հաղթանակը իսլամի դեմ»[21], նորից ընդգծելով իր քաղաքականության ուղղվածությունը:

Պետրոս I-ը Վիլհելմի հետ կնքեց նաև գաղտնի դաշինք՝ Շվեդիայի դեմ, գիտենալով ընդհարման անխուսափելիությունը: Նույնն արեց նա Լեհաստանում՝ ի դեմս Սաքսոնիայի կուրֆյուրստ Լեհաստանի թագավոր Ավգուստ II-ի (1697—1707 և 1709—1733) գտնելով հավատարիմ դաշնակցի:

«Մեծ դեսպանության» պլանները, դրանց ձախողումն ու հաջողությունները չէին կարող ինչ-որ չափով հայտնի չդառնալ եվրոպայում լայն կապեր ունեցող հայ և վրացի գործիչներին: Առավել ևս այդ անցուդարձին ծանոթ պետք է լիներ շուրջ քսան տարի եվրոպայում դեգերող, լեզուների մեջ համտացած, քաղաքականության հարցերում արագ ու ճիշտ կողմնորոշվող Իսրայել Օրին: Նա այդ ժամանակ արդեն մոտ հարաբերությունների մեջ էր Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հետ, մի ազդեցիկ կայսրընտիր իշխանի, որի կնոջ քույրերը ավստրիական կայսր Լեոպոլդ I-ի, իսպանական

20 «Материалы для библиографии Петра I», т. II, сост. акад. М. М. Богословский, М., 1947, стр. 87.

21 Նույն տեղում, էջ 579:

թագավոր Կառլոս II-ի, Պորտուգալիայի թագավոր Պետրոս I-ի թագուհիներն էին (կանայք)։ Օրին գիտեր, որ Պետրոս I-ը բարեկամական հարաբերություններ մեջ է ոչ միայն կայսեր, այլև գերմանական իշխանների՝ Վիլհելմ III-ի, Սաքսոնիայի կուրֆյուստ և լհհական թագավոր Ավգուստ II-ի հետ, որոնք կարող էին մեծ դեր խաղալ Հայաստանի ազատագրության գործում։ Ահա թե ինչու հենց 1698 թ., երբ Պետրոս I-ը դեռ չէր հասցրել վերադառնալ Ռուսաստան, Իսրայել Օրին դիմում է Հովհան Վիլհելմին և խնդրում նրան՝ օգնել իր ժողովրդի փրկության գործին, քանի որ այն հնարավոր էր դառնում Ավստրիայի ու Ռուսաստանի ռազմական հաջողությունների շնորհիվ։

Հ. Վիլհելմը ոգևորված էր հակաթուրքական լիգայի հաջողություններով։ Ենթարկվելով Հայաստանն ազատագրելու հնարավորության և գահի վրա բազմելու Ի. Օրիի հրապուրիչ ներշնչումներին և առաջարկներին, Հ. Վիլհելմը համաձայնվում է միջնորդել Ավստրիայի կայսր Լեոպոլդի առաջ, որպեսզի վերջինս հայ ավագանուն պաշտոնապես հայտնի իր կողմից Հայաստանն ազատելու պատրաստակամության մասին։ Սակայն Լեոպոլդը նման դրություն չտվեց, պատճառաբանելով, որ այդ կարող է հայտնի դառնալ Թուրքիային (որի հետ 1698 թ. հաշտության բանակցություններ էին սկսվել) և պայմանագիր կնքելու գործը կտապալվեր։ Բացի այդ, Լեոպոլդը հասկացնել տվեց, որ Ի. Օրին չունի համապատասխան լիազորություններ և Հայաստանից պաշտոնապես իրեն չեն դիմել։ Կայսրը և Հ. Վիլհելմը օգնություն խոստանալու դեպքում իսկ պահանջելու էին, որ հայերը հավատափոխ լինեին՝ ընդունեն կաթոլիկությունը և ենթարկվեին Հռոմին։

Ի. Օրիի բանակցությունները Հովհան Վիլհելմի հետ այնուամենայնիվ շատ արդյունավետ էին թեկուզ այն տեսակետից, որ կայսրընտիր իշխանը միջնորդեց Լեոպոլդ կայսեր առաջ՝ օգնելու հայոց գործին, հատուկ նամակ գրեց ոչ միայն հայ ավագանուն, այլև վրաց թագավոր Գեորգի XI-ին, նրան առաջարկելով միավորել հայերի ու վրացիների ուժև-

րը։ Ի. Օրին, իհարկե, չէր կարող գիտենալ, որ շուրջ քսան տարի Վրաստանի ազատության համար պայքարող Գեորգի XI-ը (նույն ինքը՝ Գորիի խանը) պարտություն էր կրելու Մուխրանի, Գորիի և այլ բերդերի ավերվելուց, երկիրը թալանի ու գերեվարության ենթարկվելուց հետո Գեորգին ստիպված էր եղել հանձնվել շահին[22]։ Կարևորն այն է, որ Ի. Օրին դեռևս մինչև 1698 թ. այնքան խորն ու բազմակողմանի էր հասկացել հայ-վրացական դաշնակցության նշանակությունը և այդ գաղափարը այնքան համոզիչ ձևով էր ներկայացրել կուրֆյուրատին, որ նա անհրաժեշտ էր համարել անձամբ դիմել վրաց թագավորին՝ պարսից բռնակալության դեմ միասնական ճակատ ստեղծելու առաջարկով։

Այսպիսով, Իսրայել Օրին նախապատրաստվում էր Հայաստան գալուն՝ հիմնավորապես ապահովելով իր անձնավորության բարձր հեղինակությունը, հայ ավագանուն ներկայացնելու որպես ոչ սոսկ կայսրընտիր իշխանի, այլև իրեն՝ կայսեր հանձնարարականներով լիազորված դեսպանորդ, ընդ որում, բերում էր նամակներ՝ ուղղված ոչ միայն հայ ավագներին՝ մելիքներին ու կաթողիկոսներին, այլև վրաց Գեորգի թագավորին։ Ի. Օրին առանձնապես չէր մտահոգում այն, թե ովքեր են էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսները կամ ինչպիսին էր Գեորգի XI-ի դիրքը ազատագրական շարժման նկատմամբ տվյալ պահին[23]։ Նրա համար կարևորն այն էր, որ կապ էր հաստատվելու հայ և վրաց զեկավար շրջանների միջև։

---

22 Տե՛ս «Զաքարեայ Սարկաւագի Պատմութիւն», հ. II, գլուխ 48։ Այդ էր պատճառը, որ կուրֆյուրատ Հ. Վիլհելմի նամակը հասցեատիրոջը չհանձնվեց և Ի. Օրին այն տարավ իր հետ, ի վերջո հանձնեց Մոսկվայի արքունիքին։

23 Գուցե և դիտմամբ Գանձասարի կաթողիկոսի անունով գրված Հ. Վիլհելմի թղթում նա Փիլիպոս է անվանել նրան, մինչդեռ Գանձասարում նման անունով կաթողիկոս չի եղել 1681 թ. մինչև 1701 թ. Գանձասարի կաթողիկոսներ են եղել Սիմոնը և Երեմիան։ Իսկ եղիազար կաթողիկոսը, որին ուղղված էր Հ. Վիլհելմի մյուս նամակը, մահացել էր դեռևս 7 տարի առաջ։ Կարելի է ենթադրել, որ անունները դիտակցաբար խառնված են տրվել՝ կաթողիկոսներին հնարավոր վտանգից զերծ պահելու նպատակով։

Ահա նման կարևոր հանձնարարություններով Ի. Օրին հասավ Հայաստան, եղավ Էջմիածնում, ապա գնաց Սիսիան, որտեղ 1699 թ. ապրիլին նրա և մելիք Սաֆրազի նախաձեռնությամբ հրավիրվեց Անգեղակոթի գաղտնի ժողովը։ Իսրայել Օրին ժողովի մասնակիցներին հաղորդեց Հովհան Վիլհելմի հետ ունեցած զրույցների ու պայմանավորվածության մասին, նշեց, որ կայսրընտիր իշխանն ու Լեոպոլդ կայսրը պահանջելու են ավագանուց և հայերից, որպես օգնություն ցույց տալու նախապայման՝ ընդունել կաթոլիկական դավանանք։

Դժվար է ենթադրել, թե Ի. Օրիի նման աշխարհաճանաչ ու հեռատես գործիչը հավատար, թե գերմանական իշխանը, թեկուզև շատ ազդեցիկ ու Լեոպոլդ կայսեր մտերիմ, կարողանալու էր վճռական դեր խաղալ Հայաստանի ազատագրության գործում։ Նույնը պիտի ասել նաև մելիք Սաֆրազի և մյուսների մասին, որոնք լավ գիտեին, թե ինչ էր կատարվում Վրաստանում, Ռուսաստանում, անգամ Եվրոպայում, հասկանում էին, որ միայն իրենց անմիջական հարևանը՝ Թուրքերի և Թաթարների դեմ շուրջ 30 տարի մարտնչող Ռուսաստանն է ի վիճակի օգնել իրենց։ Բայց հարց է ծագում, ինչո՞ւ Անգեղակոթի գաղտնի ժողովը այնուամենայնիվ որոշեց դիմել և՛ Վիլհելմին, և՛ կայսրին, և՛ Հռոմի պապին։ Հարցի պատասխանը պետք է փնտրել ինչպես այդ նույն ժամանակի, այնպես և նախորդ ու հետագա պատմական անցքերի մեջ։

1698 թ. գարնանը, երբ Ի. Օրին դիմեց Հովհան Վիլհելմին, Կառլովիցում Թուրքիայի հետ հաշտության բանակցությունները չէին սկսվել և պարզ չէր, թե ինչպես էին ընթանալու դեպքերը։ Պարզ էր սակայն, որ Պետրոս I-ը Եվրոպա էր մեկնել հակաթուրքական լիգան և նրա պայքարը ուժեղացնելու նպատակով։ Հայտնի էր նաև, որ Ռուսաստանի ու Ավստրիական կայսրության փոխհարաբերությունները դաշնակցային էին ու բարեկամական։ Պֆալցի իշխան Հովհան Վիլհելմը կարող էր Լեոպոլդի հետ իր մտերիմ կապերն օգտագործել՝ Հայաստանի օգնության գործի

մեջ ներքաշելու նաև Ավստրիայի կայսրին՝ Պետրոս I-ի դաշնակցին, իսկ կայսեր միջոցով նաև Հռոմի պապին: Ուրեմն, վերոհիշյալ բոլոր դեպքերը կարող էին այս կամ այն չափով կարևոր դեր խաղալ, թեպետ հիմնական ուժը Ռուսաստանն էր, այդ մերձավոր հզոր հարևանը, որի հետ էր կապվում Հայաստանի ազատագրության հույսը: Ի. Օրին, Մինաս Վարդապետը և ժողովի մյուս մասնակիցները հասկանում էին նաև, որ Պետրոս I-ին հղած իրենց դիմումն ավելի մեծ նշանակություն կստանա, կիմաստավորվի ու տպավորիչ կլինի, եթե նմանօրինակ գրություններ ուղարկեն Ավստրիայի կայսրը ու Հռոմի պապը: Բացի այդ, նրանց միջնորդությունը ինչ-որ չափով միջազգային հնչեղություն կտար Պետրոս I-ի հավանական ձեռնարկումներին, բարոյական արդարացում կլիներ Անդրկովկասում «քրիստոնյաներին փրկելու» ռուսական ջանքերին:

Ե՛վ Մինաս Վարդապետը, և՛ Սաֆրազն ու մյուս մելիքները լավ գիտակցում էին, որ ո՛չ հայ ժողովուրդը, ո՛չ կաթողիկոսները և ո՛չ էլ անձամբ իրենք կաթոլիկական դավանանք չեն ընդունելու: Ի. Օրին չէր կարող հավատալ, որ կայսրը պետք է համաձայնվեր օգնության գնալու Կովկասյան լեռներից, Սև ու Կասպից ծովերից հեռու, Թուրքիայից էլ արևելք ընկած և պարսից իշխանության տակ գտնվող Արևելյան Հայաստանին, որի համար հարկ էր լինելու բշնամանալ Պարսկաստանի հետ, և այդ այն ժամանակ, երբ Ավրստրիան գտնվում էր «Իսպանական ժառանգության» համար սկսված պայքարի առաջին գծում, մի նոր մոտալուտ պատերազմի նախադռանը:

Իսպանիան, որի տիրույթների վրա «արևը մայր չէր մտնում», դարձել էր Եվրոպայի բոլոր պետությունների ուշադրության հիմնական առարկան. այդ կռվախնձորին տիրելու համար մտահոգված էին բոլորը: Լեոպոլդն արդեն երկրորդ պլանի վրա էր թողել Թուրքիայի դեմ պայքարը: Այս բոլոր հանգամանքները ակնհայտ են դարձնում Իսրայել Օրիի և մելիքների որոշման նպատակը՝ օգտագործել Ռուսաստանի դաշնակիցներին՝ հայ ազատագրական շարժման

նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ստեղծելու, Լեոպոլդի ու Հռոմի պապի միջոցով Պետրոս I-ին դիմելու և հաջողության հասնելու դյուրին ճանապարհ գտնելու համար:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին հղած նամակում և Ի. Օրիի 36 կետից բաղկացած ընդարձակ ու հանգամանալից խնդրագրում նըշված են հայերի պարտավորությունները, այդ թվում Հովհան Վիլհելմին հայոց թագավոր ճանաչելը և կաթոլիկություն ընդունելը... բայց պայմանով, որ այդ արվելու էր Հայաստանն ազատագրելուց հետո: Օրին դիվանագետի հմտությամբ նշում էր, որ եթե այժմ իսկ հայերը դավանափոխ լինեն և այդ հայտնի դառնա պարսիկ իշխանություններին, ապա նրանք դաժանորեն կպատժեն հայերին ու կկանխեն ապստամբությունը: Նման նկատառումներով էլ խնդրագրի տակ չէին ստորագրել էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսները, թեպետ նրանց անուններն ավելի ծանրակշիռ ու պաշտոնական տնօրք կտային փաստաթղթերին: Ուրեմն, Օրիի տրած խնդրագրերն ըստ էության ոչ մի պարտավորություն չէին դնում հայ ժողովրդի և եկեղեցու վրա, թեպետ Ի. Օրին լիահույս էր, որ դրանք մեծ դեր կին կատարելու գործի ընթացքում:

Այսպես, 1699 թ. ապրիլի 9-ից մինչև 29-ը Անգեղակոթում բանակցություններն ավարտելուց և համապատասխան խնդրագրեր (Հռոմի պապին, կայսրին, Հ. Վիլհելմին ու Պետրոս I-ին) կազմելուց հետո Իսրայել Օրին և Մինաս Վարդապետը (այդ կրթված ու հայրենասեր հոգևորականը պետք է հայոց եկեղեցու և ավագանու կողմից Օրիին ներկայացներ աշխարհին), վերցնելով համապատասխան նրաշխավորագրեր, ճանապարհ ընկան դեպի Ավստրիայի՝ Գերմանական սրբազան կայսրության մայրաքաղաք Վիեննա, որտեղից պետք է անցնեին Հռոմ, ապա և Մոսկվա[24]:

Այն, որ դեռևս 1699 թ. Անգեղակոթում որոշված էր դի-

---

24 Պատմական գրականության մեջ արտահայտվել է այն անհիմն կար-

մել Ռուսաստանին և դրա համար միջնորդություն խնդրել Լեոպոլդ կայսրից, հաստատվում է հայ մելիքների 1703 թ. Պետրոս I-ին գրած մի նամակով ևս: Մելիքները գրել են. «Մեք գրեր էաք Եփրատօրին և լեկտրը Փալաթինին, որ աղաչեն առ քո թագաւորութեանդ, նոքա ևս մեր աղաչանացն լսած է և քո թագաւորութեանդ գրած է եթե նոցա և մեր աղաչանացն լսեր են և առեր ես յանձդ, որ զմեզ ազատես»[25]:

Ի. Օրիի և Մինաս Վարդապետի եվրոպական բանագնացության քաղաքական արդյունքները բավարար եղան, թեև նրանք որևէ ռեալ ռազմական կամ նյութական օգնության խոստում չստացան: Միայն Հովհան Վիլհելմը «պատրաստակամություն» հայտնեց Հայաստան ուղարկել 10 հազար դինվոր, եթե թույլատրվի այդ անել Ռուսաստանի վրայով: Սակայն էականը այն էր, որ Հովհան Վիլհելմը, ապա նաև Լեոպոլդ կայսրն ու Հռոմի պապ Ինոկենտիոս XII-ը (1691—1700) հավանություն տվին Ի. Օրիի կողմից ներկայացված ազատագրական ծրագրին, նրան հանձնեցին երաշխավորագրեր և շատ կարևոր նամակներ՝ կայսր Լեոպոլդի կողմից Պետրոս I-ին[26] և հայ ավագանուն[27]: Օրին Գերմանիայից ու Լեհաստանից ստացել էր անցագրեր, որոնք և ներկայացրեց Ռուսաստան գալու ժամանակ: Ի. Օրիի հետ

ծիքը, որ իբր թե Անգեղակոթի ժողովը Ռուսաստանին դիմելու որոշում չի ընդունել և Պետրոս I-ին խնդրագիր չի ուղարկել և որ Ի. Օրին այդ թուղթը կազմել է հետագայում, երբ հիասթափվել է Եվրոպայից ու մեկից դիմադարձ եղել դևպի Ռուսաստան՝ այսպես «ծնունդ տալով» ռուսական կողմնորոշմանը: Սակայն այդ հերքվում է բևկուզև հայ կաթոլիկ Ստեփան Ռոշքայի վկայությամբ, որը Հռոմում հանդիպել էր Ի. Օրիին և 1700 թ. գրել հետևյալը. «Ի. Օրին, Պռօշ իշխանի որդին... եկն ի Հռոմ եւ մատոյց Ինոկենտիոս ԺԲ-ին (Հռոմի պապ Ինոկենտիոսին) զթուղթն ի տասն մելիքաց... խնդրէին օգնութիւն ազատելոյ ի լծոյն անհաւատից: Ունէր եւ զայլ թուղթս առ կայսր Լէօբոլտոս, առ էլէքդօրն եւ առ ձարն Մոսկովայ»: Տե՛ս Գ. Էզов, էջ LXXVI:

25 Տե՛ս Գ. Էզов, էջ 155—156:

26 Տե՛ս նույն տեղում, վավ. 17, 23 և 31:

27 Նույն տեղում, վավ. 14, 21:

1701 թ. հուլիսի 7-ին Մոսկվա եկան Մինաս Վարդապետ Տիգրանյանը, լեհահայ Նազար Օրեխովիչը (Օռուխենց Կուլ-նազարը՝ ինչպես ստորագրում էր նա) և Օրիի անձնական քարտուղար Պետր Սիմոնները՝ դեսպանական ատյան ներկայացնելով անցագրերը և խնդրելով իրենց գալու մասին շտապ հաղորդել ում հարկն է։

Այսպես, շուրջ քսան տարի Արևմուտքում Հայաստանի ազատագրության ուղիներ որոնելուց հետո Իսրայել Օրին հանգեց այն վերջնական եզրակացության, որ Եվրոպայի պետությունները փ վճռակի չեն (իսկ դրանցից շատերը չեն էլ ուզում) օգնել հայ ժողովրդի ազատագրման գործին և լավագույն դեպքում միայն կարող են նպաստել Ռուսաստանի ձեռնարկումներին։ Այդ է ապացուցում նրա հետագա գործունեությունը։

Ինչպես տեսանք, հայ և վրաց գործիչները XVII դարի 60-ական թվականներից կողմնորոշվել էին դեպի Ռուսաստան, այնտեղից ապասելով Անդրկովկասի ազատագրության համար իրական օգնությունը։ Միայն հարևան ու հզոր Ռուսաստանն էր կենսականորեն շահագրգռված պայքարելու Թուրքիայի, Պարսկաստանի ու դրանց կովկասյան վասալների թշնամական գործողությունների դեմ։ Միայն Ռուսաստանի պաշտպանության տակ երկիրը կազատվեր միջֆեոդալական կռիվներից, ասպատակություններից, խանների և փաշաների քմահաճույքներից, ազգային ու կրոնական ճնշումներից, բռնի գաղթեցումներից ու դավանափոխություններից և որ գլխավորն է՝ ֆիզիկական բնաջնջման վտանգից։

Ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը համազգային նշանակություն ուներ և արտահայտում էր հայ ժողովրդի բոլոր խավերի և դասակարգերի՝ այդ թվում Անդրկովկասի և Բալկանների գաղութահայության շահերն ու ձգտումները, նրանց և՛ մասնավոր, և՛ ընդհանուր նպատակները։

Հայ վաճառականության և մանր առևտրականների շահերը պահանջում էին առևտրի ազատություն, մեծ շուկա և տրանզիտային առևտրի հարմար ու ապահով ճանապարհ

859—6

ներկայացնող Ռուսաստանի հետ մերձենում ու հովանավորություն, քանի որ «Թուրքական, ինչպես և արևելյան ամեն տեսակի այլ տիրապետություն, անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ. ստացված հավելյալ արժեքը ոչնչով չի ապահովված սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից։ Բացակայում է բուրժուական ձեռնարկատիրական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության ապահովությունը»[28]։

Հայ ազնվականության վերջին բեկորները՝ մելիքները կարող էին հույսեր կապել Ռուսաստանի օգնության հետ՝ իրենց հողատիրական իրավունքների ամրացման և ընդլայնման համար։

Հայ եկեղեցին հակվում էր դեպի Ռուսաստան, հուսալով ցարի օգնությամբ իր դիրքերն ամրացնել հայ ժողովրդի մեջ, հաղթահարել դուրս գալ մահմեդականության ու կաթոլիկության դեմ մղվող ծանր պայքարում և հնարավորության դեպքում իր ղեկավարության տակ վերցնել հայության տարբեր զանգվածները և՛ Հայաստանում, և՛ գաղութներում։

Հայ աշխատավորությունը՝ գյուղացիները, արհեստավորները, վարձու բանվորները առավել ծանր էին տանում արևելյան բռնակալների լուծը, չունեին պաշտպանվելու նյութական միջոցներ։ Իրավազուրկ և ընչազուրկ, նրանք փրկություն էին ակնկալում Ռուսաստանից, որտեղ հայերի դրությունը զգալիորեն ավելի լավ էր, քան Հայաստանում։

Ռուսաստանի և Հայաստանի իշխող շերտերի դասակարգային շահերն արտահայտող քաղաքականությունը չէր կարող արտահայտել հայ ժողովրդի, աշխատավորության սոցիալական ու քաղաքական ձգտումները, սակայն արևելյան բռնակալությունից ազատագրվելը և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելը զգալիորեն կթեթևացներ ժողովրդի վիճակը, նրա բախտը կկապեր ռուս ժողովրդի հետ՝ նրա հետ շարունակելու իր պատմական ուղին։

---

[28] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. XXII, стр. 33.

Պետք է նշել, որ նույնպիսի վիճակում էին Անդրկովկասի և Բալկանյան երկրների բոլոր ժողովուրդները, որոնց օբյեկտիվ շահերը համապատասխանում էին Ռուսաստանի շահերին և արևելյան քաղաքականության պահանջներին։ Այս ռեալ հիմքի վրա ամրապնդվում էին քաղաքական կապերը և ռուսական կողմնորոշումը։ Հայերի ազատագրության գործը ռուսական պետության հետ կապելու գաղափարը հանկարծակի չի ծնվում, այլ պատմականորեն նախապատրաստվում է XVII դարի ընթացքում՝ որպես օբյեկտիվ հետևանք Թուրքիայի և Պարսկաստանի ասպիճանական թուլացման, հայության վիճակի վատթարացման, Արևմուտքից սպասվող «փրկության» պատրանքի ազդեցության հետևողական թուլացման և ռուսական պետության ուժեղացման։

Հայերի ռուսական կողմնորոշումը պետականությունից զրկված, օտար բռնակալության ծանր լծի տակ հեծող հայ ժողովրդի ազատագրության իրական ծրագիրն էր՝ պայմանավորված երկրի ներքին ու միջազգային դրությամբ, սոցիալ-տնտեսական կյանքի արմատական պահանջներով ու խարբսխված երկու ժողովուրդների բազմադարյան կապերի, փոխըմբռնման, համագործակցության և անխախտ բարեկամության օբյեկտիվ ու ամուր հիմքի վրա։

Հայաստանը Ռուսաստանի միջոցով ազատագրելու ծրագիրը մշակվում և Ռուսական պետության հովանավորությունն է ստանում Ի. Օրիի և նրա զինակիցների ջանքերով XVIII դ. սկզբին, երբ նրանք գնացին Մոսկվա և բանակցություններ սկսեցին ռուսական արքունիքի հետ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԻ ԵՎ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ

1701 թ. Հուլիսի 10-ին Ի. Օրին Ռուսաստանի դեսպանական ատյան ներկայացրեց Լեոպոլդ կայսեր ու Հ. Վիլհելմ կուրֆյուրստի կողմից գրված հավատարմագրերը (любительные грамоты) *և առացավ հետևյալ օրը կանցլերին ներկայանալու թույլտվություն։ Հուլիսի 11-ին արտաքին գործոց ատյանի պետը՝ կանցլեր Ֆ. Ա. Գոլովինը (1700—1706) Ի. Օրիի հետ սկսեց բանակցություններ, որոնց նպատակն էր քննել հայ ավազանու և Ի. Օրիի խնդրանքներն ու դրանց բավարարելու կոնկրետ միջոցները։ Հայաստանի աղատագրության իր գաղտնի ծրագիրը համառոտակի հայտնելուց հետո, Օրին խոստացավ գրավոր պատասխանել Գոլովինի հարցերին. 1. ինչպե՞ս պետք է սկսվի «այդ գործը», 2. քանի՞ տարում (2 թե՞ 3) կարող է ավարտվել գործը, և 3. ո՞վ պետք է քանակն ապահովի պարենով։ Երեք օրից հետո Ի. Օրին Պետրոս I-ին ներկայացրեց լատիներեն մի նամակ և մի ֆրանսերեն նամակ-պատասխան՝ Ֆ. Ա. Գոլովինին*[1]։

Պետրոս I-ին և Գոլովինին հղած նամակներում Ի. Օրին հավաստիացնում էր, որ հայ իշխանները պատրաստ են ռուսների կողմն անցնելու և եթե 15—20 հազար ռուս զինվոր գնա Հայաստան, միլիոնավոր քրիստոնյաներ կազատվեն օտար լծից։ «Ավելի քան 250 տարի է,— գրում էր

[1] *Տե՛ս Г. Эзов, վավ. № 36, 37։*

Օրին Պետրոս I-ին,— որ քրիստոնեությունը տնքում է անհավատների լծի տակ և ինչպես Աբրահամի որդիները հավատով սպասում էին փրկչին՝ որ կազատեր նրանց հավերժական մահից, այնպես և այդ խեղճ (ողորմելի) ժողովուրդը միշտ ապրել և այժմ էլ ապրում է Ձերդ մեծության օգնության հույսով»։ Մարգարենները գուշակել են, կարդում ենք Օրիի նամակում, որ «Մոսկովյան օգոստոսափառ տնից կգա մի մեծ իշխան՝ ավելի քաջ, քան Ալեքսանդր Մեծը (Ա. Մակեդոնացին— Վ. Ո.), որը կնվաճի հայկական թագավորությունը և կազատագրի քրիստոնյաներին»[2]։

Թե ինչքան հանգամանորեն էր նախապատրաստվել Օրին իր վերին աստիճանի պատասխանատու առաքելությունն սկսելու համար, այդ երևում է նրա ներկայացրած փաստաթղթերից, ինչպես և Հայաստանի, Կովկասի ու Մերձավոր Արևելքի ներքին ու միջազգային դրության լավատեղյակությունից։ Ի. Օրին ռուս պետական գործիչների հետ բանակցելիս ներկայացնում էր այնպիսի գրավոր բացատրություններ ու առաջարկություններ, որոնք հիմնավորված և համոզիչ էին։ Նա վառ գույներով ներկայացնում էր Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, պարսից պետականության ճգնաժամը և ռուսական արշավանքի դեպքում հայ-վրացական ապստամբության հաջողությամբ պսակվելու հնարավորությունը։

Ուշագրավ է Օրիի կատարած պատմական էքսկուրսն այն մասին, որ ռուսները փոքր ուժերով կռվելու և հաղթելու ընդունակ են. դեռևս 30 տարի առաջ՝ Ստեփան Ռազինը կարողացել էր մի քանի հազար կազակներով հասնել Կասպից ծովի հարավային ափերը՝ հաղթելով բոլոր մարտերում... և այդ էլ այն ժամանակ, երբ Պարսկաստանն ավելի ուժեղ էր, քան XVIII դ. սկզբին, իսկ Ռազինի ուժերը շատ ավելի քիչ, քան կարող էր դուրս բերել Ռուսաստանը։

Հետաքրքիր է նաև, որ Օրին Պետրոս I-ին ներկայացրել էր իր և Սիմոնների կողմից 1701 թ. կազմած Հայաստանի,

---

2 Г. Эзов, էջ 75։

Վրաստանի և դրանց հարևան երկրների ճեռանկար քարտեզը, որպեսզի ռուսական գործիչներն աշխարհագրական կոնկրետ պատկերացում ունենային Անդրկովկասի ռելիեֆի, ճանապարհների, քաղաքների ու բերդերի տեղաբաշխման մասին:

Ի. Օրին գործը ներկայացնում է այնպես, որ Ռուսաստանին դիմելու միտքը իրեն տվել է Պֆալցի իշխանը: Ինչո՞վ բացատրել այս: Նախ Ռուսաստանին դիմելու առաջարկի իմաստը և օրինականությունը ինքնին հասկանալի է, քանի որ աշխարհին արդեն հայտնի էին Պետրոսի արևելյան քաղաքականության պլանները դեռևս Ազովյան արշավանքների ու եվրոպական դեսպանության ժամանակից, երբ Ավստրիան և Լեհաստանը փաստորեն դաշնակցում էին Ռուսաստանի հետ: Այնուհետև, Ի. Օրին ուզում էր ավելի ծանրակշիռ ձևով ներկայացնել ռուսական արքունիքին դիմելու հիմքերը, շեշտել, որ Անդրկովկասի ազատագրության գործում Ռուսաստանի վճռական դերն ու իրավունքը ճանաչում են նաև Եվրոպայում, քանի որ դա արտահայտում էր միջազգային ուժերի ռեալ փոխհարաբերությունը: Ուրեմն, 1698—1699, 1702, ինչպես և հետագա՝ 1704 թ. դիմումները եվրոպական տերություններին, այդ թվում նաև Ռուսաստանի դաշնակիցներին, պետք է դիտել ոչ թե որպես հայերի այսպես կոչված «եվրոպական կողմնորոշման» արտահայտություն, այլ որպես խելամիտ ու հեռատես դիվանագիտություն, որի նպատակն էր Անդրկովկասի ազատագրության գործի մեջ քաշել նաև Ռուսաստանի դաշնակիցներին:

Ի. Օրիի և Մինաս Վարդապետի բանակցությունները չավարտվեցին ու չէին կարող ավարտվել նույն 1701 թ. մի քանի հանդիպումներով ու զեկույցներով, քանի որ ռուսական կառավարությունը նման բարդ և միջազգային նշանակություն ունեցող հարցի լուծման համար պետք է հանգամանորեն ուսումնասիրեր Անդրկովկասի, Պարսկաստանի և Թուրքիայի ներքին վիճակը, ուժերի փոխհարաբերությունը, ֆեոդալական վերնախավի, եկեղեցու, վաճառականության ու դյուղացիության տրամադրությունները, պայքարի համար

Նրանց պատրաստակամության աստիճանը։ Ռուսական արքունիքը չէր կարող շտապողականություն ցուցաբերել առավել ևս այն պատճառով, որ դեռևս 1700 թ. օգոստոսին սկրսվել էր Հյուսիսային պատերազմը Շվեդիայի դեմ, երբ Պետրոս I-ը պարտություն էր կրել և ժամանակավորապես նահանջելով, պատրաստություններ էր տեսնում նոր հարձակման համար՝ ստեղծելով նոր բանակ, հզոր հրետանի և նավատորմ։ Իսկ շվեդական թագավոր Կառլոս XII-ը, գտնելով, որ Պետրոս I-ի բանակը ջախջախված է գլխովին, իր հարվածներն ուղղել էր Ռուսաստանի միակ դաշնակից Վրհաստանի դեմ ու մխրճվել նրա խորքը։ Բնութագրականն այն է, որ անգամ նման աննպաստ պայմաններում ռուսական կառավարությունը ոչ միայն չէր մերժում հայերի ու վրացիների դիմումները, այլ շարունակում էր բանակցությունները, ուսումնասիրում իրադրությունը և խոստանում Հյուսիսային պատերազմի ավարտից հետո օգնություն հասցնել։

Ի. Օրին շատ գոհ էր, որ Հայաստանի ու նրա ազատագրման ծրագրի նկատմամբ բարյացակամորեն էին տրամադրված ինչպես ռուսական պետական գործիչները, այնպես էլ Մոսկվայում ծառայող կամ այնտեղ ապաստանած այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք էին մոլդավացի քաղաքական գործիչ և գիտնական Նիկոլայ Միլեսկուն՝ Սիաթարիոսը, շահի կողմից գահազրկված վրաց թագավոր Արչիլ II-ը (1661—1713), նրա որդի Ալեքսանդր Արչիլովիչը, Միրոն Վասիլևը և ուրիշ հայ ու վրացի համախոհներ։ Ի դեմս Նիկոլայ Սիաթարիոսի Իսրայել Օրին գտավ իրեն համախոհ ու կարեկից բարեկամի, որը մտահոգված էր իր հայրենի երկիրը թուրքական բռնապետությունից ազատելու խնդրով, ուրեմն և շահագրգռված էր ազատագրական շարժումը պաշտպանելու գործում։ Սիաթարիոսը քաջ գիտեր բազմաթիվ լեզուներ և թարգմանել էր Օրիի գրած լատիներեն, թուրքերեն, ֆրանսերեն թղթերը (և քարտեզում նշված տեղանունները)։ Դեսպանական ատյանում Գոլովինի և Ի. Օրիի առաջին հանդիպմանը որպես թարգմանիչ հանդես էր եկել

Սփաթարիոսը, որը առաջիններից մեկն իմացավ Օրիի առաքելության գաղտնիքը։

Խիստ կոնսպիրացիայի պայմաններում Ի. Օրիի ծավալած գործունեության լայնության ու խորության մասին դժվար է լրիվ պատկերացում կազմել։ Այսպես, մեզ քիչ բան է հասել նրա և Արշիլ II թագավորի համագործակցության մասին, սակայն այն, ինչ պատառիկների ձևով պահպանվել է արխիվային ֆոնդերում, լիակատար հիմք է տալիս որոշակի եզրակացություններ համարՕրինակ, դեռևս անձամբ ծանոթ չլինելով Արշիլի հետ, Օրին լավ գիտեր նրա մասին. պատահական չէ, որ նա խնդրում էր, որ վրացիներին հուսադրելու համար Պետրոս I-ը հանձնարարի Արշիլին նրանց համապատասխան նամակ գրել[3]։ Արշիլն ու Օրին քաջ գիտեին միջազգային դրությունը և կապված լինելով մի շարք երկրների հետ, մշտապես ստանում էին նամակներ ու բանավոր տեղեկություններ և դրանք իրենց եզրակացություններով ու առաջարկություններով ներկայացնում էին ռուսական կառավարությանը։ Պատահական չէ, որ Պետրոս I-ը մերժում է Ի. Օրիի խնդրանքը՝ իրեն պատերազմի ճակատ ուղարկելու մասին[4], թեպետ Ի. Օրին գիտեր ռազմական գործը և կարող էր շատ օգտակար լինել։

1701—1703 թթ. ռուսական կառավարությունը պարբերաբար տեղեկություններ էր հավաքում Հայաստանի ու Վրաստանի մասին Մոսկվա եկող վաճառականներից, նրանց գործակատարներից, հոգևորականներից, ինչպես և Օրիից, Արշիլից ու նրանց մարդկանցից։ Վերջիններս, լինելով ժամանակի կրթված, աշխարհի գործերին լավատեղյակ գործիչներ, ոչ միայն ինֆորմատորներ էին, այլև խորհրդատուներ, որոնց առաջարկություններին ու կարծիքներին մեծ նշանակություն էր տրվում։ Հիշենք, որ Արշիլը և նրա որդին՝ Ալեքսանդրը, Պետրոս I-ի մտերիմներն էին դեռևս 1690-ական թվականներից և այնքան հավատարիմ ու ճանաչված բարեկամ, որ

---

[3] ՀԱԿՊԱ, ֆ. 100, 1701—1703 թթ., գ. № 3, թ. 141։

[4] Գ. Էջօ, էջ 111։

Ալեքսանդր Արշիլովիչը Պետրոսի դեսպանության կազմում եղավ Եվրոպայում՝ Գերմանիայում, Անգլիայում, Հոլանդիայում՝ ինչ-որ չափով ներկայացնելով Վրաստանի շահերը հակաթուրքական պայքարի կազմակերպման գործում: Ալեքսանդր Արշիլովիչը մեծապես նպաստում էր ռազմական գործերին, մասնավորապես ռուսական հրետանային զորքի կազմակերպմանը, որի համար և Պետրոսը նրան նշանակեց հրետանու հրամանատար (ֆելդցեխմայստեր) և իր հետ մասնակից դարձրեց Շվեդական պատերազմին: Ալեքսանդրը 1700 թ. գերի ընկավ և իր մահկանացուն կնքեց: Շվեդական պատերազմին մասնակցել են շատ վրացիներ, նրանց հետ նաև հայեր, որոնց թիվը մեծ էր Արշիլի մերձավորների և ծառայողների մեջ:

Ռուսական կառավարությունը, լիակատար վստահությամբ վերաբերվելով Ի. Օրբին, Արշիլին, հայ և վրաց գործիչներին, նրանց տալիս էր պատասխանատու հանձնարարություններ, նրանցից պահանջում էր մշտական հաղորդումներ, ուղարկում Եվրոպա, Կովկաս, Պարսկաստան: Այսպես, 1702 թ. Պետրոսը Հայաստան ուղարկեց Միրոն Վասիլևին, որը պետք է հավաստեր հայ ավագանու հավատարմությունը և Օրբի միջոցով ուղարկած ծրագրերի, դիմումների վավերականությունը: Նաղար Օրեխովիչը «Նորին մեծության թագավորի» հրովարտակներով 1702 թ. ուղարկվում է կայսեր և Բավարիայի կուրֆյուրստի մոտ... Իսկ 1703 թ. նա Լեհաստանից, Ռուսաստանի արտակարգ դեսպան՝ իշխան Գրիգորի Դոլգոռուկովի նամակներով գալիս է Մոսկվա, այստում է Ի. Օրբի մոտ[5] և պաշտոն ստանում դեսպանական առյանում:

Մոսկվա հասնող տեղեկությունները գոհացուցիչ չէին, պատերազմը շարունակվում էր ծանր պայմաններում, Գերմանիայից որևէ ռևալ օգնություն ստանալու հույս չկար, ծանր վիճակում էր Լեհաստանը, որտեղ մխրճվել էին Կառլոս XII-ի զորքերը և որտեղից նույնպես Ռուսաստանը սպա-

5 Տե՛ս նույն տեղում, էջ 213:

սելիք չէր կարող ունենալ, լեհերը հազիվ կարողանում էին պաշտպանական մարտերով ետ նահանջել։

Պետք է հիշատակել նաև, որ Նազար Օրեխովիչը ռազմաճակատ՝ Պետրոս I-ին էր տարել Երևանի հայերի 1702 թ. նոյեմբերի 7-ի նամակը, որով նրանք շնորհակալություն էին հայտնում ցարին՝ իրենց օտար լծից ազատելու պատրաստակամություն հայտնելու համար և ցանկանում հաջողություն թշնամու դեմ մղվող պատերազմում[6]։ Նազար Օրեխովիչը այն եզակի անձնավորություններից էր, որ Պետերբուրգի հիմնադրման օրերին թույլտվություն էր ստացել գնալ այնտեղ ու հանդիպել Պետրոս I-ի և կանցլեր Գոլովինի հետ։ Ինչպես նշում է Օրին 1703 թ. դեկտեմբերի 3-ին կանցլեր Գոլովինին հղած նամակում, «այդ Նազար Օրեխովիչը գնացել էր Լեհաստան ու դրանից հետո Շլոտբուրխ և Ջերդ գերազանցությանն հանձնել նամակները»[7]։

Ռուս-շվեդական պատերազմի պայմաններում Պետրոս I-ը և նրա կառավարությունը կարծես հնարավորություն չունեին և շատ չէին կարող զբաղվել Անդրկովկասի հարցերով, սակայն, ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, նրանք ուշի-ուշով հետևում էին Թուրքիայի և Պարսկաստանի իշխանության տակ գտնվող ժողովուրդների վիճակին, նրանց ազատագրական պայքարին։ Պետրոս I-ը 1701 թ. թուրքական սուլթան Մուստաֆա II-ին ուղարկած գրամոտայով դժգոհություն էր հայտնում, որ «հայերն ուզում են սրբազան վայրերը գնալ աղոթելու (Երուսաղեմ), բայց նրանց մերժել են՝ Մուֆթի կազիի որոշմամբ և սուլթանի հրամանով...» և այդ հրամանին չենթարկվելու համար հայ ավազանուց շատերը ենթարկվել են մահապատժի («кажнены смертию»)[8]։ Շվեդիայի դեմ պատերազմի առաջին անհաջողությունների պայմաններում նման բողոքը Թուրքիայի հակաքրիստոնեական քայլերի դեմ ցույց է տալիս Պետ-

---

6 Տե՛ս նույն տեղում, էջ 137—138։

7 Նույն տեղում, էջ 181։

8 «Письма и бумаги Петра Великого», т. I, СПб., 1887, стр. 426.

րոս I-ի քաղաքական միտվածությունը։ Նույն թվականի հունվարի 24-ին ծովակալ Ֆ. Մ. Ապրակսինին հղված գրամոտայում նա գրում է, որ թուրքերը շվեդների հետ դաշինք են կնքել և լուրերի համաձայն պատրաստվում են պատերազմի ու առաջարկում է զգույշ լինել և պաշտպանությունն ուժեղացնել Ազովում, հատկապես Տագանրոգում, վարձել բավարար թվով կազակներ։ Այսպիսի փաստերը շատ են և դրանք վկայում են Ռուսաստանի ու Անդրկովկասի շահերի ընդհանրությունը և ռուսական արքունիքի բացառիկ հետաքրքրությունը Մերձավոր Արևելքում զարգացող դեպքերի նկատմամբ։

Ուշագրավ է այն փաստը, որ 1703 թ. ռուսական կառավարությունը Արշիլ Վախթանգովիչից և Ի. Օրիից պահանջում է Հայաստանի ու Վրաստանի նոր քարտեզ-գծագրեր, թեպետ, ինչպես տեսանք, դեռևս 1701 թ. Օրին ներկայացրել էր բավական հաջող «գծագիրը»։ Հավանաբար հարկ էր եղել Անդրկովկասը ներկայացնել ավելի հանգամանալի զեկուցումով և նոր քարտեզներով՝ երկու հեղինակների պատկերացմամբ, դրանք համադրելու, ճշտելու և նրանց տեղեկությունների վավերականությունը ստուգելու համար։

1703 թ. Ի. Օրին Պետրոս I-ին է ներկայացնում Հայաստանի ու Անդրկովկասի նոր քարտեզը (իսկ Արշիլի գծած քարտեզը 1703 թ. վերջերին հանձնվել էր դեսպանական ատյանին)[9]։ Նոյեմբերի 15-ին, Պետրոս I-ին հղած իր նամակում, նկարագրելով հայերի վիճակը թուրք ու պարսիկ հարստահարիչների իշխանության ներքո և շեշտելով ճնշումների ու հալածանքների ուժեղացումը, Ի. Օրին խնդրում է օգնել միլիոնավոր հայերին, վրացիներին, հույներին, ասորիներին, որոնք հեծում էին «անհավատների» լծի տակ։ Ի. Օրին քաջ գիտակցում էր, որ Հայաստանի ազատագրության գործը անմիջականորեն առնչվում է ոչ միայն ռուս-պարսկական ու ռուս-թուրքական, այլև ռուս-եվրոպական փոխհարաբերություննե-

---

9 Վ. Ոսկանյան, *Ի. Օրու կողմից Պետրոս I-ին ներկայացրած նորահայտ քարտեզը*, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 297—306. տե՛ս նաև Г. Эзов, էջ 173։

րի հետ։ Դրա համար պետք էր միավորել Անդրկովկասի ու Բալկանյան ժողովուրդների ուժերը, պետք էր այդ գործի շուրջը ստեղծել միջազգային հասարակական կարծիք։ Նա հիշեցնում էր Պետրոս I-ին, որ Լեոպոլդ կայսրը և Պֆալցի կուրֆյուրստը պատրաստակամություն էին հայտնել՝ օգնել Հայաստանի ազատագրությանը, սակայն նրանց օգնության կարիքը կարող էր զգացվել Ռուսաստանի միջազգային դրության բարդացման դեպքում։ Ահա թե ինչու Ի. Օրին Պետրոս I-ին խնդրում է իրեն ուղարկել Հռոմի պապի ու կայսեր մոտ՝ նրանց խոստացած օգնության պարտավորությունների ու հայերին հովանավորելու նոր հավաստումներ ստանալու համար։ Նա ուզում էր այսպիսով եվրոպական պետություններում համակրանք ստեղծել հայոց հարցի նկատմամբ, որպեսզի Ռուսաստանի և Պարսկաստանի, ցուցե նաև Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հնարավոր կոնֆլիկտի դեպքում Պետրոս Մեծի զորքերի արշավանքն արդարացվեր և ապահովվեր այդ պետությունների դեմ բարյացակամ չեզոքությունը։

Հայաստանից ուղարկվող խնդրագրերը Պետրոս I-ին և Գոլովինին, Իսրայել Օրիի բուռն ու արդյունավոր գործունեությունը Մոսկվայում 1701—1704 թթ. նշանակալի եղան հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման և հայ-վրաց-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման համար[10]։

Սկզբից ևեթ նշենք, որ հայերի դիմումները որպես կանոն բարձրացնում են Անդրկովկասի բոլոր ժողովուրդների և առաջին հերթին վրաց ժողովրդի ազատագրման խնդիրը, որն իր կապերով, ողբերգական վիճակով և համատեղ ազատագրական պայքարի բազմադարյան պատմությամբ, մշակույթով ու դավանանքով ավելի մոտ էր կանգնած հայ ժողովրդին։ Մելիքների հենց առաջին ուղերձի մեջ այդ դրել է իր արտահայտությունը. «Դարձեալ յայտնի է քո տէրութեանդ, որ Կուռճուն (այսինքն՝ վրացական—Վ. Ո.) և մեր ազգէն որչափ

10 Г. Эзов, վավ. № 98 (ռուսերենը՝ № 99) և 100 (ռուսերենը՝ № 101)։

քրիստոնեաք անյարմար նախանձոյ չարութեամբ, հարկապահանջութեամբ և պես-պես տանջանօք անհամարս կուգարձուցանեն ի մոլորութիւն իւրեանց»[11]:

Ի. Օրիի և մյուս հայ գործիչների նամակներում ու դիմումներում հստակորեն արտահայտված է նրանց աննահանջ ձգտումը՝ ստեղծել ընդհանուր ռուս-վրաց-հայկական ճակատ, նպաստել երեք երկրների քաղաքական և ապա ռազմական համագործակցությանը, առանց որի անհնար էր Անդրկովկասի ազատագրությունը: Ե՛վ Արշիլի, և՛ ռուս արքունիքի հետ իր բանակցությունների ընթացքում Օրին հետևողականորեն պնդում էր ռուս-հայ-վրաց դաշնակցություն ստեղծելու անհրաժեշտությունը: Սփաթարիոսի հետ բանակցությունների (1701 թ. հուլիսի 23-ին) արձանագրությունից պարզվում է, որ Օրին շեշտել է նաև հույների, հայերի և վրացիների (և՛ հունադավանների, և՛ կաթոլիկների) վրա կախված վտանգի լրջությունը, նրանց միասնության անհրաժեշտությունը: Ի. Օրին հավատացնում էր, որ եթե ռուսական զորքերը մտնեն վրացական երկիրը, ապա այնտեղի խանը (Վախթանգը), որ մահմեդականություն ընդունած քրիստոնյա վրացի է, անմիջապես կվերադառնա քրիստոնեական դավանանքին, «իսկ նրա զորքերը՝ բոլորը վրացիներ են ու քրիստոնյաներ»: Բացի վրացական զորքից, որ Օրիի կարծիքով 30.000-ի է հասնում, անմիջապես կհավաքվի 80.000, իսկ Հայաստանը կարող է դուրս բերել 100.000-ից ավելի կռվող: Եթե շահի զորքերից դուրս դան վրացիներն ու հայերը, ապա կմնա 20.000 մարդ:

Օրին հույս էր հայտնում, որ 25.000 ռուսների Անդրկովկաս մտնելը միանգամայն բավական կլինի երկիրն ազատելու համար, քանի որ կապստամբեն մի կողմից հայկական և մյուս կողմից վրացական զինված ուժերը: Կարելի է ասել, որ արդեն 1703 թ. վերջերին ձևավորվում էր ռուս-վրաց-հայկական քաղաքական ու ռազմական դաշինքը, և սկսվել էին գործնական քայլեր՝ դաշինքի ամրապնդման և ապագա գոր-

11 Նույն տեղում, էջ 19:

ծողովների նախապատրաստման համար։ Բայց մինչ այդ անհրաժեշտ էր օգնել Ռուսաստանի դիվանագիտությանը՝ Հայաստանի և Վրաստանի ազատագրական շարժման շուրջը դրական կարծիք ստեղծելուն, նպաստել պատերազմում նրա հաղթանակին։ 1703 թ. Օրին խնդրում է իրեն տալ գնդապետի աստիճան և ուղարկել կայսեր, պապի և կուրֆյուրստի մոտ՝ իր նոր առաքելությունը նախապատրաստելու՝ Անդրկովկաս ու Պարսկաստան մեկնելու համար։

Ի. Օրիի մտահղացմամբ պետք էր Հռոմի պապի կողմից մի դեսպանություն ուղարկել պարսից շահի մոտ՝ քրիստոնյաների, այդ թվում հայերի վիճակը բարելավելու հարցը բարձրացնելու համար։ Սակայն այդ պատրվակի տակ Օրին ուզում էր աղդարարել և՛ Հռոմի, և՛ կայսեր, և՛ նրա դաշնակից պետությունների կողմից հայերին հովանավորելու ցանկությունն ու պատրաստակամությունը, դրանով իսկ համախմբելով Անդրկովկասի ժողովուրդների ուժերը՝ ապագա պայքարի և ռուսական զորքերին ընդառաջ գնալուն պատրաստ լինելու համար։

Օրիի խնդիրքը բավարարվում է, և 1704 թ. փետրվարին գնդապետ Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա՝ իր հետ տանելով Պետրոս I-ի հանձնարարականներն ու նամակները՝ կայսր Լեոպոլդին, Հովհան Վիլհելմին[12], ինչպես և Արշիլի նամակները Հովհան Վիլհելմին և կայսր Լեոպոլդին[13]։ Ի. Օրին կայսրին ներկայացնում է ցարի 1704 թ. հունվարի 23-ի թվակիր գրամոտան, որտեղ, ի միջի այլոց, գրված էր. «Մենք բարեհաճեցինք ողորմածությամբ նրան (այսինքն՝ Ի. Օրին— Վ. Ո.) ճանապարհել, որպեսզի նա հանձնարարված գործերի կապակցությամբ Ձերդ կայսերական մեծությանը պատասխանի»[14]։

Այս գրությունները և Ի. Օրիին լսելու առաջարկները մեծ ազդեցություն ունեցան գործի ընթացքի վրա։ Լեոպոլդը

12 Г. Эзов, վավ. № 121, 123։

13 Նույն տեղում, վավ. № 126, 127։

14 Նույն տեղում, էջ 195։

15 Տե՛ս նույն տեղում, վավ. № 130, 131։

1704 թ. օգոստոսի 27-ի նամակով Պետրոս I-ին հայտնեց Ի. Օրիին ընդունելու մասին և նույն օրը պատասխան ուղարկեց Արշիլին[15]։

Միջազգային դրության շատ բարդ պայմաններում Ի. Օրին կարողացավ հասնել այն բանին, որ 1705 թ. հուլիսի 15-ին ստացավ Հռոմի Կղեմեոս XI պապի (1700—1721) ստորագրությամբ հավատարմագիր՝ պարսից շահին ներկայանալու՝ որպես պապի դեսպանորդ։ Շահին դիմում է անում նաև Հովհան Վիլհելմը, իր պաշտպանության տակ վերցնելով հայերին։ Օրին ստանում է նաև վերջինիս նամակները Արշիլին, Պետրոս I-ին և պարսից շահին[16]։ Այսպես, ավարտելով իր բանավարությունները, 1706 թ. հունվարին Օրին գնում է Ամստերդամ, այնտեղ ձեռք բերելու ինչ անհրաժեշտ էր՝ Պարսկաստան մեկնելու համար։

Ի. Օրին Ամստերդամի վրայով 1706 թ. աշնանը վերադառնում է Մոսկվա՝ իր հետ բերելով տարբեր ազգությունների ու մասնագիտությունների եվրոպացիներ։ Նրանք ոչ միայն բացառիկ շուք էին տալու Օրիի ապագա ներկայացուցչական դեսպանությանը, այլև ակնառու ցուցադրելու էին Հայաստանի ազատագրման պլանների եվրոպական արձագանքները, որ պետք է ուժեղ քաղաքական ու հոգեբանական տպավորություն գործեր և՛ ժողովուրդների, և՛ շահական արքունիքի վրա։

Ի. Օրին դեսպանության ուղևորությանը նախապատրաստվում էր անօրինակ եռանդով, կանխատեսելով բոլոր դժվարություններն ու դրանց հաղթահարման միջոցները։ Ռուսական իշխանություններին նա ծանոթացնում էր իր եվրոպական բանագնացության արդյունքներին և խորհրդակցում Պարսկաստանում իր անելիքների մասին։

1706 թ. նոյեմբերի 29-ի հուշագրում Օրին խնդրում է Պետրոս I-ին, որ նա շահին առաջարկի վրացական հողերի վրա կառավարիչ կարգել վրաց թագավոր Արշիլին և կարգադրի նահանգապետներին (խաներին), որ առանց Արշիլի

16 Տե՛ս նույն տեղում, վավ. № 133, 134, 135։

գիտության ու կամքի ճնշումներ չթույլատրվեն քրիստոնյա բնակչության նկատմամբ։ Օրին խնդրում է նաև իրեն ու Արչիլին միասին ուղարկել Անդրկովկաս, որպեսզի նրանք ճանապարհին կարողանան մտածել իր առաջարկությունների մասին և ռուսական զորքերի դեպի Անդրկովկաս արշավանքի պահին կարողանան հայ ու վրաց ապստամբ ուժերով լինել Արաքս գետի ափերին, գրավել բոլոր անցումները, թույլ չտալով, որ պարսկական զորքերը նահանջելիս թալանեն ու հրկիզեն դաշտերը, քաղաքներն ու գյուղերը։ Նման նախապատրաստության դեպքում ռուսական զորքերը կշարժվեն առաջ՝ ինչպես սեփական երկրում։ «Եթե վրացական պրինցը իր երկրում, իսկ ես Հայաստանում չլինենք, այդ դեպքում ոչ ոք չի կարողանա պարսիկներին դիմադրություն կազմակերպել։ Իսկ եթե նա (Արչիլը—Վ. Ո.) իր երկրում լինի, դա կնշանակի ծառայության մեջ ունենալ 50.000 մարդ»[17]։ Իսրայել Օրին այսպես պլանավորում էր հայ-վրաց-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի իրականացման հետագա քայլերը՝ պատրաստվելով մեկնել Պարսկաստան։ Օրիին և նրա շքախմբին տրամադրվեց ռուսական ռազմանավ, որով նա ուղևորվեց դեպի Կասպից ծով։

Դեպի Պարսկաստան ճանապարհորդելիս Ի. Օրին ականատես եղավ Անդրկովկասի ժողովուրդների դժգոհության ուժեղացմանը։ Շամախիում նա հանդամանորեն ծանոթացել էր անցյալում տեղի ունեցած և այդ ժամանակ զարգացող դեպքերին և տրամադրություններին։ Նա 1709 թ. գրում էր, որ շամախեցիները պարսիկների հետ հակամարտություններ մեջ են և դժգոհ են պարսկական տիրապետությունից[18]։ (Հետագայում այդ մասին հանգամանալի տեղեկություններ են հաղորդում նաև ռուսական դեսպան Ա. Վոլինսկին և Մինաս Վարդապետը)։ Անդրկովկասի ժողովուրդների դժգոհությունները, որ կային ամբողջ XVI—XVII դարերի ընթացքում, իրենց գագաթնակետին էին հասել XVIII դ. սկզբներին և առավել ևս երկրորդ տասնամյակում։ Այդ բոլորը լավ հայտնի

17 Նույն տեղում, էջ 222։

18 Տե՛ս նույն տեղում, էջ 163։

էին շահին ու նրա պալատականներին, որոնք հասկանում էին Օրիի դեսպանության նպատակները և նրա հավաքած տեղեկությունների հայտնի դառնալու վտանգավորությունը, ուստի կարգադրել էին Օրիին պահել Շամախում՝ իբրև թե շահից կարգադրություն չունենալու պատճառով։ Մոտ մեկ տարի Շամախում մնալով, Օրին շարունակում էր կապ պահպանել Ռուսաստանի հետ, իր ստացած տեղեկությունները հաղորդելով ոչ միայն Պարսկաստանի ու Թուրքիայի, այլև Լեհաստանի, Ուկրաինայի, Վալախիայի մասին, թեպետ, իհարկե, Օրին հիմնականում զբաղված էր ազատագրական կռիվների համար հող նախապատրաստելով, երկրի վիճակը ուսումնասիրելով, Ռուսաստանի նկատմամբ հույս ու հավատ ներշնչելով։ Դրա համար լավագույն առիթներ եղան Աստրախանից Պարսկաստան գնալու ընթացքում՝ Շամախում, Գանձասարում, Երևանում, Էջմիածնում 1707—1711 թթ. գործիչների ու ժողովրդի հետ հանդիպումների ժամանակ։

Կաթոլիկ կղերն ու Արևմուտքի պետությունների դեսպանները զարմանքով ու զարհուրանքով ականատես էին լինում այն մեծ հաջողությանն ու բարոյական-քաղաքական ազդեցությանը, որոնք ուղեկցում էին Օրիի դեսպանությանը հենց առաջին քայլերից սկսած։ Հռոմի «Պրոպագանդայի խորհուրդ» էին հասնում եղվիտների սարսափով լի զեկույցները, որոնք պապին հաղորդում էին Ի. Օրու հաջողությունների մասին, ընդգծելով այն կարևոր հանգամանքը, որ Օրին կոչ է անում կաթոլիկներին ու հայկական դավանանքին հավատարիմ հայերին հրաժարվել դավանաբանական վեճերից, խծբծանքներից ու բշնամությունից, միավորել իրենց ուժերը՝ ժողովրդի ընդհանուր գործի համար։

Պապին նրանք հայտնում էին, որ Օրին ամենուրեք հանդես է գալիս որպես Հռոմի պապի լիազոր պատվիրակ, ցույց է տալիս նրա կողմից իրեն տրված պաշտոնական հանձնարարականները և հայտարարում, որ ինքն է Վատիկանի միակ ու իսկական ներկայացուցիչը և որ չպետք է լսել ու հավատալ կաթոլիկ միսիոներներին ու եղվիտներին, որոնք երկպառակություններ են սերմանում հայ և մյուս ժողովուրդների միջև։

Մինչև Հռոմ կհասնեին կաթոլիկ միսիոներների այս և նման ամբաստանագրերը և Հռոմի պապը «հիասթափված» իր «սիրելի որդուց»՝ պարսից շահին կգրեր իր նախորդ հանձնարարականներին հակադիր և Օրիին վարկաբեկող նամակներ, Ռուսաստանի դեսպանը լիովին հասնում է իր նպատակին՝ հսկայական դեր կատարելով պարսկական արշավանքի նախապատրաստման գործում։ Բոլորի համար ակնհայտ էր դառնում, որ Անդրկովկաս է հկել ազատության մունետիկը, Պետրոս I-ի դեսպանը՝ շրջապատված եվրոպացի սպաներով, զինված ցարի ու պապի լիազորական փաստաթղթերով։ Դրանք վկայում էին Ռուսաստանի հովանու տակ հայկական թագավորության մոտալուտ վերաստեղծումը, որի հավանական գահակալը լինելու էր Ի. Օրին։ Եզվիտները տառափոխել էին Իսրայել Օրիի անունը, որը ֆրանսերեն կարդացվում էր «il sera roi», այսինքն «նա կլինի թագավոր», և դրանով վախ էին ներշնչում շահին, նրան առաջարկելով չընդունել Օրիին և վտարել երկրից։ Այդ ժամանակաշրջանում, ինչպես և անցյալում, օգտագործելով իր լայն կապերը, Օրին շարունակ կարևոր տեղեկություններ էր հավաքում միջազգային հարաբերությունների մասին և հաղորդում Ռուսաստան։ Նա նախազգուշացնում էր հետման Մազեպայի դավաճանության, շվեդների ու թուրքերի կապի և թուրքերի կողմից նախապատրաստվող պատերազմի վտանգի մասին։ Այս և նման տեղեկություններ Ի. Օրին հաղորդում էր Անդրկովկասից Ռուսաստան մեկնող հայ ու վրացի գործիչների, վաճառականների, նրանց գործակատարների և հոգևորականների միջոցով, իսկ Մինաս Վարդապետը դրանք հասցնում էր ռուսական արքունիք։

Այսպես, Ի. Օրին իր դիվանագիտական գործը կատարելուն զուգահեռ ուղիներ էր որոնում միավորելու Անդրկովկասի ժողովուրդների ուժերը, ամրապնդելու ռազմաքաղաքական դաշինքը։ Այս հասկանում էին պարսիկ կառավարական շրջանները և շտապեցին կազմակերպել շահի մոտ Օրիի ընդունելությունը, նրանից շուտ ազատվելու և երկրից վանելու նպատակով։ 1709 թ. հուլիսին Օրին արդեն Սպահանում էր և մեծ հանդիսավորությամբ ընդունվեց շահի պալատում,

նրան ներկայացնելով Հռոմի պապի, կայսեր և Պետրոսի հանձնարարականները։ Շահը և նրա արքունիքը որոշակիորեն մերժեցին Պետրոս I-ի պահանջը քրիստոնյաների հետ բարյացակամորեն վերաբերվելու մասին, պնդելով, որ հայերը Պարսկաստանի հպատակներն են և շահի դեմ ըմբոստացման դեպքում պետք է պատժվեն։ Այս նշանակում էր, որ երկու պետությունների միջև եղած խաղաղության կամուրջներն այրված էին, Անդրկովկասի ժողովուրդների դրությունը բարելավելու, առավել ևս խաղաղ ճանապարհով Ռուսաստանի իրավունքները ճանաչելու հնարավորությունները՝ բացառված։

Այդ լավ գիտեին ինչպես շահի արքունիքն ու դիվանագետները, այնպես էլ ազատագրական շարժման գործիչները, որոնք պետք է ջանքեր դնեին ռուսական օգնություն խնդրելու և տեղական ուժերը հավաքելու, նրանց մարտական ոգին ամրապնդելու համար։

Օրին շուրջ մեկ տարի էլի մնաց Անդրկովկասում։ Շամախիում Օրին անմիջական կապեր հաստատեց Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ, որը դարձավ նրա դինակիցներից մեկը և հետագայում մեծ դեր կատարեց ազատագրական շարժման, դինված ապստամբության ու դիմադրական կռիվների ժամանակաշրջանում։

Այս, իհարկե, չի նշանակում, թե մինչև Ի. Օրիի Անդրկովկաս գնալը այնտեղ ազատագրական շարժումը զարթոնք չէր ապրում։ Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը (1703—1726) իր նամակներից մեկում Մինաս Վարդապետին Օրիի մասին գրում էր. «Երբ եկավ այս երկրները, նա ծանոթացավ բոլոր մեր մտադրություններին, իմացավ այստեղի բոլոր հումուտները՝ ինչպես մերձծովյան, այնպես ցամաքային, ինչպես հետևակ զորքի, այնպես հեծելազորի մասին։ Իսկ մենք,— շարունակում էր Եսային,— ամբողջ երկրով, բոլոր մելիքների ու ավագների, ռամիկների հետ պատրաստ ենք և սպասում ենք»[19]։

---

19 Նույն տեղում, էջ 243—244։

Ինչպես Եսայի Հասան-Ջալալյանը, այնպես և էջմիածնի կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցին (1706—1714) իրենց մեծ գոհունակությունն են հայտնում Ի. Օրու ծավալած գործունեության համար և Պետրոս I-ին գրած նամակներում դրվատում նրա բացառիկ դերն ու ընդունակությունները և շնորհակալություն հայտնում Պետրոս I-ին՝ խոստացած օգնության համար։ Այս նշանակում էր, որ Հայաստանի ավագանին նորից հաստատում էր իր համաձայնությունը Ի. Օրիի ծրագրին։

1711 թ. Ի. Օրին Եսայի կաթողիկոսի հետ մեկնում է Աստրախան՝ այնտեղից մայրաքաղաք գնալու և իր դեսպանության արդյունքների մասին զեկուցելու համար։ Սակայն օգոստոսին, մինչև այժմ անհայտ պատճառով, Օրին Աստրախանում մահանում է, թողնելով բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ, որոնք հասնում են ռուսական արքունիք՝ օգնում Արևելքում ստեղծված վիճակի հստակ պատկերացմանը։

Մեծ է ու անգնահատելի Իսրայել Օրիի ծառայությունը Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ, նրանց ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման խորացման ու ընդլայնման, համատեղ պայքարի նախապատրաստման հսկայածավալ ջանքերում։ Պատահական չէր այն մեծ խուճապը, որ սկսվեց Հուսեին շահի պալատում, եվրոպական արքունիքներում, Հռոմի «Պրոպագանդայի խորհրդում», ուր հասնում էին կաթոլիկ քարոզիչների, եզվիտների ու դիվանագետների ցասումով ու սարսափով պարուրված զեկույցներն ու ամբաստանագրերը։ Նրանք զգում էին այն վտանգը, որը սպառնում էր պարսից տիրապետությանը։ Ի. Օրիի թիկունքում կանգնած էին տեսնում ոչ միայն ամենազոր Պետրոս I-ին, նրա հզոր բանակը, այլև հայերի, վրացիների, ադրբեջանցիների, քրդերի և ասորիների ուժերը, որոնց միավորելու համառ ու հաջող փորձեր էին անում Ի. Օրին, Արշիլը, Եսային և ազատագրական շարժման մյուս ղեկավարները։

Ի. Օրիի ազատագրական գաղափարները ի մի էին բերել ինչպես ժամանակի, այնպես էլ անցյալի լավագույն ավանդույթները, դարձել մի կենսահաստատ ծրագիր, որը ուժի մեջ

մնաց XVIII—XIX դարերում՝ մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։

Իսրայել Օրիի մահը մեծ կորուստ էր ազատագրական շարժման համար։ Սակայն արդեն այնքան բան էր արված, որ պայքարը շարունակվելու էր իր ընթացքով։ Ի. Օրիի հսկայական գործունեությունը, նրա դերը հայ ժողովրդի ազատագրական շարժման մեջ պայմանավորված էր ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգևոր կյանքի զարգացման ընթացքով։ XVII—XVIII դարերում ծավալված ազատագրական շարժումը, Ռուսաստանի հետ ստեղծվող և տարեցտարի ամրապնդվող տնտեսական ու քաղաքական կապերը Անդրկովկասի գործիչներին բերին այն համոզման, որ միայն Ռուսաստանն էր շահագրգռված հայ, վրաց ու ադրբեջանական ժողովուրդներին պարսկական տիրապետությունից ազատելու գործում։

Ի. Օրին անհրաժեշտ համարեց դիմել Ռուսաստանի դաշնակից Ավստրիական կայսրությանը, որը կարող էր մեծ դեր խաղալ Ռուսաստանի հետ բանակցություններ սկսելու, հնարավոր օգնություն կազմակերպելու և Ռուսաստանի կողմից ձեռնարկվելիք արշավանքի շուրջը հասարակական կարծիք ստեղծելու օգտին։

Ի. Օրին, լինելով Անդրկովկասում, Ռուսաստանում, ապա և Պարսկաստանում, հստակ պատկերացում կազմեց ուժերի փոխհարաբերությունների մասին և հասկացավ, որ ժողովուրդներն ու դրանց բոլոր շերտերը շահագրգռված են թոթափելու պարսկական ու թուրքական լուծը և մտնելու ռուսական հզոր պետության հովանու տակ։ Լինելով բացառիկ տաղանդի քաղաքական գործիչ և դիվանագետ, Օրին կարողացավ վառ ու անջնջելի գույներով ներկայացնել երկրի վիճակը, պայքարի ու հաղթանակի հնարավորությունները ու ուղիները, երազած ազատագրության նյութական ու բարոյական հետևանքները ինչպես Անդրկովկասի ժողովուրդների, այնպես էլ Ռուսաստանի հզորության, սահմանների ապահովության և առևտրատնտեսական կապերն Արևելքի հետ զարգացնելու համար։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ի. Օրիի մահից հետո նրա զինակիցները շարունակում էին իրենց գործը, ամրապնդելով հայերի հարաբերությունները Ռուսաստանի հետ, նպաստելով գաղթավայրերի զարգացմանը և առևտրական ու տնտեսական կապերին։ Նրանք սերտորեն կապված էին կառավարական շրջաններին հետ, նրանց հաղորդում էին իրենց ունեցած կարևոր տեղեկությունները միջազգային անցուդարձերի մասին, նպատակ ունենալով օգնել ռուսական պետության հզորացմանը։ Անդրկովկասում գործում էր Սսայի Հասան-Ջալալյանը, իսկ Ռուսաստանում Ի. Օրիին փոխարինել էր Մինաս Վարդապետը։

Այսպես, 1714 թ. նոյեմբերի 20-ին Մինաս Վարդապետը Պետրոս I-ին ներկայացնում է մի ծավալուն խնդրագիր, առաջարկելով Կասպից ծովի ափին, Նիզովի (Նիզաբադ) նավահանգստի մոտակայքում հայկական վանք կառուցելու համար միջնորդել պարսից շահի առաջ։ Բացատրելով այդ խնդրի նպատակը, Մինասը գրում էր, որ այդ վանքի շուրջը պետք է հիմնել հայկական գաղութ՝ այնտեղ փոխադրելով Շամախիի և շրջանի հայ բնակիչներին, ստեղծելով պայմաններ՝ հետագայում այնտեղ ռուսական զորքեր տեղավորելու և ապա հայ բնակչությունը ռուսական հպատակության տակ ընդունելու համար։

Մինասը հավաստիացնում էր, որ ռուսական զորքերը

հայերի մոտ կգտնեն ապրուստի բոլոր միջոցները, քանի որ, ինչպես գրել էր նաև էջմիածնի կաթողիկոս Ազաքսանդրը, հայերն ունեն նյութական հնարավորություններ և «շատ են ուզում լինել նորին ցարական մեծության հովանու տակ»[1]։

Այս և այլ քաղաքական ձեռնարկումները քողարկելու նպատակով Մինաս Վարդապետը Պետրոս I-ից խնդրում էր թույլտվություն և օգնություն՝ եկեղեցի կառուցելու նաև Ռուսաստանի նորաշեն մայրաքաղաք Պետերբուրգում, նպատակ ունենալով ստեղծել այնպիսի տպավորություն, որ ինքը զբաղված է միայն եկեղեցական-կրոնական հոգսերով և ուրիշ գործեր չի կատարում[2]։

Ինչպես Ի. Օրին, այնպես և Մինաս Վարդապետը հույսերը չէին կապում միայն ռուսական զորքի հետ, չէին վախենում ժողովրդական շարժումից, այլ աշխատում էին հավաքել բոլոր հասարակական շերտերի ուժերը՝ ընդհանուր համազգային նպատակին հասնելու համար։ Իր խնդրագրում Մինասն ընդգծում է, որ ինքը «ճշտորեն տեղյակ է, որ հայ պատրիարքները, հոգևորականները, աշխարհականներն ու ժողովրդի մեծ մասը շատ են ուզում լինել ցարական մեծության հովանու տակ, ինչի մասին նորին մեծությանը շնորհակալությամբ գրել էր նաև Արարատի պատրիարքը (էջմիածնի կաթողիկոսը—Վ. Ո.) դեռևս սրանից առաջ՝ Ի. Օրիի այնտեղ եղած ժամանակ»[3]։

Նմանօրինակ դիմումներ էին անում նաև վրացական ազատագրական շարժման գործիչները։

Անդրկովկասում ու Պարսկաստանում ստեղծված ներքին ու արտաքին իրավիճակի մասին կոնկրետ ու բազմակողմանի տեղեկություններ ստանալու համար ռուսական արքունիքը

---

1 Г. Эзов, էջ 312—313։

2 Այդ մասին Մինասը գրում է ամենայն պարզությամբ. «Այդ դեպքում ոչ ոք չի կարծի, թե իմ մտադրությունը ցարական մեծության օգտին չանալն է, քանի որ բոլորին ակնհայտ կլինի, որ իմ ձգտումը միայն եկեղեցիներ կառուցելն է, դրանով ես կարող եմ հայ ժողովրդին ինձ հետ կապելու ձգտում ստեղծել» (նույն տեղում, էջ 313)։

3 Նույն տեղում։

այնտեղ ուղարկից տաղանդավոր դիվանագետ ու քաղաքական գործիչ Արտեմի Վոլինսկու գլխավորությամբ մի նոր դեսպանություն (1715—1718 թթ.)։ Պարսկաստանում դեսպանության խնդիրն էր ոչ միայն ռուս-պարսկական առևտրական պայմանագիր կնքելն ու ռուսական հյուպատոսություն ստեղծելը, այլև տեղի ժողովուրդների տրամադրություններին հաղորդակից լինելը, շահի զորքերի չափի ու մարտունակության և ռուսների կողմից Անդրկովկասի նվաճման հնարավորությունների ուսումնասիրությունը։

Վոլինսկուն տրված հրահանգում մասնավորապես պահանջվում էր՝ «հետախուզել հայ ժողովրդի վիճակը, շա՞տ են արդյոք հայերը, ի՞նչ տեղերում են ապրում... ինչպե՞ս են տրամադրված ցարական մեծության նկատմամբ. նրանց հետ սիրալիր վարվել և հակել բարեկամության»[4]։ Վոլինսկուց պահանջվում էր հասնել այն բանին, որ ամբողջ Պարսկաստանի մետաքսը Հայկական առևտրական ընկերության միջոցով տարվի Ռուսաստան և արգելվի Թուրքիայի վրայով մետաքսի արտահանումը։

Վոլինսկու դեսպանության մեկնելուց անմիջապես հետո Ի. Օրիի ունեցվածքը գտնելու և բերելու պատրվակով, Պետրոս I-ը Անդրկովկաս է ուղարկում նաև Մինաս Վարդապետին՝ զուգահեռ գործունեություն ծավալելու և տեղեկություններ հավաքելու համար։

1716 թ. օգոստոսի 13-ի նամակով Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Պետրոս I-ին հայտնում է, որ ինքը Մինասի հետ հանդիպել է և լսել ցարի հրամաններն «օգտակար գործերի մասին»։ Այդ մեծ ուրախություն է պատճառել իրեն ու ժողովրդին և իրենք պատրաստ են ամեն բանում օգնել՝ «երբ նորին մեծությունը կբարեհաճի այդ ռազմական գործերն սկսել»[5]։

---

[4] «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», Сборник документов (в дальнейшем АРО), под редакцией академика А. Г. Иоаннисяна, т. II, ч. I, Ереван, 1964, стр. 93.

[5] Տե՛ս Г. Эзов, էջ 316—317։

1716—17 թթ. լինելով Հայաստանում և վերադառնալով Մոսկվա, Մինաս Վարդապետը կառավարությանը հաղորդում էր, որ Անդրկովկասում պատրաստ են ապստամբության և որ հայ ժողովուրդը էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսների իշխանության տակ կարող է լինել թվով 200.000 մարդ և դրանք բոլորը դյուղացիներ ու առևտրականներ են։ Եվ եթե հանգամանքները կոչեն պատերազմի ընդդեմ պարսիկների, ապա նրանք, ինչպես կարծում է ինքը՝ Մինասը, բացարձակապես բոլորը կանցնեն ցարական մեծության կողմը[6]։

Հետագայում դրությունն ավելի է սրվում։ Մինաս Վարդապետը 1719 թ. ռուս կառավարությանը հաղորդում է. «Ինձ գրած նամակներում բարեկամներս հայտնում են, որ այդ պաղտնի գործն սկսելու ժամանակը հասել է, քանի որ բարբարոսները ամեն կողմից, և ներսից նեղ վիճակի մեջ են»։ Ա. Վոլինսկին, 1715—18 թթ. մոտիկից ու խորապես ուսումնասիրելով Պարսկաստանի վիճակը, հանգամանորեն նկարագրում է վրացիների, ադրբեջանցիների, պարսիկների ու հայերի դրությունը և շեշտում համընդհանուր դժգոհության առկայությունը։ Վոլինսկին գրում է, որ շահի առաջին մինիստրի՝ էհտիմա Դավլեթի հետ բանակցելիս ինքը դժգոհել է հայերի հանդեպ անմարդկային ճնշումներից, նշելով. «Հայերը իրենց այլադավանության պատճառով ստրկական վիճակի մեջ են... Ոչ միայն ուրիշներից, այլև ջուղայեցիներից բռնությամբ խլում են նրանց կանանց ու երեխաներին և հարկադրաբար մահմեդականացնում»։ Արդարացնելով հայերի դժգոհությունը, Վոլինսկին մինիստրին հարցնում է. «Նման պայմաններում նրանք (հայերը—Վ. Ո.) ինչպե՞ս կարող են հավատարիմ լինել ձեզ և չուզենան ազատագրվել»[7]։

Մինաս Վարդապետի, հայ կաթողիկոսների, վաճառականների ու հետախույզների տեղեկությունները լիովին

---

6 Տե՛ս նույն տեղում, վավ. № 209, էջ 325։

7 ՀԱԿՊԱ, ֆ. Իռւսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ, 1716—1718 թթ., գ. № 3, թ. 216։

համընկնում են Արտեմի Վոլինսկու կարծիքին և նրա ներկայացրած զեկուցագրերին։ Եսայի Հասան-Ջալալյանը 1718 թ. սեպտեմբերի 24-ին Մինաս Վարդապետին գրում էր, որ Պարսկաստանի «պատվազուրկ մեծատոհմիկներին (նկատի ունի խաներին—Վ. Ո.) բոլոր կողմերից շրջապատել են հակառակորդները, առավելապես ներքին թշնամիները... Քուրդստանում բարձրացել են խռովարարները, ավերելով սահմանակից Աբարատի, Երևանի, Սալմաստի երկրները. մեզ մոտ՝ Շիրվանում, Աղվանքի, Ղարաբաղի և Վրացական երկրներում նույնպես անթիվ ավերածություններ են կատարել»[8]։ Եսային նորից ու նորից հայտնում է իր և հայ ժողովրդի անվերապահ հավատարմությունն ու ռուսական իշխանության տակ անցնելու պատրաստակամությունը։

Օգտվելով Պարսկաստանի անկումային վիճակից, երկրի վրա հարձակումներ էին կատարում Դաղստանի ֆեոդալները, թալանելով Ադրբեջանը, Վրաստանը, Ղարաբաղը։ Դաուդ խանը և Սուրխայը դաշինք են կնքում Ադրբեջանի այունիների թուրքոֆիլ ավագանու հետ՝ շահի տիրապետությունից ազատելու պատրվակով, և ավարի ու ավերի են թարկում երկիրը։ Նրանք 1721 թ. օգոստոսի 7-ին վերցրել էին Շամախին, թալանել ռուս և այլ եկվոր վաճառականներին։ Նկատի ունենալով մոտակա արշավանքի դեպքում Վոլինսկու, որպես Պարսկաստանի լավագույն գիտակի, խորհուրդների կարևորությունը, Պետրոս Մեծը նրան նշանակում է Աստրախանի նահանգապետ, որպեսզի դյուրացվի անմիջական կապը Անդրկովկասի գործիչների՝ Վախթանգ VI-ի, Եսայի Հասան-Ջալալյանի և Էջմիածնի կաթողիկոսի հետ, ապահովվի ճշգրիտ ինֆորմացիան։

Զգալի ռազմական ուժ էին ներկայացնում հայ մելիքների աշխարհազորները, որոնք Պարսկաստանում օրինականացված էին՝ պատերազմների դեպքում շահի դրոշի տակ մտնելու համար, ինչպես և Դաղստանի ֆեոդալներից ու ավազակներից երկիրը պաշտպանելու համար։ Բավականա-

[8] Г. Эзов. էջ 326։

չափ հայեր կային նաև վրացական իշխանների զորքերի մեջ։ Վոլինսկին առանձնապես բարձր գնահատական է տալիս վրացական զորքերին ու նրանց հրամանատարներին։ «Ամբողջ Պարսկաստանում լավագույն զորքը համարում եմ վրացականը,— գրում էր նա։— ...Վրաստանում և Իմերեթում կարելի է զորաժողովել 15-ից մինչև 20 հազար մարդ։ Պարսիկները սովորաբար սպասալարներ (գլխավոր հրամանատար— Վ. Ո.) ընտրում են վրաց արքայազներից, մեծ մասամբ վրացիներից են նշանակվում նաև մյուս զորահրամանատարները։ Վրացիների մասին կարող եմ ասել ու երդվել, որ եթե նրանց իշխաններն ու ազնվականները բարի համաձայնության մեջ լինեն... կկարողանան ոչ միայն իրենց աղատել պարսից հպատակությունից, այլև առանց դժվարության նվաճել նրանցից շատ երկրներ, իսկ հնծելազորը վրացականի դիմաց թեկուզ եռապատիկը լինի, էլի չի կարող դիմակայել։ Եթե մենք նրանց ավելացնենք քսան կանոնավոր էսկադրոն, ապա կարելի է առանց երկյուղի անցնել ողջ Պարսկաստանով»[9]։

Շուտով ստեղծվեց նաև արշավանք սկսելու համար առիթ. դա Շամախիում ռուս վաճառականներին թալանելն էր։ Իհարկե, այդ պատահական միջադեպ չէր, այլ Արևելքում պարբերաբար կրկնվող երևույթ, որ խանգարում էր նորմալ ու անվտանգ պայմաններում Ռուսաստանի տնտեսական կապերի զարգացմանը Արևելքի, մասնավորապես Կովկասի հետ։ Սակայն այլևս հանդուրժել չէր կարելի։ Հեռատես քաղաքագետ Ա. Վոլինսկին Պետրոս Մեծին առաջարկում է ռուսներին թալանելու փաստն օգտագործել արշավանքն սկսելու համար. «Ձեր մտադրությունը կատարելու համար սրանից ավելի օրինական պատճառ չի կարող լինել։ Նախ կբարեհաճեք երևել Ձերը պաշտպանելու... ոչ թե պարսիկների, այլ նրանց ու Ձեր հակառակորդների դեմ եք ելնում... Ձերդ մե-

9 ՀԱԿՊԱ, ֆ. Ռուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ, գ. № 2, թ. 609։

ծուխյունը ողջ աշխարհի առջև կարող է ցույց տալ, որ Դուք իսկական պատճառ ունեք այդ բանն անելու...[10]»:

1721 թ. օգոստոսի 30-ին Շվեդիայի հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո Պետրոս Մեծը, ինչպես խոստացել էր, 1721 թ. հոկտեմբերին իր զորքով շարժվեց դեպի Հարավ: 1722 թ. գարնանը ռուսական 22.000-անոց բանակն ու նույնպես 22.000-անոց անձնակազմով ու զորքով նավատորմը գնացին դեպի Աստրախան: Անդրկովկասում նրանց սպասում էին ոտքի ելած հայ ու վրացի ապստամբները:

Մայիսին սկսվեց նշանավոր Պարսկական արշավանքը: Մինչ այդ Պետրոս Մեծը Վոլինսկու միջոցով վրաց ու հայ գործիչներին նախազգուշացնում էր՝ մինչև ռուսների մոտենալը ոչինչ չձեռնարկել: 1722 թ. հուլիսի 2-ին Աստրախանից Պետրոս Մեծը Վախթանգին առաջարկում է իր զորքերը շարժել լեզգիների վրա և պատրաստ լինել՝ Կասպից ծովափին ռուսներին հանդիպելու համար:

Այսպես, հայ-վրաց-ռուսական ռազմաքաղաքական դաշինքը ամրապնդվեց և դիվանագիտական ոլորտից անցավ կոնկրետ գործողությունների ասպարեզ, նպատակ ունենալով Անդրկովկասը ազատել Պարսկաստանի, ապա Թուրքիայի տիրապետությունից և Ռուսաստանի հովանավորության տակ ստեղծել հայ-վրացական միացյալ պետություն: Այդ կհանխեր նաև փլուզված Պարսկաստանը Թուրքիային ենթարկելու վտանգը և կամրապնդեր ռուսական կայսրության ստրատեգիական դիրքերն ամբողջ Կովկասում:

Պետրոս Մեծի նման համարձակ ծրագիրը, որն արտահայտում էր Անդրկովկասի ժողովուրդների կենսական շահերը և կարող էր ամրապնդել Ռուսաստանի դիրքերն Արևելքում, չէր կարող անհանգստություն, ապա և խուճապ չառաջացնել Թուրքիայի և նրա եվրոպական «բարեկամների» շրջաններում: Բայթր Դուբը Պետրոս Մեծի արշավանքից էլ առաջ, 1722 թ. մարտին էրզրումի փաշային հրաման ուղարկեց՝ խռովարարներից պաշտպանելու պատրվակով՝ ռազմա-

10 ՀԱԿՊԱ, ֆ. Պետրոս Մեծի կաբինետ, բաժին II, գիրք 54, թ. 64—66:

կան միջոցներով թուրքական կայսրությանը միացնել Վրաստանում՝ Թիֆլիսը և Հայաստանում՝ Երևանը։ 1722 թ. մայիսին ռուսական դեսպանը Կ. Պոլսից գրում է, որ եվրոպական դիվանագետներն ամեն կերպ Թուրքիային դրգռում են Ռուսաստանի դեմ, նախազգուշացնելով, որ եթե ռուսները գրավեն Շիրվանը, Երևանն ու Վրաստանը, ապա այսունները (ադրբեջանցիների մի մեծ զանգվածը), վրացիներն ու հայերը կմտնեն Ռուսաստանի հովանու տակ։ Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպան Նեպլյուևը նշում էր, որ անգլիացիները ստահոդ լուրեր են տարածում՝ Թուրքիային վախ ներշնչելու և կռվի հանելու նպատակով։ Անգլիան դեպի Բենդեր-Աբբաս էր ուղարկում 6000-անոց բանակ...

Այսպիսի բարդ միջազգային դրության պայմաններում սկսվել էր հայ-վրացական ազատագրական շարժումը։ Համաձայն Պետրոս Մեծի պլանի, Անդրկովկասի զինված ուժերը ռուսների հետ հանդիպելու էին Դերբենտի և Բաքվի ծովափին, ուր շարժվում էին ռուսական զորքն ու նավատորմիղը։ Դեռևս 1722 թ. գարնանը հայ մելիքների 12000-անոց զորքը դուրս եկավ Դաղստանի ֆեոդալների դեմ։ Եսայի Հասան-Ջալալյանը Պետրոս Մեծին հայտնեց, որ Վախթանգ VI-ը իրենց մեծ օգնություն է ցույց տվել և անցել է շարժման գլուխ։ Վախթանգն օգտվեց այն առիթից, որ շահը նրան առաջարկել էր ստանձնել Ադրբեջանի զորքերի հրամանատարությունը և ճնշել անհնազանդ լեզգի իշխաններին, սկսեց միավորել հայ ու վրաց ուժերը և պատրաստվել ռուսներին ընդառաջ գնալու համար։ Ինչպես գրում է Եսայի Հասան-Ջալալյանը, սեպտեմբերի 22-ին Գանձակի մոտ, Ջոլակ գյուղում հայերն ու վրացիները հանդիպեցին բացառիկ ոգևորությամբ։ Հանդես գալով միավորվող զորաբանակների առջև, Վախթանգը ազդարարեց երկու ժողովուրդների ազատագրական պատերազմը և հայտարարեց, որ շուտով կազատագրվի Երևանը։ Եսային հայտարարեց, որ հայերը իրենց հոգիները, զավակներին և ունեցվածքը ի սպաս են դնում սկսած գործին[11]։

11 Տե՛ս Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1882, էջ 45—49։

Բայց ռուսական ու վրաց-հայկական զորքերի նախատեսված հանդիպումն ու միավորումը չիրականացավ։ Մի կողմից միջազգային դրության լարվածության ուժեղացումը, մյուս կողմից ռուսական նավերի խորտակվելն ու վնասվելը, պարենի ու զինամթերքի հսկայական կորուստը, հիվանդությունները ու մարդկային զոհերը դժվարացրին արշավանքի ողջ ծրագրի կենսագործումը։

Դերբենտը վերցնելուց հետո Պետրոս Մեծը վերադարձավ Աստրախան, զորքի մի մասը թողնելով գնեռալ Մ. Ա. Մատյուշկինի հրամանատարության տակ։ Շարունակելով արշավանքը միայն Կասպից ծովի արևմտյան մերձափնյա տարածքի ուղղությամբ, ռուսական մի զորամաս, գնդապետ Շիպովի ղեկավարությամբ, 1722 թ. դեկտեմբերին վերցնում է Ռեշտը և ամրանում Ֆիլանում։ 1723 թ. հուլիսին ռուսական նավատորմը չորսօրյա մարտերից հետո վերցնում է նաև Բաքուն։ Այսպիսով, ողջ Կասպյան ծովափին անցնում է ռուսական զորքի հսկողության տակ և կանխվում է թուրքերի կողմից մերձկասպյան շրջաններ ներխուժելու վտանգը։ Բայց Անդրկովկասում դրությունը բարենպաստ չէր։ Շահը Վախթանգ VI-ին զրկել էր Քարթլիի վալիի և զորահրամանատարի պաշտոնից և մեղադրել «դավաճանության» մեջ։ Նրա փոխարեն շահը իրեն դրածո էր դարձրել Կախեթի թագավոր Կոստանդինին, որն ընդունել էր մահմեդականություն (Մահմադ-զուլի անունով), հայտարարվել նաև Երևանի, Գանձակի ու Ղարաբաղի բեկլարբեկ և հրաման ստացել՝ պարսից զորքով գնալ Վախթանգի դեմ ու գրավել Թբիլիսին։ Ստիպված թողնելով Թբիլիսին, 1723 թ. Վախթանգն իր արքունիքով մեկնեց Աստրախան, հուսալով շարունակել պայքարը Ռուսաստանի օգնությամբ։ Սակայն Կոստանդինը ևս երկար չպահպանեց իր իշխանությունը։ Օգտվելով պարսիկների թուլությունից, 1723 թ. թուրքերն անցան վճռական հարձակման, գրավեցին Թբիլիսին և նախապատրաստվեցին նվաճելու նաև Գանձակն ու Երևանը։

Ղարաբաղի բնակչությունը, որը մինչ այդ ինքնապաշտպանական մարտեր էր մղում լեզգիների դեմ, այժմ պետք է

կովեր թուրքական զավթիչների հաղթարշավը կանգնեցնելու համար։ Լեռնային Ղարաբաղի հայկական հինգ մելիքությունները դարձել էին գրեթե անկախ ռազմական միավորներ՝ սղնախներ, որոնք պաշտպանում էին իրենց երկիրը։ Դիմելով ռուսական արքունիքին և խնդրելով ռազմական օգնություն, նրանք խոստանում էին ռուսական բանակին օգնել ոչ միայն «Հայկական համաժողովի» («Армянское собрание») ղինված ուժերով, որ կարող էր դուրս բերել 40.000 մարդ, այլև մթերքով, փոխադրամիջոցներով, ձիերով։ Հայկական սղնախները աչքի ընկան իրենց մարտունակությամբ և պայքարի անկոտրում վճռականությամբ[12]։ Ազատագրական կռիվների շուրջ տասնամյա պատմությունը ցույց է տալիս այն նշանակալի դերը, որ կատարեցին Դյուլիստանի, Խաչենի, Վարանդայի, Շոշի և Դիզակի սղնախների հայ գյուղացիները, երբ նրանք կռվում էին իրենց ազատության համար թշնամու քանակով գերազանց ուժերի դեմ։

Սղնախների հերոսական դիմադրության հաջողությունները բացատրվում են ոչ միայն Արցախի հայության ազատասիրությամբ, այլև նրանց՝ ինքնապաշտպանության համար մղած պայքարի ավանդույթով և զորավարների ռազմական հմտությունով։ Այդ պայքարում մեծ դեր կատարեց դեռևս 1717 թվականից Լոռիից Վարանդա վերաբնակեցված Ավան Յուզբաշին (1670—1735), որը կարողացավ Շոշ գյուղում ստեղծել ռազմական հզոր հենակետ՝ հավաքելով կամավորներից ստեղծված մի կայազոր, որն աչքի ընկավ ինչպես պաշտպանողական, այնպես և հարձակողական մարտերում։ Ավան Յուզբաշին, Թարխան և մյուս յուզբաշինները (հարյուրապետները, որոնց հրամանատարության տակ գործում էին ոչ թե հարյուրավոր, այլ հազարավոր մարտիկներ) համառ կռիվներ մղելով կասեցրին թուրքերի առաջխաղացումը։ Դրանից օգտվեց Նադիրը, որը կարողացավ ազատել

---

12 տե՛ս АРО, т. II, ч. I, «Историческое введение» академика АН Арм. ССР А. Г. Иоаннисяна.

թուրքերի նվաճած երկրամասերը և վերականգնել փլուզված պարսկական պետականությունը։

Ավան Յուղբաշին ոչ միայն գլխավորում էր Ղարաբաղի հինգ մելիքությունների պայքարը, այլև օգնության էր հասնում Սյունիքի ծանր մարտերում խիզախող Դավիթ-Բեկի ղորքերին, որոնք 1723—1724 թթ. դեռևս շարունակում էին պարսկական լուծը թոթափելու համար սկսված պարտիզանական կռիվները։ Հետագայում, երբ հիմնական վտանգը թուրքական արշավանքն էր, սղնախները այնքան մեծ դեր կատարեցին, որ և՛ ռուսական, և՛ պարսկական իշխանությունները իրենց հիմնական հույսերը կապեցին նրանց հետ։

Ավան Յուղբաշին կարողացավ ազատագրական պայքարում միավորել նաև ադրբեջանական ու քրդական զանգվածների ուժերը և մշտական կապ պահպանել ռուսական ղորքերի հրամանատարության հետ, նպաստելով հայ-ռուսական բարեկամության հետագա ամրապնդմանը, հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշմանը։

Ազատամարտեր էին ծավալվել նաև Կապանում, Գեղարքունիքում, Լոռիում, Երևանում, որոնց մասին պահպանված տեղեկությունները քիչ են, բայց խոսուն ու հավաստի։ Սյունիքի ապստամբներին օգնելու և ղեկավարելու համար, հայերի խնդրանքով վրաց թագավոր Վախթանգի որդին՝ Շահնավազ խան Բակուրը (Բակարը) Հայաստան է ուղարկում Դավիթ-Բեկին և մի քանի տասնյակ զինվորականներ։ Այդ մասին են խոսում ոչ միայն Դավիթ-Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանի գիրքը[13], այլև Մոսկվայի արխիվներում պահպանված փաստաթղթերը[14]։ Այսպես, Մինաս Վարդապետը Պետրոս Մեծին հղած 1723 թ. ապրիլի 19-ի նամակում նշում է, որ շահը Ագուլիսում հավաքված ապստամբ հայերին կոտորելու համար ուղարկել է ղորք՝ չորս խանների գլխավորու-

13 Ս. Շահումյան, *Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին...*, Վաղարշապատ, 1871։

14 *Տե՛ս* Վ. Ոսկանյան, Վ. Դիլոյան, *Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դ. 20-ական թթ. (նոր վավերագրեր)*, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2։

թյամբ, բայց ճակատամարտում նրանք ջարդվել են հայերի ու նրանց օգնության գնացած՝ Վախթանգի ուղարկած վրաստանցիների՝ ուրեմն Դավիթ-Բեկի կողմից[15]։

Ազատագրական շարժման նշանավոր գործիչ, Պետրոս Մեծի դեսպանորդ Իվան Կարապետը (որ 1723 թ. ուղարկված էր Անդրկովկաս՝ հայերին տանելու կայսեր հրովարտակ-նամակը, նրանց իր հովանու տակ վերցնելու և օգնություն խոստանալու մասին) Շուշից գրած իր նամակով ռուսական արքունիքին հայտնում է, որ Բակուրը 30 մարդ է ուղարկել Մեծ Հայք՝ Դավթի ղեկավարությամբ, նրանց շուրջը հավաքվել է 4000—5000 մարդ ու գնացել են ղզլբաշների վրա և մեծ հաղթանակներ տարել, բայց հետո անհաջողության են մատնվել։ Իվան Կարապետը հայտնում է, որ ինքը սղնախների զորքի հետ գնացել է Կապան, հայերին օգնելու։

Այդ նամակով Ի. Կարապետը հայտնում է, որ Խնձորեսկում հավաքված 200 հայեր ջարդել են իրենց ճանապարհը փակող պարսիկ զորքին և անցել Ղարաբաղ։ Նա հայտնում է նաև, որ ըստ Երևանից ստացված մի տեղեկության թուրքերը քաղաքը վերցրել են և ջարդել բազմաթիվ հայերի ու «քրդների» (այսինքն մահմեդականների՝ ադրբեջանցիների)։ Նա խնդրում է ուղարկել ռուսների գեթ 2000-անոց զորամաս, որը բավական կլինի հայերի դիմադրությունը հաջող կազմակերպելու համար[16]։

Սակայն Ռուսաստանը չկարողացավ ռազմական օգնություն հասցնել Ղարաբաղի, Սյունիքի ու Երևանի հայությանը, ինչպես և Վրաստանին, քանի որ դա առիթ կտար նոր ավելի կործանարար պատերազմի։ Դրան էին սպասում ոչ միայն Թուրքիան ու Պարսկաստանը, այլև Անգլիան, Ֆրանսիան և Շվեդիան։ Պետրոս Մեծը ստիպված էր 1723 թ. ժամանակավորապես հրաժարվել ողջ Անդրկովկասն ազատելու ծրագրից

15 АРО, т. II, ч. II, стр. 64.

16 *Տե՛ս* Ա. Գ. Աբրահամյան, *Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից*, Երևան, 1953, վավ. № 52։

և հաշտության պայմանագիր կնքել Պարսկաստանի հետ՝ ուղղված Թուրքական ագրեսիայի դեմ։ 1723 թ. սեպտեմբերի 12-ին կնքված Պետերբուրգյան պայմանագրի համաձայն Ռուսաստանին էին միացվում Կասպից ծովի հարավային ու արևմտյան ափերը՝ Դերբենտից ու Բաքվից մինչև Գիլան, Մազանդարան ու Աստրաբադ։ Ռուսաստանը պարտավորվում էր ռազմական օգնություն ցույց տալ Պարսկաստանին՝ աֆղանների ու Թուրքիայի դեմ[17]։ Բայց պարսից շահի լիազոր-դեսպանի՝ Իսմայիլ բեկի կողմից 1723 թ. սեպտեմբերի 12-ին ստորագրված պայմանագիրը մնում էր առանց վավերացման։ Արևմտյան դիվանագետները և արքունի ռազմատենչ խորհրդատուներն ու խանները պահանջում էին հրաժարվել Պետերբուրգյան պայմանագրից և նոր վերցնել Մերձկասպյան մարզերը։ Եվ թեպետ հիմնական ռազմական գործողությունները դադարեցին ու ռուսական զորքերը դեռ էլի 10 տարի պահում էին իրենց դիրքերը, այնուհանդերձ, առանձին տեղերում շարունակվում էին պարսիկների դիմադրությունն ու ընդհարումները՝ ինչպես ռուս զորքերի, այնպես և հայ ու վրացական ապստամբների հետ։ Սակայն դրանք հիմնականում տեղական բնույթի մարտեր էին և՛ իրեն ծավալով, և՛ քանակով։ Դրա պատճառը ոչ միայն ռուս-պարսկական պայմանագրի կնքումն էր, այլև նոր ու ահեղ թշնամին՝ Թուրքիան, որ ծառանում էր ինչպես Կովկասի, այնպես և Պարսկաստանի ու Ռուսաստանի դեմ։

Այսպես, 1723 թ. սկսվում է ազատագրական պայքարի նոր շրջան՝ այժմ ուղղված Թուրքական արշավանքի դեմ, որը բերում էր ավերածություններ, բռնություններ և ավելի ծանր ու բարբարոս տիրապետության վտանգ։ Բրիլիսին գրավելուց հետո թուրքական զորքերի հրամանատար Իբրահիմ փաշան հարձակում սկսեց՝ նպատակ ունենալով գրավել Գանձակը։ Քաղաքի հայ և ադրբեջանցի բնակիչները կախեթի Կոստանդին Բագավորի ղեկավարությամբ քաջաօրյա մարտե-

---

17 տե՛ս «Полное собрание законов Российской империи», т. VII, СПб., 1830, док. № 4298.

րում ուժասպառ արին ու փախուստի մատնեցին թուրքերին ու նրանց դաշնակիցներին։ Բայց այդ առաջին հաջողությունը չէր կարող փոխել և չփոխեց թուրքական արքունիքի ծրագիրը, որը նախատեսում էր ոչ միայն Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի նվաճում, այլև ամբողջ Պարսկաստանի միակցումը կայսրությանը։ Թուրքական գործող բանակը նոր համալրումներ էր ստանում՝ ուժեղացնելով հարձակումը բոլոր ճակատներում։ Անհրաժեշտ էր միավորել բոլոր ուժերը Թուրքիայի, նրա կովկասյան վասալների և Ղրիմի խանության դեմ։ Հակաթուրքական ճակատ ստեղծելու անհրաժեշտությունը հասկանում էին և՛ Ռուսաստանի, և՛ Անդրկովկասի քաղաքական գործիչները։

Դեռևս 1723 թ. հունիսի 6-ին, համաձայն Պետրոս Մեծի հրամանի, «մի քանի կարևորագույն ու գաղտնի գործերով» Անդրկովկաս է ուղարկվում դեսպանորդ Իվան Կարապետը, որն իր եղբայր Լուկա Շիրվանովի հետ մինչ այդ ապրում էր Պետերբուրգում, մեծահարուստ վաճառական էր և քաղաքական գործիչ։ Ի. Կարապետին տրված հանձնարարությունների հույժ կարևորությունն ու պատասխանատվությունը հաստատվում է այն փաստով, որ մեկնելուց առաջ՝ հունիսի 3-ին, նրան ընդունում է Պետրոս Մեծն իր մերձավորների՝ կանցլեր, Արտաքին գործոց կոլեգիայի պրեզիդենտ Գ. Ի. Գոլովկինի, Պարսկական արշավանքի ժամանակ կասպյան նավատորմիղի գլխավոր հրամանատար գեներալ-ծովակալ Ֆ. Մ. Ապրակսինի և Արշավանքային գրասենյակի պետ և Կոմերց-կոլեգիայի պրեզիդենտ Պ. Ա. Տոլստոյի հետ։ Այստեղ ընթերցվում է հայ ժողովրդին ուղարկվող հրովարտակ—նամակը[18]։

---

18 Բերենք Պետրոս Մեծի հրովարտակը, նախօրոք նշելով, որ դա բացատրություն ու պատասխան էր հայ գործիչների և մասնավորապես Դանձասարի Ներսես կաթողիկոսի (1706—1763) և նաայի ու Սարգիս յուզբաշիների բազմաթիվ դիմումներին, որոնք խնդրում էին Պետրոս Մեծին՝ իրենց ընդունել Ռուսաստանի իշխանության հովանու տակ։

«Մեր կայսերական ողորմածությունն ու ողջույնները Պարսկաստանում ապրող ազնիվ հայ ժողովրդին։

Ձեզ հայտնի է, որ վաղնջական ժամանակներից մեր կայսրության

Մենք բերեցինք Պետրոս Մեծի հրովարտակը[19] ամբողջությամբ ցույց տալու համար, որ այդ կարևոր վավերագրում

և Պարսկական պետության միջև պահպանվում էին լավ փոխհարաբերություններ ի շահ և հօգուտ կողմերի, կատարվում էր ազատ առևտուր, որը հետագայում դադարեց՝ Պարսկաստանում սկսված խառնաշփոթությունների հետևանքով։ Այնժամ Շամախիում գտնվող մեր վաճառականներին թալանեցին ու սպանեցին և այդ պատճառով մենք ստիպված էինք այդ երկրամասերում մեր ղեկը գործադրել։ Եվ աստծո կամքով այնպես եղավ, որ Կասպից ծովափին գտնվող այն քաղաքները, որոնց միջոցով այդ առևտուրը միշտ կապվում էր մեր կայսրության հետ, անցան մեր պաշտպանության տակ։ Եվ որովհետև այդ առևտուրը մեծ մասամբ կատարվում էր ձեր ժողովրդի միջոցով, ուստի հայերը, ինչպես նրանք, ովքեր ապրում են Պարսկաստանում, այնպես էլ հատկապես նրանք, ովքեր մեծ բազմությամբ ապրում են մեր կայսրության զանազան քաղաքներում, ամենայն խոնարհությամբ խնդրեցին, որ ձեզ՝ Պարսկաստանում ապրող հայերիդ հետ այդ առևտուրը վերսկսվի ու վերականգնվի։

Եվ մենք, այդ ժողովրդի նկատմամբ ունեցած հատուկ կայսերական ողորմածությամբ, սրանով հայտարարում ենք, որ ...նրանք առանց որևէ երկյուղածության այցելեն և երթ կուզենան՝ բնակվեն ու ապրեն այն քաղաքներում ու գավառներում, որտեղ մինչ այդ ունեին իրենց տները, անարգել կատարելով իրենց առևտուրը, հուսադրված, որ մենք կկարգադրենք ոչ միայն պաշտպանել նրանց, ցույց տալ ամեն կարգի անհրաժեշտ օգնություն՝ ազատորեն կատարելու առևտուր, այլ նաև մեծագույն շահույթի և օգտակարության համար ամենայն ողորմածությամբ կշնորհենք մի շարք հատուկ արտոնություններ։

Եվ դրանում հայ ժողովրդին լավագույն ձևով հավաստիացնելու նպատակով, համաձայն այստեղ բնակվող հայերի խնդրանքի, հարմար գտանք նրանց հայրենակիցներից մեկին՝ Իվան Կարապետին մեր սույն պատասխան հրովարտակով ուղարկել [ձեզ մոտ] և նրան հայտնեցինք մեր ամենաողորմած կամքն ու վճիռը՝ ձայ ժողովրդի բոլոր այլ խնդրանքների ու գործերի մասին։ Եվ ցանկանում ենք, որ դրանում նրան լիակատար ու անվերապահ հավատ ընծայվի, և ի հաստատումն դրա տրվում է մեր պատասխան հրովարտակը՝ վավերացված մեր պետական կնիքով»։ (Հրովարտակի տակ ստորագրել են Գ. Ի. Գոլովկինը և Պ. Ա. Տոլստոյը)։ Տե՛ս Г. Эзов, վավ. № 227 (բերվում է ռուսերենից՝ մեր թարգմանությամբ)։

19 *Հրովարտակի տակ նշված է. «Դրա հայերեն թարգմանության պատճենը, որ կատարել են հայեր Լուկա Իլինը, Պիրի Մնացագանովը և Իվան Կարապետը, ուղարկված է նրա՝ Իվան Կարապետի հետ, 1723 թ. հունիսի 6-ի օրը» (նույն տեղում)։*

չկա ոչ մի խոսք ռազմաքաղաքական իրավիճակի և հայերի կողմից ռուսական օգնություն խնդրելու մասին։ Իսկ Իվան Կարապետին տրված երկրորդ փաստաթուղթը՝ Պետրոս Մեծի հուշագիրը[20], պատասխան է հայերի այն դիմումներին, որոնցով նրանք ռազմական օգնություն էին հայցում։ Այնտեղ հենց սկզբից նշվում է, որ հուշագիրը՝ պատասխան-հրովարտակ է, հասցեագրված Գանձասարի Ներսես պատրիարքին և նրա Սարգիս, Գրիգոր, Սարուխան, Ավան ու մյուս յուզբաշիներին։

Հուշագրում նշվում է, որ Պետրոսը հայերին վերցնում է իր պաշտպանության տակ, հուսադրում, որ կօգնի նրանց ազատվելու, սակայն մինչ այդ Ռուսաստանը պետք է ամրապնդի իր դիրքերը Մերձկասպյան շրջաններում և նախապատրաստվի Հայաստանին օգնելու՝ համալրելով Գիլանում, Բաքվում ամրացված զորամասերը։ Հայերին կոչ է արվում չթուլացնել իրենց դիմադրությունը, իսկ մեծ վտանգի դեպքում՝ մեկնել Ռուսաստան, ժամանակավորապես խուսափելով կռիվներից, մինչև որ «կավարտվեն նախապատրաստությունները և հնարավոր կդառնա անհրաժեշտ ուժերով նրանց ազատելը»։ Նշվում է նաև, որ Ի. Կարապետին տրված Պետրոսի հրովարտակը, որով նրան լիակատար վստահություն էր տրվում, գրված է ընդհանուր և խուլ (փոխաբերական) տերմիններով (արտահայտություններով), որ թշնամու ձեռքն ընկնելու դեպքում հայերին վնաս չհասնի, մինչև այնժամ, «երբ մենք ի վիճակի կլինենք նրանց օգնության գնալու»՝ հարկ եղած և հզոր միջոցներով[21]։

Նույն 1723 թ. Պետրոս Մեծը իր ձեռքով գրել է նաև մի «Հայտարարություն գործողությունների և արշավանքի մասին», որով բացատրվում է Պարսկական արշավանքը «դա-

---

20 Տե՛ս Г. Эзов, վավ. № 229։

21 Նույն տեղում։

դարեցնելու» և իր զորքի մի մասի Աստրախան վերադառնալու պատճառները[22]։

Պետրոս Մեծի գրած «Հայտարարությունը» հերքում է մինչև այսօր առանձին պատմաբանների կողմից հայտնվող այն թյուր կարծիքը, ըստ որի ռուսական կառավարությունը 1723 թվականից իբրև թե հրաժարվեց Անդրկովկասը ազատագրելու և իր հովանու տակ վերցնելու ծրագրից՝ ըստ էության հայերին մատնելով թուրք ու պարսիկ սատրապների դատաստանին։ Ինչպես Պետրոս Մեծի «Հայտարարությունը», այնպես և հետագա տարիներին Անդրկովկասում վարվող քաղաքականությունը ցույց են տալիս, որ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի Ռուսաստանին միացնելու ծրագիրը եղել էր և մնաց Պետրոսի ու Եկատերինա I-ի կառավարության Մերձավոր Արևելքում վարվող քաղաքականության առանցքը։ «Հայտարարությունը» բազմակողմանիորեն բացատրում է այն պատճառները, որոնք Պետրոս Մեծին ստիպեցին 1723 թ. սահմանափակվել Կասպից ծովի արևմտյան ու հարավային ափերի նվաճումով և ժամանակավորապես հրաժարվել Վրաստան ու Հայաստան զորք մտցնելու ծրագրից։

Փաստաթղթում նշվում է, որ 1722 թ. օգոստոսի 27-ի ալիկոծության հետևանքով Կասպից ծովով դեպի Պարսկաստան շարժվող նավերից 12-ը խորտակվել են։ Սպասվող նոր նավերից 17-ը, որ տանում էին մթերք, նույնպես ջարդ ու փշուր են եղել և Ուշ գետի մոտերքում խրվել ծանծաղուտի մեջ (դրան ականատես է եղել վրաց իշխան Թուրքեստանաշվիլին և ուրիշներ)։ Մի գիշերում եղել է 1700 ձիերի անկում և այլն, և այլն։ Ուստի պետք էր արշավանքը դռնեմեկ տարով հետաձգել։ Սակայն Թուրքիայի կողմից Անդրկովկասը նվաճելու վտանգը ստիպում էր Ռուսաստանին շտապել,

22 Տե՛ս Վ. Ոսկանյան, Վ. Մարտիրոսյան, Նոր վավերագրեր 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 193—216։

ինչպես գրել է Պետրոս Մեծը, պետք էր «պարսկական սահմանների վրա գոնե մի տեղանաչափ տեղ ստանալ, որը և աստծո օգնությամբ կատարված է և մեր ձեռքին է Դերբենտ վաճառավոր քաղաքը, ընդ որում, նրա երկու կողմերում կառուցել ենք 2 բերդ... և այդպես մենք մյուսի հետևից պիտի կառուցվենն, քանի որ սկսածը չենք լքի, ինչում ինքներդ կարող եք համոզվել... 21 տարի ինչպիսի ծանր արյունալի պատերազմի մեջ էինք Շվեդիայի հետ, բայց չլքեցինք՝ մինչև բարեհաջող ավարտը։ Իսկ այստեղ, այդքան հեշտն ու շահեկանը ինչո՞ւ լքել։ Եվ ինչպիսի անպատվություն կլինի ամբողջ աշխարհի առջև, ընդ որում, բոլոր մուսուլմաններին մեր դեմ կքաջալերենք...»[23]։

Այս «Հայտարարությունը» բազմացվել ու բաժանվել է վրացիներին և հայերին։ Ինչպես հայտնի է, ռուսական զորքերը 1723 թ. ոչ միայն չհեռացան, այլև ամրացան ու համալրվեցին Մերձկասպյան բոլոր մարզերում էլի մի տասնամյակ։ Սակայն Պետրոս Մեծի մահը 1725 թ. հունվարին, արքունի շրջաններում սկսված երկպառակությունները, խուճապը, անվճռականությունը, քաղաքական ու նյութական միջոցների մոբիլիզացման դժվարությունները մի կողմից, Թուրքիայի ու Պարսկաստանի, ինչպես և նրանց թիկունքում կանգնած պետությունների հույժ ակտիվացումը կանխեցին Անդրկովկասում ռուսական նոր արշավանք սկսելու փորձերը։ Սակայն ազատագրական շարժումը 1723 թ. հետո էլ շարունակվում էր ու նոր թափ ստանում և դրան նպաստում էին ռուսական կառավարության կողմից տրվող խոստումները։

Ուժի մեջ էր մնում նաև Ռուսաստանի հովանավորության տակ վրաց-հայկական միացյալ պետության ստեղծումը, որը պետք է գլխավորեր Վախթանգ VI-ը։ Վերջինիս իրավունքները ճանաչվում էին ինչպես ռուսական արքունիքի, այնպես և հայ ու վրաց ավագանու կողմից՝ ազատա-

23 Նույն տեղում, էջ 198։

գրական մարտերի բոլոր տարիներին։ Հասկանալի է, որ ռուսական պետությունը չէր օգնի Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժմանը, եթե դա օգտակար չլիներ Ռուսաստանի համար։ Այդ շատ լավ հասկանում էին նաև ազատագրական շարժման ղեկավարները, ովքեր լինելով լայնախոհ գործիչներ, հեռու էին «անկախ պետություն» ստեղծելու պատրանքներից։ Նրանք հուսով էին, որ ի վերջո ռուսները կգան օգնության, կազատեն Անդրկովկասը ու կվերցնեն իրենց պաշտպանության տակ։ Իսկ մինչ այդ պետք էր դիմադրել թուրքական հարձակմանը և դրա համար միավորել ուժերը՝ Դանձակի, Երևանի և մյուս քաղաքների ինքնապաշտպանության համար։

Ուշագրավ է այն փաստը, որ վրաց թագավորի ղեկավարությամբ հայ, վրաց ու ադրբեջանական ջոկատների Դանձակի համատեղ պաշտպանության 1723 թ. հերոսամարտերից հետո, 1724 թ. մարտի 24-ին կնքվում է հատուկ պայմանագիր՝ համագործակցությունը և քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով։ Դաշնակիցները միաժամանակ դիմում են Ռուսաստանին, իրենց հպատակությունը հայտնում և խնդրում օգնություն։ Այս փաստը նորից ու նորից վկայում է Անդրկովկասի երեք ժողովուրդների և Ռուսաստանի միջև կապ ու դաշինք ստեղծելու ձգտումը։

Ինչքան էլ մեծ էր թուրքական ագրեսիայի դեմ կանգնելու պատրաստակամությունը, ուժերն անհավասար էին։ Ցանկանալով կանխել թուրքերի հետագա առաջխաղացումը Անդրկովկասում և նոր պատերազմի վտանգը, 1724 թ. հունիսի 12 (23)-ին Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Նեպլյուևը Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որի համաձայն կողմերը փոխադարձաբար ճանաչեցին գրաված տարածությունների վրա իրենց տիրապետությունը և իրավունքը. Թուրքիան ճանաչեց Պետերբուրգի ռուս-պարսկական դաշնագիրը, իսկ Ռուսաստանը՝ Թուրքիայի «իրավունքը» Վրաստանում (Բբիլիսի և այլն), Ադրբեջանում (Շամախի, Բավրիզ), Պարսկաստանում (Ղազվին) և Հայաստանում։ Թեպետ այդ պայմանագիրն օգնեց Մերձկասպյան մարզերում Ռուսաս-

տանի դիրքերի պահպանմանը, սակայն չարգելակեց թուրքերի առաջխաղացումը դեպի Գանձակ ու Երևան։ Պայմանագիր կնքելուց արդեն երկու ամիս հետո, այն խախտելով նրանք օգոստոսին գրավել էին Նախիջևանը, Օրդուբադն ու Ջուղան դավաոը և պաշարել Երևանի միջնաբերդը դեռևս հունիսի 7-ին[24]։ Երևանի և շրջապատի գյուղերի բնակիչները վրաց Կոստանդին թագավորի հետ Լոռուց ու Գանձակից եկած ադրբեջանցի, վրացի ու հայ մարտիկների ջոկատի հետ շուրջ երեք ամիս համառորեն ու հերոսաբար պաշտպանում էին քաղաքը քառապատիկ գերազանց թուրքական բանակի հարձակումներից, նրան պատճառելով մեծ կորուստներ։ Ըստ թուրքական աղբյուրների վկայության թուրքերը կորցրին 20.000 զինվոր։ Սակայն պարենի ու զինամթերքի սպառվելը, ՔՇնամու հրետանու կատարած ավերածությունները և որևէ լուրջ օգնություն ստանալու անհնարինությունը Երևանի պաշտպաններին ստիպեցին սեպտեմբերի 22-ին բերդը հանձնել, իսկ թուրք զավթիչները, խախտելով իրենց խոստումը, դաժան դատաստան տեսան բերդի պաշտպանների հետ։

Երևանի և մասնավորապես միջնաբերդի հերոսական պաշտպանության ընթացքում շատ ավելի կորուստ էին ունեցել թուրքերը, քան հայ ու ադրբեջանցի զորամասերը։ Հիշենք, որ Աբդուլլա փաշայի հրամանով Ջորագյուղի վրա կատարված միայն մի հարձակման ժամանակ պաշտպանները կորցրին 1300, իսկ թուրքերը՝ 6000 մարդ։ Պաշտպանության համառ ու տևական բնույթի վկայություն է այն փաստը, որ Աբդուլլան, ունենալով մեծ բանակ, նորից ու նորից պահանջում էր համալրումներ և ստացավ օգնություն՝ 38.000-անոց զորք։

Թե ինչպիսի նշանակություն էր տրվում Երևանի գրավմանը, նրա ռազմաքաղաքական դիրքերին՝ պարզ երևում է ժամանակի և՛ ռուսական, և՛ թուրքական գրագրություններից։

Երևանի գրավման մասին Կոստանդնուպոլսից Մոսկվա

---

24 Մանրամասնությունները տե՛ս Վ. Մ. Մաւտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, Երևան, 1971, էջ 141—150։

տեղեկություններ է հաղորդել ռուսական դեսպան Իվան Նեպլյուևը։ Նա գրում է, որ սեպտեմբերի 22-ին թուրքերն այդ քաղաքը վերցրին, «ինչի մասին Բարձր Դուռը տեղեկություն է ստացել այս՝ հոկտեմբեր ամսի 8-ին, իսկ 9-ին Վեզիր-աղայի միջոցով հայտնել է արտասահմանյան մինիստրներին (այսինքն դեսպաններին), այդ թվում նաև ինձ... դրա հա-մար այժմ շարունակվում են և հանդիսությունները, և թնդա-նոթային սալյուտները, և հրավառությունները...»[25]։ Արվար-ձանները թուրքական զորքերի կողմից գրավվել էին դեռևս գարնանից, հայտնում է Նեպլյուևը, հաստատելով, որ բերդի պաշտպանությունը շարունակվել է առնվազն 4 ամիս։

Դրությունն առանձնապես ծանրացավ 1725 թ. սկիզբնե-րից՝ Պետրոս Մեծի մահից հետո, երբ ռուսական կառավարող շրջաններում հուսահատության ու խուճապի մթնոլորտ ստեղծ-վեց։ Եկատերինա I կայսրուհին (1725—1727) և նրա մեր-ձավորները չունեին պետական, առավել ևս ռազմաքաղա-քական գործերի ղեկավարության համար անհրաժեշտ ուժ և հեղինակություն։ Նրանց միջև սկիզբ առան քայքայիչ երկ-պառակություններ։ Չկար միասնություն անգամ «Գերագույն գաղտնի խորհրդում», որն ստեղծվեց երկրում ընդհանուր ղե-կավարություն ապահովելու համար։ Դժվարացավ զինական նոր ուժեր, ռազմամթերք և պարենի անհրաժեշտ պաշարներ ստեղծելու և Անդրկովկաս ուղարկելու գործը։ Այդ ամենին լավատեղյակ թուրքական կառավարությունը, Արևմուտքի ուժեղացող ազդեցության տակ ձեռնարկեց ավելի խոշոր ռազմական գործողություններ։ Ռուսաց կառավարությունը անհրաժեշտ էր համարում Պարսկաստանի հետ համագոր-ծակցելու եղրեր գտնել, օգնել այնտեղ սկսված հակաթուր-քական պայքարին, խոստանալով պարսից շահին հետագա-յում ետ գաշել ռուսական զորքերը Մերձկասպյան շրջաննե-

---

25 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. 89 (Ռու-սաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ), 1724 թ., գ. № 6, թ. 471—472։ Տե՛ս նաև «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, Երևան, 1961, էջ 151։

լրից։ «Դևլեթգուշն զաղտնի խորհուրդի» գեներալ-ֆելդմարշալ Դոլգոռուկովին ուղարկած 1726 թ. ապրիլի 25-ի հույժ գաղտնի հրահանգից հայտնի է «նորին կայսերական մեծության մտադրությունը՝ աստիճանաբար դուրս գալ պարսկական գործերից»[26]։ Սակայն այդ հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ Պարսկաստանում ստեղծվի հուսալի կառավարություն, երբ Կասպից ծովի շրջաններում ու ռուսական սահմանների մոտ թուրքերի տիրապետության վտանգը վերացվի։

Հրահանգը պահանջում էր այդ ծրագիրը պահել խիստ գաղտնի, և ընդհակառակը՝ անհրաժեշտ դեպքում ինչպես վախթանգին ու տեղի ժողովուրդներին, այնպես և թուրքերին հայտարարել, որ Ռուսաստանը ուժեղ նախապատրաստություններ է տեսնում և բավական զորք է հավաքել ու գործողություններ է սկսելու Պարսկաստանում։

Այս յուրօրինակ քաղաքականության նպատակն էր՝ քաջալերել Անդրկովկասում ծավալված ապստամբական ու դիմադրական պայքարը, սանձել թուրքական ագրեսիան, շահին ստիպել Ռուսաստանի հետ կնքած պայմանագիրը վավերացնել և համագործակցել՝ Թուրքիայի դեմ պայքարելու համար, թուլացնելով արևմտյան երկրների ազդեցությունը պարսկական ու թուրքական շրջաններում։ Անգլիան, որ Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրք էր բռնել Պետրոս Մեծի Պարսկական արշավանքի ժամանակ, 1726 թ. 20 նավ է ուղարկում Բալթիկ ծով՝ իբրև թե խաղաղություն պահպանելու և Շվեդիան ու Դանիան (ռուսական «հարձակման» դեպքում) պաշտպանելու նպատակով։ Անսքող հակառուսական դիրք էին բռնել Թուրքիան և նրա վասալները Կովկասում ու Ղրիմում։ Այդ ուժերի թիկունքում էին կանգնած նաև Անգլիան ու Ֆրանսիան։ Նման պայմաններում դժվար էր դառնում ոչ միայն Անդրկովկասի, այլև Ռուսաստանի վիճակը։ Քանի որ Կոստանդնուպոլսի ռուս-թուրքական պայմանագրով չէր կարելի միջամտել կողմերի գրաված երկրամասերի գործերին, ռուսական արքունիքը պարբերաբար խուսափողական պա-

---

26 Վ. Ոսկանյան, Վ. Դիլոյան, նշվ. հոդվ., էջ 265։

տասխան էր տալիս օգնություն խնդրող հայերի նամակներին, միաժամանակ զգուշացնելով վրաց և հայ գործիչներին՝ չպրգռել թուրքերին։

Վախթանգ VI թագավորը, հայ և վրաց գործիչները հետևողականորեն, բայց զգուշությամբ, շարունակում էին իրենց կենդանի ու գրավոր կապերը վրացի, հայ ու պարսիկ գործիչների հետ։ Այսպես, Վախթանգը նամակ է գրում շահի վրացի պալատական Սարիդան-բեկին և հայտնում, որ ինքը Պետրոս Մեծին խնդրել էր բարեկամական հարաբերություններ հաստատել շահ Թահմազի հետ։ Պետրոսը իբրև թե համաձայնվել էր այդ նպատակով իրեն ուղարկել Պարսկաստան՝ շահի արքունիք՝ հավաստելու, որ Պետրոս Մեծը ուզում է շահին դաշնակից լինել, ազատել թուրքերի կողմից գրավված երկրները և վերադարձնել Պարսկաստանին։ Այդ նպատակով Վախթանգը շահի մոտ է ուղարկել Դավիթ Նազարովին։ Թեպետ մինչև Վախթանգի Պետերբուրգ հասնելը Պետրոս Մեծը մահացել էր, կայսրուհի հռչակված Եկատերինա I-ը, կատարելով Պետրոսի կամքը, զորք էր ուղարկել Գիլան, որպեսզի ուժերը միավորելով երկիրն ազատի թուրքերից։ Դրա համար Վախթանգը Սարիդանից պահանջում էր շահին համոզել և բերել Գիլան՝ որպեսզի նա վավերացնի ռուս-պարսկական պայմանագիրը՝ համատեղ գործողություններ սկսելու համար։ Վախթանգի նամակով և Արտաքին գործոց կոլեգիայի հանձնարարականով Դավիթը 1725 թ. հունվարի մեկին գնում է Աստրախան, ներկայանում նահանգապետ Ա. Վոլինսկուն, նրանից ստանում 300 ոսկի ճանապարհածախս և շուտափույթ մեկնում Գիլան։ Սակայն, ինչպես Արտաքին գործոց կոլեգիային գրում է Մատյուշկինը, «Վրացական իշխան Դավիթ Նազարովը... ոչ մի կերպ չի կարողանում գնալ շահի արքունիք՝ այնտեղի խառնակությունների պատճառով... և ոչ ոք չգիտի, թե որտե՞ղ է գտնվում շահը»։ Դեկտեմբերի 6-ին Դ. Նազարովը վերադառնում է Պետերբուրգ և Արտաքին գործոց կոլեգիային ներկայացնում մի զեկուցագիր, ըստ որի նա այնուամենայնիվ կարողացել էր կատարել իրեն տրված հանձնարարությունը՝ նամակները հասցնել Սարիդանին և շա-

հին։ Բայց Սպահանն աղատագրելու նպատակով շահի կազմակերպած արշավանքը ձախողվել էր և նա ջարդվել էր ու փախել Մազանդարան, ապա՝ Աստրաբադ։ Նաղարովը գրում էր նաև հայերի մասին, նշելով, որ «նրանք հաստատ են կանգնած» և հարձակվող մեծ թվով թուրքերին քանիցս կոտորել են։ Հայերին են միացել նաև Գանձակի այն բնակիչները, որոնք կարողացել են քաղաքից դուրս գալ. քրդերը նույնպես միացել են նրանց և ստեղծվել է բավական մեծ ղորք։

1726 թ. աշնանը Վախթանգը վրաց իշխան Ֆրանգիստան-Թուրքեստանովին ու Դավիթ Նաղարովին նորից ուղարկում է Թահմազ շահի մոտ՝ հավանաբար համատեղ գործողություններ կազմակերպելու նպատակով, քանի որ դեռևս 1726 թ. ապրիլին Սարիդանից ստացել էր հուսադրական նամակ, որով նա հայտնում էր, թե Թահմազ շահը բարյացակամորեն է տրամադրված Վախթանգի նկատմամբ, ուղում է ձմռանը գնալ Գանձակն ազատելու և իր ղորքերը միացնելով սղնախների ղորքին անցնել նաև Վրաստան՝ այնտեղից թուրքերին վանելու նպատակով։ Սարիդանը գրել էր նաև, որ «սղնախցիները երեք անգամ հաղթել են թուրքերին, և նրանց կտրած գլուխներն ուղարկել են շահին»[27]։

Դավիթ Նաղարովը հավանաբար հանդիպել է շահին, ապա հայ ու վրաց մարտիկների հետ կռվել թուրքերի դեմ։ Այդ է վկայում Դավիթ Նաղարովին օգնելու մասին Թահմազ շահի հրովարտակը՝ իր ղորքերի գլխավոր հրամանատար Մահմեդ Ռիզա խանին։ «Իմացած եղիր,— գրել է շահը,— որ բարձրապատիվ և իրեն հավատարիների մեջ նշանավոր, Վրաստանի ու Քարթլիի գերապատիվ իշխանների ժառանգ Հուսեին-Կուլի խանի (Վախթանգ VI-ի) մերձավոր Դավիթ բեկը, որ մեր օրենքին ու պետությանը աներեր հավատարմությամբ ցույց է տվել եռանդուն ու ջանասեր ծառայություն, փոփոխվող դեպքերի բերումով ընկել է ծանր վիճակի մեջ։ Ուստի,

27 Այս և Դավիթ Նաղարովի մասին փաստերի մանրամասնությունները տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» 1964 թ. № 2-ում, Վ. Ոսկանյանի և Վ. Դիլոյանի հաղորդման մեջ։

սույն բարձր հրամանագիրն ստանալուն պես, նրա, բարձրապատվի դրությունը կարգավորել այնպես, որ նա կարողանա շարունակել իր ջանասեր ծառայությունը և դրա կատարման ընթացքում կարողանա անհրաժեշտ ջանք ու ձգտում ցուցաբերել, ունենալով մեր թագավորական բարեմաղթությունը»[28]։

Այս ընթացքում, երբ ռուսական ու վրացական գործիչները դիվանագիտական ճանապարհով փորձում էին բարելավել հարաբերությունները Պարսկաստանի հետ, Ղարաբաղի ու Սյունիքի շրջաններում համառ մարտեր էին մղվում թուրք զավթիչների դեմ։

1726 թ. հունիսի 15-ի նամակով Ենայի կաթողիկոսը, Ի. Կարապետը, Ավան, Աբրահամ, Բարխան և մյուս յուզբաշինները վախթանգ VI-ին հայտնում են, որ հունիսի 10-ին Գանձակից թուրք զորքերը խաչենի վրա են հարձակվել, ավերել Ղազանչի, Ղասարթու և Ջանկաթաղ գյուղերը, թալանել ու գերեվարել բնակչությանը, բայց սղնախից գնացած հայ զորքերը վրա են հասել, կոտորել թշնամուն, ազատել գերիներին ու վերադարձրել ավարը։ Սակայն, ինչպես գրում են նրանք, վտանգը չի վերացված և անհրաժեշտ է զորք ուղարկել՝ Շամախին ազատելու համար[29]։

1726 թ. օգոստոսի 1-ին գեներալ Լևաշովը հայտնում է, որ սղնախների հայերը ետ են շպրտել թուրքական մեծ ուժերի չորս խոշոր հարձակումները և մինչև այժմ էլ համառորեն կռվում են[30]։ Հայերը գործում էին քրդերի ու ադրբեջանցիների հետ նաև այն ժամանակ, երբ 1727 թ. օգոստոսին Թավրիզից թուրքերը շարժվեցին Դիզակի ու Բարգուշատի վրա։ Բայց թուրք զորքերը չուզեցին կռվել իրենց հավատակիցների հետ և թուրքական կառավարությունը ստիպված եղավ խաղաղություն կնքելու համաձայնություն տալ[31]։

---

28 Նույն տեղում, էջ 267 (հրովարտակի տակ գրված է ջեմազիյել-էվվել ամիս, 1139 թվական)։

29 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, վավ. № 74։

30 Նույն տեղում, վավ. № 132։

31 Տե՛ս АРО, т. II, ч. I, «Историческое введение» академика АН Арм. ССР А. Г. Иоаннисяна, стр. XCI.

Համառ մարտեր էին մղվում Կապանում (Սյունիքում), որտեղ շարժման գլուխ էին կանգնած Դավիթ-Բեկն ու Մխիթար-Բեկը (սպարապետը), հենակետ ունենալով Հալիձորի բերդը։ Թուրքերը 1726 թ. պարբերաբար հարձակումներ էին կազմակերպում, բայց չէին կարողանում բերդը նվաճել ու հետ էին շպրտվում՝ թողնելով բազմաթիվ զոհեր։ Պաշտպանության կազմակերպիչներից Ստեփան Շահումյանն իր նշանավոր «Պատմութիւն Դաւիթ բէգին» գրքում նկարագրում է վճռական մարտերը և մասնավորապես դրանցից մեկը, երբ թուրքական գերազանց ուժերը բոլոր կողմերից 7 օր շարունակ հարձակվում էին Հալիձորի բերդի պարիսպների վրա, ռմբակոծում, սանդուղքներով վեր մագլցում, չկարողանալով ներս թափանցել։ Երբ թշնամին կարծես մոտ էր հաղթանակին, հերոս պաշտպանների մի խումբ շատ անսպասելի դուրս է նետվել ու մխրճվել թշնամու շարքերը, խուճապի և փախուստի մատնելով հանկարծակի եկած թուրքերին, հետապնդելով ու կոտորելով նրանց։ Ընկածների կողքին փախչողները թողել էին 148 դրոշակ։ Այս հաղթանակը հսկայական բարոյական նշանակություն ունեցավ, նոր ուժեր համախմբեց Դավիթ-Բեկի ու Մխիթար-Բեկի շուրջը, հնարավորություն ստեղծելով զրավել նաև Մեղրին՝ քաղաքի բնակչության և Մխիթար-Բեկի ու Տեր Ավետիսի զորքերի համատեղ ու սրընթաց գործողությունների միջոցով։ Կապանը, այսպիսով, ձեռք բերեց ինքնուրույն իշխանություն և կարողացավ հետ մղել թուրքերի բոլոր հարձակումները, պատժելով ու հնազանդեցնելով վախկոտներին և դավաճաններին։ Դավիթ-Բեկը, նրա զինակիցներ Մխիթար-Բեկը և մյուս հայ զորապետները գործում էին փոքր ուժերով, համարձակորեն դուրս գալով թշնամու մեծ զորամասերի դեմ պարտիզանական կռիվների, անսպասելի ուղղություններից հանկարծակի ու հուժկու հարվածներ հասցնելով և խուճապի մատնելով հակառակորդի գերազանց ուժերին։

Դավիթ-Բեկի մղած ազատագրական պայքարի հենց առաջին տարիներին վառ կերպով արտահայտվից ինչպես նրա ջերմ հայրենասիրությունը, այնպես և փորձված զորա-

վարի ռազմական արվեստը, քաղաքական գործչի և դիվանագետի ակնառու տաղանդը։ Պատահական չէր, որ Վախթանգ VI-ը հենց նրան ու նրա զինակիցներին ուղարկեց Հայաստան՝ պայքարի կազմակերպման ու ղեկավարման համար։ Ճիշտ գնահատելով 1725—30 թթ. ստեղծված իրավիճակը, նա հասկացավ, որ Անդրկովկասի համար հիմնական վտանգը Թուրքական ագրեսիան է։ Դավիթ-Բեկը գործակցում էր վրացիների, ադրբեջանցիների ու պարսիկների հետ, որոնք ուզում էին երկրից դուրս վանել թուրք զավթիչներին։ Հավանաբար Դավիթ-Բեկը եղել է այն հայ զորավարներից, որոնք հետագայում Նադիր Ղուլի խանի (հետագայում շահ դարձած Նադիրի) զորքերի հետ՝ շարունակում են կռվել Թուրքերի դեմ[32]։ Դավիթը գաղտնի հանդիպում էր ունեցել Թահմազի հետ և նրան նախազգուշացրել Նադիրի կողմից նյութվող դավադրության մասին (ինչպես հայտնի է Նադիրը 1732 թ. գահընկեց արեց Թահմազին, իշխանությունը վերցրեց իր ձեռքը և 1735 թ. ինքը դարձավ շահ)։ Հիմք կա ենթադրելու, որ այդ նույն Դավիթ Նազարովն էր այն գործեցի Դավիթ-Բեկը, որի մասին հիշատակում է Աբրահամ Երևանցին[33]։

Տասնամյա դիմադրական ու հարձակողական մարտերին մասնակցում էին ոչ միայն սղնախների լավ կազմակերպված

---

32 Ա. Երևանցին գրում է, որ Նադիր Ղուլի խանի պարսից զորքերի հետ թուրքական զավթիչների դեմ կռվում էին վեց հայազգի զորավարներ, «որք էին հազարապետք Ղուլի խանին... անուն միոյն՝ Դաւիթ՝ զոր Դորընցեցի բէկ ասեն»։ Տե՛ս Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938, էջ 76։

33 «...Քրիստոնեայ իշխան ի հայոց ազգէ՝ Դաւիթ բեկ անուանեալ, քաջ խորհրդական։ Եւ սորս իմացեալ և իրազեկ եղեալ դաւոյ Ղուլի խանին և երկուցեալ ի մեծամեծ չարեաց, զորոց կասկածէր թէ հասանելոց են ի վերայ շահին և թագաւորութեան նորա... ի գիշեր միում էմուտ առ շահն և սրտացաւութեամբ բարեկամութեան խոսեցաւ նմա ծածուկ առանձին և ասաց, թէ «գիտեցիր տեր մեր արքայ, զի Ղուլի խանն ոչ ուղիք մտօք գայ, այլ թշնամութեամբ, և մենք ստուգիւ տեղեկացեալ եմք, զի նա գա ըմբռնել զքեզ և դնել յերկաթի կապանս և թագաւորութիւն քո յինքն գրաւել. և ահա նա մերձ է վազիւ ի միւսում. և արդ, տես, թէ որպես զգուշացիս ի նմանէ» (նույն տեղում, էջ 62)։

զորքերը, այլև Անդրկովկասի տարբեր շրջաններում ստեղծված ջոկատները, որոնք գործում էին և՛ վրացիների ու ադրբեջանցիների, և՛ ռուսական զորամասերի հետ։ Հիշատակության արժանի են Պետրոս դի Սարգիս Գիլանենցը, որն իր ջոկատով ռուս զորքերին միացավ դեռևս 1722 թ., Պետրոս Մեծի Պարսկական արշավանքի սկզբին, իսկ Այվազ Աբրահամովը և Յակով Շամիրովը՝ իրենց շամախեցի հայ կամավորներով մասնակցեցին Ռեշտի գրավմանը[34]։

Աստրախանից Մոսկվա վերադառնալու ճանապարհին (1722 թ.) Պետրոս Մեծից ռուսական ծառայության անցնելու թույլտվություն է խնդրել Պողոս Չեննենցը և նրա կարգադրությամբ ներկայացել Աստրախանի գեներալ-նահանգապետին, ապա իր ջոկատով մեկնել Բաքու և միացել ռուսական կայազորին[35]։ 1723 թ. Փիլիբեկ Բատատուրովը Վախթանգ VI-ի կողմից ուղարկվում է Հայաստան՝ Արարատյան դաշտ ներխուժող թուրքական զորքերին դիմադրություն կազմակերպելու[36]։

Հայտնի է Ղուլաննենց Ռաֆայելի և Թադի եղբայրների, Պետրոս Կասպարովի, Ավետ Տասամալովի և շատ ուրիշների նահանգուն ու անձնուրաց մասնակցությունը 1720-ական թվականների հերոսամարտերին։

Մեծ ու նշանակալի դեր կատարեցին հայկական և վրացական էսկադրոնները, որոնց կազմում համախմբված ապստամբներն ու կամավորները լավ դիտենալով երկրի աշխարհագրական սլայմանները, ժողովուրդներին ու նրանց լեզուն, օգնում էին ռուսական հրամանատարությանը կողմնորոշվելու և հերոսաբար մարտնչում էին թշնամու դեմ, արժանանալով բարձր դնահատականի։ Խոսելով հայերի ակնառու դերի մասին, պետք է շեշտել նրանց սխրանքները 1722—

---

34 Այս մասին մանրամասնությունները տե՛ս Հ. Ն. Խաչատրյան, Հայ և ռուս ժողովուրդների զինակցությունը ռուսական բանակի Կասպիական արշավանքում, Երևան, 1972. Նույնի, Армянское войско в XVIII в., Ереван, 1968.

35 Տե՛ս А. Н. Хачатрян, Армянское войско в XVIII в., стр. 250—252.

36 Նույն տեղում, վավ. № 112։

1730 թթ.։ Բավական է հիշել Քևհուլ միայն գեներալ-ֆելդմարշալ Վ. Վ. Դոլգոռուկովի խոսքերն այն մասին, որ հայերը «Թուրքերի դեմ կռվում են մեծագույն անվեհերությամբ, գործում են արիաբար»։ 1727 թ. նա հիացմունքով է գրում հայերի մասին ու զարմանքով նշում. «Մարդկային երևակայությունից վեր է այն, թե այդքան ուժեղ հակառակորդի դեմ ինչպես են նրանք դեռևս պաշտպանվում»[37]։ Դոլգոռուկովը դիմում է կայսրին և խնդրում հայերին ցույց տալ ռազմական օգնություն[38]։ Ռուսական հրամանատարությունը, բարձր գնահատելով հայերի դերը, օգնում էր նրանց խրախուսանքներով, համառորեն կոչ էր անում կառավարությանը՝ Թույլատրել բացարձակ օգնություն ցույց տալ հայերին։ Թեպետ, «Գերագույն դաշտնի խորհուրդը» չէր ուզում այդ քայլին դիմել և Թուրքիայի հետ պատերազմ սկսել, այնուամենայնիվ ռուս հրամանատարները գաղտնի օգնություն հասցնելու փորձեր անում էին։ Այդ է վկայում թուրքական կառավարության բողոքը այն առթիվ, որ Իբրահիմ փաշային դիմադրող սրընաթիների հետ եղել են նաև ռուսներ, և որ Թուրքերին հաջողվել է խլել ռուսական դրոշակ, նրանց մոտ գտել են ռուսական անձնագրեր, տեսել են ռուսական համազգեստով զոհվածների և այլն[39]։

Գեներալ Ա. Ի. Ռումյանցևի 1730 թ. հաղորդմամբ օգոստոսի 18-ին սղնախցիներից Դերբենտ են անցել 137 հայեր՝ յուզբաշիներ Աբրահամի, Ալավերդիի, Բաղիրի, Սիմեոնի, եպիսկոպոս Պետրոսի և դնդապետ Գրիգորի հետ[40]։

Հայկական և Վրացական էսկադրոնները, որոնք 1720-ական թվականներին մեծ ծառայություն մատուցեցին Կասպյան ծովափ թափանցած ռուսական զորքերին, շարունակում էին զգալի դեր կատարել նաև 30-ական թվականներին։ Զորքերի

---

37 Տե՛ս Г. Эзов, վավ. № 292։

38 Նույն տեղում։

39 «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII в.», Сборник документов, составители Восканян В. К., Галустян Дж. О., Мартиросян В. М., Ереван, 1978, стр. 20—21.

40 Նույն տեղում, էջ 23։

հրամանատար գեներալ Վ. Յա. Լևաշովը Ս. Խաչ բերդից վիցե-կանցլեր Ա. Ի. Օստերմանին 1733 թ. դեկտեմբերին գրած նամակում նշում է հայազգի գնդապետ Լազար Խրիստաֆորովի մեծ դերը՝ որպես Հայկական էսկադրոնի հրամանատար ռուսների պարսկական կորպուսում և խնդրում է նրան արժանացնել «բարձր ողորմածությանն», քանի որ նա բարեհույս և շատ կարևոր անձնավորություն է կայսերական շահերի պաշտպանության համար։ Նույն բովանդակության գրությամբ Լևաշովը դիմում է Օստերմանին՝ ներկայացնելով Ավան Յուզբաշուն։ 1734 թ. Լազար Խրիստաֆորովին շնորհվում է գեներալի, իսկ Ավան Յուզբաշուն՝ «գլխավոր խանի» կոչում[41]։

Այսպես, XVIII դարի 30-ական թվականներին հայերը շարունակում էին օգնել Ռուսաստանին, կռվել Թուրքական դինակալման դեմ, թույլ չտալով, որ նրանք ամրապնդեն իրենց դիրքերը Անդրկովկասում ու Ռուսաստանի մատույցներում։ Նրանք գործակցում էին պարսիկների հետ, քանի դեռ նրանք կռվում էին իրենց երկիրը Թուրքերից ազատելու համար։ Բայց միշտ հայերն ու վրացիները նման գործակցությունը դիտում էին որպես ժամանակավոր դաշինք, քանի այդ համապատասխանում էր Ռուսաստանի (ուրեմն և Անդրկովկասի) շահերին։

Աննա Իվանովնայի (1730—1740) կառավարության քաղաքականությունը, 1732 թ. Ռեշտի և 1735 թ. Գանձակի պայմանագրերով ռուսական զորքերը Մերձկասպյան շրջաններից հետ քաշելու և դրանք նորից Պարսկաստանին ղիջելու փաստերն ինքնին խոսում էին այն մասին, որ Անդրկովկասն ազատելու և Ռուսաստանի տիրապետության կամ հովանավորության հարցը հանվում էր օրակարգից։ Անհետաձգ ու թեթևամիտ Աննա Իվանովնան ըստ էության թուլացրեց Ռուսաստանի դիրքերը Կովկասում։ Դրությունը հիմնականում նույնը մնաց հաջորդ կայսրուհու՝ Ելիզավետա Պետրովնայի կառավարման տարիներին (1741—1761), թեպետ հայ զինվորա-

41 Տե՛ս նույն տեղում, էջ 38, 39, 357—358։

կանները շարունակում էին մասնակցել Ռուսաստանի մղած պատերազմներին (1735—1739 թթ. ռուս-թուրքական, 1741—1743 թթ. ռուս-շվեդական, ապա 1756—1763 թթ. Յոթնամյա պատերազմին), ընդլայնվում էին ռուսահայ գաղթավայրերը և զարգանում էր առևտուրը, ստեղծվում են հայ վաճառականների նախաձեռնած արդյունագործական ձեռնարկություններ։ Շարունակվում էին հայերի քաղաքական կապերը Ռուսաստանի հետ։ Նրանք տեղյակ էին պահում Նադիր շահի Ռուսաստանի դեմ նախապատրաստությունների մասին։

Նադիր շահի բռնակալական ու թալանչիական քաղաքականությունը, քմահաճ դաժանությունները, ծանր հարկապահանջությունը, տևրության տարբեր մասերում սկսված ապստամբություններն ու միջֆեոդալական բախումները ստեղծել էին նոր ճգնաժամ, որը տարեցտարի խորանում էր և ավելի կործանարար դարձավ Նադիրի մահից հետո (1747 թ.)։

Այդ ժամանակաշրջանում ուժեղանում էին վրացական իշխանությունները, որոնց դիմադրությունը ջարդել չհաջողվեց Նադիրին և նրա հետնորդներին։ Վրաց թագավորներ Հերակլ II-ը (Կախեթի, 1744—1798) և Թեյմուրազ II-ը (Քարթլիի, 1744—1762) ոչ միայն սերտ կապերի մեջ էին Ռուսաստանի հետ, այլև պայքարում էին Վրաստանի ազատագրման ու միավորման համար։ Նրանց հետ համագործակցում էին ինչպես Վրաստանի, այնպես և ողջ Անդրկովկասի հայության ներկայացուցիչները՝ շատ հաճախ հանդես գալով որպես վրաց թագավորների և էջմիածնի գործիչներ։ Դարձյալ սկսվում են ուղղակի դիմումներ Ռուսաստանին՝ Հայաստանի և Վրաստանի ազատագրության գործին ձեռնարկելու մասին։

XVIII դարի 50-ական թվականների վերջերից սկսվում է ազատագրական պայքարի նոր շրջան, որը նշանավորվեց Ռուսական կայսրության հզորացմամբ, Վրաստանի պետականության վերականգնման և միավորման կարևոր փաստերով։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ: ՌՈՒՍԱՀԱՅ ԴԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

XVIII դարի երկրորդ կեսին, ինչպես և նախորդ դարերում Հայաստանը շարունակում էր մնալ արևելյան երկու բռնապետությունների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ։

Պարսկական տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանը հիմնականում ընդգրկված էր Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունների մեջ։ Նրա հյուսիսային որոշ շրջանները՝ Լոռի-Փամբակը և Շամշադինը մտնում էին իր անկախությունը պահպանող Արևելյան Վրաստանի Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության մեջ։ Անդրկովկասը, ինչպես և պարսկական պետության կազմի մեջ մտնող մյուս խանությունները, ենթակա էին շահի դերագույն իշխանությանը։ Սակայն այդ խանությունները, օգտվելով Պարսկաստանում ծայր առած գահակալական կռիվներից և միջֆեոդալական ներքին բախումներից, կենտրոնական պետության հանդեպ կիսանկախ վիճակ էին ձեռք բերել։

Արևելյան Հայաստանի կենտրոնական և մեծ մասը ընդգրկված էր Երևանի խանության մեջ, որն առանձնահատուկ կարևորություն ուներ, որպես կիսանկախ սահմանային կուսակալություն (սարդարություն)։ Երևանի խանությունը բաժանված էր տասնհինգ շրջանների՝ մահալների։

Խանության մեջ իբրև վարչական առանձին միավոր մտնում էր Երևան քաղաքը։ Քաղաքը անմիջականորեն կա-

ռավարում էր սարդարի կողմից նշանակված ոստիկանապետը (դարուղան)։

Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հայաստանում տնտեսական կյանքը գտնվում էր ծայրաստիճան հետամնաց վիճակում։ Ժողովրդի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր, իսկ լեռնային և նախալեռնային շրջաններում՝ անասնապահությունը։ Գյուղատնտեսությունը տարվում էր հին, նահապետական եղանակով։ Հողային տարածությունների մի զգալի մասը անմշակ էին մնում, անբերրիությունն ու սովը կրկնվում էին պարբերաբար։ Արհեստներն ու առևտուրը նույնպես գտնվում էին զարգացման խիստ ցածր մակարդակի վրա։ Հիմնական արտադրող դասակարգը՝ գյուղացիությունը և աշխատավորական մյուս խավերը, թուրք, պարսիկ թե հայ, ենթարկվում էին դաժան ճնշումների ու շահագործման։

Աշխատավորական զանգվածների շահագործումը կատարվում էր առաջին հերթին հարկահանության միջոցով։ Հարկերը բազմաթիվ էին ու բազմապիսի և վերցվում էին ինչպես բնամթերքով, այնպես էլ դրամով։ Հարկերի և տուրքերի թիվը հասնում էր 40-ի և գանձվում էին հողից, ջրից, արոտավայրերից, այգիներից, ամեն մի ծխից, չափահաս տղամարդուց (գլխահարկ) և այլն։

Աշխատավորության ճնշումն ու կեղեքումը չէր սահմանափակվում հարկերով ու տուրքերով։ Նրանք իշխող դասերի համար կատարում էին նաև ծանր աշխատանք՝ կոռ ու բեգար։ Գյուղացիները պարտավոր էին իրենց ընտանիքներով աշխատել աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների համար՝ բերդեր, շենքեր, պահեստներ, պարիսպներ կառուցել, ճանապարհներ գցել, առու հանել, հող մշակել և այլն։

Սոցիալական անողոք ճնշումներին ավելանում էին ազգային ու կրոնական հալածանքները։ Խանական ու փաշայական դաժան ռեժիմը ոտնահարում էր հայերի ամեն մի իրավունք։ Հայերը, ի տարբերություն մահմեդականների, անվանվում էին ռայա, այսինքն իրավազուրկ, ստորին դաս։ Իր ազգային պատկանելության ու դավանանքի համար նա վճարում

էր հատուկ հարկ՝ խարաջ։ Հայը իրավահավասար քաղաքացի չէր համարվում, զուրկ էր այն իրավունքներից, որ ուներ մահմեդականը։ Նրա վկայությունը դատարանում չէր անցնում, մահմեդականի առաջ նա պետք է գլուխ խոնարհեր, իր հագուստով տարբերվեր նրանցից։ Նա իրավունք չուներ ձի հեծնել, զենք կրել և այլն։

Ինչպես քրիստոնյա մյուս ժողովուրդներից, այնպես էլ հայերից կատարում էին մանկահավաքներ։ Ծնողներից բռնությամբ խլում էին դեղեցիկ աղջիկներին, ամուսիններից՝ կանանց, սուլթանի ու շահի, փաշաների կամ խանների հարեմների համար։ Թուրքիայում և Պարսկաստանում իշխող շերտերի և առաջին հերթին մահմեդական հոգևորականության կողմից ամեն կերպ խթանվում էր աղգային անհավասարությունը, վիրավորվում էր հայ ժողովրդի արժանապատվությունն ու նվիրական զգացմունքները։ Եթե որևէ մեկը փորձում էր պաշտպանել իր անձն ու պատիվը, նա խստորեն պատժվում էր այդ երկրներում սովորական դարձած բարբարոսական ձևերով։

Այլ խոսքով, սոցիալական ճնշումներից ու հարստահարություններից բացի, հայ ժողովուրդը ենթարկվում էր ազգային-կրոնական բիրտ հալածանքների։ Թուրքիայում ու Պարսկաստանում տիրող խժդժություններն, չարաշահումներն ու ապօրինությունները դժոխային պայմանների մեջ էին դրել ժողովրդական զանգվածներին։ Չկար կյանքի ու գույքի ապահովություն, չկային խաղաղ, ստեղծագործական աշխատանքի ամենատարրական պայմաններ։ Երկրի տնտեսությունը քայքայում ու լճացում էր ապրում։ Հայ ժողովրդի դրությունը դնալով ավելի էր վատթարանում, նրա հետագա զարգացումը կանգնում էր փակուղու առջև, նրա վրա կախված էր ֆիզիկական բնաջնջման վտանգը։

Քաղաքական առումով Հայաստանում իրավիճակը հետևյալ պատկերն ուներ։ Ֆեոդալական նախկին տները, որոնք նախորդ դարերում այս կամ այն չափով պահպանում էին իրենց կիսանկախ գոյությունը, վերացել էին։ Արևելյան Հայաստանում XVIII դարի կեսերին միայն Ղարաբաղում կա-

յին հինգ հայկական իշխանություններ կամ մելիքություններ՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի։ Նադիր շահի տիրապետության ժամանակ մելիքներն իրենց իշխանությունների սահմաններում փաստորեն անկախ տիրակալներ էին, ունեին սեփական զինված ուժ։ Իրանի շահին ենթակա լինելը արտահայտվում էր միայն նրան որոշ հարկ վճարելով։ Խամսայի (խամսա—հինգ) մելիքների միջև սերտ դաշնակցություն կար և այն ժամանակվա ֆեոդալական Անդրկովկասում նրանք համատեղ բավականին պատկառելի ուժ էին ներկայացնում։ Նադիր շահից հետո Իրանում ստեղծված անիշխանությունը բացասական հետևանքներ է ունենում հայ մելիքությունների համար։

Ղարաբաղի հարթավայրում հաստատված անասնապահությամբ զբաղվող թուրքական քոչվոր ցեղերը սկսում են թափանցել լեռնային արոտավայրերը և փորձում հաստատվել այնտեղ։ Ջիվանշիր ցեղի առաջնորդ Փանահը լեռնային Ղարաբաղում հաստատվելու նպատակով այնտեղ ամրություններ կառուցելու փորձեր է կատարում, սակայն ամեն անգամ հանդիպելով հայ մելիքների համառ դիմադրությանը, անհաջողության է մատնվում։ Այնուամենայնիվ հայ մելիքների զժտության պատճառով այդ խորամանկ ու դաժան խանը հասնում է իր նպատակին։

Վարանդայի մելիք Հովսեփին սպանում է նրա կրտսեր եղբայր Մելիք-Շահնազարը և իշխանությունը վերցնում է իր ձեռքը։ Մյուս մելիքների պատժից խուսափելու և իր իշխանությունը պահպանելու համար Մելիք-Շահնազարը ապավինում է Փանահ խանին, դառնում նրա հպատակը։ Վերջինս նրա տերիտորիայի անառիկ մասում 1752—1754 թթ. վերակառուցում է Շուշի բերդը և հաստատվում այնտեղ։ Այսպիսով, XVIII դարի 50-ական թվականներին ստեղծվում է Ղարաբաղի մահմեդական խանությունը, որը նկատելի դեր է սկսում խաղալ Անդրկովկասի կյանքում։ Հայ մելիքների մի մասը աստիճանաբար կախման մեջ են ընկնում նորաստեղծ խանությունից, մյուս մասին հաջողվում է պահպանել իր կիսանկախ գոյությունը։ Այսուհանդերձ խամսայի մելիքու-

բյունները դեռևս քաղաքական կշիռ ունեին և հարկ եղած դեպքում կարող էին զինվորական որոշ ուժ դուրս բերել։ Ահա թե ինչու ժամանակի հայ գործիչները Հայաստանի ազատագրման խնդրում հույսեր էին կապում հայկական պետականության այս վերջին բեկորների հետ։

XVIII դարի երկրորդ կեսին աշխուժանում է հայ եկեղեցու գործունեությունը, ազատագրական շարժման ընթացքում նա ևս իր հայացքը ուղղում է դեպի հյուսիս։ Հարաբերություններ են սկսվում էջմիածնի և ռուսական արքունիքի միջև։

Արևելյան Հայաստանը և հատկապես Վրաստանը մեծապես տուժում էին Կովկասի լեռնականների, մասնավորապես լեզգիների հաճախակի կրկնվող ավերիչ արշավանքներից։ Վրաստանը ի վիճակի չէր քիչ թե շատ կազմակերպված դիմադրություն ցույց տալ և պաշտպանվել ավազակային այդ հարձակումներից, ուստի դիմում է ռուսական պետության օգնությանը։ Այդ նպատակով Ռուսաստան է մեկնում վրաց Թեյմուրազ թագավորը։ Նույն ժամանակ, 1760 թ. հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցին հատուկ կոնդակով դիմում է Ելիզավետա Պետրովնա կայսրուհուն։ Նրանում նշվում էր, որ հայ և վրաց ժողովուրդները կախման մեջ են օտարերկրացիներից, իրանում սկսված անիշխանությունն հետևանով ավելացել են նրանց կրած դառնություններն ու տառապանքները։ Դրա հիմնական պատճառը լեզգիներն են, որոնք իրենց անդադար արշավանքներով մեծ ավերածություններ ու նեղություններ են պատճառում։ Ապա կաթողիկոսը խնդրում է ընդունել Թեյմուրազ թագավորին և իր վրա վերցնել հայերի և վրացիների հովանավորությունը. «Խնդրեմք, նոյնպես զազգս մեր ողորմելի և զազգն վրաց հոգալ»[1]։

Ուշագրավ է, որ հայոց կաթողիկոսը ռուսաց օգնությանն էր դիմում հավասարապես երկու քախտակից ժողովուրդների՝ հայերի ու վրացիների համար։ Հավանական է, Հակոբ Շամախեցու կոնդակը գրվել է վրաց թագավորների իմացությամբ, թերևս նրանց անմիջական խորհրդով, և

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1894, էջ 121։

նպատակ է ունեցել նպաստելու Թեյմուրազ թագավորի Պետերբուրգում վարելիք բանակցություններին[2]։ Բոլոր պարագաներում այդ փաստաթուղթը հանդիսանում է օգնություն ու հովանավորություն ստանալու իրենց հույսերը քրիստոնեական հզոր պետության՝ Ռուսաստանի հետ կապելու էջմիածնում տիրող քաղաքական մտայնության արտահայտությունը, նրա լավագույն դրսևորումը։

Էջմիածնի քաղաքական այդ գիծը շարունակվեց և դրծնական բնույթ ընդունեց հաջորդ կաթողիկոսի՝ Սիմեոն Երևանցու (1763—1780) օրոք։ Նա ժամանակի կրթված և մեծ եռանդի տեր հոգևորականներից էր։ Ազատագրական շարժման հարցերում Սիմեոն Երևանցին ժողովրդին և հատկապես էջմիածինը վտանգի չենթարկելու նպատակով առավել զգուշավոր քաղաքականություն էր վարում։

Հայոց կաթողիկոսը հարաբերությունների մեջ էր և գործակցում էր վրաց թագավոր Հերակլ II-ի հետ։ Էջմիածինն օգտվում էր Թիֆլիսի արքունիքի մտերմության հասնող լավ վերաբերմունքից։ Սիմեոն Երևանցին հաճախ խորհրդակցում, իր գործողությունները համաձայնեցնում էր Հերակլ թագավորի հետ, միջնորդի դեր կատարում Հերակլի, մանավանդ նրա և մահմեդական իշխողների միջև։ Հատկանշական է, որ ոչ միայն դարի երկրորդ կեսին, այլև գրեթե ամբողջ XVIII դարում հայերը ազատագրական պայքարի ընթացքում մշտապես գործակցում էին պետականություն ունեցող Վրաստանի հետ, այդ համագործակցության, համատեղ պայքարի և դրանից սպասվող օգնության մեջ տեսնում ազատության ու երկության ելքը։

Հարկ է նշել, որ հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման ընթացում էջմիածնի կաթողիկոսությունը ջանում էր իր իրավասությունները տարածել աստիճանաբար աճող և կարևոր դեր կատարող ռուսահայ բոլոր համայնքների վրա։ Մյուս կողմից ռուսական արքունիքը լավ էր ըմբռնում միակ համազգային կազմակերպության՝ հայ եկեղեցու կա-

---

2 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, стр. 73—74.

մեծ դերը իր ռազմաքաղաքական պլանները իրականացնելու գործում, ուստի և համակիր էր այդ ուղղությամբ նրա կատարած քայլերին։ Կաթողիկոս Ս. Երևանցին հատուկ պատվիրակություն է ուղարկում Եկատերինա II-ի մոտ և խնդրում ճանաչել էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի իրավասությունը ռուսահայերի վրա, վերջիններիս միավորել մի եկեղեցական թեմի մեջ, որը անմիջականորեն ենթարկվի էջմիածնին։

Եկատերինա II-ը պատշաճ ձևով ընդունում է հայ պատվիրակությանը, հատուկ հրովարտակով (1768 թ. հուլիսի 30-ին) էջմածնի կաթողիկոսության վրա է դնում Ռուսաստանում ապրող հայերի կրոնական թեմի ղեկավարությունը (1749 թ. Աստրախանի հայ եկեղեցին անջատվել էր էջմիածնից և ենթարկվում էր Գանձասարի կաթողիկոսությանը), որի կենտրոնն է դառնում Աստրախանը։

Սիմեոն Երևանցու և Եկատերինա II կայսրուհու փոխանակած գրություններով սկսված էջմիածնի և ռուսական արքունիքի կապերը հետագա տասնամյակներում ավելի ամրապնդվեցին՝ ի նպաստ Հայաստանի ազատագրման։

* * *

Հայտնի է, որ տակավին վաղ միջնադարից օտարի թալանչիական արշավանքների և դաժան տիրապետության հետևանքով Հայաստանում ստեղծված պայմաններից հարկադրված բնակչության մի մասը թողել է հայրենիքը և զանգվածաբար դիմել արտագաղթի։ Այս եղանակով աշխարհի տարբեր մասերում առաջացել են հայկական գաղթավայրեր, որոնցից շատերը դարեր շարունակ գոյություն են ունեցել՝ պահպանելով իրենց ազգային նկարագիրը։

XVIII դարի, ինչպես նաև XIX դարի մեր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի և մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ դեր են կատարել հատկապես ռուսահայ գաղութները։

Ինչպես արդեն նկատեցինք, տակավին XVIII դարի 20-ական թվականներին Ռուսաստանի համար ստեղծված

միջազգային անբարենպաստ պայմաններից ելնելով Պետրոս I կայսրը չկարողացավ անմիջական ռազմական օգնություն ցույց տալ հայ-վրացական ազատագրական շարժման ուժերին։ Դրա փոխարեն նա բարենպաստ պայմաններ է ստեղծում Ռուսաստան գաղթել ցանկացող հայերի համար։ 1724 թ. նոյեմբերի 10-ին Պետրոս Մեծը ստորագրում է մի հրամանագիր, որով Ռուսաստանի հարավային շրջաններում բնակվող հայերին մի շարք արտոնություններ է շնորհում։ Կայսերական հրամանագրով հայերին բնակատեղի էր հատկացվում Ռուսաստանին միացված մերձկասպյան տարածություններում, և գաղթողներին ցույց էր տրվում ամեն տեսակ աջակցություն։ Դրանից հետո մինչև դարավերջը, մասնավորապես Պետրոս Մեծի ակտիվ քաղաքականությունը որդեգրած Եկատերինա II կայսրուհու օրոք (1762—1796), հրապարակվեցին օտարերկրացիներին, այդ թվում և հայերին տնտեսական և իրավական նշանակալից առանձնաշնորհումներ վերապահող մի շարք կայսերական հրովարտակներ։

Թեպետև ռուսական կայսրերը հովանավորական քաղաքականության իրենց այդ ձեռնարկումները բացատրում էին քրիստոնյաների նկատմամբ ունեցած հատուկ «հոգատարությամբ», սակայն իրականում դրանք թելադրված էին այլ դրդապատճառներով։ Նման քաղաքականությունը բխում էր Ռուսաստանի տնտեսական և ռազմաքաղաքական շահերից։ Դրանով ռուսական արքունիքը հետամուտ էր այգեգործության, արհեստների և հատկապես առևտրի մեջ հմտացած ժողովրդի գանգվածներ հաստատելու միջոցով Հյուսիսային Կովկասի ու Հարավային Ռուսաստանի սակավաբնակ ու գրեթե ամայի տարածությունները բնակեցնելու, տնտեսապես յուրացնելու նպատակով։

Սահմանամերձ շրջաններում տնտեսական հենարան ստեղծելով, ցարիզմը միաժամանակ հովանավորում ու սիրաշահում էր Անդրկովկասի ժողովուրդներին և օգտվում նրանց ծառայություններից կայսրության հարավային սահմաններն ընդարձակելու, ռազմաքաղաքական իր հիմնական ու վաղե-

մի ձգտումները իրականացնելու համար։ Ռուսաստանի այդ քաղաքականությունն օբյեկտիվորեն համընկնում էր Թուրքական ու պարսկական բռնակալական տիրապետություններից ազատագրվելու Անդրկովկասի ժողովուրդների ձգտումներին և լայն արձագանք էր գտնում նրանց մեջ։

XVIII դարի 20-ական թվականներին ազատագրական շարժման պարտությունից հետո, Բշնամու դաժանություններից ու վրեժխնդրությունից փրկվելու համար մասնավորապես Ղարաբաղից ու Ջանգեզուրից զգալի թվով հայեր, օգտվելով Պետրոս Մեծի հրամանագրի ընձեռած հնարավորություններից, գաղթում են Ռուսաստան։ Այդ գաղթի հետևանքով Ռուսաստանի հարավային սահմաններում՝ Կովկասում հիմնադրված հայկական առաջին գաղութներից էր Ղզլարը։

Ղզլար ամրոցի հիմնադրումից մի քանի տարի անց 1730-ական թվականների կեսերին բավական թվով հայեր հաստատվում են այնտեղ, ստանում հողամասեր և զբաղվում երկրագործությամբ։ Ղզլար գաղթած հայերը ազատվում են զինվորական ծառայությունից պայմանով, որ շարունակեն բնակվել նույն տեղում և զբաղվեն հողագործությամբ։

1762 թ. վերանորոգվում է Ղզլարի ամրոցը և մի շարք ձեռնարկումներ են կատարվում քաղաքը և նրա շրջակայքը Կովկասի լեռնաբնակ ժողովուրդներով, ինչպես նաև հայերով ու վրացիներով բնակեցնելու ուղղությամբ։ Այդ շրջանում Ղզլարի հայ բնակչության մեջ կային 70—80 հայ զինվորականներ, որոնցից շատերը մասնակցում էին գաղութի հասարակական-քաղաքական կյանքին և հետաքրքրվում Հայաստանի բախտով։ XIX դարի սկզբներին Ղզլարի հայ բնակչության թիվը անցնում է չորս հազարից։

Ղզլարի հայկական գաղթավայրում արագորեն զարգացավ այգեգործության՝ հայերի համար ավանդական դարձած այնպիսի կարևոր ճյուղ, ինչպիսին էր խաղողագործությունը։ Դարի վերջերից խաղողի մշակումը այնպիսի մեծ չափեր էր ընդունել, որ հայերը տասնյակ հազարավոր դույլերով վաճառքի էին հանում դրանից ստացված գինին և հատկապես օղին։ Շնորհատպահության հիման վրա այնտեղ զարգացավ

մետաքսագործությունը։ Ղզլարում կար հատուկ «Հայկական շուկա», որտեղ աշխույժ առևտուր էր կատարվում Ռուսաստանի կենտրոնական նահանգներից, Կովկասի ու մերձկովկասյան այլևայլ շրջաններից ժամանած վաճառականների հետ։ Ռուսաստանի սահմաններում, այդ թվում և Ղզլարում հաստատված հայերի կյանքին տեղեկանալով, Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող բազմաթիվ հայեր ցանկություն էին հայտնում գաղթել Ռուսաստան։

1763 թ. կովկասյան գծի մյուս ամրություններուի շարքում, որպես սահմանամերձ ամրոց հիմնադրվում է Մոզդոկը։ Նույն տարում նրա բնակչությունը ստվարանում է Ղզլարից տեղափոխված հայկական զանգվածների հաշվին։ Հայերը մասնակցում էին քաղաքի շենարարությանը, զբաղվում արհեստներով և առևտրական նոանդոն գործունեություն ծավալում։ XVIII դարի վերջին քառորդում Մոզդոկը դառնում է Հյուսիսային Կովկասի առևտրա-տնտեսական կարևոր կենտրոններից մեկը։ 1785 թ. նա ստանում է գավառական քաղաքի իրավունք։ Այնտեղ բնակվող տարբեր ժողովուրդները, այդ թվում և հայերը, արդեն շատ հարցերում առաջնորդվում էին իրենց ազգային սովորություններով։ Դարավերջին քաղաքի հայկական բնակչությունը այնքան է աճում, որ կարիք է զգացվում կառուցելու երեք եկեղեցի։

XVIII դարի երկրորդ կեսին նոհատելիորեն աճեց ու զարգացավ Ռուսաստանի ամենահին հայկական համայնքը՝ Աստրախանի գաղթօջախը։ Հայերը այնտեղ հաստատվել էին դեռևս XVI դարից։ Համեմատաբար կարճ ժամանակում նրանց քանակը այնքան է ստվարանում, որ XVII դարի առաջին քառորդում նրանք արդեն ունեին հատուկ առևտրական հրապարակը, առևտրական իջևանը և գերեզմանատունը։ Աստրախանի հայերը ազատված էին պետական ծառայություններից։ 1746 թ. նրանց տրվեց վարչական լիազորություններից օգտվող սեփական դատարան ունենալու իրավունք, իսկ երկու տասնամյակ անց ցարական հատուկ հրամանագրով թույլատրվեց հիմնելու իրենց մագիստրատը (ինքնավարության վարչական մարմինը)։

Աստրախանի հայերը նույնպես զբաղվում էին խաշ-
ղագործությամբ ու գինեգործությամբ, սակայն նրանց հիմ-
նական զբաղմունքը արհեստագործությունն ու առևտուրն էին։

Ռուսաստանում մեծ նշանակություն էր տրվում հում մետաքսի արտադրությանը։ Տնտեսության այս ճյուղում գլխավոր դեր էին կատարում հայ մանուֆակտուրերը։ Մետաքսի արտադրության մեջ հայերի դերը այնքան ակնառու էր, որ չուվաշները այն անվանում էին «հայկական մետաքս»։ Տա-
կավին Պետրոս Մեծի ժամանակվանից, որքան էլ Ռուսաս-
տանում հայրենական մետաքսագործության ստեղծելու նպա-
տակով խրախուսվում էր մետաքսի արտադրությունը, այնու-
հանդերձ չէր թուլարտվում եղած պահանջը և ներմուծումը մնում էր որպես մետաքսի մատակարարման հիմնական մի-
ջոց։ Դրան և առհասարակ առևտրին նպաստելու նպատակով XVIII դարում կայսերական մի շարք հրամանագրերով բա-
րենպաստ պայմաններ էր ստեղծվում արտասահմանի, մաս-
նավորապես Պարսկաստանի հետ առևտուր անող հայ վա-
ճառականների համար։ Հայերի դերը մեծ էր մանավորա-
պես մետաքսի ներմուծման ու մշակման գործում։ Աստրա-
խանի վրայով Ռուսաստան հասնող մետաքսի մեծագույն մասը՝ 70—80 տոկոսը, ներմուծվում էր Աստրախանի հա-
յերի միջոցով։ Կասպից ծովի ու Վոլգայի վրայով արևելյան երկրների հետ հայ վաճառականների առևտրական գործարք-
ները այնքան ընդարձակվեցին, որ Աստրախանի հայ վա-
ճառականները իրավունք ստացան սեփական նավեր ունե-
նալու։ 1741 թ. Ղուկաս Շիրվանովին թույլատրվում է վա-
ճառականության համար նավեր կառուցել։ 1773 թ. Կասպից ծովով առևտուր անելու և ծովային նավեր կառուցելու թույլտ-
վություն է ստանում աստրախանցի Գրիգոր Կամպանովը։ Քաղաքի տնտեսական կյանքում հայերի խաղացած կարևոր դերով է բացատրվում այն հանգամանքը, որ 1779 թ. կառա-
վարական հրամանագիր է հրապարակվում Աստրախանում արտոնյալ վարկավորումով հատուկ հայկական բանկ հիմնե-
լու մասին։

Հումքի և վաճառահանման շուկաների մոտիկությունն

ու հարմարավետությունը նպաստեցին Աստրախանի՝ XVIII դարում Ռուսաստանի մետաքսյա ու բամբակյա գործվածքների արտադրության նշանավոր կենտրոն դառնալուն։ 1734 թ. հայերը այնտեղ առաջին մետաքսագործական մանուֆակտուրան են հիմնում։ Արդեն 1787 թ. Աստրախանում հաշվվում էր 38 մետաքսագործական և 85 բամբակե գործվածքների ֆաբրիկա, որոնք ունեին շուրջ 968 դազգահ։ Դրանց ճնշող մեծամասնությունը, մանավանդ փոքրածավալ մետաքսագործական արհեստանոցները պատկանում էին տեղի հայերին[3]։

Նշանակալից են եղել Ռուսաստանի կարևորագույն երկու կենտրոնների՝ Մոսկվայի ու Պետերբուրգի հայ գաղթավայրերի դերը։ Տակավին XVI դարում կազմավորված Մոսկվայի հայկական գաղութը սովարանում և կարևորություն է ստանում հատկապես XVII դարի 60-ական թվականներից, Մոսկվայի և «Հայկական առևտրական ընկերության» միջև կնքված պայմանագրից հետո։ 1667 թ. կնքված պայմանագրի շնորհիվ Մոսկվան փաստորեն դարձավ հայ վաճառականների, նրանց գործակալների, արհեստավորների, ծառայողների զգալի մասի հանգրվանն ու գործատեղին։ Առևտրական այդ պայմանագրով մաքսային, հարկային և այլ կարգի նպաստավոր պայմաններ էին ստեղծվում հայերի համար։ Վեճերի և բյուրիմացությունների դեպքում հայերը դիմում էին Ռատուշա, հաճախ՝ դեսպանական ատյան։ Հարցի լուծմանը մասնակցում էին Մոսկվայի հայ ավագանու ներկայացուցիչները։ Կյանքի ու գույքի ապահովությունը, առևտրի ու արդյունագործության մեջ հայերին տրված առանձնաշնորհումները մեծապես նպաստում և ուժեղացնում էին նրանց ներհոսը Մոսկվա։ Բազմաթիվ հայ ընտանիքների հետ Մոսկվա է տեղափոխվում նաև Լազարյանների գերդասատանը, որը XVIII դարի առաջին կեսում Նոր Ջուղայից գաղթել և հաստատվել էր Աստրախանում։

Մոսկվայում մետաքսագործական ֆաբրիկա ուներ հայ

---

3 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 410։

նշանավոր վաճառական Վասիլի Խոստատովը։ Նա 1755 թ. Մոսկվայում ստեղծված առաջին ակցիոներական (բաժնետիրական) ընկերության դիրեկտորն էր։ Այդ ընկերությունը Դոնի Ռոստովի բնիներնիկ նավահանգստից Սև և Միջերկրական ծովերով առևտրական գործառնություններ էր կատարում Կոստանդնուպոլսի, Իտալիայի, Վենետիկի և արտասահմանյան այլ երկրների ու քաղաքների հետ։ 1760-ական թվականներին Մոսկվայի երեք մետաքսագործական ֆաբրիկաներ պատկանում էին հայերին, իսկ երկուսում էլ նրանք հանդես էին գալիս որպես բաժնետերեր[4]։ XVIII դարի 70-ական թվականներին Մոսկվայում կառուցվում է երկրորդ հայկական եկեղեցին։ Հատկապես XVIII դարի վերջին քառորդից սկսած որոշակի է դառնում Մոսկվայի հայկական գաղթօջախի առաջավոր դերը ռուսահայերի և ամբողջ հայ ժողովրդի մշակութային ու հասարակական կյանքում։

Պետերբուրգի հայկական գաղութը Մոսկվայի նման իր բնակչության քանակով խիստ համեստ ու փոքրաթիվ էր, սակայն մեծ էր նաև նրա հասարակական դերը։

Պետերբուրգում հայերը հաստատվում են քաղաքի հիմնադրման առաջին տասնամյակներին։ Այնտեղ բնակություն են հաստատում առաջին հերթին հայ վաճառականները, որոնք հիմնում են իրենց առևտրական գրասենյակները և Բալթիկ ծովով առևտուր անում եվրոպական երկրների հետ։

Նևայի ափերին հիմնադրված ռուսական նոր մայրաքաղաքի հետզհետե աճող դերի հետ մեկտեղ աճում էր նաև հայ աղգաբնակչությունը։ Վաճառականների կողքին հանդես են գալիս արհեստավորներ, արդյունաբերողներ, թարգմանիչներ և զանազան բնույթի այլ ծառայողներ։

Սկզբնապես Պետերբուրգի հայկական գաղթավայրն սկսեց կազմավորվել Վասիլևյան կղզում։ Հայերից առաջին հողամասը այնտեղ ձեռք է բերել Լուկա Շիրվանովը։ 1750-ական թվականներին նոր մայրաքաղաքում հաստատվեցին հայ վաճառական Աբոտեմի Շերիմանը, նորջուղայեցի

---

4 Նույն տեղում, էջ 427։

Խախանով եղբայրները, իսկ 60-ական թվականներին Պետերբուրգ է գալիս և իր առևտրական գրասենյակը հիմնում Հովհաննես Լազարյանը[5]։

Պետերբուրգում հայերն ունեին բավական թվով մետաքսագործական ֆաբրիկաններ, որտեղ արտադրվում էին արևելյան զանազան տիպի գործվածքներ։ 1779 թ. կառուցվում է Պետերբուրգի մինչև այժմ կանգուն Կատարինեի, իսկ մեկ տասնամյակ անց ս. Հարություն եկեղեցիները։ Ռուսահայ մյուս գաղթավայրերի նկատմամբ ունենալով կենտրոնական դիրք և մոտ գտնվելով ռուսական կառավարական շրջաններին, Պետերբուրգի հայկական գաղութը կարևոր դեր էր կատարում մինչև հայ-ռուսական քաղաքական հարաբերություններում, այնպես էլ ռուսահայ մյուս գաղթավայրերի հետ ունեցած տնտեսական ու մշակութային կապերում։

XVIII դարի վերջին քաոորդում հայկական նոր գաղթավայրեր են առաջանում հարավային Ռուսաստանում։ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Սև ծովի հյուսիսային առափնյա շրջանները Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց բացի, Ղրիմի թաթարական խանությունը թուլացնելու, այն Ռուսաստանին միացնելու և հարավի ընդարձակ տափաստանները բնակեցնելու, տնտեսական կյանքը աշխուժացնելու նպատակով 1778 թ. գեներալ Ա. Սուվորովի գլխավորությամբ կազմակերպվեց Ղրիմի շուրջ 12.600 հայերի գաղթը։ Ղրիմահայերը հաստատվեցին Դոն գետի ձախ ափին, Դմիտրի Ռոստովսկու ամրոցից (այժմ՝ Ռոստով քաղաք) չորս կմ հեռավորության վրա և հիմնադրեցին Նոր Նախիջևան քաղաքը և նրա մոտակայքում Զալթր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նեսվիտա գյուղերը։

Ինչպես ուրիշ դեպքերում, այս անգամ ևս ռուսական կառավարությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում իր տիրապետության սահմաններում հանգրվանած հայ զանգվածների համար։ Եկատերինա II թագուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով Դոնի ավազանում հաստատված

---

5 Նույն տեղում, էջ 429—430։

ղրիմահայերին տրվում էր տնտեսական ու իրավական նշանակալից առանձնաշնորհումներ։

Կովկասի նախադռներում հաստատված Նոր Նախիջևանը ուներ տնտեսական կյանքի զարգացման համար նպաստավոր բնական պայմաններ և աշխարհագրական հարմար դիրք։ Դոնի շրջանում հանգուցավորվում էին ցամաքային ու ջրային առևտրական ճանապարհները, որոնք ամբողջ հարավային Ռուսաստանի համար բացառիկ կարևորություն ունեին։ Դրա շնորհիվ Նոր Նախիջևանը առևտրատնտեսական գործունեությամբ կապվում էր ինչպես Ռուսաստանի կենտրոնական նահանգների և Կովկասի լեռնականների հետ, այնպես էլ Ազովի և Սև ծովերի միջոցով՝ եվրոպական և ասիական մի շարք երկրների հետ։

Դոնի հայկական գաղթավայրում լայն զարգացում են ապրում արհեստները, հատկապես կաշեգործությունը, դարբնությունը, պղնձագործությունը և հայերի համար ավանդական դարձած ոսկերչությունն ու արծաթագործությունը։ Արհեստներն այնքան են աճում ու մասնագիտացվում, որ արհեստավորները ստեղծում են իրենց հատուկ կազմակերպություննե՚ր՝ համքարություններ։ Նոր Նախիջևանի արհեստավորական համքարությունները տեղի, ռուսական միջավայրի ազդեցությունը կրելով հանդերձ, իրենց ներքին կառուցվածքով, վարք ու բարքով հար և նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին։

Դոնի հարթավայրի բերքատու հողերն ու արոտավայրերը նպաստում էին երկրագործության ու անասնապահության զարգացմանը։ Երկրագործության մեջ առաջատար նշանակություն ունեին հացահատիկային կուլտուրաների մշակումն ու այգեգործությունը։ Հայերը իրենց հետ բերին և Դոնի ափամերձ շրջաններում մեծաքանակ բոժոժների առաջին տարածողները եղան։

Հայկական գաղութում մեծ ծավալ ընդունեց և նկատելի վերելք ապրեց ներքին ու արտաքին առևտուրը։ Դոնի հայերը առևտրական ապրանքներով ողողում էին ոչ միայն Ռոստովի, Նովոչերկասկի ու Տագանրոգի շուկաները, այլև

Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի և այլ քաղաքների առնավաճառներ։ Նովորոսիայի (Հարավային Ռուսաստանի) առևտրական վայրերում և մասնավորապես Հյուսիսային Կովկասում նրանք իրենց խանութներն ու կրպակներն ունեին, ուր ամբողջ տարվա ընթացքում աշխույժ առևտուր էին անում։ Արտաքին առևտրի կարևոր ապրանքներից էր հացահատիկը, անասունների ճարպը և յուղը։ Եվրոպայում հայտնի էր և բարձր էր գնահատվում Չալթրի ցորենը։ Հայ վաճառականները, ծանոթ լինելով արևելյան լեզուներին ու բարքերին, հաջողությամբ աշխույժ առևտուր էին անում ասիական մի շարք երկրների հետ։

Առևտրի և արհեստագործության շնորհիվ հարստացած հայերը սկսում են կառուցապատել ու բարեկարգել Նոր Նախիջևանը և հայկական գյուղերը։ Քաղաքը կառուցվում է նախապես մշակված նախագծի համաձայն։ Նրա կենտրոնական մասում առանձնացվում է ընդարձակ քառակուսի հրապարակ, որի երկու կողմերում հիմնվում են առևտրական խանութաշարքեր և արհեստավորական գործատներ։ Փողոցները կառուցվում են ուղղաձիգ դիրքով և խաչաձևելով իրար ստեղծում են հավասար մեծության քառակուսի թաղամասեր։ Հատկանշական է, որ շատ նշանավոր գործիչներ, այցելելով Հարավային Ռուսաստան, մեծ գովեստով են խոսել Դոնի հայկական գաղութի, Նոր Նախիջևանի մասին և համարել այն երկրամասի լավագույն քաղաքներից մեկը։

Ակադեմիկոս Ս. Պալլասը 1793 թ. շրջել է Հարավային Ռուսաստանում և իր ճանապարհորդական ուղեգրություններում գրել է. «Նախիջևանի բնակիչների մեծ մասն ապրում է այժմ կղմինդրածածկ քարաշեն լավ տներում։ Բացի այդ, նրանք սեփական միջոցներով կառուցել են քաղաքային դուման (մադիստրատ— Վ. Բ.), նրա առաջ գեղեցիկ քառակուսի մի հրապարակ, որը շրջապատված է կրպակներով։ Այստեղ կարելի է գնել նրանց արտադրած մթերքները՝ սննդի ամեն տեսակի պաշար և հաց։ Այդ բոլոր մթերքների վաճառքը հարևան օկրուգում շատ մեծ է, որովհետև կազակների մեջ քիչ արհեստագործներ կան։

Այնտեղ կա երեք եկեղեցի, չհաշված քաղաքից ութ վերստ հեռավորության վրա գտնվող սրբատաշ քարով կառուցված վանքը։ Դեպի Ռոստովի ամրոց տանող փողոցները ձգված են ուղիղ և Դոն գետին զուգահեռ։ Տները կառուցված են մեկը մյուսից բավականին հեռու։ Փայտե տները կավածեփ են և ծածկված կղմինդրով և այդպիսով ապահովված են հրակից։ Շատ գոհ մնալով այդ գաղութի ծաղկող վիճակից ես ուղևորվեցի ս. Դմիտրի Ռոստովսկու ամրոցը»[6]։

1812 թ. Հայրենական պատերազմի հերոս Ն. Ն. Ռաևսկին 1820 թ. ամռանը Ա. Ս. Պուշկինի հետ այցելում է Նոր Նախիջևան և իր օրագրում գրանցում հետևյալը. «Ամրոցի մյուս կողմը կա մեկ ուրիշ արվարձան կամ Նախիջևան անվանվող հայկական քաղաք՝ ընդարձակ, բազմամարդ և առևտրով խիստ հարուստ։ Կենցաղով, կառուցումներով, դեմքերով, հագուստով, ամեն ինչով ինքնատիպ է»[7]։

Դրիգորիոպոլի հայկական գաղութի հիմնադրումը կապվում է ռուս-թուրքական հաջորդ, *1787—1791* թվականների պատերազմի հետ։ Յաշի հաշտության պայմանագրի համաձայն թուրքական տիրապետության տակ գտնվող Մոլդավիայից ու Բեսարաբիայից գաղթած շուրջ 4000 հայեր նախապես տեղավորվում են Դուբոսար քաղաքում, ապա Դնեստր գետի ավազանում հիմնադրում են Դրիգորիոպոլ քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Իոսիֆովկա և Վասիլևկա գյուղերը։ Քաղաքի համակարգված հիմնադրումը տեղի է ունենում *1792* թ. հունիսին։ Դրիգորիոպոլի հայկական գաղութը ռուսահայ մյուս գաղթավայրերի նման առևտրատնտեսական ու մշակութային աշխույժ կյանք ունեցավ[8]։

1797 թ. հայ գաղթականների *3500* հոգուց բաղկացած մի բազմամարդ խումբ անցնում է Կովկասյան լեռնաշղթան և նրա մեծ մասը հին ամրոցի տեղում հիմնում է Սուրբ Խաչ

---

6 «Записки Ростовскоо на Дону общества истории, древностей и природы», т. II, Ростов, 1914, стр. 204.

7 «Архив Раевских», т. I, СПб., 1908, стр. 519—520.

8 *Տե՛ս Ж. А. Ананян,* Армянская калония Григориополь, Ереван, 1969.

(այժմ՝ Բուդյոնովսկ) քաղաքը և սոանում առևտրով ու արհեստներով ազատորեն զբաղվելու իրավունք։

Այս շրջանում ստվարանում է Դերբենտի հայաբնակ գաղութը, հայկական համայնքներ են առեղծվում Ստավրոպոլում, Գեորգիևսկում, Եկատերինոդարում (Կրասնոդար) և Հյուսիսային Կովկասի այլ վայրերում։

1783 թ. Ղրիմը Ռուսաստանին միացվելուց հետո տեղի հայ գաղթավայրերը, որոնք թուլացել ու մարելու վտանգի առակ էին, թերակղզին վերադարձող հայ բնակչության ներհոսքի շնորհիվ, աստիճանաբար սկսեցին վերակենդանանալ և աշխույժ ապրել։ XVIII դ. վերջին և XIX դարի սկզբներին արդեն ղրիմահայ գաղութները ապրում էին տնտեսական և իրավական լիաթոք կյանքով։

Վերը հիշատակված հայկական գաղթավայրերը ստացան տնտեսական և իրավաքաղաքական արտոնություններ։ Նորահաստատ գաղութները տասը տարով ազատվում էին բոլոր տեսակի հարկերից, ռուսական զորքին օթևան և պարեն հատկացնելու պարտավորություններից (պոստոյ), զինվորակոչությունից (ռեկրուտ)։ Երկրագործներին հատկացվեցին բավարար քանակությամբ հողատարածություններ։ Հայ զանգվածներին իրավունք էր վերապահվում երկրի ներսում ու նրա սահմաններից դուրս առևտուր անել, մրգատու այգիներ գցել, գործարաններ ու ֆաբրիկաներ հիմնել։ Մի խոսքով խրախուսվում ու պայմաններ էին ստեղծվում առևտրի, երկրագործության, արհեստների ու արդյունաբերության զարգացման համար՝ հայերի ցանկությունների և ունակությունների համապատասխան։

Ավելորդ չէ նկատել, որ ռուսական կայսրների՝ Պետրոս Մեծի, Եկատերինա II-ի, ապա Պավել I-ի (1799 թ.) և Ալեքսանդր I-ի (1801 թ.) կողմից վերահաստատված շնորհագրերի տնտեսական կյանքին վերաբերող մասը գործունեության լայն հնարավորություններ էր ստեղծում առաջին հերթին հայ առևտրաարդյունաբերական վերին խավերի համար։

Ռուսահայ գաղութներին իրավունք էր վերապահվում

գաղութի ներքին գործերը վարել հայերեն լեզվով, ազգային սովորութիւնների ու իրավական նորմերի հիման վրա։ Նրանց տրվում էր դատաստանքի ազատություն, թույլատրվում էր կառուցել սեփական եկեղեցիներ, ազատորեն կատարել հայկական եկեղեցական ծիսակատարությունները, կրոնական հարցերում ենթարկվել միայն Էջմիածնի Մայր Աթոռի հոգևոր գերիշխանությանը։

Տրված առանձնաշնորհումների հիման վրա և նրանց ընձեռած հնարավորությունների սահմաններում ձևավորվում է հայ գաղթավայրերի ինքնավարությունը։ Խոշոր համայնքներում ստեղծվում են մագիստրատներ կամ ռաթհաուզներ, որոնք իրականացնում էին գաղութի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները։ Օրինակ, Նոր Նախիջևանի հայկական մագիստրատը բաղկացած էր հինգ անդամներից, որոնք ընտրվում էին ժողովրդի բոլոր խավերի կողմից։ Նրանցից մեկը համարվում էր մագիստրատի նախագահ, երկու հոգի զբաղվում էին դատական գործերով, իսկ մյուս երկուսը՝ ոստիկանության խնդիրներով։ Մագիստրատն ուներ իր հատուկ կնիքը, իսկ գաղութը՝ իր առանձին գերբը։

Հայկական գաղթավայրերում ներքին գործերը տարվում էին հայերեն, ազգային օրենքների ու ավանդությունների համաձայն, որը իր մարմնավորումն էր ստացել «Աստրախանի հայոց դատաստանագրքում»։ «Դատաստանագիրքը» կազմել էին ժամանակի կրթված ու առաջավոր գաղափարների տեր Աստրախանի քնակիչներ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը և Սարգիս Օհանյանը։ Նրանք 1765 թ. ավարտում են «Դատաստանագրքի» վրա կատարվող տարիների աշխատանքը և դրանով իսկ ստեղծում հայ իրավունքի պատմության նշանավոր հուշարձաններից մեկը[9]։

«Դատաստանագրքի» հեղինակները թեպետև իրենց օգտագործած գրավոր աղբյուրներից առաջինը հիշատակում

9 Տե՛ս Ֆ. Գ. Պողոսյան, *Աստրախանի հայոց դատաստանագիրքը*, Երևան, 1967։

ևն բյուզանդական Հուստինիանոս կայսեր օրենսգիրքը, սակայն դրա վրա առանձնապես ղեկացվում է ազգային սովորութային նորմերի, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և ռուսական միջավայրի ազդեցությունը։ «Աստրախանի» կամ «Հայոց դատաստանագիրքը» իր ստեղծման առաջին տասնամյակներից շուրջ մեկ հարյուրամյակ գործածվել է ոչ միայն Աստրախանի, այլև Նոր Նախիջևանի, Ղզլարի, Մոզդոկի գաղութներում։

Ռուսահայ գաղթավայրերը իրենց կուլտուր-կրթական հաստատություններով և այդ ասպարեզում ունեցած գործունեությամբ կարևոր դեր կատարեցին ռուս և հայ ժողովուրդների հոգևոր շփումների ու փոխազդեցությունների գործում։ Ռուսահայ զանգվածները տնտեսական աշխույժ կյանքին զուգահեռ նկատելի հաջողություններ հասան լուսավորության ու մշակույթի բնագավառում։ Ռուսահայ գաղթավայրերի մշակութային կյանքը, փաստորեն սկսվում է XVIII դարի վերջին քառորդից։ Դպրոցներ հիմնելու և մատաղ սերընդին ուսուցանելու և դաստիարակելու խնդիրը միշտ էլ հուզել է հայ զանգվածներին, սակայն այն իրականացնելու համար պայմաններ են ստեղծվում միայն 80-ական թվականներից։

Հիրավի, Աստրախանի հայկական առաջին ուսումնական հաստատությունը դա հոգևոր վարժարանն էր, որը հիմնվում է 1780-ական թվականների սկզբներին։ Այդ նույն տարիներին առաջին վարժարաններն են հիմնվում Նոր Նախիջևանում և նրա մերձակայքում գտնվող հայ մշակույթի նշանավոր կենտրոն Ս. Խաչ վանքում։ Վերջինս Գ. Պատկանյանը համարում էր հայկական առաջին գիշերօթիկ դպրոցը[10]։ Մինչև դարավերջ բացվում են մի շարք ուսումնարաններ ևս։

XIX դարի առաջին տասնամյակում Աստրախանում բացվում է ժամանակի պահանջները բավարարող Աղաբաբյան ուսումնարանը, որը գոյատևեց ավելի քան հարյուր տարի։ 1816 թ. Աստրախանում լույս տեսավ հայկական յոթերորդ,

10 Տե՛ս «Արար», 1911, № 4։

իսկ ռուսահայ առաջին պարբերականը՝ «Արևելյան ծանուցմունքը»։ 1806 թ. Գրիգորիոպոլում Մ. Կյումուշխանցու ջանքերով բացվում է ծխական դպրոց, իսկ տասը տարի անց դպրոցներ են հիմնվում Ղարասուբազարում և Ղրիմի հայաշատ այլ վայրերում։

Ուսումնարանների համար մանկավարժներ են հրավիրվում, դպրոցների ուսուցման կանոններ մշակվում։ Ռուսահայերի և առհասարակ հայ իրականության մտավոր կյանքում մեծ է 1815 թ. Մոսկվայում հիմնադրված ուսումնարանի՝ Լազարյան ճեմարանի դերը։ Ճեմարանը շուտով դարձավ այն հիմնական օջախը, որտեղ ֆրենց կրթությունը շարունակում էին հայ գաղթավայրերի վարժարանների ուշիմ սանները և հաղորդակից դառնում ռուսական մշակույթին։ Ճեմարանը, մասնավորապես, սովորող ռուս պատանիների միջոցով ռուս հասարակայնությանը հաղորդակից էր դարձնում հայկական մշակույթին ու պատմությանը։ Այդ իմաստով էլ ռուսահայ կուլտուր-կրթական հաստատությունները և առաջին հերթին Լազարյան ճեմարանը կարևոր դեր կատարեցին։

Դպրոցներին անհրաժեշտ էին ուսուցիչներ, դասագրքեր, բառարաններ և առհասարակ գրականություն, ուստի և նրանց գոյությունը աննկատելի էր առանց տպարանի։ Ահա թե ինչու դպրոցների հիմնադրման հետ միաժամանակ ռուսահայերը հիմնեցին նաև տպարան։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հրատարակչական գործի ծաղկությունը ընկած էր Խալդարյանի տպարանի վրա[11]։ Գրիգոր Խալդարյանը Նոր Ջուղայի նշանավոր վաճառականի ընտանիքից էր։ Նա հաստատվում է Լոնդոնում, ձուլել է տալիս հայկական տառեր և 1780 թ. հայ եկեղեցու դավանանքի վերաբերյալ մեկ գիրք տպագրելուց հետո, հաջորդ տարին, տպարանը տեղափոխում է Պետերբուրգ։ Ռուսաստան տեղափոխվելը ամենևին պատահական երևույթ չպետք է համարել, այնտեղ պարարտ հող կար տպարանի

11 Տե՛ս Վ. Բարխուդարյան, Ռուսահայ առաջին տպարանը, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4։

գործունեության համար և այդ ընտրությունը միանգամայն համահնչյուն էր ժամանակի ոգուն։ Հ. Արղությանի ջանքերով Խալդարյանի տպարանը Ռուսաստանում կարողացավ գործել քսան տարի (1781—1789 թթ.՝ Պետերբուրգում, 1790—1795 թթ.՝ Նոր Նախիջևանում, 1796—1800 թթ.՝ Աստրախանում) և այդ ընթացքում տպագրեց ավելի քան քառասուն գիրք։

Կարևորը, սակայն, միայն տպարանի արդասավոր գործունեությունը չէ, մի հանգամանք, որը դրեթե անխտիր շեշտում են ուսումնասիրողները, այլ այն, թե ինչպես էր հրատարակված գրքերով տպարանը արձագանքում ժամանակի լուսավորության ու հասարակական-քաղաքական հուզող հարցերին։ Հիրավի, դժվար է պատկերացնել, որ տպագրական այն ժամանակվա պարզունակ տեխնիկայի ու դժվարությունների պայմաններում, երբ յուրաքանչյուր գրքի տպագրումը հայ մշակութային կյանքում խոշոր իրադարձություն էր, աշխատությունները հրատարակվելին առանց խիստ ընտրության ու որոշակի նպատակի։ Տպագրված գրքերին և այդ առթիվ եղած գրագրություններին ծանոթանալուց ակներև է դառնում, որ Խալդարյանի տպարանի հրատարակչական գործունեությունը ծառայեցվում է հետևյալ հիմնական խնդիրներին։ Նախ, տպարանը մեծապես նպաստում էր լուսավորության գործին, ռուսահայ գաղթավայրերի մատաղ սերնդի կրթության պահանջներին։ Այն դասագրքերով ու ձեռնարկներով ապահովում էր հիմնադրված և հիմնադրվելիք դպրոցները։ Տպարանը հրատարակած գրքերի միջոցով սեր էր ստեղծում դեպի ուսումն ու գիտությունը։ Դրանցից բացի, տպարանից դուրս եկած գրքերը օգնում էին հայկական զանգվածներին, մասնավորապես նորահաստատ գաղութներիր բնակչությանը ռուսերին սովորեցնելու, գործնական կյանքում նրանց դյուրություն ընձեռելու խնդրին։

Տպարանը արտասահմանից Պետերբուրգ տեղափոխելու հենց առաջին տարում՝ 1781 թ. լույս է տեսնում «Տետրակ այբբենական» ձեռնարկը։ Ազատագրական շարժման նշանավոր ներկայացուցիչ Մովսես Սարաֆյանի դուստր՝ Կլեոպատ-

ցա Սարաֆյանը հրատարակում է «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» աշխատությունը, որ ռուսաց լեզու սովորեցնելու առաջին հայերեն ինքնուսույցն էր։ Հրատարակվում է Գ. Խալդարյանի կազմած հայ-ռուսերեն բառարանը և այլն։

Ռուսահայերի տպագրական-հրատարակչական գործի հիմնական խնդիրներից մեկը հայ ազատագրական շարժման նպատակներին ծառայելը, հայերին ռուսաց պատմությանն ու կուլտուրային ծանոթացնելը, նրանց մեջ ռուսական կողմնորոշումն ամրապնդելու, հյուսիսային հարևանի նկատմամբ համակրությունը ուժեղացնելու ձգտումն է եղել։ Խալդարյանի տպարանից դուրս եկած կամ հրատարակության նախապատրաստված աշխատությունների ցանկն անգամ շատ բան է ասում։ Այսպես, 1787 թ. հրատարակության է պատրաստվում Եղիշեի «Պատմութիւն Վարդանանցը»՝ հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարի կոչող երկը։ Մի քանի տարի անց հրատարակվում է Ստեփանոս Սյունեցու «Ողբ և հառաչանք» աշխատությունը, ուր հեղինակը նկարագրելով իր երկրի ժողովրդի տարաբախտ վիճակը, բոլոր ղևնքի ունակ մարդկանց կոչ է անում պայքարի ելնել տիրողների դեմ։ Ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հ. Արղությանը հատուկ նամակով ողջունում էր Մարգար Երևանցուն՝ Շահամիր Շահամիրյանի գիրքը թարգմանելու և տպագրության պատրաստելու համար, և միաժամանակ հույժ կարևոր էր համարում Դավիթ-Բեկին նվիրված աշխատության հրատարակությունը։ Նա 1786 թ. Գ. Խալդարյանին հայտնում էր Պետրոս Մեծի համառոտ պատմության մասին և խնդրում 600 օրինակ հայերեն և ռուսերեն, 400 օրինակ միայն հայերեն լեզվով տպագրել և ուղարկել իրեն արտաքին երկրներ առաքելու համար[12]։ Միաժամանակ աշխատանք էր տարվում ռուսական շրջաններին հայկական իրականության ծանոթացնելու համար։

Հրատարակված գրքերը բազմաթիվ օրինակներով իրացվում էին առաջին հերթին ռուսահայ գաղութներում՝ Կովկա-

12 Տե՛ս Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 2949, թ. 49, 93—94։

սի, Մոլդավիայի հայաշատ շրջաններում, Նոր Նախիջևանում, Աստրախանում և այլուր։ Ռուսաստանի սահմաններից դուրս առանձնապես սերտ կապ էր պահպանվում, գրքեր էր առաքվում և իրացվում Կոնստանդնուպոլսի և Հնդկաստանի հայ գաղութներում։

Այսպիսով, ռուսահայ գաղութները XVIII դ. վերջին և XIX դարի առաջին տասնամյակներին այդքան դարձան ռուսական առաջավոր մտքի հետ կապված հայ մշակույթի ու հասարակական կյանքի զարգացման կարևոր կենտրոններ։ Ռուսահայ մշակույթի ասպարեզում կարևոր դեր էին կատարում լուսավորական շարժման կազմակերպիչների ու մտավոր գործիչների մի ամբողջ խումբ՝ Հ. Լազարյանը, Մարգար Խոջենց Երևանցին, Ս. Պատկանյանը, Գ. Խալդարյանը, Բ. Մարությանը և շատ ուրիշներ։ Նրանց ծավալած գործունեությունը և առհասարակ ռուսահայ լուսավորական շարժումը արգասավոր եղավ հայ և ռուս ժողովուրդների փոխճանաչման, նրանց մտավոր ու հոգևոր շփումների ու մերձեցման գործում։

Ռուսահայ գաղթավայրերը կենդանի կապերի մեջ էին մայր հայրենիքի հետ։ Այդ կապերն ու շփումները իրականանում էին լայն չափերով, բազում ձևերով ու եղանակներով։ Դրանք ամենից առաջ կատարվում էին առևտրական շփումների միջոցով։ Աստրախանի միջոցով կատարվող հատկապես մետաքսի աշխույժ առևտրում զգալի դեր էին կատարում հայ վաճառականները, որոնք կենդանի կապերի մեջ էին մտնում Հայաստանի և հայկական շրջանների հետ։

Ռուսահայ թեմը համամհայկական ընդհանուր հոգևոր կենտրոնի՝ Էջմիածնի գերիշխանությանը ենթարկվելու շնորհիվ այդ կապերը իրականանում էին նաև եկեղեցու միջոցով։ Ռուսահայ գաղթավայրերի հետ Էջմիածնի կապերը արտահայտվում էին ուսումնական գործին հետևելու, եկեղեցական հասույթները հավաքելու, կրոնական զանազան ծիսակատարությունների առթիվ կատարվող այցելությունների միջոցով և այլ եղանակներով։ Դրանից բացի ռուսահայերը սովորություն ունեին Երուսաղեմի և Մշո ս. Կարապետի վանքը հետևավոր ուխտագնացություն կատարել։ Թիֆլիս—Երևան—Էջ-

մեծին երթուղով, երկու երեք ամիս տևող ուխտագնացության ընթացքում նրանք ի մոտո ծանոթանում էին Անդրկովկասի ու Հայաստանի հայության կյանքին։

Կենդանի կապերի և ի լրո հասնող տեղեկություններ միջոցով բուն Հայաստանում ծանոթ էին ռուսահայ զանգվածների դրությանը։ Ռուսահայերի բարվոք վիճակը ինչպես նկատեցինք, ներարդող օրինակ էր հանդիսանում օտարի տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի համար։ Այդ լուծը թոթափելու և Ռուսաստանի հովանու տակ անցնելու հակումը ուժեղանում էր ժողովրդի մեջ։ Մյուս կողմից ռուսահայերը տեղյակ էին բուն Հայաստանում տիրող իրավիճակին, ժողովրդի ծանր դրությանը և անտարբեր չէին իրենց ժողովրդի բախտի, նրա պատմական ճակատագրի նկատմամբ։ Ռուսահայ գաղթավայրերը ջանացել են բարձր պահել ազատագրական շարժման ոգին։ Հայկական գաղութներում ազատագրական շարժման համապատասխան մթնոլորտ էր ստեղծված, պարարտ ու պատրաստի հող կար այդ ասպարեզի գործիչների համար։ Պատահական չէ, որ Հայաստանի ազատագրման բազմաթիվ նախագծեր մտահղանում ու մշակվում են ռուսահայ շրջաններում, այնտեղի առաջավոր գործիչների կողմից և հանդիսանում էին ռուսահայ հասարակական հասունացած կյանքի, հայ ժողովրդի պատմական բախտի, Հայաստանի ազատագրման գործի նկատմամբ նրանց մտորումների ու ձգտումների լավագույն արտահայտությունը։

Այսպիսով, Ռուսաստանի հայկական գաղութները իրենց կարողությունների շրջանակներում լծորդել են երկու ժողովուրդների՝ հայ և ռուս ժողովուրդների փոխհարաբերությունները ու կապերը, աշխուժորեն արձագանքել ռուսական կյանքի գլխավոր իրադարձություններին, միաժամանակ անտարբեր չեն եղել մայր հայրենիքի նկատմամբ, ամեն կերպ ջանացել են նպաստել հայ ժողովրդի ազատագրման գործին։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀՆԴԿԱՀԱՅ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Հայ ազատագրական շարժումների մեջ գաղթաշխարհի կատարած դերի մասին մեր ասածը ամբողջացնելու նպատակով համառոտակի ծանոթանանք նաև ազատագրական շարժման մյուս կարևոր կենտրոնի՝ հնդկահայ գաղթավայրերի հետ։

Հայերը Հնդկաստանը փոխել և հնդիկ ժողովրդի հետ առևտրական կապեր են ունեցել տակավին վաղ ժամանակներից։ Հայ-հնդկական առևտրական հարաբերությունները աշխույժ բնույթ են ստացել հատկապես XVI—XVII դարերում։ XVI դարից էլ Հնդկաստանի տարբեր վայրերում, մասնավորապես ծովափնյա քաղաքներում գոյացել են առաջին հայ համայնքները[1]։ Հնդկահայ գաղութները ստվարացել ու բազմացել են հատկապես XVI դարի երկրորդ կեսին՝ Աքբար թագավորի հովանավորող քաղաքականության շնորհիվ։ Հնդկահայ հին ու մարդաշատ գաղութ է եղել Ագրայում։ Այնտեղ հայ համայնքն այնքան ստվարածավալ է եղել, որ 1562 թ. նրա համար պետական ծախսով անգամ հայկական եկեղեցի է կառուցվել։ Ագրայի հայերը զբաղվել են վաճառականությամբ, արհեստագործությամբ (աչքի են ընկել մասնավորապես տեղական զենքի արտադրության մեջ), վարել

[1] *Հնդկահայ գաղթավայրերի մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 337—347,* Р. А. Абрамян, Армянские источники XVIII в. об Индии, Ереван, 1968, стр. 5—71, Բ. Գուշակյան, *Հնդկահայք, Երուսաղեմ, 1941 և այլն։*

են պետական պաշտոններ, եղել զինվորականներ, ճարտարապետներ և այլ մասնագետներ։ Հայկական գաղթավայրեր են եղել նաև Բենգալիայի տարբեր վայրերում։

Հայկական գաղթավայրերի մյուս խումբն առաջացել է XVII—XVIII դարերում՝ Պարսկաստանից, հատկապես Նոր Ջուղայից գաղթող հայ զանգվածների հաշվին։ Այս շրջանի նշանավոր գաղթավայրերից էր Սուրաթը, որի հայ վաճառականներն ոսկեին անգամ սեփական օվկիանոսային նավեր և խոշոր դեր էին կատարում տարանցիկ առևտրում։

Աչքի ընկնող հայկական գաղութ է եղել Հնդկաստանի արևելյան մյուս նշանավոր նավահանգստում՝ Մադրասում։ Այստեղ հայկական մնայուն համայնք է եղել տակավին XVI դարի կեսերից, սակայն գաղութը մեծացել և նշանակալի դեր է կատարել հատկապես XVII—XVIII դարերում։ Հայկական գաղթավայրեր են եղել Բոմբեյում, Կալկաթայում և Հնդկաստանի բազմաթիվ այլ քաղաքներում։

Հնդկահայ գաղթավայրերը տնտեսական և մշակութային բավական բովանդակալից կյանք են ունեցել։ Հայ զանգվածների հիմնական զբաղմունքը առևտուրն ու արհեստագործությունն են եղել։ Հայ առևտրականները տեղական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի պայմաններում սեփական և ուրիշներին պատկանող նավերով կապվել և աշխույժ առևտուր են արել ինչպես Հնդկաստանի ծովափնյա, այնպես էլ հեռավոր վայրերի շուկաներում։ Նրանցից ոմանք ձեռք էին բերել անգամ առևտրի որոշ ճյուղերի մենաշնորհը, իսկ որոշ առևտրականներ էլ սկսել էին ներթափանցել արտադրության բնագավառը։ Հնդկահայ վաճառականներից շատերը շահեկան առևտրի շնորհիվ հարստացել և պատկառելի գումարի տեր էին դարձել։

Հնդկահայ գաղթավայրերում մեծ առաջադիմության հասավ մշակույթը, որը, իրավամբ, կարելի է համարել հայ ժողովրդի կուլտուրայի համընդհանուր շղթայի փայլուն օղակներից մեկը։ Այնտեղ տակավին XVIII դարի վերջին քառորդում հիմնվեցին (Մադրասում՝ 1772 թ., Կալկաթայում՝ 1796 թ. և այլն) հայկական տպարաններ։ 1794 թ. հոկտեմ-

քերին Մադրասում Հարություն Շմավոնյանի խմբագրությամբ լույս է տեսնում հայկական առաջին ամսագիրը՝ «Ազդարարը». դրանով էլ հիմք է դրվում հայ պարբերական մամուլին։ Դարավերջին բացվում են հայկական առաջին դպրոցները։

Հնդկահայ գաղթավայրերի հայ վանդվածները ակտիվ մասնակցություն են ունեցել Հնդկաստանի ոչ միայն տնտեսական, մշակութային, այլև հասարակական-քաղաքական կյանքին։ Եվրոպացիների Հնդկաստան ներխուժելուց հետո, ինչպես հայտնի է, կատաղի պայքար ծավալվեց հնդիկ ժողովրդի և գաղութարարների միջև։ Հնդիկ ժողովրդի համար ճակատագրական այդ պայքարում հայերը անվերապահորեն կանգնեցին գաղութարարների դեմ մարտնչող հնդիկ հայրենասերների շարքերում։

Սկզբնական շրջանում, երբ եվրոպացիները նոր էին մուտք գործում ու հաստատվում Հնդկաստանում, նրանք բարյացկամ վերաբերմունք ունեին և ամեն կերպ սիրաշահում էին հայ վաճառականներին, որոնք քաջ ծանոթ էին Հնդկաստանին, նրա սովորություններին, գիտեին արևելյան լեզուներ և լավ անուն ու համարում ունեին հնդկական իշխանությունների մոտ։ Եվրոպացիները ջանում էին գործակիցներ գտնել հայ խոջաների շրջանում, որպեսզի նրանք միջնորդի դեր կատարեին տեղական իշխանությունների հետ բանակցությունների ժամանակ։ Հայ առևտրականների նկատմամբ եվրոպացիների սիրաշահող քաղաքականության լավագույն արտահայտությունն է Անգլիայի Արևելա-Հնդկական ընկերության և հնդկահայ վաճառականների միջև 1688 թ. կնքված պայմանագիրը, որի համաձայն հայ վաճառականները անգլիական ազդեցության տակ գտնվող բոլոր երկրներում անգլիացիներին հավասար իրավունքներ էին ստանում։

Այդ դրությունը սակայն երկար չի տևում։ Եվրոպացիների Հնդկաստանում հաստատվելուց հետո աստիճանաբար վիճակը փոխվում է։ Ուժեղ մրցակցություն է սկսվում նախ եվրոպացիների և ապա նրանց ու հատկապես անգլիական և հնդկահայ վաճառականների միջև։ Հասկանալի է, որ հայ

առևտրականները չէին կարող դիմանալ կանոնավոր բանակ ու նավատորմ ունեցող Արևելա-Հնդկական ընկերության մրցակցությանը։ Նրանք ծանր հարվածներ ստանալով սկսում են դուրս մղվել վաճառահանման շուկաներից։ Շուտով անգլիացիները հայերի նկատմամբ անցնում են ապօրինի գործողությունների ու բացահայտ հալածանքների։ Դրանից տուժում էր ոչ միայն առևտրական խավը, այլև հնդկահայ մանր ձեռնարկատերերն ու արհեստավորները, որոնք պատվերներ էին ստանում և իրենց գործառնությամբ կապված էին առևտրականների հետ։ Այդ պատճառով էլ եվրոպական գաղութարարների դեմ թշնամաբար էին տրամադրված հնդկահայ գրեթե բոլոր շերտերը, որոնք մասնակցելով հնդիկ ժողովրդի ազատագրական շարժումներին, պաշտպանում էին ոչ միայն իրենց երկրորդ հայրենիքը, այլև իրենց տնտեսական գոյավիճակը։

Անգլիական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն դրվագներից են 1760—1764 թթ. Բենգալիայում ծավալված ազատագրական կռիվները։ Այդ պայքարը միաժամանակ հայ-հնդկական դինաստիական դաշնակցության և հնդկահայերի անձնազոհ մասնակցության լավագույն վկայությունն է։ Բենգալիայում հնդիկ ժողովրդի ազատագրական շարժումները ճնշելուց հետո անգլիական գաղութարարները հնդկահայերին զրկում են Արևելա-հնդկական ընկերության պայմանագրով նրանց վերապահված առանձնաշնորհումներից։

Հնդկահայ շրջաններում XVIII դարի երկրորդ կեսին սկսեց ծավալվել մտավոր-լուսավորական մի շարժում, որը իր հասարակական-քաղաքական էությամբ բովանդակում էր օտարի տիրապետությունից Հայաստանի ազատագրման դաղափարը։ Հիրավի, այնտեղ, իր ժամանակի առաջադիմական խոշոր երևույթ հանդիսացող, ազատագրական շարժման գաղափարախոսությունը մեծ հաջողությունների հասավ։

Հնդկահայ միջավայրում ազատագրական շարժման անհնախադեպ վերելքը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով։ Նախ, Հնդկաստանում հայ վաճառականությունը

մրցության ընթացքում դուրս էր մղվում սեփական հզոր պետության հովանավորությունը վայելող անգլիական առևտրական կապիտալի կողմից: Առևտրական նոր շուկաներ որոնելու ճանապարհին հնդկահայ վաճառականության առաջավոր գործիչների հայացքն ուղղվում է դեպի իրենց հեռավոր հայրենիքը: Նրանք լավ էին ըմբռնում, որ հայկական պետականության վերականգնումով պայմաններ կստեղծվեին ազգային շուկա, հետևաբար առևտրական սեփական կապիտալի գործունեության լայն ասպարեզ ունենալու համար: Ուստի և հնդկահայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները մտածում էին հայրենիքի ազատության ու անկախության մասին և այդ ուղղությամբ ծրագրեր մշակում:

Դրանից բացի, իր ժամանակի համար առաջադեմ հնդկահայ բուրժուազիան ու նրանից դուրս եկած և նրա գաղափարախոսությունը արտահայտող մտավորականությունը տեսնելով թուրքական ու պարսկական լծի տակ հեծող հայ ժողովրդի ծանր վիճակը, չէր կարող անտարբեր լինել նրա պատմական ճակատագրի հանդեպ, հետու մնալ հայ իրականության մեջ ծավալվող, հասարակական բոլոր խավերին համակած ազատագրական շարժումներից: Նա, բնականաբար, ակտիվորեն ներգրավվում է ազատագրական այդ պայքարի մեջ:

Հնդկահայ առևտրական բուրժուազիան շփումների մեջ էր ու ծանոթ եվրոպական երկրներին: Նրա առաջավոր գործիչների մտայնության վրա, անտարակույս, ազդել էր XVIII դարի եվրոպական լուսավորիչների առաջավոր գաղափարները: Գաղափարական այդ ազդեցությունը ակնհայտ էր մասնավորապես հնդկահայերի լուսավորական և ազատագրական շարժման վրա: Այսպիսով, ռուսահայ շրջանների հետ հնդկահայ համայնքը մյուս կարևոր կենտրոնն էր, ուր մտածում և նախագծեր էին կազմվում Ռուսաստանի օգնությամբ, հայրենի երկրի կենսունակ ուժերի վրա հենվելով, Հայաստանը ազատագրելու վերաբերյալ:

Հնդկաստանի հայ ազատագրական շարժման նշանավոր

գործիչներից էր Հովսեփ Էմինը[2]: Նա ծնվել է 1726 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում, վաճառականի ընտանիքում: Ուրիշ շատերի նման նրանց ընտանիքն էլ հարկադրված է եղել հեռանալ Հնդկաստան և հաստատվել Կալկաթայում: Թուրքիայում և Պարսկաստանում հարազատ ժողովրդի կրած բռնություններն ու հալածանքները, որի ականատեսն էր Էմինը մանկության տարիներին, մեծ տպավորություն են գործում և առհիշա դրոշմվում նրա հիշողության մեջ:

Հնդկաստանը միանգամայն նոր աշխարհ է բացում ուշիմ ու հետաքրքրասեր պատանու առջև: Կալկաթայի նավահանգստում և այլուր նա առաջին անգամ հանդիպում է եվրոպացիներին, տեսնում նրանց զարգացած տեխնիկան, ռազմական արվեստն ու բարձր կուլտուրան: Այդ ամենը անջնջելի տպավորություն են թողնում նրա վրա: Հայրը ցանկանում էր Էմինին վաճառական դարձնել, սակայն միանգամայն այլ էին ընդունակ պատանու հետաքրքրությունները: Նա մեծ պահանջ ուներ ուսման, դիտելիքներ ձեռք բերելու, ևրազում էր տիրապետել ռազմական գործին և իրեն նվիրել հայ ժողովրդի ազատության: Էմինը լսել էր Ղարաբաղի մելիքների և Դավիթ-Բեկի դյուցազնական հերոսական պայքարի մասին և շատ էր ոգևորվում դրանով:

Ռազմական կրթություն ստանալու և հայրենի երկրի ազատագրմանը նվիրվելու ցանկությամբ տարված Էմինը 1751 թ., հոր կամքին հակառակ, թողնում է հայրենի տունը, առևտրական մի նավով մեկնում է Կալկաթայից և բավական տատապանքներ կրելով հասնում է Անգլիա: Առանց ապրուստի և օթևանի չորս տարի նա Լոնդոնում մեծ դրկանքներ է

---

2 Նրա մասին մեզ են հասել իր՝ «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» ընդարձակ ինքնակենսագրությունը, որը հրատարակվել է 1792 և 1918 թվականներին, անգլերեն: 1958 թ. Բեյրութում Հ. Խաչմանյանի թարգմանությամբ այն հրատարակվել է հայերեն՝ «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» վերտառությամբ: Հրապարակի վրա է Ա. Ռ. Հովհաննիսյանի «Հովսեփ Էմին» ռուսերեն լեզվով (Երևան, 1945) հրատարակած հանգամանալից ուսումնասիրությունը:

կրում՝ գոյությունը պահպանելով միայն պատահական վաստակով։ Դիվածածական ծանոթությունը անգլիական երիտասարդ գրող Էդմոնդ Բյորքի հետ էական նշանակություն է ունենում նրա կյանքում։ Իր բարեկամ ու հովանավոր Բյորքի ղեկավարությամբ Էմինը եռանդուն կերպով զբաղվում է ինքնակրթությամբ, բավական լայն ու խոր գիտելիքներ ձեռք բերում, յուրացնում անգլիական լուսավորիչների առաջավոր գաղափարները[3]։

Մեկ այլ պատահական ծանոթությունը լորդ Նորթումբերլենդի հետ Էմինի առաջ բացում է անգլիական բարձր հասարակության դռները։ Հ. Էմինը բարձրաստիճան իր նոր հովանավորների միջնորդությամբ կարողանում է իրականացնել իր վաղեմի երազանքը, ընդունվում է Վուլվիչի զինվորական ակադեմիան։ 1757 թ. որպես անգլիական սպա նա կամավոր մասնակցում է Յոթնամյա պատերազմին, ստացած ռազմական գիտելիքները կիրառում կյանքում, աչքի ընկնում հմտությամբ ու քաջությամբ։

Էմինը իրեն արդեն նախապատրաստված էր համարում հայրենիքի ազատագրության իր փայլուն գաղափարը իրականացնելու համար։ Վերադառնալով Անգլիա, նա նամակներ է գրում մի կողմից հնդկահայերին ու հորը, ջանում ստանալ նրանց աջակցությունը և մյուս կողմից վրաց թագավոր Հերակլ II-ին։ Նա Հայաստանը ազատագրելու գործում Ղարաբաղի մելիքներից բացի, և նրանցից առավել, մեծ դեր էր վերապահում Հերակլին՝ նրան համարում «Վրաստանի և Հայաստանի թագավոր»։ Նա իր պատրաստական ծառայությունն էր առաջարկում եվրոպական բանակների ձևով վրացական բանակը կազմակերպելու և վարժեցնելու գործում, գովերգում եվրոպացիների ռազմական արվեստը, լուսավորությունն ու առաջադիմությունը։

Էմինը փորձում է ստանալ անգլիական կառավարության աջակցությունը։ Նրան հաջողվում է այդ նպատակով հանդիպում ունենալ վարչապետ Պիտտի հետ։ Այդ հանդիպու-

---

[3] *Տե՛ս* А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 19—24.

մից հետո էմինի համար պարզ է դառնում, որ անհույս է Անգլիայից քաղաքական աջակցություն ակնկալելը, որ վերջինիս շահերը հակասում են հայկական պետականությունը վերականգնելու իր ձգտումներին։

Տեսնելով, որ Անգլիայում այլևս անելիք չունի, էմինը 1759 թ. մեկնում է Հայաստան։ Անցնելով Արևմտյան Հայաստանի գյուղերով և ականատես լինելով նրանց հետամնաց ու թշվառ վիճակին, նա աղատագրական պայքարի, բռնության, անիրավահավասարության դեմ ելնելու պրոպագանդա է անում։ Էրզրումի մոտակա Ջենիս գյուղում նա գյուղացիների առջև կարդում է Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», նրանց պատմում հայոց պետության, հայ ժողովրդի կատարած սխրագործությունների մասին և կոչ անում արևմուտքի քրիստոնյաների նման պայքարել անկախության համար[4]։

Էջմիածնում էմինին ընդունում են ոչ այնքան բարյացակամ։ Հենց այստեղ, Էջմիածնում նա հրաժարվում է Հերակլ II-ին և Ղարաբաղի մելիքներին հանդիպելու իր նախկին վճռից։ Անձամբ շփվելով ու մոտիկից ծանոթանալով հայկական կյանքի իրական վիճակի, Անդրկովկասի քաղաքական կացության և հակառակորդ ուժերի ռեալ փոխհարաբերությունների հետ, նա հանգում է այն եզրակացության, որ առանց ռուսական հզոր պետության օգնության անհնար է իր ծրագրերի իրականացումը։ Անգամ Հարևան Վրաստանի օգնությունը կարելի էր ստանալ միայն եղբայրական երկու ժողովուրդներին Ռուսաստանից հայցվող աջակցության ու հովանավորության շնորհիվ։ Այդ պատճառով էլ Հ. էմինը որոշում է վերադառնալ Անգլիա, այնտեղից համապատասխան հանձնարարական ձևոք բերել և մեկնել Ռուսաստան։

1761 թ. էմինը հասնում է Լոնդոն, տեսակցություն է ունենում ռուսական դեսպան իշխան Դ. Գոլիցինի հետ, նրանից համապատասխան հանձնարարականներ է ստանում և անմիջապես մեկնում է Պետերբուրգ։ Այստեղ էմինին ընդունում է ռուսական կանցլեր Մ. Վորոնցովը, հանգամանորեն

4 Նույն տեղում, էջ 51—56, 61։

ծանոթանում նրա ծրագրերի հետ։ Կանցլերը համակրանքով է վերաբերվում էմինի գաղափարներին, օգնություն ցույց տալիս նրան, հանձնարարական նամակ գրում Հերակլ II թագավորին։ Էմինը տեսակցություն է ունենում նաև Մոսկվայում գտնվող վրաց թագավոր Թեյմուրազի և ռուսական պետական մի շարք այլ գործիչների հետ և մեկնում է Աստրախան։ Աստրախանում նրան են միանում մի քանի տասնյակ զինված հայ երիտասարդ կամավորներ, որոնք պատրաստ էին մեկնել Հայրենիք և կռվել նրա ազատագրության համար։ Երբ էմինը մոտենում է Ղզլար քաղաքին, նրան դիմավորում են տեղի հայ զինավառ երիտասարդները և հանդիսավորությամբ ուղեկցում քաղաք։ Էմինի համբավը տարածվել էր թե՛ Աստրախանի, թե՛ Հյուսիսային Կովկասի հայության շրջանում, մանավանդ երիտասարդությունը մեծ խանդավառությամբ է դիմավորում նրան, որպես Հայաստանի ապագա ազատարարի։

Ռուսական սահմանապահ զորքերի հետ պատահած բյուրիմացությունը հարթելուց հետո 1763 թ. գարնանը էմինը ժամանում է Թիֆլիս։ Այստեղ էլ նրան ընդունում են ջերմությամբ։ Հերակլ II թագավորի կարգադրությամբ հայերից ու վրացիներից կազմված մի ջոկատ ընդառաջ է գնում էմինին, նրան դիմավորում են բազմաթիվ հայեր[5]։

Հերակլ II-ի հետ հանդիպումների ժամանակ էմինը խանդավառված պատմում է իր ծրագրերի մասին։ Եվրոպայում կրթված հայ զինվորականը վրաց թագավորին խորհուրդ էր տալիս դպրոցներ բացել, ժողովրդի մեջ լուսավորություն տարածել, երիտասարդությանը դաստիարակել հայրենասիրության ու ազատասիրության ոգով։ Նա համոզում էր թագավորին պայքարել կենտրոնախույս ուժերի դեմ, ամրապնդել պետությունը, վրացիներից ու հայերից կազմակերպել բանակ, այն վարժեցնել եվրոպական բանակների ձևով, ազատագրել վրացական և հայկական հողերը, Հերակլի թագավորությամբ ստեղծել հայ-վրացական միացյալ պետություն։

---

5 Նույն տեղում, էջ 119—125։

Վրաստանում ավելի քան մեկ տարի հյուրընկալվելու ընթացքում Էմինը նամակագրական կապ է հաստատում Ղարաբաղի մելիքների և Մշո ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանի հետ։ Վերջինս ոգևորում էր Էմինին, որ նա իր ազդեցիկ դիրքն ու բազմաթիվ կապերն օգտագործելով առաջնդուն գործունեություն ծավալի Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքար բորբոքելու համար։ Նա Էմինին հավաստիացնում էր, որ բոլոր պայմանները կան թուրքական լուծը թոթափելու համար։ Եթե Էմինը վրացական մի ջոկատի գլուխ անցած մտնի Արևմտյան Հայաստան, հավատացնում էր Հովնանը, ապա նրան կմիանան տասնյակ հազարավոր զինված հայեր և ազատագրական ապստամբությունը կծավալվի ամբողջ երկրով մեկ[6]։

Հերակլ II-ը հոժակրանքով էր վերաբերվում Էմինի գաղափարներին ու մտահղացումներին, անգամ Քերիմ խանի Վրաստան ներխուժելու վտանգի ժամանակ Էմինին հանձնարարում է զորախումբ կազմել և վարժեցնել այն։ Սակայն վրաց թագավորն ընդհանուր առմամբ խուսափողական պատասխան էր տալիս Թուրքիայի և Պարսկաստանի դեմ ապստամբության կազմակերպելու Էմինի առաջարկներին։ Եվ դա հասկանալի է։ Վրացական պետությունը այնքան զորեղ չէր, որ կարողանար ինքնուրույնաբար դուրս գալ Օսմանյան պետության և շահական Պարսկաստանի դեմ։ Այդ պատճառով էլ Հերակլը հետու էր մնում իր իշխանության սահմաններն ընդարձակելու և հայ-վրացական միասնական պետություն ստեղծելու մտքից։ Ի վերջո նա հրաժարվում է Էմինի հետ գործակցելուց և նրան հեռացնում է Վրաստանի սահմաններից։ Հ. Էմինը գնում է Հյուսիսային Կովկաս, այնտեղից անցնում Ղարաբաղ, որտեղ մոտիկից ծանոթանալով, որ հայ մելիքների ուժերը բավարար չեն ազատագրական պայքար ծավալելու համար, կրկին անցնում է Վրաստան։ Վրաստանում սառը վերաբերմունքի հանդիպելով՝ նա 1769 թ. մեկնում է Հնդկաստան։

---

6 Տե՛ս նույն տեղում, էջ 140—150։

Հովսեփ Էմինը, ազատագրական-լուսավորական շարժման այդ աննկուն գործիչն ու անխոնջ հայրենասերը, որը հայրենիքի ազատագրման ու անկախության պայքարին նվիրեց իր ամբողջ կյանքը, բազմաթիվ զրկանքներ կրելով, վտանգի ենթարկելով իր անձը, չի հուսալքվում և մինչև վերջ հավատարիմ է մնում իր որդեգրած գաղափարներին։ 1770 թ., լսելով ռուս-թուրքական պատերազմի մասին, Էմինը մտադրվում է վերադառնալ Անգլիա, այնտեղից մեկնել Ռուսաստան, որպեսզի ծառայության մեջ մտնի ռուսական բանակում և մասնակցի Թուրքիայի դեմ մղվող պատերազմին։ Սակայն իր այդ որոշումը նա չկարողացավ իրագործել՝ ռուս-թուրքական վերահաս հաշտության պատճառով։

1773 թ. Հ. Էմինը ժամանում է Մադրաս և լավ ընդունելության գտնում հայերի կողմից։ Նրա վճռականությունը, անկոտրում կամքը և հայրենիքի ազատագրմանը ծառայելու մեծ ձգտումը ոգևորում է Մադրասի հայերին։ Նրանք անգամ որոշում են Էմինի տրամադրության տակ դնել դրամական նշանակալից գումար՝ զորախումբ ստեղծելու համար։ Այդ ժամանակ Մադրասում գտնվող Հովհաննես եպիսկոպոսը սակայն, միջամտում և կարողանում է խափանել այդ գործը։

Հետագա տարիներին Էմինը բազմաթիվ փորձեր է անում Պարսկաստանի կամ Թուրքիայի վրայով մեկնել Հայաստան՝ ազատագրական պայքարը կազմակերպելու նպատակով, սակայն տեղական իշխանություններն արգելում են։ 1784 թ. նա կրկին վերադառնում է Կալկաթա։ Հետագայում Էմինը այլևս դուրս չի գալիս Հնդկաստանից։ Նա վինվորական ծառայության մեջ է մտնում անգլիացիների մոտ, ապրում մինչև խոր ծերություն, երբեք չկորցնելով հայրենի երկիրը ազատագրված տեսնելու հույսը։ 1809 թ. Կալկաթայում, 83 տարեկան հասակում Էմինը կնքում է իր մահկանացուն։ Հովսեփ Էմինի գործունեությունը նկատելի հետք թողեց և բարերար ազդեցություն ունեցավ ազատագրական, լուսավորական գաղափարախոսությունը տարածելու գործում։

XVIII դարի 70—80-ական թվականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում մի խումբ հայրենասերներ լուրջ գործու-

նեությունն են ծավալում հայ ժողովրդի ազատագրման և Հայաստանի անկախությունը վերականգնելու գաղափարը քարոզելու ուղղությամբ։ Հնդկահայ առևտրական բուրժուազիայի հայրենասիրական այդ խմբակի անդամներից հայտնի են Շահամիր և Հակոբ Շահամիրյանների, Մովսես Բաղրամյանի, Գրիգոր Խոջաջանյանի անունները։ Լուսավորություն տարածելու, ազատագրական գաղափարախոսությունը պրոպագանդելու նպատակով նրանք Մադրասում հիմնում են տպարան, որտեղ հրատարակում են Հայաստանի ազատագրման, այնտեղ ստեղծվելիք հասարակական-քաղաքական կարգերի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ։ Մադրասցիները աշխույժ կապեր են ստեղծում Ղարաբաղի մելիքների, Էջմիածնի կաթողիկոսի, Հերակլ II-ի, հատկապես ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հ. Աբղուբյանի հետ և արծարծում մայր հայրենիքի ազատագրության իրենց հուզող հարցերը։ Ինչպես հայտնի է հնդկահայերը ևս Հայաստանի ազատագրության խնդրում վճռական նշանակություն են տալիս Ռուսաստանին, նրա օգնությանը։ Պատահական չէ, որ ազատագրական շարժումների և մշակույթի հարցերում Շ. Շահամիրյանը գործարար կապերի մեջ էր ռուսական կողմնորոշման մեծ ջատագով Հ. Աբղուբյանի հետ։

1773 թ. Շ. Շահամիրյանի տպարանում լույս է տեսնում Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատությունը։ Մ. Բաղրամյանը Ղարաբաղից էր, Հ. Էմինի հեռավոր ազգականն էր և հինգ տարի հղել էր նրա ուղեկիցն ու գաղափարակիցը։ Գորիում, բաժանվելով Էմինից, Մ. Բաղրամյանը ուղևորվում է Մադրաս, որտեղ ծանոթանում է Շ. Շահամիրյանի հետ և, լինելով հայոց լեզվի և քերականության լավ գիտակ, դառնում է նրա որդիների ուսուցիչը և շատ շուտով նաև Շահամիրյանի խմբակի գաղափարախոսը[7]։ «Նոր տետրակում» Մ. Բաղրամյանը հայ հրիտասարդների մեջ ազգային հպարտության զգացմունք առաջացնելու նպատակով նկարագրում է հայ ժողովրդի փառավոր անցյալը,

7 Տե՛ս նույն տեղում, էջ 295։

նրա հերոսների մխրագործությունները։ Ապա Հայաստանի հերոսական անցյալին հակադրում է տխրալի ներկան, երբ երկիրը ճնշվում ու թալանվում է թուրքական և պարսկական տիրապետության տակ և կոչ է անում երիտասարդությանը՝ արթնանալ թմրության քնից, համարձակորեն դուրս գալ օտար բռնակալների դեմ և ղենքի ուժով ձեռք բերել հայրենիքի ազատությունը. «ապա լաւ ևս է մեռանիլն մի անգամ քաջաբար՝ քան զկեանս զայսպիսի թշուառութեամբ»[8]։

«Նոր տետրակի» մեջ հեղինակը հայկական պետականության անկման և օտարի լծի տակ ընկնելը բացատրում է հայերի ներքին հակասություններով և անմիաբանությամբ, թուլությամբ ու տգիտությամբ։ Այդ պատճառով էլ Մ. Բաղրամյանը հայրենակիցներին կոչ է անում ուսում և կրթություն ստանալ և այդ տեսակետից աշխատել նմանվել եվրոպացիներին։ Բաղրամյանը ոչ պակաս կործանարար է համարում հայ թագավորների միանձնյա իշխանությունը։ Անհրաժեշտ համարելով միապետի իշխանության սահմանափակումը և քննադատելով միապետությունը, նա առաջ է քաշում սահմանադրական կարգի առավելության գաղափարը, որը և նրա քաղաքական իդեալն էր։ Հայաստանի ազատագրության համար պայքարի ռեալ ուժը Բաղրամյանը համարում էր Ղարաբաղի մելիքներին և վրաց Հերակլ II թագավորին, որոնք միասնաբար պետք է հանդես գային և օգնություն ստանային Ռուսաստանից։ «Նոր տետրակում» առաջ քաշված ազատագրական և լուսավորական գաղափարները, ապստամբության միջոցով Հայաստանի ազատագրության ծրագիրը, դեսպոտիզմի քննադատությունը կրում էին Հովսեփ Էմինի հասարակական-քաղաքական հայացքների որոշակի ազդեցությունը։

«Նոր տետրակի» օրինակները մադրասցիները տարածում են Ղարաբաղում և հայկական այլ շրջաններում։ Ստանալով գիրքը և նրա հետ մադրասցիների ծրագրային նամակը, Սիմեոն կաթողիկոսը Շ. Շահամիրյանին առաջարկում է

---

8 «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ», Մադրաս, 1772, էջ 25։

վերջ տալ այդ ամենին, այրել գիրքը և Մ. Բաղրամյանին հեռացնել իրենց միջավայրից։ Ավելորդ չէ նշել, որ կաթողիկոսի զայրույթն ու սպառնալիքները անզոր եղան կասեցնելու մադրասցիների լուսավորական ու հասարակական-քաղաքական գործունեությունը։

Հայաստանի ազատագրության և ապա հայկական պետության կառուցվածքին, նրա բնույթին, օրենսդրությանն էր նվիրված Մադրասի խմբակի ղեկավար Շ. Շահամիրյանի 1788—1789 թթ. հրատարակած «Որոգայթ փառաց» նշանավոր աշխատությունը։ Գրքի առաջին մասում հեղինակը կոչ է անում պայքարի ելնել օտարի բռնակալական լծի դեմ և ազատագրել հայրենիքը։ Նա հայկական պետականության կորստի պատճառը համարում է հայ թագավորների գոռոզ ու անիրավ իշխանությունը և հորդորում է օրենքները գնահատել, լուսավորություն տարածել և նրա օգուտները հասկանալ։ «Որոգայթ փառացի» երկրորդ, ընդարձակ մասում տրվում է անկախ Հայաստանի պետական օրենսդրության, սահմանադրության նախագիծը։ Շահամիրյանը քննադատում է կառավարման միապետական եղանակը և առաջ է քաշում պառլամենտական պետություն ստեղծելու գաղափարը, որտեղ ամենուրեք և անխախտ կերպով իշխելու է օրենքը։ Երկրի գերագույն իշխանությունը վերապահվում էր «Հայոց տանը»՝ պառլամենտին, որը պետք է լիներ ընտրովի մարմին։ Նախարարը օրենքը հետևողականորեն կիրառող պետության առաջին ներկայացուցիչն էր, զորքերի գլխավոր հրամանատարը։ Նրան էր վերապահվում պատերազմ հայտարարելու կամ հաշտություն կնքելու իրավունքը։

Աշխատության մյուս հոդվածներում շարադրվում էր երկրի օրենսդիր և գործադիր մարմինների, ընտրական սիստեմի, դատական կարգի, բանակի կառուցվածքի, պետության ֆինանսական ու հարկային սիստեմի, քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարցերը։ Ուրիշ խոսքով նրա երազած պետական կարգը բուրժուական հանրապետություն էր։ Հարկավ, Շահամիրյանը վերապահություն էր անում նախարարների իշխանու-

Թյունը ցմահ լինելու և ժառանգաբար փոխանցվելու հարցում։ Այդ ղիջոմը արվում էր հայկական թագավորական գահի վրա Բագրատունիներից սերված վրաց Հերակլ II թագավորին տեսնելու միտումով[9]։

Հայաստանում ղինված ապստամբություն կազմակերպելու և Ռուսաստանից ու Վրաստանից ակնկալվող օգնության միջոցով Հայաստանը ազատագրելու, հայկական անկախ պետության կառուցվածքի վերաբերյալ նոր ձևավորվող բուրժուազիայի մտայնությունը արտահայտող հընդկահայ գործիչների առաջ քաշած գաղափարները, լուսավորության տարածելու, տգիտության, հետամնացության, ավատական կարգերի դեմ պայքարելու նրանց պրոպագանդան ժամանակի համար խիստ առաջադիմական քաղաքական-հասարակական հայացքներ էին։ Հնդկահայ մտավոր այդ շարժումը հասարակական-քաղաքական մտքի զարգացման վիճակարի առաջընթաց քայլ էր և նշանակալից ազդեցություն ունեցավ ու նկատելի հետք թողեց հայ իրականության մեջ։

---

9 *Տե՛ս А. Р. Иоаннисян,* Россия и армянское освободительное движение в 80-ах годах XVIII столетия, Ереван, 1947, стр. 147.

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

1768 թ. վերջերին սկսված ռուս-թուրքական պատերազմը աշխուժացրեց ազատագրական շարժումները և սուլթանական ծանր լուծը թոթափելու հույսերի նոր ալիք ստեղծեց Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների շրջանում։ Դրան խթանում էր մանավանդ այն հանգամանքը, որ ռուսական դիվանագիտությունը, ոչ առանց միտումի, հանդես էր գալիս Թուրքական կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդներին ազատագրելու նշանաբանով։

Հայկական շրջաններում օտարի դարավոր լուծը թոթափելու հույսերը ամրապնդվեցին հատկապես 1769 թ. կեսերին, երբ լուր տարածվեց, թե ռուսները զորք են մտցնելու Անդրկովկաս և Վրաստանի ու Իմերեթիայի թագավորների հետ արշավելու են Թուրքիա։

Ռուս-թուրքական պատերազմը, Կովկասում ևս ռազմական գործողություններ սկսելու հեռանկարը տգևորություն առաջ բերեց նաև հայրենիքի ազատագրության երազանքներով ապրող ռուսահայերի մեջ։ 1769 թ. հունիսի 8-ին Մովսես Սարաֆյանը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա է ներկայացնում Հայաստանն ազատագրելու և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետությունը վերստեղծելու ուշագրավ նախագիծ։ Մ. Սարաֆյանը ռուսահայ առևտրաարդյունաբերական բուրժուազիայի խոշոր ներկայացուցիչներից էր։ Պարսկաստանից տեղափոխվելով Ռուսաստան, նա շուտով աչքի է ընկնում և մեծ հեղինակու-

թյուն ու աղդեցություն ձեռք բերում Ասլանբեկի հայ հարուստ վաճառականների մեջ։ Նրա առևտրական գործունեությունը այնպիսի ծավալ է ընդունում, որ կառավարությունից թույլտվություն է ստանում Կասպից ծովում նավարկելու համար առևտրական նավ կառուցել, դառնում է մեծաքանի գործարանի տեր և այլն։ Մ. Սարաֆյանի ներկայացրած նախագծի մշակմանը մասնակցել կամ համենայն դեպս տեղյակ են եղել Ռուսաստանի ազդեցիկ հայերից Գրիգոր Կամպանյանը, Հովհաննես Լազարյանը և ուրիշներ։

Սարաֆյանի նախագիծը բաղկացած էր ներածությունից և տասնչորս հոդվածներից։ Դրանում, որպես առաջնահերթ խնդիր, առաջարկվում էր Թուրքիայի դեմ պատերազմի հանել վրաց երկու թագավորությունները, Վրաստան ուղարկել ռուսական կորպուս։ Միաժամանակ Մոսկվայում, Աստրախանում, Ղզլարում, Մոզդոկում և Ռուսաստանի մյուս քաղաքներում ապրող հայերից ու վրացիներից կազմակերպել զորախումբ և ուղարկել Վրաստան։ Հաջորդ հիմնական խնդիրը համարվում էր Ղարաբաղի մելիքներին Թուրքիայի դեմ մղվող պատերազմի մեջ ներգրավելը։

Ծրագրի հեղինակը առաջարկում էր ռազմական գործողությունները սկսել ոչ թե անմիջապես Թուրքական մարզերը ներխուժելով, այլ Երևանի գրավումով, քանի որ այդ սահմանային բերդը ստրատեգիական կարևոր դիրք ուներ և կարող էր բազա հանդիսանալ Թուրքիայի դեմ հետագա գործողություններ ծավալելու համար։ Երևանը գրավելուց հետո Հերակլ II-ը հարձակվելու էր Ախալցխայի և Կարսի, իսկ մյուս զորախմբերը՝ Բայազետի և ապա Վանի վրա։ Ծրագրում չէր անտեսված նաև պատերազմի ծախսերը հոգալու խնդիրը[1]։

Ազատագրված Հայաստանում ստեղծվելու էին միապետական կարգեր և Ղարաբաղի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր։ Ապագայում Թուրքիայի հնարավոր հարձակումներից Հայաստանը պաշտպանելու էր Ռու-

1 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 267—268, 271—275.

աստանը, որպես իր հպատակ պետության։ Այսպիսով, Մ. Սարաֆյանի ծրագրում դրվում էր ոչ միայն Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան, այլև ամբողջ Հայաստանի ազատագրման հարցը։ Երևանը գրավելու նրա առաջարկը, փաստորեն, Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու նպատակ էր հետապնդում։ Հատկանշական է, որ Հայաստանի ազատագրման գործում մեծ տեղ էր տրվում հենց իրենց՝ հայերին։

Սարաֆյանի ծրագիրը առանձին ուշադրության չարժանացավ ռուսական արքունիքում։ Այնուհանդերձ այդ ծրագիրը արտահայտում էր Ռուսաստանի հայ գաղթավայրերի բնակչության հասարակական առաջադեմ խավերի հայրենասիրական ձգտումներն ու քաղաքական ակնկալությունները։

1768—1774 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Սև ծովի առափնյա շրջաններում ամրապնդվեցին Ռուսաստանի դիրքերը, Թուրքիայից անկախ հայտարարվեց Ղրիմը և ռնալ պայմաններ ստեղծվեց այն Ռուսաստանին միացնելու համար։ Ցարական կառավարության համար առաջնահերթ խնդիր է դառնում Կասպից ծովի շրջանում դերիշխանություն ձեռք բերելը։ Այդ նպատակով 1779 թ. ռուսական արքունիքը, օգտվելով Պարսկաստանում սկսված ներքին պայքարի հարմար առիթից, ծրագրում է արշավանք կազմակերպել դեպի Անդրկովկաս։ Ռուսական կառավարությունը այդ գործին լայնորեն ներգրավում և օգտվում է անդրկովկասյան ժողովուրդների, այդ թվում նաև հայ ազատագրական շարժման գործիչների ծառայություններից։

XVIII դարի վերջին քառորդին Ռուսաստանի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչների մեջ աչքի էին ընկնում և մեծ երախտիք ունեն մասնավորապես ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը (1743—1801) և հայ մեծահարուստ Հովհաննես Լազարյանը (1735—1800)։ Ինչպես գործունյա ու բանիմաց անձնավորություններ, նրանք ակտիվորեն մասնակցում էին ռուսահայ գաղթավայրերի կյանքին, հայ-ռուսական հարաբերությունների ու Հայաստանի ազատագրման գործին։

Պարսկաստանի դեմ ծրագրվող արշավանքի նախապատրաստությունը հանձնարարվում է զորավար Ա. Սուվորովին։ 1780 թ. հունվարի սկզբներին մի քանի հանդիպումներ են տեղի ունենում մի կողմից Հ. Արղությանի ու Հ. Լազարյանի, մյուս կողմից ռուսական պետական ռազմական գործիչներ՝ Գ. Պոտյոմկինի, Ա. Սուվորովի և Ի. Գորիչի միջև։ Այդ հանդիպումների ժամանակ ռուսական պետական ու ռազմական գործիչները հարցեր են տալիս և հանգամանորեն տեղեկանում Պարսկաստանի, նրա վիճակի, բնակավայրերի, ռազմական ուժերի, Ղարաբաղի մելիքների, էջմիածնի, Վրաստանի և Հերակլ II թագավորի մասին[2]։ Հայկական պետականությունը Երևան կենտրոնով վերականգնելու վերաբերյալ Հ. Լազարյանի և Հ. Արղությանի համառ առաջարկներին իշխան Գ. Պոտյոմկինը պատասխանում է, որ դա հնարավոր է, սակայն անհրաժեշտ է, որպեսզի հայոց կաթողիկոսը որոշ անվանի մարդկանց հետ հայերին փրկելու խնդրանքով դիմի իրենց[3]։

Թե հայ գործիչները Ա. Սուվորովի հետ բանակցելու ժամանակ հայկական պետականությունը վերականգնելու ինչ պլաններ էին առաջ քաշում, երևում է 1780 թ. հունվարի 10-ին Ա. Սուվորովին ներկայացրած Հ. Լազարյանի զեկուցագրերից, որը հայտնի է «պարոն Իվան Լազրևի նոտան» վերտառությամբ[4]։ Այդ զեկուցագիրը Ռուսաստանի հովանավորության տակ հայկական պետականությունը վերականգնելու մի պլան է։ Հեղինակը առաջարկում է իր մտահղացումը իրականացնել հետևյալ ձևով։ Անհրաժեշտ է համաձայնում ռուսների ռազմական և տնտեսական օգնությամբ, հայերից

2 Ա. Սուվորովի և 1780-ական թվականների հայ-ռուսական հարաբերությունների մասին տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Ա. Վ. Սուվորովը և հայ-ռուսական հարաբերությունները 1770—90-ական թթ., Երևան, 1944, Նույնի, Из истории русско-армянских отношений, книга первая, Ереван, 1956, стр. 43—100.

3 Տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение , стр. 22.

4 Տե՛ս «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. II., М., 1838, стр. 68—70.

որևէ մեկի գլխավորությամբ գրավել Շամախին ու Գանձակը։ Դրանից հետո Ղարաբաղից և Սղնախից նրանց կմիանան հայերը, որոնցից կազմված զորքով հնարավոր կլինի հեշտությամբ գրավել Երևանը և մյուս քաղաքները։ Այդպիսով, ռուսական գերիշխանությամբ պարսկական Հայաստանի շրջաններից ստեղծվելու էր ապագա Հայաստանը, որի սահմանները կընդլայնվեր Արևմտյան Հայաստանի հաշվին։

Ենթադրվում է, որ այդ գեկուցագիրը Ա. Սուվորովը ներկայացրել էր Եկատերինա II կայսրուհուն[5]։

Ա. Սուվորովը, հունվարի վերջերին մեկնելով Աստրախան, կապեր է հաստատում Ղարաբաղի և Արարատյան նահանգի հայ ազատագրական շրջանների հետ, սկսում ռազմատնտեսական անհրաժեշտ տեղեկություններ հավաքել։ Անցնում էր ժամանակը, սակայն ծրագրվող արշավանքը չէր սկսվում։ Մինչդեռ Ղարաբաղում դրությունը վատթարանում էր։ Փանահին փոխարինած Իբրահիմ խանը ավելի է սաստկացնում ճնշումները՝ հայերի նկատմամբ։

1781 թ. սեպտեմբերի 2-ին Ղարաբաղից նամակներ են ուղարկվում ռուսական արքունիք (Եկատերինա II-ին, Գ. Պոտյոմկինին և Ա. Սուվորովին), որոնցում նկարագրվում են ստեղծված ծանր վիճակը, երկրամասի բնական հարստությունները ու պարենային հնարավորությունները։ Նամակագիրները խնդրում էին նաև ուղարկել ռուսական 10000-անոց հետևակ և հավաստիացնում, որ իրենք զինված պայքար կսկսեն տիրողների դեմ։ Հատկանշական է, որ Գ. Պոտյոմկինին հասցեագրված նամակում նրանք խնդրում էին դեպի Անդրկովկաս արշավող ռուսական զորքերի հրամանատար նշանակել գեներալ Ա. Սուվորովին։

Սակայն շուտով Ա. Սուվորովը Կազան մեկնելու հրաման է ստանում, նրան փոխարինած գեներալ Պ. Պոտյոմկինը 1782 թ. աշնանը ժամանում է Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցը և շարունակում է արշավանքի նախա-

---

5 Տե՛ս М. Г. Нерсисян, Из истории русско-армянских отношений, стр. 55.

պատրաստությունը։ Նա իր մոտ՝ Գեորգիևսկ ամրոցն է հրավիրում Հ. Արղությանին և նրա անմիջական մասնակցությամբ ու աջակցությամբ կապեր է հաստատում Հերակլ II-ի, Ղարաբաղի մելիքների, Հայոց կաթողիկոսի հետ և հանգամանալից տեղեկություններ ստանում Անդրկովկասի ռազմաստրատեգիական ու տնտեսական վիճակի մասին։

1783 թ. մարտին Ղարաբաղի հայ մելիքները, Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը և այլ նշանավոր անձինք նամակներ են ուղարկում Պ. Պոտյոմկինին ու Հ. Արղությանին և նկարագրելով Ղարաբաղի նյութական հարստությունները ու ունեցած հնարավորությունները, նրա ստրատեգիական հարմար դիրքը, խնդրում են արագացնել նախապատրաստվող արշավանքը։ Ռուսական հրամանատարությունը նախատեսում էր արշավանքը կազմակերպել երկու ուղղությամբ։ Զորքերի մի մասը Դերբենտի վրայով, Կասպից ծովի ափերով պետք է շարժվեր ու գրավեր Էնզելին, իսկ մյուս մասը Կովկասյան լեռներով մտնելու էր Վրաստան, ապա Ղարաբաղ և Ղարադաղ, միաժամանակ գրավելով նաև Երևանը[6]։

Նույն տարվա ամռանը Գեորգիևսկ ամրոցում ստորագրվեց պայմանագիր՝ «Բարեկամական տրակտատ», որի համաձայն Քարթլ-Կախեթի թագավորությունը պաշտոնապես անցնում էր ռուսական հովանավորության տակ։ Տակավին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, Գեորգիևսկի պայմանագրից տասը տարի առաջ Հերակլ II-ը պատվիրակություն էր ուղարկել Եկատերինա II-ին՝ Ռուսաստանի հետ ավելի մերձավոր հարաբերություններ հաստատելու և նրա հովանավորության տակ անցնելու առաջարկով։ Պատվիրակությունը լավ էր ընդունվել ռուսական աթոռնիքում, սակայն պայմանները նպաստավոր չէին Հերակլի խնդրանքը իրականացնելու համար։ 1780-ական թվականների սկզբներին, երբ ռուսական քաղաքական շրջաններում մշակվեց Թուրքական կայսրությունը ջախջախելու և նրա տիրապետության

---

6 Տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, стр. 90—91.

տակ գտնվող ճնշվող ազգությունների անկախությունը վերականգնելու այսպես կոչված «Հունական նախագիծը», հնարավոր դարձավ իրագործել Արևելյան Վրաստանի հետ ավելի սերտ հարաբերություններ ստեղծելու խնդիրը:

Պայմանագրի համաձայն վրացական թագավորությունը հրաժարվում էր ինքնուրույն և անկախ արտաքին քաղաքականություն վարելուց: Վրաց թագավորները գահը ժառանգել կարող էին ռուսական կայսեր կողմից հաստատվելուց և նրան հավատարմության երդում տալուց հետո: Դրա փոխարեն կայսրությանը պարտավորվում էր ռուսական զորք մտցնել Վրաստան, որը մշտապես պետք է մնար այնտեղ և իր հովանու տակ պահեր երկիրը: Թիֆլիսում Ռուսաստանի լիազորներկայացուցիչ է (ռեզիդենտ) նշանակվում Ս. Բունաշովը, իսկ Պետերբուրգում՝ հայտնի պոետ Ալ. Ճավճավաձեի հայրը՝ Գարսևան Ճավճավաձեն[7]:

Գեորգիևսկի պայմանագիրը կարևոր իրադարձություն էր ոչ միայն Վրաստանի, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների կյանքում: Դրանով ուժեղանում էր ռուսական ազդեցությունը Անդրկովկասում և հիմք էր ստեղծվում այդ ազդեցությունը ավելի ամրապնդելու և խորացնելու համար:

Հարևան Վրաստանի Պարսկաստանի կազմից դուրս գալու և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու հանդամանքը նոր խթանող ազդակ էր հանդիսանում Ռուսաստանի օգնությամբ օտարի լուծը թոթափելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ Ղարաբաղի մելիքությունները հանդիսանում էին հայ ազատագրական շարժման հիմնական, բայց ոչ միակ կենտրոնը: Այս շրջանում շարժման կենտրոն էր դարձել նաև Երևանը, որին, ինչպես հայտնի է, կարևոր տեղ էր տրվում Արևելյան Հայաստանը Պարսկաստանի տիրապետությունից ազատագրելու և այն հայկական պետության հիմնական մասը դարձնելու ռուսական պլաններում: Այստեղ ծավալված ազատագրական շարժման նշանավոր դեմքերից

---

7 Տե՛ս «Летопись дружбы грузинского и русского народов, с древних времен до наших дней», Тбилиси, 1967, стр. 95—96.

էր Ստեփան Տեր-Սահակյանը։ Նա իրեն ամբողջովին նվիրել էր հայրենի երկրի փրկության գործին։ Տեր-Սահակյանը նամակագրական կապերի մեջ էր Պ. Պոտյոմկինի և Հ. Արղությանի հետ և կարևոր տեղեկություններ էր հաղորդում Հայաստանում տիրող իրավիճակի մասին։ 1783 թ. աշնանը նա մեկնում է Ղարաբաղ, ծանոթանում մելիքների ղինական ուժերի, տնտեսական հնարավորությունների հետ, այդ ամենի մասին մանրակրկիտ տեղեկացնում է Պ. Պոտյոմկինին։ Տեր-Սահակյանի այդ այցելությունը ուշագրավ իրողություն էր հայ ազատագրական շարժման անջատ-անջատ գործող երկու կենտրոնները՝ Ղարաբաղն ու Երևանը իրար հետ կապելու տեսակետից։

Պարսկական արշավանքի նախապատրաստման և հայ ազատագրական շարժումների աշխուժացման այս շրջանում Հայաստանը ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու խնդիրը թվում էր այնքան ռեալ ու մոտալուտ, որ հայ առաջադեմ գործիչները մշակում և ռուսական արքունիք են ներկայացնում վերականգնվելիք հայկական պետության և Ռուսական կայսրության հարաբերությունների նվիրված դաշնագրերի երկու նախագիծ։ Այդ նախագծերից մեկի հեղինակը ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղությանն էր, մյուսինը՝ հնդկահայ հայրենասեր Շ. Շահամիրյանը։

Հ. Արղությանի ներկայացրած նախագիծը, որը արտահայտում էր ռուսահայ շրջանների մտայնությունը և կազմվել էր Հ. Լազարյանի հավանությամբ, բաղկացած էր 18 կետից։ Այդ փաստաթուղթը, որը անվանվում էր «Կերպ դաշնադրության ի մէջ երկու ազգաց՝ Ռուսաց և Հայոց», ըստ էության ոչ այնքան դաշնադրության նախագիծ էր, որքան առաջարկ-ցանկություն ապագա Հայաստանի քաղաքական կառուցվածքի, հայկական պետության և Ռուսական կայսրության փոխհարաբերությունների մասին[8]։

1783 թ. կազմված այդ նախագծով առաջարկվում էր վերականգնել հայկական պետությունը։ Հայոց թագավորի

---

[8] Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, էջ 731—734։

ընտրության իրավունքը վերապահվում էր ռուսական կայսրությունն, որը կարող էր թագավոր ընտրել հայերից կամ իր մերձավոր պալատական ռուսներից: Հայոց թագավորը անկախ ազգությունից պետք է դավաներ հայկական կրոնին և ավանդական ձևով օծվեր էջմիածնում: Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվելու էր թագավորի առաջարկությամբ: Հայկական թագավորության մայրաքաղաքը պետք է լիներ Վաղարշապատը կամ Անին և կամ Արարատյան նահանգի որևէ այլ պատշաճավոր բնակավայր: Հայաստանը ունենալու էր իր պետական կնիքը, դրոշը, պատվո նշանները:

Նախագծի համաձայն Ռուսական կայսրությունը և հայոց թագավորությունը միմյանց հետ կապված էին լինելու հավիտենական բարեկամությամբ: Նախատեսվում էր Հայաստանում ռուսական ոչ մեծաքանակ մշտական զորք պահել, երկրի պաշտպանության և Թուրքիային ու Իրանին զսպելու համար: Հայաստանի վասալական կախումը արտահայտվելու էր հարկերի (այդ թվում նաև ոսկով կամ արծաթով) վճարման, ինչպես նաև պատերազմի ժամանակ Ռուսաստանին ցույց տրվելիք անհրաժեշտ ռազմական օգնությամբ: Հայոց թագավորի ժառանգներից մեկը մշտապես պետք է մնար ռուսական արքունիքում: Նախատեսվում էր երկու երկրների միջև հաստատել առևտրատնտեսական կայուն փոխհարաբերություններ, ընդ որում առևտրական նպատակով Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրվելու էր մի նավահանգիստ:

Հայ իշխանական տների այն ներկայացուցիչները, որոնք կկարողանային ապացուցել իրենց իրավունքները, ետ կստանային պապենական ժառանգական տիրույթները՝ կալվածքները: Հայաստանում չպետք է լիներին ճորտեր, որոնց հնարավոր լիներ անձնապես վաճառել: Բայց այնտեղ պահպանվելու էր ավանդական այն կարգը, ըստ որի կարելի էր նվիրել կամ վաճառել ամբողջ գյուղերը՝ իրենց բնակիչներով, հողով ու ջրով: Այլ խոսքով, Հայաստանում պահպանվելու էր ճորտատիրական մուլքադարական իրավունքը:

Հնդկահայ բուրժուականացող շրջանների մտայնությունն

արտահայտվող Շ. Շահամիրյանի նախագիծը մշակվել էր XVIII դարի 80-ական թվականներին և բաղկացած էր 20 հոդվածից[9]: Այս, երկրորդ նախագծի համաձայն Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի անկախությունը վերականգնելուց հետո այն դառնալու էր ինքնուրույն պետություն՝ հանրապետություն, որի գլուխ կանգնելու էր միայն հայկական ծագում ունեցող ու հայ կրոն դավանող նախարարը (նախագահը):

Հայկական պետությունը կառավարվելու էր «Հայոց տան»՝ պառլամենտի կողմից՝ ըստ հայկական օրենքների: Ռուսական կայսրությունը «Հայոց տունն» ընդունելու էր որպես Հայաստանի տնօրենի, որն իր մշտական դեսպանն («Հայոց բերանը») էր ունենալու Պետերբուրգում:

«Հայոց տունը» իր հերթին ճանաչելու էր Ռուսաստանը որպես իր ազատարարի և մշտական բարեկամությամբ կապվելով նրա հետ, պարտավորվելու էր նրա թշնամիների հետ լինել թշնամի, իսկ բարեկամների հետ՝ բարեկամ: Ռուսական կայսեր պահանջով Հայաստանը նրա տրամադրության տակ էր դնելու մինչև 6000 զինվոր: Ամեն տարի Հայաստանը ռուսաց կայսրին հանձնելու էր քսան մսխալ ոսկի, երեք ձի և վեց խոյ՝ «ի նշան հնազանդության»: Շուրջ 6000 զինվորից բաղկացած ռուսական զորքը մնալու էր Հայաստանում, երկիրը պահպանելու համար, որի ծախսերը հոգալու էր «Հայոց տունը»: Քսան տարվա ընթացքում այդ զորքը մաս առ մաս հեռանալու էր Հայաստանից:

Հայաստանը ազատագրելուց հետո այն հանրապետություն հռչակելու և պառլամենտական եղանակով կառավարելու հայ-ռուսական դաշնադրության այս երկրորդ նախագիծը ամբողջապես բխում էր «Որոգայթ փառացի» գաղափարներից և արտահայտում էր հայ առաջավոր բուրժուազիայի և բուրժուական մտավորականության քաղաքական բաղձանքները:

Եթե Արղությանի նախագիծը նախատեսում էր Հայաս-

---

9 Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, էջ 734—737:

տանում պահպանել ավատական կարգերը և թագավորական միապետությունը, վերականգնել հայ ֆեոդալական տների ժառանգական կալվածատիրական իրավունքները, ապա Շահամիրյանի նախագծով Հայաստանը դառնալու էր պարսամենտական կարգերով ղեկավարվող բուրժուական հանրապետություն։ Երկու ծրագրերի միջև նկատելի տարբերություններ կային նաև հայկական պետության և Ռուսական կայսրության փոխհարաբերությունների հարցում։ Արղությանի նախագծով Հայաստանը որոշակի վասալական կախման մեջ պետք է լիներ Ռուսական կայսրությունից։ Վերջինիս կողմից էր նշանակվելու հայոց թագավորը, Հայաստանում պետք է մշտապես ռուսական զորք պահվեր։ Հնդկահայ նախագծով նույնպես նախատեսվում էր երկու պետություններ սերտ հարաբերություններ, սակայն միայն անձնական, ձևական բնույթ կրող վասալական կախվածությամբ։

Անհրաժեշտ է նշել, որ ռուսահայ շրջաններում մշակված պլանը ավելի իրագործելի էր, քան Շահամիրյանի ծրագիրը։ Արղությանի նախագիծը ոչնչով չէր հակասում, ավելին, համահնչյուն էր ցարական Ռուսաստանի պետական-քաղաքական կարգերին։ Բուրժուական կարգեր հաստատելու միտում ունեցող հնդկահայ ծրագիրը, անհամեմատ առաջադիմական լինելով հանդերձ, առավել անընդունելի էր Ճորտատիրական, միապետական Ռուսաստանի համար[10]։ Պրոֆ. Ա.ս. Մնացականյանը «դաշնագրության» բնագրերի քննարկման հիման վրա եկավ այն հետևության, որ նախապես ռուսահայ ծրագիրն էլ մոտ է եղել Շահամիրյանի նախագծին, սակայն համոզվելով, որ նման ձևով ցարական շրջանների կողմից չի ընդունվի, այն վերափոխվել, հարմարեցվել է ռուսական պետության պահանջներին[11]։

Այն ժամանակվա պատմական պայմաններում դաշնագրության այդ երկու ծրագրերն էլ մնացին անիրագործելի։

---

10 *Տե՛ս* А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, стр. 47—50, 161—163.

11 *Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, № 4, էջ 150—152։*

Սակայն այդ վավերագրերի երևան գալը ժամանակի համար առաջադիմական խոշոր երևույթ էր և վկայում էր հայ ազատագրական շարժման հասունության, նրա ղեկավար, առաջադեմ գործիչների քաղաքական ակնկալությունների ու պատրանքների մասին:

Ռուսական արշավանքի պատրաստությունների և ազատագրական շարժումների աշխուժացման շրջանում՝ 1784 թ. Երևանի հայերը Ս. Տեր-Սահակյանին ուղարկում են Պետերբուրգ, Հայաստանն ազատագրելու շուրջը բանակցելու նպատակով: Երևանի պատվիրակը կամ ինչպես անվանում էին «Արարատյան դեսպանը» իր հետ Ռուսաստան էր տարել պարսկական լուծը թոթափելու գործում Ռուսաստանից օգնություն հայցելու մասին Երևանի հայերի նամակները՝ հասցեագրված Եկատերինա II-ին և իշխան Գ. Պոտյոմկինին: Հ. Արղությանը գրում էր Տեր-Սահակյանին, որ նա ռուսական կառավարությանը ներկայանա ոչ միայն որպես Երևանի, այլև ողջ հայության ներկայացուցիչ և, ուղարկելով հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, խորհուրդ էր տալիս դրանով դիմել ռուսական իշխանություններին[12]:

Այս շրջանում, սակայն Անդրկովկասում դրությունը գնալով բարդանում էր: Թուրքիան Ռուսաստանի ազդեցությունն ու առաջխաղացումը թուլացնելու նպատակով Հերակլ II-ի դեմ է հանում Կովկասի մահմեդական խաներին: Նրան հաջողվում է Վրաստանի դեմ ուղղել Ավարիայի Ումմա խանին: Վերջինս 1785 թ. լեզգիներից և այլ ցեղերից կազմված բազմամարդ բանակի գլուխ անցած արշավում և բավական ավերածություններ է կատարում Վրաստանի արևելյան և հարավային շրջաններում: Իբրահիմ խանը, օգտվելով խառնակ վիճակից, սկսում է հաշվեհարդար տեսնել Ղարաբաղի մելիքների և հայ բնակչության հետ:

Պարսկաստանում գահակալական պայքարում հաղթանակ տարած վաջարների ցեղին պատկանող Աղա-Մահմեդ

12 Տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, стр. 121.

խանը 1794 թ. իրեն պարսից շահ է հռչակում: Նա հաջորդ տարին 50000-անոց բանակով արշավում է դեպի Անդրկովկաս, գրավում Թիֆլիսը, յոթ օր կողոպտում ու թալանում քաղաքը և մեծ ավարով ու գերիներով վերադառնում: Աղա-Մահմեդ շահի արշավանքը մեծ վնաս պատճառեց և մի կատարյալ դժբախտություն էր երկրամասի ժողովուրդների համար: Այդ ավերիչ արշավանքի ժամանակ զոհվեց նաև Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մեծ երգիչ, բանաստեղծ Սայաթ-Նովան:

Անդրկովկասում Պարսկաստանի կենտրոնական իշխանության ազդեցությունը թուլացնելու և Ռուսաստանի դիրքերը ամրապնդելու նպատակով 1796 թ. կազմակերպվում է կոմս Վ. Ա. Զուբովի արշավանքը: Վերջինիս մոտ Ղզլար է ժամանում Հ. Արղությանը, որն աջակցելու էր ռուսական զորքերի արշավանքին: Ռուսական զորքերը հաջողությամբ առաջ են շարժվում, գրավում Դերբենտը, Ղուբան, Բաքուն, Գանձակը: Հ. Արղությանը և հայ ազատագրական շարժման մյուս գործիչները փայփայում էին այն հույսը, որ այս անգամ իրականանալու են Հայաստանը ազատագրելու իրենց բաղձանքները: Սակայն, տարաբախտաբար, հետագա իրադարձությունները այլ կերպ ղարգացան:

1796 թ. նոյեմբերին մահանում է կայսրուհի Եկատերինա II-ը և նոր գահ բարձրացած Պավել I-ը, որը միանգամայն այլ քաղաքականություն էր վարում, հրամայում է դադարեցնել արշավանքը և ռուսական կորպուսը ետ բերել Հյուսիսային Կովկաս:

1798 թ. մահանում է Հերակլ II-ը: Նրա մահից հետո ավելի է բարդանում Վրաստանի դրությունը: Օգտվելով ռուսական զորքերը Անդրկովկասից ետ վերադարձնելու հանգամանքից և Վրաստանում սկսված գահակալական ներքին պայքարից, իրենց գործողությունները ավելի են ակտիվացնում թուրքական և պարսկական ագրեսիվ շրջանները: Վրաց նոր թագավոր Գեորգի XII-ը համոզվելով, որ առանց դրսի օգնության չի կարող հաղթահարել ստեղծված ներքին ու արտաքին դժվարությունները, ընդունում է միանգամայն

ճիշտ որոշում։ Նա հատուկ պատվիրակի միջոցով 1800 թ. դիմում է ռուսական կառավարությանը և խնդրում վերանայել 1783 թ. Գեորգիևսկի պայմանագիրը և առավել ակտիվ միջամտել Քարթլի-Կախեթի գործերին։ Ռուսական նոր կայսեր, Ալեքսանդր I-ի 1801 թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստով պաշտոնապես ձևակերպում է Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին[13]։ Ռուսաստանին միանալու այդ ակտը, որը նախապատրաստվել էր նախորդ դարերի պատմության ամբողջ ընթացքում, էական, բեկումային նշանակություն ունեցավ ինչպես Վրաստանի, այնպես էլ Անդրկովկասի մյուս ժողովուրդների համար։ Դրանով Վրաստանը փրկվեց թուրքական ու պարսկական ավազակային հարձակումներից ու ֆիզիկական բնաջնջումից։ Պատմական այդ ակտը հսկայական նշանակություն ունեցավ Վրաստանի տնտեսական ու քաղաքական մասնատվածությունը հաղթահարելու գործում։ Նա թևակոխեց տնտեսական ու կուլտուրական զարգացման միանգամայն նոր ուղի։

Վրաստանի միացումով Անդրկովկասում ամրապնդվում և ուժեղանում էր ռուսական ազդեցությունը և պայմաններ ստեղծվում ամբողջ երկրամասը Թուրքիայի ու Պարսկաստանի լծից ազատագրելու համար։

Հայերը խանդավառությամբ ընդունեցին Ռուսաստանին Վրաստանի միացման փաստը։ Նախ, դրա շնորհիվ Ռուսաստանի հպատակության տակ անցավ Վրաստանում բնակվող և բավական պատկառելի թիվ կազմող հայությունը։ Վրաստանի հետ Ռուսաստանին միացվեց նաև Լոռի-Փամբակը, Շամշադինը և հայկական որոշ այլ շրջաններ։

Վրաստանի միացումը նոր թափ հաղորդեց հայ ազատագրական շարժմանը, Ռուսաստանի միջոցով թուրքական ու պարսկական լուծը թոթափելու նրա պայքարը առավել ռեալ ու գործնական բնույթ ընդունեց, դարձավ օրակարգի հարց։

---

13 Տե՛ս «Летопись дружбы грузинского и русского народов», стр. 102. *1803 թ. Ռուսաստանին միացավ Մենգրելիան, 1804 թ.՝ Իմերեթիան, Գուրիան և Դանձակի խանությունը, իսկ 1810 թ.՝ Աբխազիան։*

Այսպիսով, եթե մինչև XVIII դարի վերջը Անդրկովկասում նախորդ դարերից եկող քաղաքական իրավիճակը շարունակվում էր մնալ անփոփոխ, նախկին ձևով, ապա հաջորդ՝ XIX դարի արշալույսից սկսած տեղի ունեցան միանգամայն նոր այնպիսի իրադարձություններ, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան երկրամասի ժողովուրդների կյանքում:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՌՈՒՍ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Վրաստանի միացումը Ռուսաստանին և Անդրկովկասում ռուսական ազդեցության ուժեղացումը ավելի սրեց խոշոր պետությունների միջև եղած հակասությունները։ Անգլիան և Ֆրանսիան մրցում էին Մերձավոր Արևելքում տնտեսական ու քաղաքական ազդեցիկ դիրք ձեռք բերելու համար, միաժամանակ նրանք չէին խոչընդոտել Ռուսաստանի առաջխաղացմանը, Անդրկովկասում գերիշխող դիրք ձեռք բերելու նրա ձգտումներին։ Այդ նպատակով նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր Թուրքիային ու Պարսկաստանին հանել Ռուսաստանի դեմ։ Պարսկաստանն իր հերթին ոչ միայն չէր հաշտվում Վրաստանի և Գանձակի խանության Ռուսաստանին միանալու փաստի հետ, այլև Անդրկովկասն ու անգամ Կովկասը իր տիրապետության տակ դնելու նվաճողական ձգտումներ ուներ։ Այսպիսով, Անդրկովկասի համար մղվող պայքարում հանգուցավորվում էին հակասությունները ոչ միայն Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի, այլև Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև[1]։

Անգլիային հաջողվում է 1801 թ. Թեհրանում պայմանագիր կնքել Պարսկաստանի հետ, որով նա ձեռք էր բերում թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական զգալի ազդեցություն։

---

[1] *Տե՛ս А. Р. Иоаннисян,* Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.

Այդ պայմանագիրն ուղղված էր ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ Ռուսաստանի դեմ։ Ֆրանսիան իր հերթին գործակալներ է ուղարկում Պարսկաստան այնտեղ իր ազդեցությունը ուժեղացնելու և հակառակորդ պետությունների դեմ պայքարելու նպատակով, միաժամանակ 1802 թ. Փարիզում հաշտության պայմանագիր է կնքում Թուրքիայի հետ։

Ոգեշնչված Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորությունից և հակառուսական քաղաքականությունից, պարսկական Ֆաթ-Ալի շահը ակտիվորեն նախապատրաստվում էր պատերազմի։ Նա նպատակ ուներ խոշոր բանակներով ներխուժել Վրաստան, ռուսներին դուրս մղել այնտեղից և ողջ Անդրկովկասը ենթարկել պարսկական կենտրոնական իշխանությանը։ Ռուսական հրամանատարությունն իր հերթին առանդրան նախապատրաստություն էր տեսնում և աշխատում նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը։

Պատերազմի առիթ ծառայեց հայոց կաթողիկոսական գահի շուրջը սկսված «Դավիթ-Դանիելյան» հայտնի պայքարը։ Նորընտիր կաթողիկոս Հ. Արղությանը էջմիածին ժամանելու ճանապարհին 1801 թ. Թիֆլիսում հանկարծամահ է լինում։ Հակամարտ խմբավորումների կողմից գրեթե միաժամանակ կաթողիկոս են ընտրվում Դավիթ և Դանիել արքեպիսկոպոսները։ Ռուսական, պարսկական ու թուրքական կառավարությունները օգտագործում էին «Դավիթ-Դանիելյան» հակամարտը իրենց ազդեցությունը Հայաստանում ուժեղացնելու նպատակով։ Ռուսական զորքերի հրամանատար գեներալ Ցիցիանովը պահանջում է Երևանի Մամադ խանից էջմիածնի կաթողիկոս ճանաչել ռուսական կողմնորոշում ունեցող Դանիելին, իսկ արքեպիսկոպոս Դավիթին ուղարկել Թիֆլիս։ Խանը մերժում է Ցիցիանովի պահանջը, որն առիթ է ծառայում 1804 թ. գարնանը արշավելու Երևանի վրա։ Այդ արշավանքով սկսվում է ռուս-պարսկական առաջին պատերազմը (1804—1813 թթ.)։

Ռուսական զորքերը գրավում են Գանձակը (այժմ՝ Կիրովաբադ)։ Դեպի Երևան կատարվող արշավանքի ընթացքում էջմիածնում մեծ ճակատամարտ է տեղի ունենում պարսկա-

կան թագաժառանգ Աբբաս-Միրզայի 20.000-անոց հեծելազորի հետ։ Թեպետ ռուսական զորքերը իրենց քանակով չորս անգամ փոքր էին, սակայն ահեղ մարտերում նրանց հաջողվում է պարտության մատնել պարսկական բանակը, որը նահանջում է դեպի Երևան։ Ռուսական զորքը 1804 թ. ամռանը պաշարում է Երևանը, սակայն բերդը գրավելու փորձերն ապարդյուն են անցնում։ Պարենի և մասնավորապես ռազմամթերքի պակասը լուրջ դժվարություններ էին ստեղծում ռուսական զորամասի համար, ուստի Ցիցիանովը թողնում է Երևանի պաշարումը և վերադառնում Վրաստան։

1805 թ. ռուսական զորամասերը գրավում են Շիրակը։ Նույն թվականին խաղաղ բանակցությունների միջոցով Ռուսաստանին են միանում Ղարաբաղի, Շաքիի (Նուխի), Շիրվանի (Շամախի), իսկ 1806 թվականին՝ Բաքվի, Դերբենտի և Ղուբայի խանությունները։

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ավելի է ակտիվանում Ֆրանսիայի և Անգլիայի դիվանագիտական գործունեությունը Թուրքիայում և Պարսկաստանում՝ Մերձավոր և Միջին Արևելքում գերիշխող դիրք ձեռք բերելու համար։

Եվրոպայում իր դիրքերն ամրապնդած և աշխարհակալական ձգտումներ ունեցող Նապոլեոն Բոնապարտը, որը թշնամաբար էր տրամադրված Ռուսաստանի նկատմամբ, ձգտում էր կանխել նրա առաջխաղացումը, հետու պահել Անդրկովկասից ու Արևելյան շուկաներից, իսկ իր հիմնական հակառակորդ Անգլիային դուրս մղել ոչ միայն Մերձավոր Արևելքից, այլև Հնդկաստանից։ 1806 թ. Թեհրան ժամանած Նապոլեոնի գործակալ Ժոբերին հաջողվում է պարսկական շահի հետ համաձայնության գալ երկու երկրների միջև ռազմական դաշինք կնքելու համար։ Ֆրանսիական նոր դեսպան Սեբաստիանը կարողանում է Թուրքիային հանել Ռուսաստանի դեմ, որը և 1806 թ. դեկտեմբերին պաշտոնապես պատերազմ է հայտարարում Ռուսաստանին։ Շուտով Կոստանդնուպոլիս են ժամանում ֆրանսիական բազմաթիվ դինվորական հրահանգիչներ, ռազմական գործի մասնագետներ։ Նա-

պոլեոնը ձգտում էր հաշտեցնել Թուրքիային և Պարսկաստանին և ռազմական ընդհանուր դաշինք ստեղծել ընդդեմ Ռուսաստանի։ Ֆրանս-պարսկական ամրապնդվող մերձեցումը հանգեցրեց այն բանին, որ 1807 թ. Ֆինկենշտեյնում (Լեհաստան) երկու երկրների միջև կնքվում է դաշնակցային պայմանագիր։ Պարսկաստանում Ֆրանսիայի քաղաքական և տնտեսական լիակատար աղդեցությունը հաստատող այդ պայմանագիրն ուղղված էր մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից Անգլիայի դեմ։

Ֆինկենշտեյնյան պայմանագիրն ավելի գոտեմարտից Պարսկաստանի զեկավար ռազմամոլ շրջաններին, որոնք նախապատրաստվում էին մեծ ուժերով հարձակվել Վրաստանի վրա։ Ֆաթհ-Ալի շահը և Աբբաս-Միրզան մտադիր էին ներխուժել Վրաստան այն ժամանակ, երբ թուրքական բանակը հարձակման կանցներ կովկասյան ճակատում։ Նրանց այդ խնդրում մեծապես աջակցում էր Թեհրան ժամանած ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանը, որն իր հետ ռազմական մասնագետներ էր բերել պարսկական բանակը վարժեցնելու և ռազմական ամրություններ կառուցելու համար։ Իզուր չէ, որ Վ. Ի. Լենինը գեներալ Գարդանի դեսպանությունը անվանել է «Նապոլեոն առաջինի ղինվորական միսիան Պարսկաստանում»[2]։

Ռուսական զորքերի համար Անդրկովկասում ստեղծված այդ ծանր պայմաններում Ցիցիանովին փոխարինած գեներալ Ի. Գուդովիչը հրաման է ստանում թուրքերի դեմ ձեռնարկել ակտիվ ռազմական գործողություններ։ Հարձակողական այդ գործողությունները նպատակ ունեին մի կողմից կանխելու թուրքերի ներխուժումը Վրաստան, մյուս կողմից արգելելու Թուրքիային իր հիմնական ուժերը կուտակել պատերազմի գլխավոր թատերաբեմում՝ Դանուբյան ռազմաճակատում։

1807 թ. հունիսի 18-ին Ախուրյան գետի ափին, Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ ուժեղ ճակատամարտ է տեղի ունենում ռուսական 7000-անոց և թուրքական 20000 հազա-

---

[2] «Ленинский сборник», XXIX, стр. 351.

բանոց զորաբանկաների միջև։ Չնայած թուրքական բանակի ճիգերին, յոթ ժամ տևող լարված մարտերն ավարտվում են ռուսական զորքերի փայլուն հաղթանակով։ Թուրքերը խուճապահար փախչում են դեպի Կարս։ Յուսուֆ փաշան հազիվ է ազատվում գերի ընկնելուց։ Ռուսական սահմանի մոտ գտնվող Աբբաս-Միրզան, տեսնելով թուրքերի պարտությունը, առանց մարտի մեջ մտնելու իր զորքով անմիջապես նահանջում է Նախիջևան։ Ռուսական կորպուսի տարած հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ։ Այն ոչ միայն խափանեց Թիֆլիս ներխուժելու հակառակորդի պլանները, այլև ձախողեց թուրք-պարսկական ռազմական դաշինքի կնքումը, որին ակնհայտորեն ձգտում էին Նապոլեոնի գործակալները։

Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև 1807 թ. հուլիսի 8-ին Տիլզիտի պայմանագրի կնքումից հետո էլ Նապոլեոնի գործակալները շարունակում էին իրենց հակառուսական գործունեությունը թե՛ Թուրքիայում և թե՛ Պարսկաստանում։

Կովկասի ռուսական հրամանատարությունը վերսկսեց բանակցությունները Պարսկաստանի հետ՝ հաշտություն կնքելու և ռուս-պարսկական սահմանագծի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար, սակայն, փաստորեն Գարդանի հրահրանքով պարսկական կողմը մերժեց ռուսների հաշտության առաջարկը։ Ինչպես երևում է գեներալ Գուդովիչի Ալեքսանդր I-ին տված զեկուցագրերից, ֆրանսիական մասնագետների կողմից Երևանի բերդը ամրացվում էր եվրոպական ռազմական արվեստի կանոնների համաձայն։ Ռուսական հրամանատարությունը, տեսնելով, որ խաղաղ ճանապարհով չեն լուծվում հարցերը, վճռում է նոր ռազմական արշավանք կազմակերպել և գրավել Երևանի ու Նախիջևանի խանությունները։ Նոր արշավանքի համար նպաստավոր պայմաններ կային. նախ, Երևանի խանը տակավին չէր ավարտել բերդի ամրացումը և բացի այդ, արվել էին նրա հարաբերությունները Կարսի փաշայի հետ։ Ռուսական կորպուսի հիմնական ուժերով՝ 6000-անոց զորքով, գեներալ Գուդովիչը Ապարանի վրայով շարժվում է դեպի Երևան, 1808 թ. հոկտեմբերին մոտենում է քաղաքին ու պաշարում բերդը։ Այդ նույն

ժամանակ Ղարաբաղում գտնվող գեներալ Նեբոլսինի զորամասը շարժվում է դեպի Նախիջևան, առաջադրանք ունենալով գրավել այն և դրանով փակել Ճանապարհը ու հնարավորություն չտալ պարսկական շահին օգնության գալու Երևանի խանին։ Ղարաբաղա դյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորագունդը հաղթանակ է տանում Աբբաս-Միրզայի զորքի դեմ և առանց դժվարության գրավում Նախիջևանը։

Ռուսական զորքերի հաջողությունները՝ Երևանի պաշարումը և Նախիջևանի գրավումը պարսկական շրջաններում առաջ բերեցին մեծ անհանգստություն ու խառնաշփոթություն։ Դժբախտաբար Գուդովիչը ձեռքից բաց թողեց ստեղծված այդ նպաստավոր պահը։ Փոխանակ վճռական գործողությունների դիմելու, անմիջապես գրոհելու բերդի վրա, նա խաղաղ ճանապարհով բերդին տիրելու հույսով բավական ժամանակ կորցրեց Երևանի խանի հետ ապարդյուն գրագրությունների վրա։ Այդ ընթացքում խանը կարողացավ բերդն ամրացնել և անհրաժեշտ ուժեր կուտակել հակառակորդին դիմադրելու համար։ Գուդովիչը, ղգալով իր սխալը, նոյեմբերի 17-ին սկսեց գրոհը Երևանի վրա, սակայն, հանդիպելով թշնամու համառ դիմադրությանը, նա համոզվեց, որ ամենամուտին ճանապարհները փակվելու և Վրաստանից կտրվելու վտանգ էր ստեղծվել։ Բացի այդ, արդեն սպառվում էր զինամթերքի, զենքի ու հանդերձանքի պաշարները։ Այդ ամենը հարկադրեցին Գուդովիչին թողնել Երևանի պաշարումը և վերադառնալ Թիֆլիս։ Նեբոլսինի զորագունդն իր հերթին թողեց Նախիջևանը և նահանջեց Ղարաբաղ։

Այսպիսով, անհաջողությամբ վերջացավ Երևանի գրավման երկրորդ արշավանքը ևս։ Երևանյան արշավանքի անհաջողության հետևանքով գեներալ Գուդովիչն ազատվում է պաշտոնից և Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում գեներալ Տորմասովը։

Այս շրջանում սկսեց փոփոխվել մեծ տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ուժերի հարաբերակցությունը Արևելքում։ Թուրքիայում և Պարսկաստանում աստիճանաբար

թուլանում է Ֆրանսիայի ազդեցությունը և ամրապնդվում են Անգլիայի դիրքերը: Դա հանգեցնում է նրան, որ 1809 թ. հունվարին կնքվում է անգլո-թուրքական, իսկ մարտին՝ անգլո-պարսկական դաշնակցային պայմանագիր: Հատկանշական է, որ 1809 թ. փետրվարի 13-ին Ֆրանսիական ներկայացուցչությունը գեներալ Գարդանի գլխավորությամբ հեռացավ Պարսկաստանից, հաջորդ օրը Թեհրան ժամանեց անգլիական մեխան՝ Ջոնսոնի գլխավորությամբ[3]: Անգլիան Ֆրանսիայից ավելի մեծ չափերով սկսեց Պարսկաստանին օգնել զենքով, զինամթերքով, դրամով: Անգլիական ռազմական հրահանգիչները վարժեցնում էին պարսկական բանակը:

Ինչպես Անգլիայի, այնպես էլ նրանից առաջ Ֆրանսիայի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված դաշնակցային պայմանագրերը, որոնց նպատակն էր դուրս մղել Ռուսաստանին Անդրկովկասից և ուժեղացնել իրենց ազդեցությունը Արևելքում, անուղղակիորեն ուղղված էին Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ: Հարկավ, Թուրքիային և Պարսկաստանին ուժեղացնելու և Անդրկովկասը նրանց տիրապետության տակ պահպանելու եվրոպական խոշոր երկրների քաղաքականությունը նպաստում էր անդրկովկասյան ժողովուրդներին արևելյան բռնակալական երկու այդ պետությունների լծի տակ պահելուն: Մի քաղաքականություն, որը ուղղակիորեն հակասում էր Անդրկովկասի ժողովուրդների շահերին:

Անգլիայի վարած հակառուսական քաղաքականության հետևանքով Թուրքիան 1809 թ. վերսկսեց պատերազմական գործողությունները, իսկ Պարսկաստանի հետ հաշտություն կնքելու բանակցությունները ձախողվեցին: Պարսիկները ռազմական գործողությունները սկսեցին ուժեղացնել Ախալքալաքի, Շորագյալ-Փամբակի և Ղարաբաղի ուղղությամբ: Չնայած պարսկական բանակին անգլիացիների ցույց տված բազմա-

---

3 Տե՛ս Զ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, հ. I, Երևան, 1960, էջ 214:

կողմանի օգնությանը, ռազմական գործողություններէը ծավալվեցին հօգուտ ռուսական զորաբանակի։ 1810 թ. Կոտլյարևսկու զորագունդը սրընթաց գրոհով գրավեց Մեղրին և, հարձակվելով Արաքսի մոտի պարսկական զորակայանի վրա, հարկադրեց Աբբաս-Միրզային իր զորքերը դուրս բերել Ղարաբաղից։ Ռուսական զորքերը հաջողությունների հասան նաև Ախալքալաքի, Շիրակի և Փամբակի ուղղությամբ տեղի ունեցած ռազմական գործողություններում։ Պարսկական բանակի այդ անհաջողություններից հետո Անգլիան ավելի է ուժեղացնում օգնությունը իր դաշնակցին։ Շուտով կարգով Պարսկաստան է ուղարկվում 20.000 հրացան, նույնքան ռումբ և այլ զինամթերք[4]։

Ռուսական զորքերը խաղաղ հաջողությունների հասան նաև թուրքական ռազմաճակատում։ Նրանք 1809 թ. գրավեցին Փոթին, 1810 թ.՝ Սուխումը, իսկ 1811 թ.՝ Ախալքալաքը։ Դանուբյան ռազմաճակատում մեծ հաջողությունների հասավ Մ. Կուտուզովի գլխավորած ռուսական բանակը և հարկադրեց Թուրքիային հաշտություն կնքել։

1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստի հաշտության պայմանագրով ռուս-թուրքական պետական սահման ճանաչվեցին՝ Արևմուտքում Պրուտ, Անդրկովկասում՝ Ախուրյան գետերը։ Ռուսաստանին անցան Բեսարաբիան և Արևմտյան Վրաստանի որոշ շրջաններ։

Նապոլեոնյան բանակի ներխուժման վտանգից ելնելով Ռուսաստանը փորձեր է անում հաշտություն կնքել նաև Պարսկաստանի հետ, սակայն նրա այդ փորձերը ապարդյուն ճն անցնում։ Պարսիկները, օգտվելով Ֆրանսիայի հետ արդեն պատերազմի մեջ գտնվելու հետևանքով Ռուսաստանի համար ստեղծված դժվար կացությունից, վրկին անցնում են ակտիվ ռազմական գործողությունների։ Ռուսական հրամանատարությունը որոշում է անցնել վճռական հակահարձակման։ 1812 թ. սեպտեմբերին դեներալ Կոտլյարևսկու զորա-

4 «Акты, собранные Кавказской археографической комиссией», т. IV, стр. 761.

բանակը, համարձակ անցում կատարելով Արաքսի աջ ափը, Ասլանդուզի մոտ պարտության է մատնում Աբբաս-Միրզայի 30000-անոց բանակին: Դրան հաջորդում է ռուսական բանակի նոր փայլուն հաղթանակը Լենքորանի մոտ:

1812 թ. հունիսին Եվրոպայում բազմաթիվ հաղթանակներ տարած ֆրանսիական «Մեծ բանակը» Նապոլեոնի գլխավորությամբ հարձակվեց Ռուսաստանի վրա: Ռուս ժողովրդի հետ հայրենական պատերազմի ելան նաև Ռուսաստանի մյուս ժողովուրդները: Նապոլեոնյան ագրեսիայի դեմ կազմակերպվող համաժողովրդական պայքարին արձագանքեցին Կովկասի մեծ ու փոքր ժողովուրդները ևս, այդ թվում հայ ժողովուրդը: Ռուսահայ գաղթավայրերում և Անդրկովկասի հայկական շրջաններում կազմակերպվում են աշխարհազորային ջոկատներ, նվիրատվություններ են կատարվում ինչպես Նապոլեոնի զորքերի, այնպես էլ պարսիկների դեմ մղվող պատերազմում ռուսներին օգնելու համար: Այսպես, օրինակ, Նոր Նախիջևանի քաղաքային մագիստրատի տնօրինությամբ կազմակերպվում է կամավորական ջոկատ, քաղաքի և հայկական գյուղերի բնակչության ցանկությամբ արգելվում է պատերազմի այդ ծանր օրերին քեֆեր, տոնախմբություններ կազմակերպելը: Գաղթավայրի բնակչությունը միաժամանակ պատերազմի կարիքների համար նվիրաբերում է 25000 ռուբլի գումար: Հայրենասիրական այդ շարժմանը ակտիվ մասնակցում են նաև Մոսկվայի, Պետերբուրգի, Ղզլարի, Մոզդոկի, Գրիգորիոպոլի հայերը: Աստրախանի հայերը դրսևորում են օրինակելի հայրենասիրություն, միայն 1812 թ. ընթացքում նրանք նվիրաբերում են ավելի քան 100000 ռուբլի[5]:

Ռուսական բանակում ծառայում էին բազմաթիվ հայ սպաներ ու զինվորներ, որոնք թշնամու դեմ մղված կռիվներում հերոսաբար պաշտպանում էին ինչպես իրենց երկրորդ հայրենիքը՝ Ռուսաստանը, այնպես էլ Անդրկովկասն ու Հա-

---

5 Տե՛ս *М. Г. Нерсисян*, Отечественная война 1812 года и народы Кавказа, Ереван, 1965, стр. 196—204.

յատտանը, քանի որ Ռուսաստանի եվրոպական մասում ֆրանսիական բանակի դեմ տարվող հաղթանակները, փաստորեն միաժամանակ ուղղված էին նաև Անդրկովկաս ներխուժած պարսկական զորքերի դեմ։

1812 թ. հայրենական, ժողովրդա-ազատագրական պատերազմին մասնակցում և հերոսական էջեր են գրում նրա տարեգրության մեջ ռուսական բանակի լավագույն զեներալներից հայ զինվորականներ Վ. Մադաթովը, հետագայում զեներալի կոչման արժանացած բարձրաստիճան սպաներ Պ. Մելիքովը, Պ. Հայրապետովը, Դ. Ախշարումովը, Դ. Աբամելիքը, գնդապետ Դ. Դելյանովը, պատերազմում հերոսաբար զոհված Ա. Լազարյանը, Պ. Լալայանը, Պ. Շախնավալյանը և շատ ուրիշներ[6]։

1812 թ. ընթացքում Անդրկովկասում պարսիկների կրած պարտությունները, Ռուսաստանում Նապոլեոնի բանակի ջախջախումը հարկադրեցին շահական Պարսկաստանին հաշտություն կնքել։

1813 թ. հոկտեմբերի 12-ին Գարաբաղի Գյուլիստան ամրոցում պարսիկների հետ կնքվեց երկկողմանի հաշտության պայմանագիր։ Այդ պայմանագրով Պարսկաստանը ճանաչեց Դաղստանի, Վրաստանի (այդ թվում Իմերեթիա, Գուրիա, Աբխազիա), Գանձակի, Գարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունների, Լոռու, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին։

Այսպիսով, Գյուլիստանի պայմանագրով ավարտվեց և պաշտոնապես ձևակերպվեց Ադրբեջանի միացումը Ռուսաստանին։ Դա ադրբեջանական ժողովրդի պատմական բախտի տեսակետից առաջադիմական խոշոր նշանակություն ունեցող իրադարձություն էր։ Միացման շնորհիվ վերացավ երկրամասի ֆեոդալական մասնատվածությունը, սկսեց հաղթահարվել առանձին շրջանների միջև եղած տնտեսական պարփակվածությունը, համեմատաբար նպաստավոր պայմաններ

6 Նույն տեղում, էջ 210—242։

ստեղծվեցին արտաքրոլական ուժերի զարգացման համար։ Ռուսաստանի կազմի մեջ մտնելով ազգրեջանական ժողովուրդը հնարավորություն ստացավ շփվելու ռուսական դեմոկրատական մտքի և առհասարակ հասարակական-քաղաքական կյանքի հետ։

Գյուլիստանի պայմանագրով Վրաստանի և Հյուսիսային Ադրբեջանի հետ պարսկական լծից ազատագրվում և Ռուսաստանին են միանում նաև Լոռու, Փամբակի, Շամշադինի, Շիրակի, Ջանգեզուրի հայկական շրջանները։ Դրանով պայմաններ են ստեղծվում Արևելյան Հայաստանի մյուս գավառները ևս Ռուսաստանին միացնելու համար, որը տեղի ունեցավ ռուս-պարսկական հաջորդ պատերազմի ժամանակ։

Այժմ անդրադառնանք այն էական հարցին, թե այս պատերազմներին ինչ վերաբերմունք ուներ և ինչ տրամադրություններ էր դրսևորում հայ ժողովուրդը։

XIX դարի սկզբին Անդրկովկասում ծավալված ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ամբողջ ընթացքում ինչպես հայերը, այնպես էլ երկրամասի մյուս ազգությունները ունեին իրենց որոշակի կողմնորոշումը, որն ակնհայտորեն դրսևորվում էր մասնավորապես ռազմական գործողությունների ժամանակ։ Հայերը պարսկական և թուրքական բռնակալական տիրապետությունից ազատվելու ձգտումով ամեն կերպ աջակցում ու օգնում էին ռուսական բանակին։

Ռուս-պարսկական պատերազմի հենց սկզբից հայերը ստեղծեցին աշխարհազորային ջոկատներ, որոնք մի կողմից պաշտպանում էին թշնամու հարձակումներից իրենց բնակավայրերը, մյուս կողմից մասնակցում էին ռուսական զորամասերի հարձակողական մարտերին։

1804 թ. Դյումրիի մոտ ռուսական զորքերի պարսիկներին տված առաջին իսկ հակահամարտին հակառակորդի դեմ կռվում էր նաև հարյուր մարդուց բաղկացած հայկական աշխարհազորային հեծյալ մի ջոկատ։ Նույն թվականին, Երևանի առաջին պաշարման ժամանակ ռուսական կորպուսին զգալի աջակցություն ցույց տվեց Գյուլիստանի Մելիք-Աբովի որդի՝

Ռոստոմ բեկի հայկական հեծյալ ջոկատը։ Նրա օգնությունը մեծ էր հատկապես ղենամիերք տեղափոխող ռուսական զորամասերը անվտանգ Երևան հասցնելու գործում։ Նման հանձնարարություն կատարելու ժամանակ Փամբակի կիրճում նա հանկարծակի հարձակման ենթարկվեց Թշնամու գերակշիռ ուժերի կողմից։ Ռոստոմ բեկի ջոկատը մի ամբողջ օր հերոսաբար դիմադրեց Թշնամուն։ Անհավասար կռվում ընկան հայ հայրենասերներից շատերը, իսկ մի քանի տեղից ծանր վիրավոր, քաջաբար կռվող ջոկատի հրամանատարը գերի վերցվեց, շղթայակապ ուղարկվեց Թավրիզ և Աբբաս-Միրզայի դահիճների կողմից բարբարոսաբար սպանվեց[7]։

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ առավել նշանակալից գործունեություն ծավալեց Շամշադինի Հախում գյուղի հոգևորական Գրիգոր Մանուչարյանի 500 հայ հեծյալներից կազմված աշխարհազորային ջոկատը։ Նրա մասին պատմաբան Ալ. Երիցյանը գրում է հետևյալը. «Գրիգոր եպիսկոպոսը Շամշադինի և Ղազախի հայերից 500 կտրիճ երիտասարդների մի հեծելազունդ էր կազմել և ինքը դարձել նոցա զնդապետ։ Վեղարը և հոգևորական տարազը ծալելով տանը, նա հագել էր շինականի չուխա, ծածկել ոչխարի մեծ փափախը, կապել թուրը և դաշույնը և հրացանը ձեռքին, սպիտակ նժույգի վրա նստած, առաջնորդում էր յուր գունդին թե՛ Գանձակի, և թե՛ Երևանի վրա արշաված ժամանակ։ Պարսից հեծելազորքի հետ կռիվ սկսողը և ճակատահար լինողը միշտ Գրիգոր արհին էր լինում յուր կտրիճներով։ Սարսափելի էր դառնում այս հեզ և համեստ հոգևորականը պատերազմի դաշտում, թուրը հանած միջոցին։ Մինչև այսօր էլ ավանդաբար քաջագործությանց հրաշքներ են պատմում Մանուչարյանց Գրիգոր եպիսկոպոսի մասին և մեր ձեռքում եղած պաշտոնական գրություններք մասամբ հաստատում են ժողովրդական ավանդությունները»[8]։ Նա կարևոր դեր կատա-

7 Տե՛ս Ան, Նոր նյութեր 19-րդ դարու պատմության համար, «Նոր ուղի», առաջին գիրք, Երևան, 1932, էջ 128։

8 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 244։

րից հատկապես իր հայրենիքը՝ Շամշադինը, Ղազախի, Բորչալուի (ներկայումս Վրացական ՍՍՀ Մառնեուլի շրջան) հայկական ու ադրբեջանական շատ գյուղեր պարսկական հրոսակախմբերի հարձակումներից պաշտպանելու համար։ Գր. Մանուչարյանի ջոկատը մասնակցում էր նաև ռուսական բանակի հարձակողական գործողություններին։ Նա մասնակցեց Գանձակի գրավմանը, ինչպես նաև երևանյան առաջին և երկրորդ արշավանքներին։ Ամենուրեք այդ ջոկատը աչքի էր ընկնում խիզախությամբ և զգալի օգնություն ցույց տալիս ռուսական բանակին, որի համար էլ նրա հրամանատարը պարգևատրվեց շքանշաններով։

Ռուսական զորքերի հետ համատեղ պայքար էին մղում նաև Լոռի-Փամբակում, Մեղրիում, Ջանգեզուրում և Ղարաբաղում կազմավորված հայ աշխարհազորային ջոկատները։ Գեներալ Նեբոլսինի զեկուցագրից հայտնի է դառնում, որ 1806 թ. ամռանը իր զորագնդին է միացել Մելիք Ջումշուդ Շահնազարյանի և Մեհտի-Կուլի խանի գլխավորած հայերից և ադրբեջանցիներից կազմված 300 հոգիանոց հեծյալ մի ջոկատ, որը մասնակցել է Ասկարանի և մի շարք այլ ճակատամարտերի։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

1813 թ. Գյուլիստանի պայմանագիրը պարսկական կառավարող շրջանների սրտովը չէր. նրանք հարմար առիթ էին որոնում այն չեղյալ հայտարարելու, եւ գրավելու կորցրած նահանգները և Անդրկովկասում կրկին գերիշխող դիրք ձեռք բերելու։ Պարսկաստանի այդ նվաճողական տրամադրությունները և հակառուսական քաղաքականությունը ամեն կերպ խրախուսվում էր Անգլիայի կողմից։ 1825 թ. դեկաբրիստների հայտնի ապստամբության լուրը պարսկական արքունիք հասցնող անգլիական գործակալները համոզում էին կառավարող շրջաններին, որ Ռուսաստանում գահակալական կռիվներ են գնում, զորքի մեջ խռովություն է սկսվել և ռուսներին Անդրկովկասից վտարելու ամենահարմար ժամանակն է։

Անգլիայի դրդումով, առանց պատերազմ հայտարարելու, 1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարդար Հուսեին խանի զորքերը հանկարծակի հարձակվում են ռուսական սահմանային զորքերի վրա։ Հաջորդ օրը թագաժառանգ Աբբաս-Միրզայի հրամանատարությամբ գործող 60000 մարդուց բաղկացած գլխավոր բանակը ներխուժում է Ղարաբաղ։ Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը (1826—1828 թթ.)։

Անդրկովկասի տարբեր վայրերում ցրված ռուսական փոքրաթիվ զորքի և սահմանամերձ հայ բնակչության համար ստեղծվում է ծանր վիճակ։ Հուսեին խանին հաջողվում է գրավել Շիրակի և Փամբակի գավառները։ Աբբաս-Միրզան

պաշարում է Շուշիի բերդը։ Նա ծրագրում էր գրավել Շուշին, Ելիզավետպոլը (Գանձակ) և ապա հարձակվել Թիֆլիսի վրա։ Օգտվելով հանկարծակի հարձակման և գերազանց ուժեր ունենալու առավելություններից, պարսկական բանակին հաջողվում է տասնյակ հայկական գյուղեր ավերելով, բնակչությանը սրի քաշելով, գրավել Ելիզավետպոլը, Շամախին, Նուխին, Թալինն, Շաքիի և Շորագյալ—Փամբակի որոշ շրջաններ։

Հակառակորդի հետագա առաջխաղացումը կասեցնելու նպատակով ռուսական զորքերի հրամանատարությունը մինչև լրացուցիչ ուժեր ստանալը, ակտիվացնում է տեղի հայ բնակչության դիմադրական կարողությունները, անցնում սպառազինական կարևոր բերդերի ու ամրությունների ակտիվ պաշտպանության։ Ռազմական նշանակություն ունեցող նման կարևոր ամրություններից էր Շուշիի բերդը։ Տեղի ռուսական փոքրաքանակ կայազորը, շրջակա գյուղերից օգնության եկած հայ աշխարհազորայինները հերոսաբար դիմադրեցին և կարողացան ավելի քան վեց ամիս բերդը պաշտպանել Աբբաս-Միրզայի զորքերի հարձակումներից։ Դրանով նրանք խոչընդոտում էին միասնական հզոր ուժերով Թիֆլիսի վրա հարձակվելու Աբբաս-Միրզայի պլանների իրականացմանը։

Ռուսական փոքրաքանակ զորամասերին մեծ օգնություն են ցույց տալիս հայ կամավորական ջոկատներն ու տեղի հայ բնակչությունը։ Այդ խնդրում էական նշանակություն էին ունենում Ներսես Աշտարակեցու հավատով լի մարտական շրջաբերականները։ Պարսկական զորքերի ժամանակավոր հաջողությունների շրջանում պարսիկներին դիմադրելու հայրենասիրական ոգևորիչ խոսքերով նա դիմում է հայ բնակչությանը. «Արիացեք,— գրում էր Ն. Աշտարակեցին,— մի վախիք։ Նոցա հանկարծակի հարձակումը անկենք և խաղաղ շինացվոց վրա չէ կարող սասանացնել Ռուսիո օգոստոսափառ կայսեր անհաղթելի զորաց։ Հաստատ մնացեք ձեր հավատարմության մեջ։ Աշխատեցեք խոհեմությամբ անմահացնել և փառավորել ձեր և ձեր նախնիների հիշատակը...

Դիմադրեցեք Բշնամուն և սորա արբանյակներին կամ ռուսաց զորքերի հետ մխասին և կամ թե մի ուրիշ կերպ, որ ավելի հարմար կլինի ներկա ավազակորեն հարձակման միջոցին։ Իսկ թե հարկ լինի՝ մի խնայեք ձեր արյան վերջին կաթիլը»[1]։

1826 թ. աշնանից բեկում առաջացավ պատերազմական գործողությունների մեջ։ Ռուսական բանակը, օգնական ուժեր ստանալով, նշանավոր զորահրամանատար գեներալ Երմոլովի գլխավորությամբ անցավ հակահարձակման և մի շարք հաղթանակներ տարավ։ Սեպտեմբերի 3-ին Շամխոր գետի մոտ 2000 զինվորից կազմված ռուսական մի զորագունդ հայազգի նշանավոր գեներալ Վ. Մադաթովի հրամանատարությամբ ջախջախեց պարսկական 10000-անոց առաջապահ զորամասը։ Տասն օր հետո Ելիզավետպոլի մոտ տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ, որը վերջացավ պարսկական գլխավոր բանակի ծանր պարտությամբ։ Ռազմի դաշտում թողնելով շուրջ 2000 սպանված՝ Աբբաս-Միրզան փախուստի դիմեց։ Ռուսական մեկ այլ զորամաս Փամբակում և Շիրակում, Հայրենական պատերազմի փառաբանված հերոս, պարտիզան Դենիս Դավիդովի գլխավորությամբ հաղթական մարտեր է մղում և պարսկական զորքերը ետ շպրտում մինչև Երևան։ 1826 թ. աշնանը փաստորեն հաջողվեց պարսիկներից ետ գրավել Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցած տերիտորիաները։ Դրանից հետո լայն նախապատրաստական աշխատանք է տարվում Երևանի վրա արշավելու համար։

1827 թ. մարտին Նիկոլայ I-ի հրամանով Կովկասի կառավարչապետ և զորքերի գլխավոր հրամանատար Երմոլովը, որին կայսրը, կասկածելով դեկաբրիստների հետ ունեցած կապերի մեջ, անվստահությամբ էր վերաբերվում, ազատվում է պաշտոնից և նրա փոխարեն նշանակվում է գեներալ Ի. Պասկևիչը։ Վերջինիս հրամանատարությամբ ռուսական առաջապահ զորքերը առանց դիմադրության հանդիպելու

---

1 Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 242—243։

դրավում են էջմիածինը։ Հունիս ամսին ռուսական զորքերը գրավում են Նախիջևանը և պաշարում անգլիական մասնագետների օգնությամբ կառուցված Արաքսի ափին գտնվող Աբասաբադ բերդը։

Աբբաս-Միրզան 12000-անոց զորքով օգնության է շտապում պաշարված Աբասաբադին և փորձում Արաքսի աջ ափից անսպասելի հարված հասցնել ռուսներին։ Ռուսական կորպուսի հրամանատարությունը, նախաձեռնությունը իր ձեռքում պահելու նպատակով, դիվերսիոն Մ. Պուշչինի զնդապետությամբ կարճ ժամանակում տեղերներից պատրաստած կամուրջներով գինվորներին փոխադրում է Արաքսի մյուս ափը և հարձակվում պարսիկների վրա։ Հուլիսի 5-ին Ջևանբուլաղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը վերջանում է Աբբաս-Միրզայի կատարյալ պարտությամբ ու փախուստով։ Երկու օր հետո անձնատուր է լինում Աբասաբադի բերդապահ կայազորը։

Ամռան շոգերի պատճառով ռուսական հրամանատարությունը դադարեցնում է ռազմական գործողությունները։ Գեներալ Կրասովսկին վերացնում է Երևանի պաշարումը և էջմիածնում թողնելով մի փոքր դումարտակ, զորքին հանգիստ է տալիս Արագածի ստորոտներում, իսկ Պասկևիչը՝ Ղարաբաղի լեռնալանջերում։

Աբբաս-Միրզան, որ հաշտության բանակցություններ վարելու պատրվակով ղինադադար էր խնդրում, խորամանկորեն ժամանակ է շահում և ուժեր կուտակում։ Նա ձախողում է բանակցությունները, օգոստոսի սկզբներին 30000-անոց զորքով անցնում է Արաքս գետը ու հարձակվում էջմիածնի վրա, նպատակ ունենալով ոչնչացնել Կրասովսկու դիվիզիան և ապա շարժվել դեպի Թիֆլիս։ Շուտով Աբբաս-Միրզան գրավում է Աշտարակը և պաշարում էջմիածինը։ Տեղի ռուսական կայազորը և հայ աշխարհազորայիները արիաբար դիմադրում են թշնամու մեծաքանակ զորքերին։

Ստանալով էջմիածնի պաշարման լուրը, Կրասովսկին, 3000 զինվորով շտապում է օգնության հասնել պաշարվածներին։ Օգոստոսի 7-ին Օշական գյուղի մոտ նա հանդիպում է

թվով տասն անգամ ավելի պարսկական բանակին և կռվի է բռնվում նրա հետ։ Աբբաս-Միրզան ձգտում է խափանել Կրասովսկու զորագնդի մուտքը էջմիածին, շրջապատել և ոչնչացնել այն։ Սկսվում է կատաղի ու արյունալի ճակատամարտ։ Պարսիկները, օգտվելով թվական գերակշռությունից, անընդհատ գրոհում են Կրասովսկու զորամասի վրա, իսկ ռուս զինվորները և հայ ու վրացի աշխարհազորայինները չնայած հոգնածությանը, քաղցին ու ծարավին, կռվում են մեծ քաջությամբ, ետ են մղում թշնամու գրոհները։ Ռուսական զորամասին ծանր կորուստների գնով հաջողվում է ճեղքել հակառակորդի դիմադրությունը, մտնել էջմիածին և դրանով իսկ փրկել այն թշնամու ձեռքն անցնելուց ու ավերումից։

Օշականի ճակատամարտում հերոսաբար զոհված զինվորների հիշատակին էջմիածնից Օշական տանող ճանապարհի վրա 1834 թ. կառուցվում է հուշարձան։

Ռազմական ակտիվ գործողությունները վերսկսվում են սեպտեմբեր ամսին։ Պասկևիչի և Կրասովսկու զորամասերը շրջապատում են Սարդարապատի բերդը։ Այն կառուցել էր Երևանի սարդար Հուսեին խանը ֆրանսիական մասնագետների ղեկավարությամբ։ Բերդն ուներ ամուր բուրգեր ու պարիսպներ, նրա կայազորը բաղկացած էր 2000 մարդուց։ Ռուսական պաշարողական ծանր հրետանու ռմբակոծությունից ահաբեկված Սարդարապատի պաշտպանությունը ղեկավարող Հասան խանը փախչում է։ Բերդում փակված հայ բնակչությունը սեպտեմբերի 19-ին բացում է դարպասները և ջերմորեն դիմավորում ռուսական զորամասերին։ Սարդարապատում ռուսների ձեռքն ընկավ մեծ քանակությամբ զենք, զինամթերք ու պարեն։

Սարդարապատը գրավելուց հետո Կովկասի ռուսական զորքերի գլխավոր ուժերը կենտրոնացվում են Երևանի վրա։ Երևանի բերդը Արևելյան Հայաստանի ամենախոշոր ամրությունն ու պարսկական տիրապետության ամենակարևոր հենակետն էր։ Հրազդան գետի կողմից նա շրջապատված էր անմատչելի ժայռերով, իսկ բերդի մյուս մասերն ամրացված էին կրկնակի պարիսպներով։ Սեպտեմբերի 25-ին ռու-

սական զորքը պաշարում է Երևանը, որի պաշտպանությունը իր վրա էր վերցրել Սարդարապատից փախած Հասան խանը։ Վերջինիս հրամանով բերդում բռնի կերպով հավաքված էր Երևանի և շրջակա գյուղերի շուրջ 18000 հայ բնակիչ, որոնց հետ կապեր է հաստատում ռուսական բանակում գտնվող Ն. Աշտարակեցին և աշխատում դյուրացնել քաղաքի գրավումը։

Արյունահեղությունից խուսափելու նպատակով Պասկևիչը Հասան խանին առաջարկում է առանց կռվի հանձնվել, սակայն կտրական մերժում ստանալով սկսում է բերդի հրետանային ռմբակոծումը։ «Ամսի 25-ն էր,— գրում է Խ. Աբովյանը,— որ Երևանի բերդը ծխումը կորավ... Հինգ օր հինգ գիշեր սար ու ձոր դմբում, դմդմբում էր... Էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»[2]։

Հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս։ Ընդառաջ դրան ռուսական հետևակը առաջ շարժվելով հասնում է բերդի արտաքին պարիսպներին և սեղմում պաշարման օղակը։ Աստիճանաբար սաստկանում է բերդի ռմբակոծությունը։ Սեպտեմբերի 28-ին՝ 14, իսկ 30-ի ամբողջ գիշերը 40 թնդանոթներից քաղաքի ամրությունների վրա արձակվեց ավելի քան 1000 ռումբ, պատճառելով մեծ ավերածություններ։ Հոկտեմբերի 1-ի վաղ առավոտյան սկսվում է ռուսական հետևակի վերջին դրոհը։ Բերդի հարավ-արևելյան պարսպի փլվածքի միջով քաղաք են ներխուժում լեյբ-գվարդիական գնդի վաշտերը և մարտերը շարունակում բերդի ներսում։ Այդ նույն ժամանակ հյուսիսային դարպասից բերդ են թափանցում Կրասովսկու զորամասը և մյուս վաշտերը։ Թշնամին այլևս անկարող էր դիմադրել, նա հարկադրված անձնատուր է լինում։ Ռուսները գերի են վերցնում ավելի քան 3000 սարբազ, գրավում Հասան խանին, ութիշ խաների և ավելի քան 200 բարձրաստիճան պաշտոնյաներ։ Հաղթողներին է անցնում ռազմական մեծ ավար՝ 60 թնդանոթ, մեծ քանակությամբ

2 Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 3, Երևան, 1948, էջ 178։

ղենք ու դինամիթերք, ավելի քան 10000 չեռվերտ հացահատիկ։

Այսպիսով, ռուսական զորքի երրորդ արշավանքը ավարտվեց Երևանի գրավումով և 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի բերդի վրա ծածանվեց ռուսական հաղթական դրոշը։

Երևանի գրավումը որոշակի բեկում մտցրեց պատերազմի ընթացքի մեջ, Պարսկաստանի լիակատար պարտությունը ակնբախ դարձավ։ Թվում էր, թե Աբբաս-Միրզան հաշտության պետք է խնդրեր, սակայն դա տեղի չունեցավ։ Այդ պատճառով էլ ռուսական զորքերը շարունակում էին առաջխաղացումը և հետապնդելով բարոյալքված թշնամուն, հոկտեմբերի 13-ին առանց դժվարության գրավեցին Թավրիզը։ Թավրիզի գրավման գործում ռուսական բանակին նկատելի օգնություն ցույց տվեց տեղի հայ և ադրբեջանական բնակչությունը։

Թավրիզի անկումը և շահական բանակի խուճապահար նահանջը պարսկական կառավարությանը հարկադրում են հաշտություն խնդրել։ Նոյեմբերի սկզբներին դադարեցվում են պատերազմական գործողությունները և Դեհկարխան գյուղում հաշտության բանակցություններ են սկսվում։ Շուտով հայտնի է դառնում, որ պարսկական կողմը, ձգձգելով բանակցությունները, ժամանակ է շահում և Ուրմիայի շրջանում խոշոր ուժեր կենտրոնացնելով, ցանկանում է ռուսական կորպուսին թիկունքից անակնկալ հարված հասցնել։

Ռուսական հրամանատարությունը, տեսնելով պարսիկների այդ խորամանկությունները, վերսկսում է ռազմական գործողությունները և կարճ ժամանակում գրավում Ուրմիան, Խոյը, Սալմաստը, Մարաղան և Արդաբիլը։ Ռուսական զորքերի գլխավոր ուժերը, հետապնդելով անկանոն նահանջող թշնամուն, ուղղություն են վերցնում դեպի Թեհրան։ Պարսկական բանակի լիակատար պարտությունը սրում է երկրի ներքին երկպառակությունները ու կաջարների դինաստիայի նկատմամբ եղած ընդհանուր դժգոհությունները։ Անգլիական դեսպան Մակդոնալդը նկարագրում է Պասկևիչին և հայտնում, որ Ֆաթ-Ալի շահը խնդրում է վերսկսել հաշտության

բանակցությունները։ Հաշտությունը անհրաժեշտ էր նաև Ռուսաստանին, քանի որ նա լուծել էր պատերազմում իր ունեցած խնդիրները, դուրս էր եկել ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Արաքս գետի սահմանագիծը։ Դրանից բացի խիստ սրվել էին ռուս-թուրքական հարաբերությունները և ընդհարումը դարձել էր օրվա հարց։ Հետևաբար հարկ էր շուտափույթ հաշիվները մաքրել պարսիկների հետ, կանխել թուրք-պարսկական հնարավոր ռազմական դաշինքը, պատերազմի դեպքում գործ ունենալ միայն մեկ հակառակորդի հետ։

Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ փոքրիկ գյուղում 1828 թ. փետրվարի 7-ին վերսկսվում են բանակցությունները։ Անգլիական դիվանագետները ջանում են մասնակցել բանակցություններին որպես միջնորդ կողմ, սակայն նրանց այդ փորձերը վճռականորեն մերժվում են ռուսների կողմից։ Փետրվարի 10 (22)-ին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքվում է հաշտության երկկողմանի պայմանագիր, որը Ռուսաստանի կողմից ստորագրում են գեներալ Պասկևիչը և պետական խորհրդական Ա. Օբրեզկովը, իսկ Պարսկաստանի կողմից՝ Թագաժառանգ Աբբաս-Միրզան։

Թուրքմենչայի պայմանագրով ռուս-պարսկական սահման է ճանաչվում Արաքս գետը։ Պարսկական շահն իր և հաջորդների անունից մեկընդմիշտ պաշտոնապես ճանաչում է Երևանի և Նախիջևանի խանությունների և Օրդուբադի գավառի միացումը Ռուսաստանին։ Պարսկաստանը պարտավորվում է վճարել 20 միլիոն ռուբլի ռազմական տուգանք։ Երկու երկրների միջև վերականգնվում են դիվանագիտական և առևտրական հարաբերությունները։ Պարսկաստանը պարտավորվում է արդելք չհարուցել իր տիրապետության ներքո գտնվող քրիստոնյաներին գաղթելու և մշտական բնակություն հաստատելու ռուսական տիրապետության սահմաններում։

Կասպից ծովում ռազմական նավատորմ ունենալու իրավունքը վերապահվում է միայն Ռուսաստանին։ Միաժամանակ կնքվում է առևտրական պայմանագիր, որով ազատ

առևտրի իրավունք է տրվում երկու կողմերի հպատակներին։ Այդ պայմանագիրը մեծապես խթանում է Անդրկովկասի և Կասպից ծովի վրայով կատարվող ռուս-պարսկական առևտուրը։

Այսպիսով, ռուս-պարսկական երկրորդ պատերազմում ռուսական բանակների տարած հաղթանակի շնորհիվ, որը իր դիվանագիտական ձևակերպումը ստացավ Թուրքմենչայի պայմանագրով, Արևելյան Հայաստանը ազատագրվեց շահական Պարսկաստանի դարավոր լծից և միավորվեց Ռուսաստանի հետ։

* * *

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, որը ռեալ էր դարձրել Արևելյան Հայաստանի վերջնական ազատագրումը պարսկական դաժան լծից, մեծ ոգևորություն էր առաջացրել Անդրկովկասի հայության շրջանում։ Ռուսական զորքերի հրամանատարությունը, նկատի ունենալով կովկասյան կորպուսի զորամասերի սակավաթիվ լինելը և հայ աշխարհազորայինների մատուցած ծառայությունները, վճռում է այդ գործին տալ ավելի կազմակերպված բնույթ և հայերից, վրացիներից ու ադրբեջանցիներից կազմակերպել կամավորական գումարտակներ։ 1827 թ. գարնանից Կովկասի ռուսական զորքերի հրամանատարությունը գլխավոր շտաբի գիտությամբ ու հավանությամբ ձեռնամուխ է լինում կամավորական գումարտակների կազմակերպման գործին։

Ժամանակի հայ իրականության նշանավոր գործիչներ, ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպաններ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու, հայ լուսավորիչ Հարություն Ալամդարյանի և ուրիշների ակտիվ մասնակցությամբ ու ղեկավարությամբ Թիֆլիսում կազմակերպվում են առաջին հայկական կամավորական ջոկատներ։ Կամավորական այդ ղրուժինանները կամ ջոկատները կովկասյան կորպուսի զորամասերի հետ մասնակցելու էին ռազմական գործողություններին և առաջին հերթին երևանյան արշավանքին։ Հայ-

կական կամավորական այդ գումարտակների համար կազմվել էր 34 կետից բաղկացած հատուկ կանոնադրություն («предположение»), որի համաձայն կամավորական ջոկատներում ընդգրկվում էին 18—30 տարեկան երիտասարդները՝ սեփական ցանկությամբ։ Կամավորական ջոկատները զենք, զինամթերք, հագուստ ու պարեն ստանում էին պետությունից և պարտավոր էին ծառայել մինչև պատերազմի վերջը։ Ծառայության մեջ գտնվելու շրջանում նրանց ընտանիքները ազատվում էին հարկերից ու պարհակներից։

Կամավորական ջոկատներն ունեին իրենց ազգային դրոշակը։ Հրամանատարները սպայական աստիճան ունեցող հայ զինվորականներ էին և հրամաններն ու զինավարժությունները էլ կատարվում էին հայերեն լեզվով։ Կամավորական դրուժինաները, փաստորեն, կազմակերպված զորային միավորներ էին։ Հայ կամավորական ջոկատների մեջ ընդգրկվում են ոչ միայն Անդրկովկասի, այլև Արևելյան ու Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից եկած հայ երիտասարդներ։

1827 թ. մարտին Թիֆլիսում տեղի է ունենում հայ կամավորների զորահանդես։ Կամավորական առաջին ջոկատը, որը բաղկացած էր 117 հոգուց, նույն թվականի մայիսին Ներսեսյան Սմբատյանի հրամանատարությամբ ռազմաճակատ է մեկնում։ Ռազմաճակատ մեկնելուց առաջ դրուժինան Թիֆլիսի հայկական եկեղեցում երդում է տալիս։ Կամավորների առաջ սրտառուչ ճառով հանդես է գալիս Հ. Ալամդարյանը։ Նա խոսում է Հայաստանի պատմական անցյալի հերոսական դրվագների, պարսկական տիրապետության տակ հայերի կրած զրկանքների մասին, ապա, հայ կամավորներին հանձնելով դրոշը, կոչ է անում սրբորեն պահպանել այն և խիզախորեն մարտնչել հայրենի երկրի ազատության համար[3]։

Հունիսին գործող բանակ է մեկնում 200 հոգուց բաղկացած կամավորական ջոկատը, Ներսեսյան Ակիմովի հրամանատարությամբ։ Օդոստոսին ռազմաճակատ է մեկնում

3 Տե՛ս Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 272—274։

կամավորական երրորդ դրուժինան կապիտան Բնհբուխովի հրամանատարությամբ և այլն։

Կամավորական առաջին ջոկատի շարքերը համալրվում են Թիֆլիս—Երևան երթուղուն մերձակա հայկական գյուղերի բնակիչներով, բոնի կերպով պարսկական բանակ տարված հայերով։ Այդ մասին պատմաբան Ալ. Երիցյանը գրում է. «Ճանապարհին հրճվանոք դիմավորում էին հայ գունդին գյուղացի հայերը և իրանք էլ միանում էին նորա հետ, այնպես որ դեռ Երևանի սահմանը չհասած, հայ զինվորների թիվը հազար հոգուց ավելի էր»[4]։

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի մասնակից գեներալ Ն. Մուրավյովը -գրում է. «Հայկական դրուժինային տրվեց Թիֆլիսում պատրաստված մի դրոշակ։ Նա արշավանքի դուրս եկավ հոժարակամ և արտասովոր եռանդով, ունենալով երիտասարդ զինվորի ոգի... Այս առաջին դրուժինան միանալով մեզ, հետզհետե ուժեղանում էր պարսկական գումարտակներից փախած հայ սարբազներով ու Երևանի խանության բնակիչներով։ Բոլորը հավատարիմ ծառայության երդում էին ընդունում և մեզ հետ մասնակցում էին մեր բոլոր արշավանքներին։ ...Մարտի մեջ նրանք հանդես էին գալիս ինչպես վայել է զինվորներին և Օրդուբադի նահանջի ժամանակ կռվում էին... պարսիկների դեմ այնպես, ինչպես կարելի է միայն ցանկանալ»[5]։

Հայերի հետ միասին Կովկասյան կորպուսին ռազմական օգնություն էին ցույց տալիս նաև վրացական և ադրբեջանական աշխարհազորային ջոկատները։ 1826 թ. Փամբակում և Ախարանում պարսիկների դեմ մղվող կռիվներում Դ. Դավիդովի զորագնդում մասնակցում էր վրացական աշխարհազորային մի ջոկատ, որն աչքի ընկավ հատկապես Միրաքի ճակատամարտում։ 1827 թ. դեպի Երևան շարժվող ռուսական բանակի հետ նույնպես մարտնչում էր վրացական աշխարհազորային մի ջոկատ, որը ակտիվ մասնակցություն ունեցավ Սարդարապատի և Երևանի գրավման մարտերին։

---

4 *Նույն տեղում, էջ 284։*

5 *Г. Эзов, էջ* CXXVI:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական երկրորդ պատերազմների ժամանակ Շնամու դեմ արիաբար կռվում էին նաև ադրբեջանական աշխարհազորային ջոկատները։ Արևմտյան Հայաստանում թուրքական բանակի դեմ մղվող կռիվներին մասնակցում էր ադրբեջանական չորս հեծյալ գունդ։ Կովկասյան կորպուսում աշխատում և նշանակալից ծառայություն էր մատուցում ադրբեջանական ժողովրդի զավակ, ռուսական կողմնորոշման ջատագով, լուսավորիչ ու հրապարակախոս Ա. Բակիխանովը։ Նա անձամբ մասնակցեց Սարդարապատի գրավմանը, որի համար և պարգևատրվեց[6]։

Ռուսաստանի օգնությամբ պարսկական լծից ազատվելու Անդրկովկասի հայության ձգտումները լավագույն կերպով դրսևորվեցին նաև ռուսական բանակին ցույց տրված նրանց նյութական աջակցությամբ։ Այս առումով հատկանշական է Շուշիի բերդի պաշտպանությունը։ Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ, պարսկական զորքի հանկարծակի ներխուժման հետևանքով ծանր դրություն է ստեղծվում Ղարաբաղում գտնվող ռուսական զորամասի համար։ Աբբաս-Միրզայի ռազմաստրատեգիական պլանները ձախողելու նպատակով գնդապետ Ռեուտը 1826 թ. հուլիսի վերջերից 1700 դինվորներից բաղկացած իր կայազորով և շրջակա գյուղերից նրան օգնության եկած 1500 աշխարհազորայինների միջոցով հերոսաբար պաշտպանում էր բերդը՝ պարսկական մեծաքանակ բանակի անընդմեջ հարձակումներից։ Մանր էր պաշարվածների դրությունը. Շուշիում հացի պաշարներ չկային։ Հայ գյուղացիները ռուսական կայազորին էին հանձնել իրենց ունեցած ցորենը, ալյուրը, անասունները և աննդամթերքի մյուս պաշարները։ Մեծ դժվարությունների հետ էր կապված հացահատիկ աղալը, քանի որ ձորում գտնվող ջրաղացները, պաշարվածներին սովի միջոցով ընկճելու նպատակով, շրջապատել էր հակառակորդը և ջանում էր թույլ չտալ օգտվելու դրանցից։ Շուշեցիները Թարխանյան եղբայրների գլխավորությամբ պաշտպանում էին ջրաղացները, նրանք, այդ թվում

---

6 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 167։

և կանայք, գիշերները դժվարանց արահետներով ցորենի պարկերը ուսերին իջնում էին ջրաղացները, ալյուր աղում և վերադառնում։

Այդպիսի ծանր պայմաններում ռուսական կայազորը և հայ գյուղացիները արհամարհելով մահն ու սովը, վեց շաբաթ շարունակ ետ էին մղում հակառակորդի կատաղի գրոհները և անձնատուր չեղան թշնամուն։ Այդ մարտերի մասնակից (հետագայում գեներալ) Լազարյանը հայերի օգնության մասին գրել է հետևյալը. «... Հիշում եմ ես, թե ինչպես բերդում ապաստանած գյուղացիները տվեցին իրենց բոլոր անասունները կայազորին, իբրև կերակուր, թե ինչպես մեր հրուստները՝ Հախումյանը, Բհհրամբեկ Մելիք-Շահնազարյանը, Զոհրաբ աղա Թառումյանը և ուրիշներն ընդհանուրի վայելմանը տվեցին իրենց հացի բոլոր մնծամնծ պաշարները, որոնք սակայն աղացած չէին, այլ հատիկներ, հիշում եմ նույնպես, թե ինչպես մեր հայերը գիշերներն իրենց ուսերի վրա տանում էին հացահատիկների ծանր պարկերը Շուշի գյուղի ջրաղացները, ուր յուզբաշի եղբայրներ Սաֆար և Ռոստոմ Թարխանյանները արագ աղում էին հացահատիկները և էլի ետ էին ուղարկում բերդը։ Առանց այդ օգնության կայազորը երբեք չէր կարող տանել վեցշաբաթյա պաշարումը։ Աբբաս-Միրզան մի քանի անգամ փորձեց վերցնել իր համար ատելի այդ ջրաղացները, բայց նրա բոլոր փորձերը փշրվեցին, զարնվելով հայերի հերոսական դիմադրությանը, որոնց առաջնորդում էին Թարխանյան եղբայրները»[7]։

Ուշագրավ է, որ տեղի հայ արհեստավորները ռուսական կայազորին օգնում էին նաև դինամիթերքով։ Նրանց մեջ աչքի էր ընկնում հատկապես բարութչի Պողոսը, որը պաշարված կայազորի համար անվարձ պատրաստում էր օրական 20—25 ֆունտ վառոդ։

Հայերի կատարած դերը բարձր է գնահատել բերդապահ կայազորի պետ, բերդի պաշտպանությունը ղեկավարող գնդապետ Ռեուտը։ Նա գեներալ Երմոլովին ներկայաց-

7 Լեո, Նոր նյութեր 19-րդ դարու պատմության համար, «Նոր ուղի», առաջին գիրք, էջ 132։

րած զեկուցագրում հաղորդել է. «Ինչ վերաբերում է բերդի պաշտպան հայերին, իմ պարտքն եմ համարում հայտնել, որ նրանց ծառայությունը արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորն էլ գործում էին գերազանց քաջությամբ, դիմառնում էին բազմաթիվ զրոհների, թշնամուն ետ էին մղում խոշոր կորուստներով, արհամարհում էին պարենի պակասը և երբեք չէին մտածում բերդը հանձնելու մասին, թեև վրա էր հասել կատարյալ սովը»[8]։ Պարսիկներին համանման հերոսական դիմադրություն են ցույց տալիս նաև Խլի-Ղարաքիլիսայի և այլ վայրերի հայ գյուղացիները։

Ռուսական զորքերին պարենով, տրանսպորտով ամեն կերպ աջակցում էին Լոռի-Փամբակի, Ղազախ—Շամշադինի, Շիրակի, Արարատյան դաշտի, Զանգեզուրի և այլ շրջանների գյուղացիները։ Ռուսական զորքին աջակցելու, պատերազմում նրանց հաղթանակը ապահովելու և դյուրացնելու հայերի ցանկությունը այնքան մեծ էր, որ Երևանի բերդում մեկուսացված հայերը գաղտնի նամակներ էին ուղարկում ռուս հրամանատարներին, հայտնում էջմիածնում և Երևանում պահված սեփական հացահատիկի հորերի տեղը և այդ պաշարները հոժարակամ դնում ռուսական զորամասերի տրամադրության տակ։

Ժամանակի գործիչները, մասնավորապես Ն. Աշտարակեցին, լավ հասկանալով ռուսական զենքի հաղթանակի նշանակությունը, կոչ էին անում ամեն կերպ օգնել ռուսական զորքին։ Հատկանշական է, որ այդ կոչերը լայն արձագանք էին գտնում հայ աշխատավորական շրջանում։ «Հասավ ժամը,— գրում էր Ն. Աշտարակեցին,— երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և Հայոց ազգի ազատությունը. հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնի յուր վաղեմի անկախությունը։ Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը և ապա ապ-

8 Նույն տեղում։

լուեցեք աղաս...»[9]։ Երևանի պաշարման օրերին տեսնելով, որ բերդի գրավումը ձգձգվում է, Ն. Աշտարակեցին շրջակայքի հայ գյուղացիներին կոչ էր անում անհապաղ օգնության հասնել ռուսական զորքերին։ Ահա նրա այդ կոչերից մեկը. «Աշտարակի և Օշականի հայ հասարակությանը. գրում եմ բազմաթիվ օրհնություններով, որպեսզի գրությունս ստանալուն պես, առանց րոպե կորցնելու, թողնեք ձեր տան և ընտանիքին վերաբերող բոլոր կարևոր գործերը, թվանք ունեցող և չունեցող և հետևակ կորիճ տղաներ շուտ հավաքել և այսօր սեպտեմբերի 28-ին, չորեքշաբթի օրը մինչև արեգակի մայր մտնելը հասնել այստեղ մեզ։ Եվ եթե ձեզանից որևէ մեկը ծուլանա և ուշանա, այդպիսին թող իմանա, որ թեկուզ իմ աչքի լույսը լինի, չեմ խնայի հանել և դեն նետել»[10]։

Արձագանքելով Աշտարակեցու կոչերին էջմիածնի, Օշականի, Աշտարակի և այլ վայրերի գյուղացիները խմբերով օգնության էին գալիս ռուս զորքերին և իրենց մասնակցությունը բերում բերդի գրավմանը։

Ռուսաստանի օգնությամբ ու նրա միջոցով պարսկական լուծը թոթափելու հայ ժողովրդի ձգտումը լավագույնս արտահայտվում էր նաև հայերի կողմից ինքնաբուխ կատարված անձնազոհ հերոսական սխրագործությունների ձևով։ Հիշատակենք մի քանի խոսուն փաստեր։

Հարկադրաբար պարսկական բանակ տարված հմուտ հրանոթաձիգ Հակոբ Հարությունյանը 1827 թ. օգոստոսին Օշականի ճակատամարտի թեժ պահին տեսնելով, որ պարսիկներն օգտվելով թվական գերակշռությունից, աստիճանաբար սկսում են շրջապատել ռուսական զորագունդը, անգլիական իր նոր, ծանր թնդանոթի փողն ուղղում է պարսկական զորաշարքերի դեմ։ Պարսկական զորաբանակում շփոթ ու խուճապ է առաջանում։ Նրանք կարծում են, թե դեներալ Կրասովսկու զորագնդին օգնության են հասել օժանդակ ուժեր։

---

9 Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 268—269։

10 Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, Երևան, 1967, էջ 72։

Մինչև թշնամին ուշքի կգար և կհասկանար եղելությունը, ռուսական զորագունդը ճեղքում է հակառակորդի շղթան և մտնում էջմիածին։

Խիզախ հայրենասեր Հարությունյանը փորձում է փախչել և միանալ ռուսներին, սակայն էջմիածնի մատույցներում պարսիկ սարբազները նրան բռնում են, հանում են աչքերը, կտրում քիթը, շրթունքները, ականջներն ու կրունկները և կարծելով, թե մահացել է գցում են դաշտում թափված դիակների մեջ։ Ուշքի գալով Հարությունյանը կարողանում է մի կերպ հասնել էջմիածին, որտեղ սկսում են բուժել նրա ծանր վերքերը։ Յուցաբերած սխրագործության համար կառավարությունը Հ. Հարությունյանին պարգևատրում է միանվագ տասը ոսկով և նշանակում տարեկան 100 ռ. ցմահ կենսաթոշակ[11]։

1827 թ. ապրիլին ռուսական առաջապահ զորամասերը մտնում են Հայաստանի սահմանները՝ Երևանի վրա արշավելու նպատակով։ Բյուրականցի քաջ ու անձնազոհ երիտասարդ Հովհաննես Ասլանյանին կարևոր հանձնարարությամբ ուղարկում են էջմիածին։ Ճանապարհին պարսիկները նրան բռնում են և հարկադրում տեղեկություններ տալ ռուսական զորքերի և իրեն տրված հանձնարարությունների մասին։ Սակայն խիզախ հայրենասերը լռում է։ Զայրացած սարբազները կտրում են Ասլանյանի քիթը, փորում մեկ աչքը, սակայն դա էլ չի ընկճում խիզախ հայրենասերին, նա հրաժարվում է որևէ գաղտնիք հաղորդել։ Այդ ժամանակ գաղափած պարսիկները կտրում են նրա լեզուն և արյան մեջ շաղախված նետում են ամայի դաշտը և հեռանում։ Ասլանյանը հաղթահարելով անասելի ցավերը, հասնում է էջմիածին, ձեռքի շարժումներով կարողանում է հաղորդել իրեն տրված հանձնարարությունը։ Անձնազոհ խիզախության համար Ասլանյանը պարգևատրվում է Ոսկե մեդալով, նրան ցմահ նշանակվում է տարեկան 200 ռ. թոշակ[12]։

Բազմաթիվ հայեր՝ կամավորական դումարտակների և

---

11 Տե՛ս Ալ. Սերիյան, նշվ. աշխ., էջ 293—294։

12 Նույն տեղում, էջ 282—283։

աշխարհագրական ջոկատների պինվորներ, զորահրամանատարներ, պաշտոնյաներ, հետախույզ-սուրհանդակներ, թարգմանիչներ, ռուսական բանակին մատուցած ծառայություններ համար արժանացան մարտական շքանշանների ու զանազան պարգևների։

Այսպիսով, Անդրկովկասի հայերը ռազմական, նյութական օգնություն ցույց տալու, հետախույզի, սուրհանդակի պարտականություններ կատարելու, վիրավորներին խնամելու, տրանսպորտի իրենց միջոցները տրամադրելու և բազմաթիվ այլ հանձնարարություններ կատարելով ու ծառայություններ մատուցելով ակտիվորեն օգնում են ռուսական զորքերին։ Իզուր չէ, որ հայերի մատուցած ծառայությունները նկատի ունենալով, Խ. Աբովյանը գրել է. «Ինչ որ պարսից կռվի ժամանակին հայերն արին... թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան»[13]։

Վերևում հիշատակված սակավ փաստերից անգամ պարզորոշ երևում է, որ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմների ընթացքում հայ ժողովուրդը անվերապահորեն ունենալով ռուսական կողմնորոշում, ակտիվ մասնակցեց այդ պատերազմներին։ Նա ռուսական վենքի հաղթանակի միջոցով ձգտում էր ազատագրվել պարսկական խանների ու թուրքական փաշաների դարավոր լծից։ Այդ առումով հայ ժողովուրդը ազատագրական պայքար էր մղում։ Դա է պատճառը, որ նա իր կարողությունների սահմաններում համակողմանիորեն օգնում էր ռուսական բանակին և հնարավոր ամեն բան անում նրա հաղթանակն ապահովելու համար։

* * *

Ռուս-պարսկական պատերազմի ավարտից մի քանի ամիս անց, 1828 թ. ապրիլի 14 (26)-ին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը՝ երկու ռազմաճակատով՝ Բալկանյան

13 Խ. Աբովյան, Նշվ. ժող., էջ 121։

և Կովկասյան։ Կովկասյան ճակատում հիմնական խնդիրն էր կայսրության հարավային սահմանները ամրապնդելու ու անվտանգ դարձնելու նպատակով գրավել մերձսևծովյան և հարավային մի շարք քաղաքներ ու ամրություններ և ակտիվ ռազմական գործողություններով ջլատել Թուրքիայի բանակը, հնարավորություն չտալով հակառակորդին խոշոր ուժեր կուտակել պատերազմի հիմնական թատերաբեմում՝ Դանուբ-բալկանյան ռազմաճակատում։

Ապրիլի 14-ին Կովկասի ռուսական բանակի գլխավոր ուժերը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ Գյումրիի (այժմ՝ Լենինական) մոտից անցնելով Արփաչայ (Ախուրյան) գետը, շարժվում են դեպի Կարս։ Կոտրելով Քշնամու դիմադրությունը, ծանր հարված հասցնելով հատկապես Թուրքական հեծելազորին, ռուսական զորքերը պաշարում են Կարսի նշանավոր բերդը։ Կարսը Թուրքիայի սահմանային խիստ ամրացված, կարևոր բերդերից էր, որը միաժամանակ հենակետ էր հանդիսանում Կովկաս արշավելու համար։ Այն շրջափակված էր հաստ ու բարձր երկշարք պարիսպներով, որոնց բուրգերը հարմարեցված էին հրանոթների համար, իսկ բերդի ներսում վիթխարի ժայռերի վրա բարձրանում էր նրա անառիկ միջնաբերդը։ Թուրքական հրամանատարությունը մեծ հույսեր էր կապում Կարսի բերդի և նրա լավ զինված կայազորի հետ։ Երեք օր շարունակ կատաղի մարտեր են տեղի ունենում, ռուսական ծանր հրետանին հարմար դիրքերից ռմբակոծում էր բերդը, իսկ զորքերը անընդհատ գրոհների դիմում։ Համառորեն դիմադրում էր թուրքական կայազորը։ Վերջապես, հունիսի 23-ին ահեղ ճակատամարտերից հետո ռուսներին հաջողվում է գրավել բերդը։ Նրանց ձեռքն է անցնում հսկայական քանակությամբ ռազմամթերք։ Ռուսներին մեծ օգնություն ցույց տվեցին տեղի հայերը։ Կարսից հետո ռուսական զորքերը հեշտությամբ գրավում են Ախալքալաքը, իսկ օգոստոսի 15-ին համառ գրոհներից ու արյունահեղ ճակատամարտերից հետո՝ Ախալցխան, ապա Արդահանը։

Այդ նույն ժամանակ նորաստեղծ Հայկական մարզի կառավարիչ գեներալ Ա. Ճավճավաձեն իր զորագնդով, հայերից

և ադրբեջանցիներից կազմված աշխարհազորային ջոկատով գրավում է Բայազետը, Դիադինը, իսկ սեպտեմբերի 12-ին՝ Ալաշկերտը։ Ռուսական զորամասերը հաջողություններ են ունենում նաև Սև ծովի առափնյա շրջաններում և գրավում Անապան, Սուխումը և Փոթին։

Թուրքական հրամանատարությունը Կովկասյան ճակատում կենտրոնացրել էր մեծաքանակ բանակ և ծրագրում էր հաջորդ տարվա՝ 1829 թ. սկզբներից հարձակման անցնել և նոր գրավել կորցրած տերիտորիաները։ Թշնամու 20.000-անոց բանակը փետրվարին պաշարում է Ախալցխան։ Արյունալի մարտերից հետո հակառակորդը ներխուժում է անգամ քաղաքի փողոցները, սակայն ամրոցի կայազորը, գեներալ Վ. Բեհբութովի գլխավորությամբ, հերոսաբար դիմադրում է թշնամուն մինչև օգնական ուժերի հասնելը։ Նույն ձևով թուրքերին չի հաջողվում ընկճել Բայազետի կայազորի ու հայ աշխարհազորայինների համառ դիմադրությունը և գրավել այն։

Թուրքական բանակների հարձակումները նոր շպրտելուց հետո ռուսական զորքերը առաջ են շարժվում և 1829 թ. հունիսին գրեթե առանց կռվի գրավում Արևմտյան Հայաստանի ամենախոշոր քաղաքը, Թուրքիայի ռազմատնտեսական գլխավոր կենտրոն Էրզրումը (Կարին)։ Ապա արագորեն մեկը մյուսի հետևից գրավում են Օլթին, Քղին, Խնուսը, Մուշը, Դերջանը, Բաբերդը։

Էրզրումի գրավման օրերին ռուսական գործող բանակ եկավ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը, հանդիպեց իր եղբոր և ընկերների հետ, եղավ Էրզրում քաղաքում, շփվեց տեղի բնակչության հետ։ Նա Կարս—Գյումրի—Թիֆլիս երթուղով վերադարձավ Ռուսաստան և իր տպավորությունները շարադրեց «Ճանապարհորդություն դեպի Արզրում» հայտնի երկում։

Ռուս-թուրքական պատերազմի ելքի հետ մեծ հույսեր էին կապում արևմտահայերը։ Արևելյան Հայաստանի թարմ օրինակով նրանք ռուսական զենքի հաղթանակի միջոցով ձգտում էին ազատագրվել սուլթանական ծանր ու անապա-

հով տիրապետությունից։ Այդ նպատակով էլ պատերազմական գործողությունների ընթացքում նրանք նույնպես մեծ ոգևորությամբ տարբեր ձևերով օգնում ու նպաստում էին ռուսական զորամասերի հաղթանակին։ Բերենք հայերի վերաբերմունքը բնութագրող մի քանի վկայություն։ Խոսելով 1828 թ. օգոստոսին Բայազետի գրավման մասին, Ա. Ս. Գրիբոյեդովը գրում է. «Անհնարին է նկարագրել այստեղի բնակիչների, մեծ մասամբ հայերի հրճվանքը, որոնք դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին, մուսուլմանների երկարատև տանջալից լծից իրենց ազատողներին»[14]։ Այդ նույն դեպքերի մասին պատմաբան Ալ. Երիցյանը գրում է. «Օգոստոսի 27-ին ռուսաց զորքը մոտեցավ Բայազետ քաղաքին... Հազիվ ռուսները մի երկու բնդանոթ արձակեցին, որ ահա բացվեցին բերդի դռները և հայոց հոգևորականությունը խաչով ու խաչվառով, ցնծացող հայերի բազմությամբ, առաջ եկավ քրիստոնեաբար ողջունելու և ընդունելու սպասած ռուսներին»[15]։ Ռուսական զորքերի էրզրումի արշավանքի մասին խոսելով, նույն հեղինակը նկատում է. «Պասկևիչը արագությամբ և անարգելք առաջ էր ընթանում դեպի Էրզրում։ Նրան խումբ-խումբ դիմավորում էին Բասենի հայ գյուղացիք և իրենց ունեցած չունեցածը անկեղծ սիրով ընծա էին բերում ռուսաց զորքին»[16]։

Ռուսական զորքի առաջընթացին աջակցեցին ու նրանց գրկաբաց ընդունեցին Կարսի, Արդահանի, Ախալցխայի և Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքների ու բնակավայրերի հայերը։ Սակայն ռուսաց զորքերի հաղթանակին հայերի բերած նպաստը միայն դրանով չսահմանափակվեց։ Պատերազմի հենց սկզբից ռուս-պարսկական պատերազմի օրինակով արևելահայերը կազմեցին կամավորական հետևակ ու հեծյալ աշխարհազորային ջոկատներ։ Ռուսական հրամանա-

---

14 Տե՛ս Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 97։

15 Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 407։

16 Նույն տեղում, էջ 418։

տարությունը ընդառաջեց հայերի այդ ցանկությանը, մանավանդ որ թուրքական բանակը քանակով մեծապես գերազանցում էր ռուսականին։

1828 թ. փետրվարին Երևանում ստեղծվեց 400 հայերից բաղկացած «Հայկական հեծյալ գունդ» և 800 հոգուց կազմված «Հայկական հետևակային գումարտակ»։ Նրանք խաղաղ ժամանակ Հայկական մարզի համար սահմանային պահակային ծառայություն էին կատարում, իսկ պատերազմը սկսվելուն պես մեկնեցին ռազմաճակատ։ Սկզբնական շրջանում արևմտահայերը մտնում էին Արևելյան Հայաստանից եկած կամավորական այդ ջոկատների մեջ և կռվում նրանց շարքերում։ Հետագայում, 1929 թ. սկզբներից, նրանք ստեղծում են իրենց ինքնուրույն ջոկատները։ Թշնամու դեմ մղվող մարտերում լայնորեն հայտնի դարձավ բայազետցի Մելիք-Մարտիրոսի 500 հոգուց բաղկացած ջոկատը։ Կամավորական նման ջոկատներ ստեղծեցին նաև Ալաշկերտի, Բասենի, Էրզրումի, Մուշի, Արդահանի և մյուս գավառների հայերը։ Ռուս-թուրքական պատերազմին Արևելյան Հայաստանից մասնակցում էին շուրջ 3000 հայ աշխարհազորայիններ[17], իսկ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հավաքագրված կամավորների թիվը անցնում էր դրանից։

Հայ կամավորները ակտիվորեն մասնակցում էին ռուսական զորամասերի ռազմական գործողություններին, ռուսների կողմից գրավված քաղաքներն ու բերդերը պաշտպանելու, դևպի Թուրքիայի խորքերը գերության քշվող հայերին ազատելու գործին։ Հայերի հետ մեկտեղ պատերազմական գործողություններին ակտիվորեն մասնակցում էին նաև վրացական և ադրբեջանական կամավորական ջոկատները։

1829 թ. ամռանը ռուսները մեծ հաջողություններ հասան նաև Բալկանյան ռազմաճակատում։ Ռուսական բանակը գրավում է Սիլիստրա ամրոցը, Բուրգաս քաղաքը, Ադրիանապոլիսը և սկսում նախապատրաստվել Թուրքիայի մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի վրա արշավելու համար։ Երկու

17 Նույն տեղում, էջ 453։

ռազմաճակատներում ռուսների տարած փայլուն հաղթանակները և թուրքական բանակների կատարյալ պարտությունը մեծ անհանգստություն ու իրարանցում առաջ բերեց արևմտյան տերությունների մեջ։ Անգլիան, Ֆրանսիան և Ավըստրիան Ռուսաստանին սպառնում էին պատերազմ սկսել, եթե նրա զորքերը շարժվեին Կոստանդնուպոլսի վրա։ Նրանց ակտիվ միջնորդությամբ էլ 1829 թ. սեպտեմբերի 2 (14)-ին Ադրիանապոլսում կնքվում է հաշտության պայմանագիր։

Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանին անցան Դանուբի գետաբերանը, Սև ծովի արևելյան ափը՝ Անապա և Փոթի նավահանգիստներով և Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալքալաք և Ախալցխա բերդաքաղաքներով։ Թուրքիան ճանաչեց Հունաստանի անկախությունը, Մոլդավիայի, Վալախիայի, Սերբիայի ավտոնոմիան, ինչպես նաև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և այլն։ Արևելքում Ռուսաստանի հզորացման հակառակորդ արևմտյան տերությունների ճնշման տակ հաշտության պայմանագրով Թուրքիային վերադարձվեցին Կարսը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Էրզրումը և պատերազմի ընթացքում գրավված Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները։

Այսպիսով, թեպետ ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի փայլուն հաղթանակով, հաշտության պայմանագիրը ամենևին չարդարացրեց հայերի հույսերը, նրանց արդարացի ցանկություններն ու ակնկալությունները։ Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ սուլթանական Թուրքիայի դաժան տիրապետության տակ։ Արևմտահայության խնդիրը հետագայում դարձավ միջազգային դիվանագիտության հարց, որը ի վերջո, ինչպես հայտնի է, ողբերգական նշանակություն ունեցավ նրա համար։

* * *

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին ակտիվ ու գործուն մասնակցություն ունեցան դեկաբրիստները՝ ռուս ազնվականական հեղափոխականների փառապանծ

սերնդի այն ներկայացուցիչները, որոնք աքսորվել էին Կովկաս՝ «տաք Սիբիր»։ Նիկոլայ I-ը դեկաբրիստներին աքսորելով Կովկաս հույս ուներ, որ պատերազմի ռազմաճակատներում նրանք ավելի շուտ կկնքեն իրենց մահկանացուն, քան խստաշունչ Սիբիրում։ Այդ նպատակով դեկաբրիստներին ուղարկում էին ռազմաճակատի ամենավտանգավոր տեղամասերը։ Կովկաս ուղարկվեցին յոթանասուն աստիճանազրկված սպաներ և դեկաբրիստների ապստամբության շարքային մասնակիցներից շուրջ 3000 զինվոր[18]։ Այս վերջիններից կազմվեց առանձին զորամաս՝ լեյբ-գվարդիական հավաքական գունդ անունով։ Դեկաբրիստներից կազմված այդ գունդը Կովկասի ռուսական զորքերի ավանգարդն էր կազմում և ակտիվորեն մասնակցեց ու խիզախորեն մարտնչեց Արևելյան Հայաստանի ազատագրման համար պարսիկների դեմ մղվող դրեթե բոլոր հիմնական ճակատամարտերին։ Կովկասյան կորպուսի զլխավոր հրամանատար, դեկաբրիստների նկատմամբ բշնամաբար տրամադրված գեներալ Ի. Պասկևիչը, որը Նիկոլայ I-ի հրահանգի համաձայն ամենախիստ հսկողություն էր սահմանել դեկաբրիստների վրա և նրանց օգտագործում էր ռազմաճակատի ամենադժվարին ու վտանգավոր մասերում, Ջևան-Բուլաղի ճակատամարտից հետո հարկադրված էր այդ գնդի մասին գրել. «...Բոլորից ավելի արժանի է զվարդիական գունդը, որի կարգը և եռանդը անպատկերելի է։ Ես երջանիկ եմ, որ դրան կարող եմ օրինակ դարձնել այստեղի կորպուսի այլ զորքերի համար»[19]։

Լեյբ-գվարդիական հավաքական գունդը մեծ դեր խաղաց Սարդարապատի և Երևանի բերդերի գրավման ժամանակ։ Երևանի բերդը պաշարող զորքերի առաջին շարքերում էին դեկաբրիստ զինվորները։ Հոկտեմբերի 1-ին վաղ առավոտյան սկսելով համարձակ գրոհը, լեյբ-գվարդիական գունդը առաջինը մտավ բերդ։ Սարդարապատի և Երևանի գրավման

---

18 Տե՛ս Մ. Նեռսիսյան, *Դեկաբրիստները Հայաստանում*, Երևան, 1958, էջ 12։

19 Տե՛ս Ջ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 300։

գործում գնդի մարտիկների ցուցաբերած խիզախությունը այնքան ակնառու էր, որ նրանցից շատերը արժանացան պարգևների։ Լեյբ-գվարդիական գունդը առաջին գծում մարտընչելով, հասավ մինչև Բավլիզ։ Բուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո գունդը նա կանչվեց Պետերբուրգ։

Դեկաբրիստ սպաների ռազմական հարուստ փորձն ու խոր գիտելիքները կարևոր նշանակություն ունեցան Կովկասյան կորպուսի մարտունակությունը բարձրացնելու և առհասարակ պատերազմական գործողությունների ընթացքում։ Նման, աչքի ընկնող դեկաբրիստներից էր Միխայիլ Իվանովիչ Պուշչինը։ Ռազմական արվեստի իր խոր գիտելիքների շնորհիվ Պուշչինը փաստորեն դարձավ Կովկասյան կորպուսի ինժեներական մասի ղեկավարը։ Արևելյան ու Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր կարևոր բերդերի ու քաղաքների պաշարման ու գրավման ռազմաինժեներական պլանները մշակվել և իրականացվել են Մ. Պուշչինի անմիջական ղեկավարությամբ, որոնցում նա դրսևորել է մեծ հմտություն ու անձնական քաջություն։ Երևանի գրավման համար նրան շնորհվեց Սբ. Աննայի 2-րդ աստիճան։

Օշականի ճակատամարտին, Երևանի ու Սարդարապատի գրավմանը և Արևմտյան Հայաստանում ծավալված ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցեց Եվդոկիմ Լաչինովը և ցուցաբերած խիզախության համար ստացավ Սբ. Աննայի 4-րդ կոչում։ Երևանի ժամանակավոր վարչությունում գեներալ Կրասովսկու մոտ պաշտոնավարելու շրջանում Ե. Լաչինովը բազմիցս շրջագայեց Արևելյան Հայաստանում և թողեց հետաքրքիր հուշագրություններ։

Պատերազմական գործողություններում, մասնավորապես Կարսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Արդահանի հաղթական ճակատամարտերում ռազմական գործի գիտակությամբ, հրամանատարական տաղանդով ու քաջությամբ աչքի ընկավ Իվան Բուրցովը։ 1829 թ. հուլիսի 19-ին Բայբուրդի արյունալի ճակատամարտում զոհվեց արդեն գեներալ-մայորի աստիճան կրող անվեհեր հրամանատարը։ Դեկաբրիստ Ն. Լորենը նրա մասին գրել է. «Ջուննենալով երկյուղ, հաճախ տաքար-

յուն, նա ընթանում էր բոլորի առջևից, իրեն նետելով ամենավտանգավոր տեղերը»[20]։

Ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցեցին Հայրենական պատերազմի հերոս, պարտիզան Դ. Դավիդովը, դեկաբրիստներ Ա. Դանգեբլովը, Ն. Դեպրերադովիչը, Բեստուժև և Կոնվիցին եղբայրները, Ֆ. Վիշնևսկին, Ն. Սեմիչևը, Ա. Բեստուժև-Մարլինսկին, Վ. Վոլխովսկին, Ի. Միկլաշևսկին, Ա. Ռիևսկևիչը, Ն. Օրժիցկին, Ա. Վերդենյապինը, Դոնի կողակության նշանավոր պատմաբան Վ. Սուխորուկովը, ռուս հանրահռչակ զորավար Ա. Վ. Սուվորովի թոռ Ա. Սուվորովը, հանճարեղ պոետ Ա. Ս. Պուշկինի եղբայր Լև Պուշկինը և շատ ուրիշներ։

Կովկաս աքսորված դեկաբրիստներից շատերը շփվեցին ու կապեր հաստատեցին տեղական ժողովուրդների գործիչների հետ։ Հայտնի են Կովկասյան կորպուսում ծառայող որոշ դեկաբրիստների ծանոթությունն ու բարեկամական հարաբերությունները վրաց և ադրբեջանական ժողովուրդների ականավոր գրողների ու հասարակական գործիչների՝ Ա. Ճավճավաձեի, Գ. Օրբելիանիի, Ա. Բակիխանովի, Մ. Ախունդովի և ուրիշների հետ։

Ինչպես ցույց են տալիս պահպանված վավերագրերը, դեկաբրիստներից ոմանք ծանոթ են եղել ու շփումներ ունեցել նաև հայ նշանավոր գործիչներ Հ. Ալամդարյանի, Ն. Աշտարակեցու, Շ. Ջրպետյանի հետ[21]։ Հ. Ալամդարյանը իր մի շարք նամակներում խոր հարգանքով ու ջերմությամբ է խոսում Մ. Պուշչինի մասին և խնդրում Ն. Աշտարակեցուն նյութապես օգնել նրան։ 1827 թ. Երևանյան արշավանքի շրջանում բավական լավ հարաբերություններ են ստեղծվում Մ. Պուշչինի և Ն. Աշտարակեցու միջև։ Ե. Լաչինովը ծանոթ է եղել և հանդիպումներ ունեցել պրոֆեսոր Շահան Ջրպետյանի հետ՝ Երևանի մարզի վիճակագրական նկարագրությունը կազմելու առիթով։ Լաչինովը ոչ միայն ծանոթ էր Ն. Աշտա-

---

20 Մ. Նեբսխյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 119։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 223—232։

բակեցուն, այլև նրա հետ մի շարք ուղևորություններ է կատարել Արևելյան Հայաստանում։ Կովկաս աքսորված դեկաբրիստներից շատերը ծառայության ընթացքում առիթներ են ունեցել շփվելու, համատեղ մարտնչելու և մոտիկից ծանոթանալու հայ զինվորական հրամանատարների՝ գեներալներ Վ. Բեհբութովի, Վ. Մազաթովի, գնդապետ Լ. Լազարևի և ուրիշների հետ[22]։

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին, հատկապես Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու գործում ակտիվ մասնակցություն ունեցավ դեկաբրիստների հետ լավ հարաբերությունների մեջ գտնվող և այդ պատճառով ցարական արքունիքի կողմից կասկածելի համարվող, Պուշկինի խոսքերով ասած «Ռուսաստանի ամենախելոք մարդկանցից մեկը», ռուս նշանավոր գրող, հայ ժողովրդի լավագույն բարեկամ Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովը[23]։ Լինելով Ռուսաստանի առաջավոր, դեմոկրատական մտքի փայլուն ներկայացուցիչներից, նա իր դիրքն ու կապերը օգտագործում էր դեկաբրիստ աքսորյալների դրությունը մեղմելու և բարելավելու համար։ Պատմական դեպքերի բերումով Անդրկովկասում Ա. Գրիբոյեդովը շփվեց հայ ժողովրդի հետ, մոտիկից ծանոթացավ նրա դարավոր անցյալին ու հարուստ կուլտուրային, ականատես եղավ նրա ծանր վիճակին և խոշոր դեր կատարեց Ռուսաստանի օգնությամբ ոտքի ելած ժողովրդի ազատագրական պայքարում։ Ա. Գրիբոյեդովը հանդիսանում էր Կովկասի ռուսական բանակի դիվանագիտական մասի պետը և գործուն մասնակցություն ունեցավ Պարսկաստանի հետ տեղի ունեցող դիվանագիտական բանակցություններում, Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուն։ Նա հետևողական ու եռանդուն գործունեություն ծավալեց Պարսկաստանից հայ գերիներին վերադարձնելու, հայերի ներգաղթին աջակցելու, Հայկական մարզը կազմակերպելու գործում։

22 Նույն տեղում, էջ 232—237։

23 Այդ մասին տե՛ս Վ. Պաւսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները։

Պարսկաստանում ռուսական դեսպանի պաշտոնում նա մեծ ջանք ու եռանդ էր թափում խանական տիրապետությունում գտնվող գերիներին, առաջին հերթին հայերին, ազատելու և հայրենիք առաքելու գործում: Այդ պարտականությունները կատարելու ընթացքում էլ ողբերգական ձևով կտրվեց նրա կյանքի թելը: 1829 թ. հունվարի 30-ին, ոչ առանց անգլիական դիվանագետների հրահրումի, պարսկական մոլեռանդ խաժամուժ ամբոխը հարձակվում է ռուսական դեսպանության վրա, որտեղ զոհվում է նաև դեսպան Ա. Գրիբոյեդովը:

Ռուսական դեսպանի մահը մեծ վիշտ պատճառեց հայերին, որոնք նրա նկատմամբ տածում էին երախտագիտության ու խոր հարգանքի զգացում: Թավրիզի ռուսական հյուպատոսը, նկարագրելով հայկական եկեղեցում հանգուցյալի հոգեհանգստի արարողությունը, նշում է. «Ժողովուրդը չափազանց շատ էր՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնք կարծես բոլորն էլ կենդանի մասնակցություն էին ցույց տալիս հանգուցյալի դժբախտ ճակատագրին. նրանց մեջ հաճախ լսվում էին բարձրաձայն լաց ու կոծ: Կանայք մինչև ուշ գիշեր չէին հեռանում եկեղեցուց: Միայն պետք է նկատել, որ դրանք մեծ մասամբ հայեր էին, որոնց այդօրինակ վշտակցությունը, անշուշտ, պատիվ է բերում այդ ժողովրդին»[24]:

Դեկի էրզրում կատարած ուղևորության ժամանակ Բզովդալի լեռնանցքում Ա. Պուշկինը հանդիպում է Թիֆլիս տարվող Գրիբոյեդովի աճյունին. «Ես չէի կարծում,— գրում է նա,— թե երբևիցե կհանդիպեմ մեր Գրիբոյեդովին: Ես բաժանվեցի նրանից անցյալ տարի Պետերբուրգում, նրա Պարսկաստան դնալուց առաջ: Նա տխուր էր և տարօրինակ նախազգացումներ ուներ»[25]:

Դեկաբրիստներն ու նրանց համակիր գործիչները, լինելով ռուսական ազնվականության, նրա դեմոկրատական մտա-

---

[24] «Акты, собранные Кавказской археографической комиссией», т. VII, стр. 697.

[25] Ա. Ս. Պուշկին, *Ճանապարհորդություն դեպի Արզրում, Երևան, 1937, էջ 30:*

վորականության լավագույն ներկայացուցիչները, ինչպես ամենուր, Կովկասում ևս հեռու էին ճնշվող փոքր ազգերի նկատմամբ մեծապետական վերաբերմունք ունենալուց։ Նրանք աչնիվ, համեստ, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անձնավորություններ էին։ Այդ են հավաստում նրանց ծառայության ընկերների վկայություններն ու պահպանված այլ նյութերը։ Այսպես, օրինակ, Պյոտր Բեստուժևը դեկաբրիստ Սուվորովի մասին գրել է. «Վեհ բնավորությամբ օժտված, մաքուր բարոյականության տեր, աչնիվ ու զգայուն հոգի ունեցող մի երիտասարդ, որի խելքն ու ռազմական ընդունակությունները անմար են պահում նրա մեծ պապի փառքը... Լինելով ամեն մի անարդարության թշնամի, տոդորված բարձր պաշտպաններով, վտանգի պահին անվեհեր ու քաջ, իրենից բարձրերի հանդեպ հպարտ, իսկ հավասարների ու ստորադասների նկատմամբ հեզ ու սիրալիր՝ նա մեր խղճուկ դնդի զարդն է հանդիսանում»[26]։

Դեկաբրիստ Ն. Լորերը, որը Կովկասում մտերմական հարաբերություններ մեջ էր Լ. Պուշկինի հետ, գրել է. «Լև Պուշկինը իմ երբևիցե ունեցած ամենահաճելի ըրուցակիցներից մեկն է՝ իր հիանալի սրտով ու վսեմ աչնվությամբ։ Նա բազմաթիվ լավ բանաստեղծություններ է գրել, բայց համեստությունից դրդված ոչինչ չի տպագրում... Ունի արտասովոր հիշողություն և կարդում է բանաստեղծություններ՝ ընդհանրապես, և իր եղբոր բանաստեղծությունները հատկապես... Ամբողջ արշավանքը նա անցկացրեց մի կաշվե բարձով, իր հնամաշ շինելով, ուսերին գցած մի զույգ զգեստով ու թրով, որը նա երբեք չէր հանում իր վրայից»[27]։

Դեկաբրիստները հանդիսանում էին ժամանակի կիրթ ու լուսավորված հասարակաշերտերի ներկայացուցիչները։ Նրանք Անդրկովկասում շարունակում էին իրենց մշակութային գործունեությունը։ Այս առումով ուշագրավ է, որ Ա. Գանգեբլովի և Պ. Կոնովնիցինի նախաձեռնությամբ ռուս սպաներից երե-

---

26 Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 55—56։

27 Նույն տեղում, էջ 58։

վանում կազմակերպվում է մշակութային մի խմբակ, որի անդամները ծանոթանում են Հայաստանին, նկարում բնապատկերներ և մշակութային գործունեություն ծավալում։ Նրանք ծանոթանում ու քննարկում են Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի ձեռագիրը և Երևանի սարդարի պալատի հայելապատ դահլիճում 1827 թ. կազմակերպում նրա առաջին բեմադրությունը, որին ներկա էր նաև հեղինակը։

Դեկաբրիստները Կովկասում շփվել են տեղի ժողովուրդների հետ, ծանոթացել նրանց կուլտուրային ու պատմությանը և շատերը նրանցից իրենց օրագրերում, հուշերում ու թղթակցություններում կարևոր ու հետաքրքիր գրառումներ են կատարել։ Հայաստանի, նրա բնության, բնակավայրերի, պատերազմական գործողությունների, հայ ժողովրդի, նրա կենցաղի, դեպի ռուսներն ունեցած վերաբերմունքի մասին գրել են Ե. Լաչինովը, Վ. Վոլխովսկին, Ա. Բեստուժև-Մարլինսկին, Մ. Պուշչինը, Ա. Դանգելովը, Ա. Վեգենյապինը և ուրիշներ։

Բավական տխուր ու մռայլ տպավորություն է թողել Հայաստանի վիճակը նշանավոր դեկաբրիստ Ա. Բեստուժև-Մարլինսկու վրա։ «Լողանալով Թիֆլիսի տաք աղբյուրներում,— գրում է նա,— ես շուտով իմ ետևում թողեցի Վրաստանի ծաղկող բնությունը և Արփաչայ գետի մյուս կողմում մտա նվաճված թուրքական հողը։ Տխուր տեսարաններ են՝ դաշտերն առանց կանաչի, սարերն առանց անտառի... բնակիչները ցնցոտիների մեջ են, մտացածին կամ իսկական, որովհետև Ասիայում միայն ծայրահեղ աղքատությունն է փրկում իշխանությունների ագահությունից»։ Արևելյան Հայաստանի մասին նա իր նամակներում գրում է. «Ես թափառում էի այնուհետև Հայկական թագավորության ավերակներում, ես տեսա վշտոտ երկիրը, ես տրորեցի Արարատի ստորոտները, եղա Սարդարապատում, ապա Երևանում, որը դեռ վարակված էր ժանտախտով։ Տեսա մեր ռումբերի և արկերի հարվածների հետքերը նրա մզկիթների վրա. տեսա այն ագետալի ճանապարհը, որով դեպի էջմիածին էր գնացել

Կրասովսկին, որտեղ ընկան այնքան ռուսներ չհաղթված, բայց հոգնած։ Ահռելի այդ ամբողջ երկիրը թախիծ է բերում մարդու սրտին, մերկ, այրված, հրաբխային սարեր, անկենդան տափաստաններ ու կիրճեր, որտեղ բարձրանում է փոշին և աղմկում աղբախառը»[28]։

Ե. Լաչինովը ականատես է եղել և իր օրագրում բազմիցս անդրադարձել ու պատկերավոր լեզվով ներկայացրել ռուսների նկատմամբ հայերի ունեցած վերաբերմունքի անսքող դրսևորումները։ «Աննկարագրելի են ուրախության այն սրտառուչ տեսարանները,— գրում է նա,— որով մեզ դիմավորում էին հայկական ընտանիքները, երբ մենք գրավում էինք Երևանը»[29]։ Մեկ այլ առիթով Ե. Լաչինովը գրում է. «Երբ մեր զորքերը մտան Թուրքիա, ապա ոչ մի գյուղում մենք չհանդիպեցինք ոչ մի մարդկային արարածի, հայերին բռնի կերպով քշել էին երկրի խորքերը, թաթարները իրենք էին թողնում իրենց բնակարանները, խուսափելով պատերազմի սարսափներից... Տեղեկանալով ռուսական բանակի մոտենալու մասին, իրենց գյուղերից բռնի կերպով հեռացված հայերը ներկայացուցիչներ ուղարկեցին ռուսական հրամանատարության մոտ, խնդրելով «իրենց ազատել ճնշողների ձեռքից և ընդունել ռուսների հովանավորության տակ»[30]։

Ի տարբերություն ցարական ռեակցիոն գեներալների ու չինովնիկների, որոնք արհամարհում էին տեղական ժողովուրդներին և Կովկաս էին գալիս ցարիզմի գաղութային քաղաքականությունը իրականացնելու համար, դեկաբրիստները առաջնորդվում էին այլ համոզմունքներով, ազատասիրական ու հումանիստական գաղափարներով։ Նրանք, լինելով ցարական միապետության թշնամիներ, բուռն համակրությամբ էին վերաբերվում տիրող բռնապետությունների դեմ ուղղված ճնշված փոքր ժողովուրդների ազատագրական շարժումներին։ «...դու, երբեմնի մեծահռչակ Հայաստան,— գրում էր

28 Նույն տեղում, էջ 259—261։
29 Նույն տեղում, էջ 355։
30 Նույն տեղում, էջ 250։

Ե. Լալինովը,— դու, որ մեզ մինչև հիմա հիացնող այդքան հուշարձաններ ես թողել, ի՞նչ է քեզ սպասում։ Կհայտնվե՞ս արդյոք նորից փառքի ասպարեզում, թե քո տխուր զավակներին վիճակված է հավիտյանս լքյալ գոյություն»[31]։

Ահա թե ինչ մտահոգում ունեին ամեն մի ճնշման ֆշնամի դեկաբրիստները թուրքական ու պարսկական բռնատիրության դեմ ուղղված հայ ժողովրդի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների ազատագրական շարժմանը։ Ինչպես վերևում տեսանք, դեկաբրիստները զենքը ձեռքներին մասնակցեցին և շատերը նրանցից հերոսաբար զոհվեցին Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության համար մղվող պայքարում։

* * *

Դարեր շարունակ Հայաստանում ստեղծված դժնդակ պայմանների, պարսկական և թուրքական բռնակալների կողմից կազմակերպված գաղթեցումների ու տեղահանումների հետևանքով Հայաստանում հայ ազգաբնակչությունը բավական նվազել, պակասել էր։ Անգամ Հայաստանի կենտրոնական մասում, նրա սիրտը հանդիսացող Երևան քաղաքում ու Արարատյան դաշտում մահմեդական տարրը իր քանակով գերազանցում էր հայ ազգաբնակչությանը։ Թուրքական և պարսկական իշխողները Հայաստանը հայերից դատարկելու քաղաքականություն վարելով, ձգտում էին ձուլել ու դրանով երկրի երեսից վերացնել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկին։ Ժամանակի հայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչները լավ ըմբռնելով և ըստ ամենայնի գիտակցելով Հայաստանում ստեղծված ծանր իրավիճակը, առաջ էին քաշում և ջերմորեն պաշտպանում Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից հայ ազգաբնակչության գաղթը կազմակերպելու գաղափարը։

Տակավին 1827 թ. նոյեմբերին Դեհկարխանում Պարս-

---

31 Նույն տեղում, էջ 254։

կաստանի հետ սկսված հաշտության բանակցությունների ժամանակ Պասկևիչի և Դրիբոեդովի հետ տեսակցություն են ունենում Ն. Աշտարակեցու ուղարկած հայ պատվիրակներն (Բարսեղ արքեպիսկոպոս, Մարգար Եղիազարյան) ու խնդրում պայմանագրում նախատեսել նաև պարսկահայերի գաղթը կազմակերպելու և Ռուսաստանի տիրապետության ներքո նրանց համախմբելու հարցը։ Ցարիզմն իր հերթին շահագրգռված էր կայսրության ընդարձակված հարավային սահմանները մարդաշատ դարձնել և բնակեցնել Ռուսաստանին հավատարիմ ժողովուրդներով։ Ուստի նա Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերին գաղթեցնելու հարցին անտարբեր չէր նայում։

Թուրքմենչայի պայմանագրի տասնհինգերորդ հոդվածով իրավունք էր վերապահվում այն հայերին, որոնք կցանկանային գաղթել Պարսկաստանից, մեկ տարվա ընթացքում տեղափոխվել ռուսական տիրապետության սահմանները։

1828 թ. փետրվարին Երևանի մարզային ժամանակավոր վարչության կից կազմակերպվում է գաղթի հատուկ կոմիտե։ Գեներալ Պասկևիչի հրահանգում նշվում էին գաղթի կազմակերպման պայմանները։ Հրահանգի համաձայն գաղթը կազմակերպվելու էր լիովին կամավոր սկզբունքներով։ Գաղթականները ռուսական սահման հասնելուն պես անցնելու էին գաղթի կոմիտեի իրավասության տակ։ Գաղթի կոմիտեն հաշվի պետք է առներ նրանց զբաղմունքը, արհեստավորներին ու առևտրականներին բնակեցներ քաղաքներում, իսկ երկրագործներին՝ գյուղերում, պետական հողերի վրա։ Ներգաղթողները վեց տարով ազատվում էին հարկերից, նրանց հատկացվում էր որոշ նպաստ։ Գաղթողներին թույլատրվում էր իրենց հետ վերցնել շարժական գույքը, իսկ անշարժ կայքը՝ վաճառել։ Գաղթը կազմակերպվելու էր առաջին հերթին այն շրջաններից, որտեղից ամենից շուտ էին դուրս բերվելու ռուսական զորքերը։ Նրանց բնակեցնելու էին հիմնականում Երևանի և Նախիջևանի գավառներում։

Գաղթի կազմակերպման գործը հանձնարարվում է Լազարյան նշանավոր տոհմի ներկայացուցիչ գնդապետ Եղիա-

զար Լազարյանին, որի տրամադրության տակ է դրվում 25000 ռուբլի (արծաթ) գումար: Նրա օգնականներն էին Մովսես Արղությանը, Իսահակ Ղամազյանը, Իվանե Մելիք-Յանը, Ղորղանյան եղբայրները, ռուս զինվորականներ, այդ թվում գեկաբրիստներ Իսկրիցկին, Միլյուտինը և ուրիշներ:

Գնդապետ Լազարևի և Երևանում գտնվող գաղթի կազմակերպման կոմիտեի հետ մշտապես կապ էր պահպանում Պարսկաստանի ռուսական դեսպան Ա. Գրիբոյեդովը, որը գաղթի կազմակերպման, պարսկական գերությունից հայերին ազատելու, գաղթականների անշարժ գույքը տնօրինելու գործում խոշոր դեր կատարեց: Գաղթի կազմակերպման ոգեշնչողներից ու ամենաակտիվ դործիչներից էր Ներսես Աշտարակեցին:

Արևելյան Հայաստան տեղափոխվելու հնարավորության լուրը մեծ խանդավառությամբ է ընդունվում Պարսկաստանի հայ ազդաբնակչության կողմից: Գաղթել ցանկացողների թիվը այնքան մեծ էր և այդ ձգտումը այնքան ուժեղ, որ շատերը, չսպասելով անդամ իրենց համար սահմանված հերթին, սկսում էին շարժվել դեպի ռուսական սահմանը:

Պարսկական իշխանությունները և անգլիական գործակալները դիմում են զանազան միջոցների, անգամ կեղծ ու պրովոկացիոն լուրեր տարածելուն, գաղթը ձախողելու կամ գոնե խոչընդոտելու համար: Նրանք հայերի մեջ լուրեր էին տարածում, որ իբր ռուսական սահմանն անցնելուն պես բոլորը ճորտացվելու են, իսկ տղամարդիկ ցմահ զորակոչվելու են բանակ, աքսորվելու են Սիբիր և այլն: Չնայած այս ամենին գաղթը զանգվածային բնույթ է ընդունում:

1828 թ. գարնանն արդեն Պարսկաստանի հայաշատ վայրերից՝ Թավրիզի, Մակուի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Արդաբիլի շրջաններից ավելի քան 40.000 հայեր գաղթում, անցնում են Արևելյան Հայաստան: Նրանց բնակեցնում են Երևան, Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում, Սարդարապատի, Ջանգիբասարի, Արտաշատի, Վաղարշապատի, Ապարանի, Դարաչիչակի, Վեդիի, Ջանգեղուրի շրջաններում, ինչպես և Ղարաբաղում ու այլ վայրերում:

Ադրիանապոլսի պայմանագիրը դժվարին կացության մեջ էր դնում արևմտահայերին։ Ռուսաստանին միանալու նրանց հույսերը չարդարացան, պատերազմի ընթացքում գրաված վայրերը վերադարձվելու էին Թուրքիային։ Արևմտահայերը նույնպես ձգտում էին անցնել Ռուսաստանի տիրապետության տակ ոչ միայն թուրք փաշաների ծանր լծից ազատվելու նպատակով, այլև համոզված էին, որ թուրքական իշխանությունները վրեժխնդիր կլինեն պատերազմի ժամանակ ռուսներին ցույց տված օգնության ու աջակցության համար։ Այդ պատճառով էլ նրանք աշխատեցին օգտվել Ադրիանապոլսի պայմանագրի այն հոդվածից, որի համաձայն թույլատրվում էր երկու կողմերի հպատակներին մեկ երկրից տեղափոխվել մյուսը։ Հայերը շտապում էին գաղթել, քանի դեռ գրավված վայրերից դուրս չէր բերվել ռուսական զորքը։

Արևմտահայերի գաղթը կազմակերպելու համար Թիֆլիսում գեներալ-նահանգապետի ղեկավարությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որի տրամադրության տակ է դրվում 380.000 ռուբլի արծաթ դրամ։ Հաստատված կարգի համաձայն գաղթողները բաժանվում են երեք խավի՝ երկրագործներ, արհեստավորներ և առևտրականներ։ Երկրագործները բնակեցվելու էին գյուղերում, իսկ արհեստավորները և առևտրականները քաղաքատիպ վայրերում։ Գաղթողները պարսկահայերի նման վեց տարով ազատվում էին պետական հարկերից։

Թուրքական կառավարությունը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ձգտում են հայերին ետ պահել գաղթելուց, սակայն ապարդյուն։ Պատրիարքի էրզրում ուղարկած պատվիրակին, երբ վերջինս փորձում է համոզել հայերին վերադառնալ իրենց բնակավայրերը, նրանք պատասխանում են. «Եթե անգամ Քրիստոսն իջնի երկնքից և պահանջի մեզնից մնալ օսմանցվոց ձեռքում նրան էլ չենք լսի»[32]։

---

32 Տե՛ս Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 337—338, Զ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 403։

1829—1830 թթ. Էրզրումից, Կարսից, Արդահանից, Բայազետից և դրանց շրջակա հայկական գյուղերից Հայկական մարզ և Անդրկովկասի տարբեր շրջաններ են ներգաղթում ավելի քան 90.000 հայեր։

Էրզրումի փաշայությունից գաղթածները հիմնականում բնակվում են Ախալցխայում, Ախալքալաքում ու մերձակա գյուղերում, կարսեցիները՝ Շիրակի և Թալինի գյուղերում, բայազետցիները՝ Սևանի ավազանում, Դարաչիչակում։ Միայն Հայկական մարզում բնակություն են հաստատում ավելի քան 21.000 արևմտահայ գաղթականներ։

Այսպիսով, Պարսկաստանի և Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմի հետևանքով հնարավոր դարձած գաղթի շնորհիվ մեծապես փոխվեց Արևելյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմը։ Եթե մինչև Ռուսաստանին միանալը այնտեղ հայերի թիվը հասնում էր ընդամենը 25.151-ի, ապա գաղթից հետո հասավ 82.377-ի[33]։ Կազմակերպված ներգաղթը խոշոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ազգահավաքման և նրա հետագա զարգացման համար։

---

33 Տե՛ս Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 337—338։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արևելյան Հայաստանի միանալը Ռուսաստանին շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ և բախտորոշ նշանակություն ունեցավ նրա համար։

Ո՞րն էր պատմական այդ իրադարձության առաջադիմական նշանակությունը հայ ժողովրդի համար, չէ՞ որ նա չազատագրվեց սոցիալ-դասակարգային շահագործումից ու ճնշումներից։

1. Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու առաջադիմական նշանակությունը ամենից առաջ այն է, որ հայ ժողովուրդը փրկվեց ձուլման ու ֆիզիկական բնաջնջման վտանգից։

Շահական Պարսկաստանն ու սուլթանական Թուրքիան ոչ միայն մասնատել ու տիրացել էին Հայաստանին, այլև ազգային-կրոնական բիրտ ճնշումների ու հալածանքների էին ենթարկում, բռնի մահմեդականացման ու ձուլման քաղաքականություն էին տանում հնագույն այդ ժողովրդի նկատմամբ։ Միջֆեոդալական կռիվների, զանազան ավազակախմբերի անվերջ արշավանքների, հայ զանգվածների բռնի գաղթեցումների հետևանքով քայքայվում էր երկիրը, նվազում հայ բնակչության քանակը և գնալով նրա ֆիզիկական գոյությունը պրծում էր լուրջ վտանգի տակ։

Ռուսաստանին միանալու շնորհիվ այդ վտանգը վերացվեց։ Դադարեցին ներֆեոդալական կռիվներն ու զանազան

ցեղախմբերի ավերիչ արշավանքները։ Ռուսական կայսրության կազմում հայ բնակչությունը չէր ենթարկվում բռնագաղթերի և ազգային-կրոնական այնպիսի հալածանքների, ինչպիսին կատարվում էին խաների ու փաշաների տիրապետության տակ։

Ավելին, միացման շնորհիվ Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման ու նրա զարգացման ամենից ավելի հաստատուն ու ապահով կենտրոնը։ Ավելի քան 130.000 հայերի ներգաղթը արմատականորեն փոխեց հայ ազգաբնակչության թվաքանակն ու տեսակարար կշիռը Անդրկովկասում։ Արևելյան Հայաստանում հայ ազգաբնակչության կենտրոնացման խոշոր նշանակությունը առավել հասկանալի է դառնում, երբ նկատի ենք առնում այն հանդամանքը, որ դարերի ընթացքում հայ ժողովրդի բնօրրան Արարատյան դաշտի տարածքը օտար նվաճողների ձեռքով ավերվել, դատարկվել էր հայ տարրից։ Ֆեոդալական նախկին խժդժություններից ու ավարառություններից փոխարեն Ռուսական կայսրության կազմում հաստատվեցին կայուն կարգեր ու օրենքներ, որոնք ապահովում են բնակչության կյանքն ու գույքը, ղերծ պահում նրան արտաքին թշնամիներից։ Նման պայմաններում արտաքին ու բնական աճի շնորհիվ արագորեն սկսեց բազմանալ հայ բնակչությունը։ Բավական է նշել, որ 1840-ական թվականներին Արևելյան Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը XIX դարի սկզբի համեմատությամբ կրկնապատկվել էր։ Այս ամենը բերում են մի հետևության, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու շնորհիվ ապահովվեց հայ ժողովրդի ֆիզիկական և հավաքական գոյությունը։

2. Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը առաջադիմական էական նշանակություն ունեցավ Հայաստանի տնտեսական զարգացման գործում։ Չնայած ցարական Ռուսաստանի ընդհանուր հետամնացությանը, նա տնտեսական զարգացման ավելի բարձր աստիճանի վրա էր գտնվում և առավել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ուներ, քան խանական Պարսկաստանը։ Պարսկաստանի

ծայրաստիճան հետամնացությունը, ֆեոդալական մասնատվածությունը, պարբերաբար կրկնվող ներքին ու արտաքին պատերազմները, անձի ու գույքի ապահովության բացակայությունը արգելակում էին արտադրողական ուժերի զարգացումը, երկրի տնտեսությունը լճացում ու անկում էր ապրում։

Այլ էր վիճակը Ռուսաստանում։ Կայսրության մեջ գործող ընդհանուր պետական օրենքներով ապահովվում էր անձի ու սեփականության անձեռնմխելիության իրավունքը, վերացվում էր ֆեոդալական մասնատվածությունը, հետևաբար՝ նաև դրա հետ կապված անիշխանությունը, մաքսային և այլ բնույթի սահմանափակումներն ու արգելակումները։ Ռուսաստանում սկսել էր զարգանալ արդյունաբերությունը, հետզհետե ավելի մեծ դեր էր կատարում մեքենայական աշխատանքը։ XIX դարի 40-ական թվականներից Ռուսաստանում սկսվում է երկաթուղային շինարարությունը, որն իր հերթին խթանում է առևտրի և առհասարակ երկրի բովանդակ տնտեսական կյանքի զարգացմանը։ Ռուսաստանը աստիճանաբար թոթափում էր միջնադարյան, ֆեոդալական կապանքները և թևակոխում զարգացման նոր, բուրժուական հարաբերությունների շրջափուլը։

Արևելյան Հայաստանը ներգրավվում է Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման ոլորտի մեջ, իր վրա կրում նրա բարերար ազդեցությունը։ Նկատելի տեղաշարժեր են կատարվում Հայաստանի տնտեսական կյանքում, ընդարձակվում են ցանքատարածությունները, աճում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, քայքայվում է բնատնտեսությունը, զարգանում են ապրանքադրամային հարաբերությունները, հիմնվում մանուֆակտուրային ձեռնարկություններ և այլն։ Այլ խոսքով, միացումը առաջադիմական կարևոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման գործում։

3. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին կարևոր նշանակություն ունեցավ հայկական մշակույթի զարգացման համար։ Ակնհայտ է, որ Պարսկաստանը տակավին

XIX դարի շեմին գտնվում էր միջնադարյան խավարի ու հետամնացության մեջ։ Այնտեղ պայմաններ չկային և մեծապես կաշկանդվում էր նրա տիրապետության ներքո գտնվող հայ ժողովրդի մշակույթի ու հասարակական մտքի առաջընթացը։ Միանգամայն այլ էր իրավիճակը Ռուսաստանում։ XIX դարի երկրորդ քառորդից հեղափոխական շարժման պատմափուլը թևակոխած Ռուսաստանում բուռն կերպով զարգանում էր ազգային-դեմոկրատական մշակույթը՝ գրականությունը, արվեստն ու գիտությունը։

Սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում կատարվող տեղաշարժերով կյանքի կոչված, ազգային դարավոր կուլտուրայի ու նրա ավանդների վրա հենված հայկական մշակույթը իր վրա սկսեց կրել ռուսական առաջավոր կուլտուրայի ազդեցությունը։

XIX դարի առաջին կեսում սկսված ռուսական մշակույթի և մասնավորապես գրականության վերելքը կապվում է Ռադիշչևի ու Գրիբոյեդովի, Պուշկինի ու Լերմոնտովի, Գոգոլի ու Նեկրասովի, ապա և Դոստոևսկու ու Տուրգենևի, Չեխովի ու Տոլստոյի և այլ մեծությունների անվան հետ։ Ռուս դեմոկրատական, առաջավոր այդ գրականությունը չէր կարող իր բարերար ազդեցությունը չունենալ հայ գրականության ու մշակույթի զարգացման վրա։ Միանգամայն իրավացի է հայ մեծ գրող Հ. Թումանյանը, երբ այդ մասին գրում էր. «...Սիրով ու պատկառանքով խոնարհում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև—Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը»[1]։

Հատկապես Մոսկվայում, Պետերբուրգում, Դորպատում, Կազանում և Ռուսաստանի կրթական, մշակութային այլ նշանավոր կենտրոններում սովորեցին ու մասնագիտացան և ռուս առաջավոր հասարակական կյանքի հետ անմիջականորեն

1 Հ. Թումանյան, նշվ. ժող., էջ 332։

շփվեցին ու ձևավորվեցին հայ իրականության մեջ մեծ հետք թողած շատ ականավոր գրողներ, երաժիշտներ, նկարիչներ, գիտնականներ ու հասարակական գործիչներ։ Բավական է հիշել միայն Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Նալմալյանի, Ալ. Սպենդիարյանի, Ա. Հովնաթանյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Սուրենյանցի, Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Ջ. Պատկանյանի, Մ. Էմինի, Կ. Եղյանի, Գ. Հախվերդյանի և այլոց անունները։

Ուրիշ խոսքով, XIX դարի 30-ական թվականներից սկսած ակնհայտ է ռուսական առաջավոր, դեմոկրատական կուլտուրայի մեծ ու բարերար ազդեցությունը հայ մշակույթի զարգացման վրա։

4. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու շնորհիվ հայ ժողովուրդը իր բախտը ընդմիշտ կապեց ռուս ժողովրդի բախտի, նրա ազատագրական-հեղափոխական պայքարի հեռանկարների հետ։ Հայաստանի միացումը համընկավ Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքի այն դարաշրջանի հետ, երբ նա թևակոխել էր զարգացման հեղափոխական-ազնվականական (դեկաբրիստական) պատմափուլը։

Հայ ժողովրդի ազգային, սոցիալական ազատագրման հեռանկարները օբյեկտիվորեն, պատմական զարգացման օրինաչափ ընթացքով ամուր կապվեցին Ռուսաստանում բարձրացող հեղափոխական ուժերի պայքարի հետ։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ առաջադիմական խոշոր իրադարձություն էր, որ շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։

Հայ ժողովրդի համար Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու առաջադիմական, բախտորոշ նշանակությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ ժամանակի նշանավոր հայ գործիչները, հայկական գաղթաշխարհը մեծ խանդավառությամբ ու ջերմությամբ ընդունեցին պատմական այդ ակտը, դրա մեջ տեսնելով մայր հայրենիքի և առհասարակ հայ ժողովրդի փրկության երաշխիքը։

Երևանի ազատագրումը հայրենիքի փրկության խորհրդանիշ համարելով, Հ. Ալամդարյանը տակավին 1827 թ. հոկտեմբերին Թիֆլիսից Ն. Աշտարակեցուն հղած նամակում շնորհավորում էր «Հայաստան աշխարհի փրկությունը» պարսկական ծանր ու անգութ լծից։

Հայ նշանավոր գրող, լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանը հեռավոր Հնդկաստանից անվերապահ ուրախություն էր հայտնում հայրենիքի ազատության առթիվ։ «Աչքներդ հապար լույս,— գրում էր նա,— որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն չարչարանքից ազատվից... Երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունը, սիրտս ուրախությամբ վառվեց»[2]։

Դոնի հայկական գաղութի անունից Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Խաչատուր Խոմաճյանը Ն. Աշտարակեցուն հղած շնորհավորական ուղերձում ողջունում է հայրենիքի փրկությունը և ափսոսանք հայտնում, որ «արարիչը» արժվի կամ գոնե աղավնու թևեր չի տվել մարդուն թռչելու Արարատյան երկիր շնորհավորելու «...Լերանցն Արարատայ, ղրկս փրկեցեալ ի ներքուստ ձեռաց քարբարոսաց»[3]։

Հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանը իր քննադատական և հրապարակախոսական հոդվածներում բազմիցս անդրադառնալով հայ ժողովրդի անցյալին, խոր ընդհանրացումներ է կատարել նրա պատմական ճակատագրի վերաբերյալ։ «Եվ մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո,— գրել է նա,— վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյունիքը, Դուգարքն ու Արարատյան երկիրը և միանգամ ընդմիշտ վերջ տվեց կատորածներով, գաղթականություններով ու առևանդումներով հայտնի հայկական հարցին»[4]։

---

2 Մ. Թաղիադյան, *Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ*, վավերագրեր, Երևան, 1975, էջ 410։

3 Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 55, վ. 78։

4 Հ. Թումանյան, նշվ. ժող., էջ 228։

Խոսելով Թուրքիայի հայահալած քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում ստեղծված ողբերգական դրության մասին, մեծ բանաստեղծը գրում է. «Այո, միանգամայն ուրիշ պատկեր է Ռուսաստանում: Դրա համար էլ բոլորովին ուրիշ հարաբերություններ են եղել էստեղ ու ուրիշ հարաբերություններ էլ պետք է լինեն: Էդ պատճառով էլ մենք Ռուսաստանի համար ոչ այլ ինչ ենք, եթե ոչ ավանդարդ, ինչպես ասում են սովորաբար: Եվ հավատարիմ ավանդարդ, որովհետև էստեղ կոտորածներից ազատվել ենք, թվով բազմապատկվել ենք, տնտեսապես հարստացել ենք, կուլտուրապես առաջ ենք գնացել, և դեռ ապասում ենք ավելի լավ օրերի»: Եվ ապա. «Հարկավ, մարդիկ կլինեն, որ կասարկեն, թե էդ ամենը Ռուսաստանը արել է, կանի, որովհետև էդպես են պահանջում իր շահերը: Ես դրան կպատասխանեմ...— Ավելի լավ, որ Հզոր Ռուսաստանի ու հայ ժողովրդի շահերը բռնում են իրար: Հենց դրա մեջն է կայանում հայ ժողովրդի օգնությունը, և դրանով է նա հաստատ:

Ահա թե ինչու և ինչպես իմ հույսերն ու համակրանքը կապվում են Ռուսաստանի հետ»[5]:

Հայ մեծ լուսավորիչ ու գրող, մրքոտ հայրենասեր Խաչատուր Աբովյանը, որը պատանեկության տարիներին ականատես եղավ, ապրեց ու զգաց պարսկական խանների բարբարոսական տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի տառապանքները, իր աղնիվ սրտի ամբողջ ավյունով գրված «Վերք Հայաստանի» անմահ վեպում տվեց հայ ժողովրդի ողբերգական վիճակի, խանական ռեժիմի դեմ ժողովրդի ծավալած ազատագրական պայքարի հավատի նկարագրությունը: Նա առանձնահատուկ սիրով է պատկերում ռուս-պարսկական պատերազմների շրջանում հայ ժողովրդի դավակների, հայ կամավորական ջոկատների մարտական սխրագործությունները և ռուսական զորամիավորումներին ցույց տված նրանց ակտիվ օգնությունը: Ամբողջ խորությամբ հասկանալով հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանի կատա-

---

5 Նույն տեղում, էջ 214—215:

բաւ դերի նշանակութիւնը, արտահայտելով իր ժողովրդի զգացումութիւնները և ընդհանրացնելով նրա մտայնութիւնը. Աբովյանը գրում է. «Օրհնվի էն ահաթը, որ Ռսի օրհնած ռաը Հայոց լիս աշխարհը մտավ ու զղլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց»[6]:

Աբովյանի հայրենասիրական վեհում կարմիր թելի պես անցնում է ռուս ժողովրդի հետ մշտապես բարեկամ լինելու գաղափարը, հայ ժողովրդի շահերի համար այդ բարեկամության կենսական անհրաժեշտությունը: Նա դրան հակադրում և քննադատում է արևմտաեվրոպական երկրների՝ ուրիշ ժողովուրդների հանդեպ գործադրած բռնութիւններն ու նրբանց վարած կողոպուտի քաղաքականութիւնը: Խոսելով եվրոպական գաղութարարների կողմից Ամերիկայի բնիկներին հալածելու և բնաջնջելու մասին, նա ավելացնում է. «Այլ եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցրին. ռուսք Հայաստան կանդնեցրին... Հայք ե՞րբ կարեն Ռոսաց արածը մոռանալ, քանի որ շունչ ունին»[7]:

Հայ ժողովրդի կյանքում հայ և ռուս ժողովուրդների հավերժ բարեկամության փրկարար նշանակության, երկու ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման դրական խոշոր դերի մասին մեծ հայրենասերի խոր համոզմունքն ու կրքոտ քարոզը պատգամ դարձավ հետագա սերունդների համար: Այն մեծ ազդեցություն ունեցավ ու խոր արմատներ գցեց հայ իրականության մեջ:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մեծ ջատագով Խ. Աբովյանը, պայքարելով առաջադեմ, դեմոկրատական գաղափարների համար՝ ընդդեմ խավարամտության ու հետադիմության, միաժամանակ բողոքի ձայն էր բարձրացնում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության դեմ: Նա քննադատում էր ցարիզմի սոցիալական հենարան հանդիսացող տեղական կղերա-ֆեոդալական ու վաշխառուական խավերին:

---

6 Խ. Աբովյան, նշվ. ժող., էջ 58:

7 Նույն տեղում, էջ 180:

Աբովյանի հաջորդ սերունդը կարողացավ ցարական Ռուսաստանում ավելի որոշակի ու հստակ տեսնել երկու Ռուսաստան։ Դա մի կողմից ռուս ժողովրդի իսկական շահերն արտահայտող բարձրացող դեմոկրատական-հեղափոխական Ռուսաստանն էր, մյուս կողմից կալվածատերերի ու կապիտալիստների շահերն արտահայտող ցարական Ռուսաստանը։ Հեղափոխական Ռուսաստանն էր հանդիսանում ռուս և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի կազմակերպման հիմնական ուժը[8]։

XIX դարի 50—60-ական թվականներին ռուսական հեղափոխական հասարակական մտքի ազդեցությամբ հայ իրականության մեջ ձևավորվեց հեղափոխական դեմոկրատական հոսանքը, որի գաղափարախոսն ու գլխավորողը եղավ Գերցենի և Չերնիշևսկու համախոհ ու ընկերը, ազատագրական պայքարի անկոտրում մարտիկ Միքայել Նալբանդյանը։ Նա հայ հասարակական առաջադեմ, դեմոկրատական միտքը շաղկապեց ռուսական հեղափոխական դեմոկրատիայի հետ, հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրությունը՝ ցարական ինքնակալության դեմ տարվող պայքարի հետ։ Նա պայքար ծավալեց ցարիզմի ու ճորտատիրության, հայ հետադիմական շերտերի դեմ՝ հանուն աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության։ Վերջինիս շահերի պաշտպանության համար, որին նվիրեց իր ողջ կյանքը, նա առաջադրում էր հեղափոխական ուղի՝ ցարիզմի և սուլթանական դեսպոտիզմի տապալումը՝ որով միայն կարելի էր հասնել ազատության։ Մ. Նալբանդյանը իր գործունեության մասին իրավամբ գրել է. «Մենք ազատական նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թում-

---

8 Անդրկովկասի ժողովուրդների ռուսական կողմնորոշման, երկրամասը Ռուսաստանին միանալու և ռուս ժողովրդի հետ համագործակցված, ցարական ինքնակալության դեմ Անդրկովկասի եղբայրական երեք ժողովուրդների ծավալած պայքարի մասին տե՛ս Г. А. Галоян, Россия и народы Закавказья, М., 1976.

բերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ»[9]։

Նալբանդյանը ռուս հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչների նման անկեղծ համակրանքով էր վերաբերվում տարբեր երկրների ու ժողովուրդների ազգային ազատագրական պայքարին։ Խորապես գիտակցելով ռուսական կայսրության և առհասարակ ճնշված ժողովուրդների ազատագրության գործում հեղափոխական Ռուսաստանի կատարելիք դերը, Մ. Նալբանդյանը գրում էր. «Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերյալ մեծ խորհուրդ ունի»[10]։ Պատմության հետագա զարգացման ընթացքը լիովին հաստատեց նրա մարգարեական խոսքերի ամբողջ ճշմարտությունը։

* * *

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու շնորհիվ օբյեկտիվ պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը ռուս ժողովրդի հեղափոխական պայքարին միաձուլելու համար։ XIX դարի վերջերին Հայաստանի աշխատավորները ներգրավվեցին ցարիզմի դեմ Ռուսաստանի պրոլետարիատի ղեկավարած հերոսական պայքարի մեջ։

XX դարի արշալույսին հեղափոխական պայքարի գոտեմարտում ծնունդ առավ բոլշևիկների լենինյան կուսակցությունը, որը դարձավ համառուսաստանյան շարժման կազմակերպիչն ու դրոշակակիրը։ Նա գլխավորեց ժողովուրդների լայն զանգվածների պայքարը ընդդեմ ցարական ինքնակալության։

Անդրկովկասում բանվորական շարժումը իր սկզբնավորման օրվանից ինտերնացիոնալ բնույթ ուներ։ Այնտեղ հայերը, ռուսները, վրացիները, ադրբեջանցիները պայքարի էին ելել ուս-ուսի տված։ Բոլշևիկները բոլոր ազգությունների աշ-

---

9 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1940, հ. 3, էջ 23։

10 Նույն տեղում, էջ 61։

խատավորներին համախմբում էին մարքսիզմ-լենինիզմի դրոշի ներքո, վճռականորեն պայքարում բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության դեմ։

Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական շարժման մեջ լենինյան գաղափարների, բոլշևիկյան գործի հաղթանակի համար մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները։ Լենինյան գվարդիայի պանծալի համաստեղության մեջ էին Բոգդան Կնունյանցը, Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո), Ալեքսանդրը Մյասնիկյանը և շատ ուրիշներ, որոնց կազմակերպական գործունեությամբ և տեսական աշխատություններով ձևավորվեց հայ հասարակական մտքի պատմության մարքսիստական փուլը։ Ռուսական հեղափոխությունների բովում, շահագործող դասակարգերի տիրապետության դեմ մղված համատեղ պայքարում կոփվում ու նոր իմաստ էր ստանում հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը։

Մարդկության պատմության մեջ ընդգծված նշանակություն ունեցող Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը հուժկու թափ հաղորդեց ցարական Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարին և լայն հնարավորություններ բացեց նրանց համար։ Մեծ Հոկտեմբերի գաղափարներով ոգեշնչված Անդրկովկասի ու Հայաստանի աշխատավորները հեղափոխական պայքարի ելան հանուն սոցիալիստական ու ազգային ազատագրության։ Բաքվի հերոսական կոմունան ցուցադրեց Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների հեղափոխական վճռականությունը, նրանց անօրինակ խիզախությունն ու արիությունը։

Անդրկովկասի ազգայնական կուսակցություններին ու հակահեղափոխական ուժերին, իմպերիալիստական պետությունների աջակցության պայմաններում, հաջողվեց երկրամասն անջատել Սովետական Ռուսաստանից, որը կործանարար հետևանքներ կարող էր ունենալ այդ ժողովուրդների համար։

Սովետական իշխանության հաղթանակի համար Հայաս-

տանի աշխատավորների հեղափոխական պայքարի պատմության փառապանծ էջ եղավ 1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբությունը՝ ընդդեմ դաշնակցական վարչակարգի։

Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, 11-րդ Կարմիր բանակի օգնությամբ 1920 թ. նոյեմբերին Հայաստանը հռչակեցին սովետական։ Հայոց հին հողի վրա ծածանվեց Մեծ Հոկտեմբերի հաղթական դրոշը, որն ազդարարեց հայ ժողովրդի սոցիալական ու ազգային իսկական ու վերջնական ազատությունը։ Հայ ժողովուրդը ստեղծեց իր սոցիալիստական պետականությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում հայ և ռուս ժողովուրդների հարաբերությունները, նրանց բարեկամության ու համագործակցությանը մինչ այդ չտեսնված, բոլորովին նոր որակ ու իմաստ հաղորդեցին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից ռուս մեծ ժողովուրդը, առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքների և դաշնակցական տիրապետության հետևանքով աղքատության ու սովի գիրկը նետված հայ ժողովրդին անշահախնդիր, եղբայրական օգնության ձեռք մեկնեց։ Թեպետ Սովետական Ռուսաստանը նոր էր դուրս եկել քաղաքացիական պատերազմից, կրում էր նրա թողած ղրկանքների ծանր հետևանքները և ինքն էլ պարենամթերքի սուր կարիք ուներ, այնուամենայնիվ Հայաստանի աշխատավորներին ուղարկեց հացահատիկ, արդյունաբերական ապրանքներ, դեղորայք, ցույց տվեց ֆինանսական մեծ օգնություն։ Վ. Ի. Լենինի անմիջական ցուցումով 1920 թ. դեկտեմբերին Հայաստանին տրամադրվեց 600 հազար ռուբլի ոսկյա դրամ, առաքվեց մեծ քանակությամբ հաց, շաքար, զանազան կենսամթերքներ, հանդերձանք։ Հաջորդ տարի Հայաստանին օգնության կարգով տրվեց 3,5 միլիոն ռուբլի և մոտ 3 միլիոն փութ կենսամթերք[11]։

11 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Երևան, 1967, էջ 192—193։

1922 թ. Իվանովո-Վոզնեսենսկի մանածագործները Սովետական Հայաստանին նվիրեցին տեքստիլ ֆաբրիկայի սարքավորում, իսկ Պետրոգրադի մեքենաշինարարները՝ 12 վագոն հատուցներ և այլ սարքավորումներ։ Երկրի քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու համար Հայաստան ուղարկվեցին գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ և այլն։

Սովետական Ռուսաստանի անշահախնդիր օգնության շնորհիվ սովետական կարգերի առաջին տարիներին հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց սովի ու համաճարակային հիվանդությունների ճիրաններից, այլև վճռական քայլեր կատարեց երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու և նրա սոցիալիստական տնտեսության հիմքերը դնելու գործում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ողջ երկրի ժողովուրդների բարեկամությունը խարսխվեց սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական նոր՝ սոցիալիստական հարաբերությունների հիմքի վրա։ Անդրկովկասի ժողովուրդների սոցիալիստական բարեկամության ու համագործակցության հարցում էական նշանակություն ունեցավ 1922 թ. մարտին Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպումը։ Անդրֆեդերացիան կարևոր դեր կատարեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունների ժողովուրդների բարեկամության կոփման, նրանց տնտեսական և կուլտուրական զարգացման, սոցիալիստական շինարարության համար նրանց ուժերի համախմբման գործում։ Նույն տարվա դեկտեմբերին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորումը, ազգերի կամավոր դաշինքը լենինյան ազգային քաղաքականության, ժողովուրդների բարեկամության ու եղբայրության դաղափարների հաղթանակն էր։

Հայ ժողովուրդը սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում գտավ վերածնության ու բարգավաճման իսկական ուղին։ Հանրապետության աշխատավորները վիթխարի վերափոխումներ կատարեցին հայրենի երկրում, և Հայաս-

տանը կարճ ժամանակում աղքատության ու վշտի երկրից դարձրին բարգավաճ երկրամաս, զարգացած ինդուստրիայի և գյուղատնտեսության, առաջավոր գիտության ու կուլտուրայի հանրապետություն։ Կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության հաղթանակը արտահայտվեց սովետական աղգային հանրապետությունների տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացմամբ՝ պատմական չտեսնված կարճ ժամանակաշրջանում։ Սոցիալիստական շինարարությունը մեծապես նպաստեց մեր երկրի ազգերի սոցիալական միատարրության, նրանց համախոհության զարգացման, մերձեցման և հոդևոր ընդհանրության ձևավորմանը։

ՍՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամության, սովետական պետության, նրա քաղաքական ու հասարակական կարգի ամրության ու կենսունակության դաժան քննությունը եղավ ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված Հայրենական մեծ պատերազմը։ Ոխերիմ թշնամու դեմ սրբազան պատերազմի ելան սովետական բազմազգ երկրի բոլոր ժողովուրդները և ուս-ուսի տված հերոսաբար պայքարեցին իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար։ Մարդկության ու քաղաքակրթության թշնամի ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի համաշխարհային պատմական հաղթանակում իր արժանի ներդրումը կատարեց նաև հայ ժողովուրդը։ Հայրենական մեծ պատերազմը սոցիալիստական կարգերի կենսունակության ու անպարտելիության իսկական հաստատումը եղավ։

Սոցիալիստական ու կոմունիստական շինարարության տարիներին մեր երկրում տեղի ունեցան սոցիալ-տնտեսական վիթխարի վերափոխումներ։ Հանրապետության էկոնոմիկան, որը հանդիսանում է Սովետական Միության միասնական ժողովրդատնտեսական ամբողջ կոմպլեքսի բաղկացուցիչ մասը, մշտապես գտնվել է դինամիկ զարգացման մեջ։ Սովետական Հայաստանի անցած ուղու, տնտեսական կյանքի գլխավոր արդյունքը հզոր արդյունաբերության ստեղծումն է, Ռուսաստանի երբեմնի հետամնաց ծայրամասի վե-

բածումը զարգացած գյուղատնտեսություն ունեցող ինդուստրիալ հանրապետության։

Ժողովրդական տնտեսության վերելքը խարսխվեց ամենից առաջ էներգետիկ հզոր բազայի վրա։ Կենսագործելով Լենինյան հայտնի պատգամները, Հայաստանը դարձավ համատարած էլեկտրիֆիկացիայի հանրապետություն։ Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հայաստանը առաջ է անցել զարգացած շատ կապիտալիստական երկրներից։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում կառուցվել են հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Պատահական չէ, որ Հանրապետության ազգային եկամտի շուրջ 70 տոկոսը բաժին է ընկնում արդյունաբերական արտադրանքին։ Տակավին առաջին հնգամյակների տարիներին հիմնված ճյուղերի՝ քիմիական արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի հետ մեկտեղ արդյունավետ կերպով սկսեց զարգանալ մեքենաշինությունը, հաստոցաշինությունը, էլեկտրատեխնիկան, շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերությունը։ Գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա վերջին տարիներին արագորեն զարգանում են արդյունաբերական նոր ճյուղեր՝ ճշգրիտ սարքաշինությունը, էլեկտրոնիկան, ռադիոտեխնիկան։ Հանրապետության արդյունաբերության քարտեզը զարդարում են հարյուրավոր խոշոր կոմբինատներ, գործարաններն ու ֆաբրիկաները, որոնք թողարկում են արդյունաբերական արտադրանքի բարձրորակ ու ամենաժամանակակից տեսակներ։

Հանրապետության ինդուստրիալ զարգացման բարձր մակարդակի վկայություն է այն խոսուն փաստը, որ նրա արդյունաբերական արտադրանքի 150 տեսակներ արտահանվում են արտասահմանյան 70 երկրներ, այն դեպքում, երբ մինչհոկտեմբերյան ժամանակաշրջանում Հայաստանը իրեն հարկավոր արտադրանքը գրեթե ամբողջությամբ ներմուծում էր դրսից։

Հանրապետության արդյունաբերական զարգացման սոցիալ-քաղաքական կարևոր արդյունքը բանվոր դասակարգի

Հզոր բանակի ձևավորումն էր, որը եթե 1928 թ. իր կազմում ուներ ընդամենը 50 հազար բանվոր, ապա 1970 թ. հաշվել 830 հազարի[12]:

Սովետական ժամանակաշրջանում անճանաչելիորեն վերապարանափոխվել է երբեմնի հետամնաց ու նահապետական հայ գյուղը: Հայաստանի գյուղատնտեսության հետանկարային զարգացման համար, նրա սակավահողության պայմաններում էական նշանակություն ուներ ոռոգման ցանցի և աղակալած ու քարքարոտ խոպան հողերի յուրացման խնդիրը: Այդ պրոբլեմի հաջող լուծման շնորհիվ Հայաստանում ոռոգելի հողատարածությունը 1913 թ. համեմատությամբ ընդարձակվել է ավելի քան չորս անգամ:

Գյուղի հաջողությունների, նրա սոցիալիստական վերակառուցման վճռական հիմքը մեքենայացումն է, որը հաջողությամբ իրականացվեց անցած տասնամյակների ընթացքում: Այժմ Հանրապետության ավելի քան 750 պետական ու կոլեկտիվ տնտեսությունների դաշտերում աշխատում են 9 հազարից ավելի տրակտոր, 1700 կոմբայն, 9 հազար բեռնատար ավտոմոբիլ և տասնյակ հազարավոր գյուղատնտեսական այլ մեքենաներ[13]: *Տեխնիկական պինվածության շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքների հիմնական մասը մեքենայացման է ենթարկվել: Ոռոգելի հողային տարածությունների ընդարձակման, մեքենայացման և էլեկտրիֆիկացման, քիմիական պարարտանյութերի կիրառման և գիտության այլ նվաճումների արմատավորման շնորհիվ բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը, անընդհատ աճում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:*

Փոխվել է գյուղի աշխատավորների կենցաղը: Նախկինում կարիքի ու հետամնացության գիրկը նետված, կավաշեն ու գետնափոր խրճիթներում տեղավորված գյուղն է թափանցել էլեկտրականությունը, գազը, ռադիոն, հեռախոսը, հեռուստացույցը, կինոն, և նա իր տնտեսական ու կուլտուրական մակարդակով մոտեցել է քաղաքին:

---

12 *Տե՛ս «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 56—57:*

13 *Նույն տեղում, էջ 58:*

Սովետական իշխանության շուրջ վաթսուն տարիները եղան հայ ժողովրդի մշակույթի աննախընթաց զարգացման տարիներ: Մեր ժողովուրդը, որն ավելի քան 1600 տարի առաջ ստեղծել է իր գիրն ու գրականությունը և մարդկությանը տվել է նյութական ու հոգևոր մշակույթի համաշխարհային արժեքներ, դարեր շարունակ զրկված է եղել իր զավակներին լայնորեն կրթություն տալու հնարավորությունից: Սովետական ժամանակաշրջանում մատաղ սերնդի և ամբողջ բնակչության կրթությունը դարձել է պետական հոգացողության գլխավոր առարկա: Հայաստանի քաղաքներն ու գյուղերը պատված են մասսայական դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների լայն ցանցով: Ուսուցման սիստեմի մեջ ընդգրկված է հանրապետության յուրաքանչյուր երրորդ քաղաքացին: Սովետական Հայաստանի 13 բուհերն ու 65 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները 208 մասնագիտությունների գծով ամեն տարի ավարտում է ավելի քան 20 հազար մարդ[14]: Խոշոր նվաճում է հանրապետության տեխնիկական մտավորականության մեծ բանակի ստեղծումը: Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են բարձրագույն կրթություն ունեցող շուրջ 140 հազար մասնագետներ:

Նախասովետական Հայաստանում չկար և ոչ մի գիտական հաստատություն: Այժմ հանրապետությունում կան հարյուրից ավելի գիտահետազոտական հիմնարկներ, որոնք լուրջ ավանդ են ներդնում սովետական գիտության զարգացման գործում: Ծանրակշիռ ներդրում է կատարում հատկապես Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան: Սովետահայ գիտնականների աշխատանքները գիտական-տեսական և ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեն:

Հայ ժողովրդի անցյալի ժառանգության առաջադիմական ավանդների վրա հենվելով Հոկտեմբերի վերելք ապրեց հայ գրականությունն ու արվեստը: Եղիշե Չարենցի, Մարտիրոս Սարյանի, Ալեքսանդր Թամանյանի, Արամ Խաչատրյա-

---

14 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1978, 31 մարտի, № 76:

նի և տազանդավոր այլ վարպետների գործերը, որոնցում մարմնավորվել են մեր ժողովրդի ինքնատիպ մշակույթի լավագույն գծերը, իրենց օրինական տեղն են գտել հայրենական և համաշխարհային մշակույթի գանձարանում։

Հայերեն լեզվով հրատարակվում են ռուս և ՍՍՀՄ ժողովուրդների, համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունները։ Տեղի է ունենում սոցիալիստական կուլտուրաների փոխադրեցության ու փոխհարստացման ակտիվ մի պրոցես, որը սովետահայ մշակույթի զարգացման կարևոր պայմաններից է։ Սովետական, այդ թվում և սովետահայ մշակույթը դարձել է լայն հասարակայնության սեփականությունը։

Այժմ, մեր ժողովրդի արևելյան հատվածի սոցիալական ու ազգային ազատագրության, սոցիալիզմի պայմաններում նրա ժողովրդական անտեսության, գիտության ու մշակույթի աննախընթաց վերելքի բարձունքից, երբ հետադարձ հայացք ենք ձգում, ակնառու է դառնում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու դրական խոշոր դերը։ Պատմական այդ ակտի բախտորոշ նշանակությունը առավել ակնբախ է դառնում, երբ վերհիշում ենք Արևմտյան Հայաստանի ճակատագիրը, որը եվրոպական պետությունների միջամտության պատճառով այդ նույն շրջանում, 150 տարի առաջ չկարողացավ միանալ Ռուսաստանին, իր բախտը կապել ռուս մեծ ժողովրդի հետ։ Ինչպես հայտնի է, թուրքական տիրապետությունը ողբերգական հետևանքներ ունեցավ արևմտահայության համար։ Թուրքական ռեակցիոն շրջանների XIX դարի վերջերից կազմակերպած ջարդերը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վերածվեցին արևմտահայության մասսայական բնաջնջման։ Մեր ժողովուրդը ապրեց իր բազմադարյան պատմության ամենամռայլ շրջանը։

Հոկտեմբերյան դրոշի ներքո, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքի իրավահավասար անդամ Սովետական Հայաստանը դարձավ աշխարհով մեկ սփռված հայության մայր հայրենիքը, հայապահպանության պատվարը,

ազգային մշակույթի ու լեզվի զարգացման միակ օջախը։ Միայն սովետական իշխանությունը հնարավորություն տվեց վերածնված հայ ժողովրդին ստեղծելու իր պետականությունը, ունենալու իր գերբն ու դրոշը, իր ազգային պետական լեզուն։

1978 թ. ապրիլին ընդունված Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը, մեր հանրապետության հիմնական օրենքը, վավերացրեց հայ ժողովրդի նյութական ու հոգևոր կյանքի բոլոր մարզերում կատարված էական փոփոխությունները, անցած շուրջ վեց տասնամյակում նրա ձեռք բերած նվաճումները։ Հայաստանի նոր սահմանադրությունը, որը հենվում է ՍՍՀՄ սահմանադրության վրա, միաժամանակ ուղենշում է հանրապետության հետագա զարգացման հեռանկարները, հանդիսանում կոմունիզմի կառուցման ծրագիրը։

Սովետական Հայաստանը իր հաջողությունները, հիրավի վիթխարի նվաճումները ձեռք է բերել շնորհիվ մեր երկրի բոլոր ժողովուրդների անխախտ դաշինքի, բարեկամության ու եղբայրության։

«Սովետական Հայաստանի պատմական փորձը,— 1970 թ. նոյեմբերի 29-ին Երևանում արտասանած ճառում ընդգծել է Լ. Ի. Բրեժնևը,— կրկին ու կրկին համոզում է, որ ազգի իսկական ծաղկումը ձեռք է բերվում ոչ թե ազգային պարփակման ու մեկուսացման ուղիներով, այլ սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների եղբայրական ընտանիքում՝ փոխադարձաբար միմյանց հարստացնող ներդաշնակ զարգացման շնորհիվ»[15]։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքում Սովետական Հայաստանը իրականացնում է ՍՄԿԿ XXV համագումարի պատմական կանխագծումները, վստահորեն առաջ գնում կոմունիստական շինարարության պայծառ ուղիով։

---

15 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 74։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին.—*Հայերը և Հին Ռուսիան* 10

Գլուխ երկրորդ.—*Հայերի կապերը Մոսկովյան պետության հետ* . 24

Գլուխ երրորդ.—*Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարի վերջին երեսնամյակում։ Ռուսական կողմնորոշման ձևավորումը* 50

Գլուխ չորրորդ.—*Հայերի և վրացիների ռազմաքաղաքական դաշինքը Ռուսաստանի հետ* 84

Գլուխ հինգերորդ.—*Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը օտար բռնակալության դեմ* 102

Գլուխ վեցերորդ.—*Հայաստանը XVIII դարի երկրորդ կեսին։ Ռուսահայ գաղթավայրերը և դրանց դերը հայ-ռուսական հարաբերություններում* 133

Գլուխ յոթերորդ.—*Ազատագրական շարժման հնդկահայ կենտրոնը և Ռուսաստանը* 158

Գլուխ ութերորդ.—*Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումները XVIII դարի վերջին քառորդում* 173

Գլուխ իններորդ.—*Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները և հայ ազատագրական շարժումները XIX դարի սկզբին* 188

Գլուխ տասներորդ.—*Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին* 201

Գլուխ տասնմեկերորդ.—*Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական նշանակությունը* 236

ՀԱՅԿ ԱՍՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱԽՇԻԻ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՍԿԱՆՅԱՆ
ВЛАДИМИР БАХШИЕВИЧ БАРХУДАРЯН
ВАЗГЕН КАРАПЕТОВИЧ ВОСКАНЯН

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ИБ 62

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Ա. Հ. ՋԱՔԱՐՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԴՈՐԾԱԿԱՀՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Ռ. Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Սրբագրիչ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՏ 02145 Պատվեր 859 Հրատ. 4847 Տպաքանակ 5050
Հանձնված է շարվածքի 25. 07. 1978 թ.: Ստորագրված է տպագրության. 20. 09. 1978 թ., տպագրական 16,0 մամուլ, պայման. 13,44 մամուլ, հրատ. 11,12 մամուլ: Թուղթ № 1, 84×108¹/₃₂: Գինը 75 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակության տպարան, Երևան, 375019, Բարեկամության 24:
Типография издательства АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян 24.

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

II
Ա/61305

ԳԱԱ Հիմնարար գիտ. Գրադ.
220061305